


ISSN 1829-2992



# Ա Կ Ո Ւ Ն Ք

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 3



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԻՋԵՎԱՆԻ ՍԱՄՆԱՃՅՈՒՂ

## Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 3

ԵՐԵՎԱՆ

---

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2011

Գլխավոր խմբագիր՝

*պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Խմբագրական խորհուրդ՝

*Գրիշա Ալեքսանի Ղարիբյան* – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

*Հարություն Ալեքսանի Սարգսյան* – տնտեսագիտ. թեկնածու, պրոֆեսոր

*Հենրիկ Մուշեղի Աբրահամյան* – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Ռաֆիկ Ասքանազի Նահապետյան* – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Սամվել Արշավիրի Առաքելյան* – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

*Հայկ Մկրտիչի Դերձյան* – իրավագիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Հենզել Գերասիմի Մանուչարյան* – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Սամվել Պարզևի Մուրադյան* – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Սեդա Քերոբի Գասպարյան* – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Սեյրան Արտուշայի Ջաքարյան* – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր

*Մելսիկ Պարզևի Մկրտունյան* – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու / Խմբ. խորհուրդ՝  
Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.:  
ԵՊՀ հրատ., 2011 թ. – 134 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2011թ.

© Հեղ. խումբ, 2011 թ.

# Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՌԱՄԿԱՎԱՐ-ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱ ՀՈՒՆԵԼՅԱՆԸ

### ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Մեր ավանդական կուսակցություններից Ռամկավար-Ազատականն այսօր իննսուն տարեկան է: Իր շուրջ մեկդարյա ոչ հեշտընթաց այդ ճանապարհը լի է եղել մաքառումներով, զանազան հաջող գործառույթներով ու նաև խորը հիպոթափություններով: Սակայն մշտապես հստակ է եղել շատ կարևոր մի հանգամանք՝ անկախ իրավիճակից կուսակցությունն ի դեմս իր նվիրյալների, երբեք չընկրկեց դժվարությունների առաջ և հպարտ ու գալիքի հաղթանակների հստակ գիտակցումով ընթացավ իր գոյության բոլոր տարիների ընթացքում:

\*\*\*

Հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի երկարատև ընթացքի կարևորագույն սահմանագիծ է 1885թ., երբ թուրքական դժնդակ պայմաններում տառապող և երբեմն-երբեմն աշխարհին ապրելու իր իրավունքն ազդարարող հայ ժողովուրդը վերջնականապես թոթափելով դարավոր ընդարմացման ծանր բեռը, ոտքի ելավ փշրելու օտարի շղթաները և ընտրելով պայքարի կազմակերպական բարձրագույն ձևը՝ երկնեց Արմենական քաղաքական կուսակցությունը: Կառույց, որը բարձրացնելով ազատության դրոշը, պիտի մեկտեղեր տեսական ու գործնական պայքարի բոլոր հնարավոր ձևերը, իր ռազմավարության իրականացման ճանապարհին ընտրեր ժամանակի համար առավել նպատակահարմար մարտավարություն, ուղղորդեր ժողովրդին դեպի դարերի կաթսայում երկար քլթքլթացող և այնքան բաղձալի ազատ ու մարդավայել ապրելու հնարավորություններ ունեցող ապագան:

Առաջին ու միակ երկրածին Արմենական կուսակցության գաղափարախոսության սերմնացաններ ու հոգևոր հայրեր Խրիմյան, Փորթուգայան և անմիջական առաջնորդ Ավետիսյան Մկրտիչների «շունչին տակ» հասակ առավ մի սերունդ, որը հանուն բաղձալի ազատության պատրաստ էր զոհաբերելու ամեն ինչ, նունիսկ կյանքը: Նվիրյալների այդ փաղանգը հանուն պայծառ գալիքի անում էր ամեն ինչ, կրթում լուսավորում էր ժողովրդին, զինավարժում երիտասարդությանը, բազում զրկանքների գնով զենք կուտակում, տարբեր վայրերում մասնաճյուղեր հիմնում: Սակայն հենց կազմակերպական այդ վերելքի շրջանում վրա հասավ, պարզապես պարտադրվեց, ծանր մի փորձություն՝ Վանի 1896թ. ինքնապաշտպանությունը, որը հայտնի է «Մեծ Դեպք» անունով: Արմենականներն իրենց պանծալի առաջնորդ Ս. Ավետիսյան-Թերլեմեզյանի ղեկավարությամբ և ՀՅԴ ու Հնչակյան կուսակցությունների ամենագործուն աջակցությամբ կարողացան փրկել Վան-Վասպուրականի հայությանը կոտորածներից՝ որպես փոխատուցում իրենք նահատակվելով հայ ազատագրության զոհասեղանին:

Ճիշտ է, հետագայում արմենականները կարողացան որոշ չափով շտկել իրերի դրությունը, վերակազմակերպել իրենց շարքերը, սակայն այլևս նախկին հզորությունը չունեցան: Իսկ 1908թ. երբ տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումը և սահմանադրորեն հռչակվեցին դեմոկրատական ազատություններ, արմենականները ևս ներառնվեցին «երիտասարդ» շապիկ հագած թուրքական ոճրագործ իշխանությունների հաշիշապատ շրջապտույտի մեջ և քաղաքական մյուս բոլոր ուժերի նման, կուլ տալով խայծը, հանդես եկան նոր՝ վերաձևված մտածողությամբ՝ առաջարկելով համակիր բոլոր ուժերին միավորվել մեկ քաղաքական կազմակերպության մեջ: Արմենական և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների միջև սկսվեցին բանակցություններ, որոնք ավարտվեցին 1908թ. հոկտեմբերի 31-ին Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության ստեղծմամբ: Կուսակցություն, որը տուրք տալով ժամանակի ու երիտթուրքական հաշիշաթմբիրին, ամբողջովին հրաժարվեց արմենականության հետապնդած քաղաքական նպատակներից, ռազմավարությունից ու մարտավարությունից և իր նպատակ հռչակեց «վերականգնված» սահմանադրության էլ ավելի դեմոկրատացումը, երկրի ամբողջականության և անկախության պահպանման պայմաններում հայության ազգային ինքնության հետագա զարգացումը, մերժելով որևէ անջատողական մտայնություն»<sup>1</sup>:

1908թ. տեղի ունեցած «հեղափոխության» խաբկանքը, որը ծնունդ էր տվել ՀՄԿ կուսակցությանը, շատ շուտով հայտնի դարձավ իր իրական նպատակներով: Հայ ժողովրդի բնաջնջման, իր հարազատ տարածքներից նրա բռնավտարման քաղաքականությունը, որ որդեգրել էր «նոր հեղափոխական» իշխանությունը, պարտադրեց «սահմանադրականներին» սթափվել, մի կողմ նետել թուրքական կայսրությունում դեմոկրատական բարեշրջումների միջոցով հայ ժողովրդի համար ազգային կեցության և զարգացման երազախաբությունը: Հստակ դարձավ այլևս, որ կուսակցության որդեգրած ծրագիրը ժամանակավրեպ է: Այդ պատճառով էլ ՀՄԿ-ն սկսած 1910-ական թթ. վերջերից գործնականում հազվադեպ էր օգտագործում, իսկ շուտով ամբողջապես իր վրայից նետեց «Սահմանադրական» ինքնանվանումը (պաշտոնապես դա վավերացվեց ավելի ուշ - Ս.Ս.) և «հիմնական նպատակի խնդրում գրեթե ամբողջովին վերադարձավ Արմենական կուսակցության սկզբունքներին»<sup>2</sup>: Այս փոփոխությունը ծրագրային տեսքով արձանագրվեց ավելի ուշ 1919 թվականին, սակայն մինչ այդ կուսակցական մասնույր լի է արմատներին վերադառնալու կոչերով, հատկապես, երիտթուրքական սահմանադրությունը «սին ու պատիր» որակումներով և ծրագրային փոփոխություններ կատարելու ցանկությամբ: Ուղղակի սկսված համաշխարհային պատերազմը, Մեծ եղեռնը և այլ օբյեկտիվ պատճառներ հնարավորություն չէին տալիս ի մի հավաքելու և կուսակցության նոր ծրագիր մշակելու: Կասկածից դուրս է նաև, որ ՀՄԿ-ին փոխարինելու եկած ՌԱ կուսակցության ծրագիրը գերծ էր արմենականության հեղափոխական ռոմանտիզմից, եղեռնի դաժան փորձությունից իմաստնացած էր ու առաջ էր քաշում ժամանակի համար բավական իրատեսական պահանջներ:

<sup>1</sup> ՀՄԿ ծրագիր: ՌԱԿ, հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վավերագրեր, կազմել դոկտ. **Վաչե Դազարեան**, Պեյրուք, 1988, էջ 21-24:

<sup>2</sup> Թեզիսներ, Արմենական կուսակցության 110 ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի (12 մարտի, 1996թ.), Երևան, 1996թ., էջ 7:

Դեռևս 1919թ. Փարիզում Ազգային պատվիրակության շուրջը համախընդրված մտավորականության մեջ շարժում է սկսվում միավորելու Սահմանադրական ռամկավար և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունները: 1919թ. հունիսի 5-ին միավորման գաղափարով տոգորված նշանավոր գործիչներ Արշակ Չոպանյանը, Արշակ Սաֆրաստյանը, Միհրդատ Միհրդատյանցը, Նշան Տեր-Ստեփանյանը, Երվանդ Աղաթոնը, Պողոս Էսմերյանը, Տիգրան Կամսարականը, Գարեգին Ֆնտրզյանը, Էմիլ Շահինյանը, Նորայր Մարտիրոսյանը և ուրիշներ կազմում են «Հայ Ազգային Ազատական Միությունը»<sup>3</sup> և Փարիզում սկսում են հրատարակել «Հայաստան» պարբերականը: Հայ Ազգային Ազատական միությանը (այսուհետև՝ ՀԱԱՄ – Ս.Ս.) ակտիվորեն գործակցում էին Վ. Թեքեյանն ու Ա. Թերզիպաշյանը: «Հայաստանի» առաջին համարում Չոպանյանը մի հոդված է հրապարակում, ուր քննադատելով միասնության բացակայությունը հայ ազգի մեջ, ողջունում է Վերակազմյալ հնչակյան, Սահմանադրական ռամկավար և Հայ Ժողովրդական կուսակցությունների միավորման գաղափարը: Նույնաման տեսակետներով հանդես են գալիս նաև Փարիզում գտնվող ՀԺ կուսակցության «երկու վարիչները»՝ Միքայել Պապաջանյանը և դոկտոր Էնֆիեճյանը: Նախաձեռնող խմբի ջանքերով հրավիրվում է ՀԱԱՄ-ի հիմնադիր ժողով, որտեղ ելույթ ունենալով նորաստեղծ միության դերն ու նպատակները լուսաբանում է Մ. Միհրդատյանցը: Խոսելով ՀԱԱՄ-ի դերի մասին, բանախոսը նշում է, որ դա համանման ծրագրեր ունեցող երեք կուսակցությունների (ՀՄՌ, Վերակազմյալ, ՀԺ) միավորումն է «չեզոքների ամենասովոր մեծամասնութեան հետ»<sup>4</sup>: Այնուհետև, ըստ Միհրդատյանցի, գոյացած ազգային-ազատական մեծ մարմնին պիտի միանան մյուս կուսակցությունների բոլոր այն անդամները, որոնք «հակում չպիտի ունենան ծայրահեղ ընկերավարական ձգտումներուն հետևիլ»<sup>5</sup>:

ՀՄՌ կուսակցության Հայաստանի շրջանակն էլ 1919թ. գումարեց համագումար, որն ընդունեց **Հայ Ռամկավար կուսակցություն անվանումը**, իսկ Ամերիկայի շրջանակը նույն 1919թ. հիմնում է նոր կազմակերպություն **«Ազգային Ռամկավարական կուսակցություն» անունով**<sup>6</sup>:

Կ. Պոլսում 1920թ. սեպտեմբերին հրավիրված ՀՄՌԿ Գ Ընդհանուր պատգամավորական ժողովն ընդունեց ծրագիր, որի ամենաառաջին թեզն էր. **«Կուսակցութեան անունն է. Հայ Ռամկավար կուսակցութիւն»**<sup>7</sup>:

Այդ նույն ժամանակահատվածում նմանատիպ գործընթաց էր տեղի ունենում նաև Վերակազմյալ հնչակյան կուսակցության մեջ<sup>8</sup>: 1908 թվականից ինքնուրույն գոյատևող ոչ մարդաշատ այս կուսակցությունը, որը եւս որդեգրել էր աստիճանական բարեփոխումների (ռեֆորմների) ուղին, պահանջում էր Արևմրդյան Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի կազմում՝ եվրոպական վերահսկումով: Վերջիններս, որ ավելի չափավոր էին քան Սահմանադրական

<sup>3</sup> Հ. Պողոսեան, Կուսակցական կյանքի հուշերես, Պեյրուք, 1987թ., էջ 15:

<sup>4</sup> «Զարթոնք», 1983թ., ապրիլի 9, «Հայ Ազգային Ազատական Միություն» հոդված, հեղինակ դոկտ. Վաչե Ղազարեան:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Ծրագիր ՀՌ կուսակցության: Վ. Ղազարյանի կազմած վերոհիշյալ ժողովածու, էջ 47:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 36:

<sup>8</sup> 1908թ. Արմենականներին միացել ու ՀՄՌԿ-ն ձևավորելիս մաս էր կազմել Վերակազմյալների մի սասը:

ռամկավարները, Եղեռնից հետո ևս սթափվեցին և սկսեցին նորովի գնահատել իրականությունը: Արդեն 1918թ. նոյեմբերին Վերակազմյալ հնչակյան կուսակցության ամերիկյան հատվածը որոշում է, որ իրենք այլևս «կեղծվին Հայ Ազատական Կուսակցութիւն»<sup>9</sup>, իսկ մի ուրիշ փաստաթղթում<sup>10</sup> հայտարարում են. «Վաղը՝ Հայկական ազատութեան օրերուն՝ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը՝ իբր Ազգայնական Ազատական կուսակցութիւն պիտի աշխատի հետապսու»<sup>11</sup>: Մի այլ վավերագրում էլ կազմակերպությունը պարզապես անվանվում է «Ազատական Կուսակցութիւն»<sup>12</sup>:

«Անշուշտ, - իրավացիորեն գրում է հարցի խորագիտակ Կ.Դալլաքյանը, - նոր անվանումների որոնումներն արդեն իսկ վկայում են, որ հիշյալ կուսակցությունները (ՀՄՌԿ և Վերակազմյալ հնչակյան - Ս.Ս.) ջանում էին դեն նետել նախկին տարագր»<sup>13</sup>:

Սակայն խնդիրը լույս անունների մեջ չէր: Առաջացել էին նոր պայմաններ՝ Եղեռն, սփյուռք (որպես նոր որակի գաղթաշխարհ), հայոց պետականության վերականգնում և այլն, որոնց զուգահեռ ծնվել էին նոր խնդիրներ: Եվ պատահական չէր, որ թե Հայ Ռամկավար և թե Ազատական կուսակցությունների նորաստեղծ ծրագրերում հիմնական գաղափարը հայության ֆիզիկական գոյության ապահովումն էր, որին ստորադասվում էին մնացած բոլոր ձգտումները: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ռամկավարների գլխավոր նպատակը դարձավ աշխարհով մեկ սփռված հայ գաղթականության օգնության կազմակերպումը և նրան դեպի Արևելյան Հայաստան վերադարձին օժանդակելը: Այդ նպատակով ստեղծվեց «Հայաստանի Վերաշինաց հանձնաժողովը»: Դրա համար ՀՌԿ-ն մաս կազմեց նաև Արևմտահայ խորհրդին և նրան ենթակա Ապահովություն խորհրդին, իր ավանդը ներդնելով Թուրքիայից առժամանակ ազատագրված Արևմտյան Հայաստանի վերաշինության գործին: Ետեղեռնյան տարիներին հայ քաղաքական-հասարակական ուժերը ծավալել էին եղեռնից հրաջքով կենդանի մնացած որբերին հավաքելու շարժում: Ռամկավարներն զգալի քայլեր կատարեցին այդ ուղղությամբ: Ազգանվեր այդ գործում հատկապես աչքի ընկավ ռամկավար գործիչ Ռուբեն Հեռյանը: Պատերազմից հետո անտեսելով անասելի դժվարություններն ու իրական վտանգը Հեռյանը թափառում է Տեր Զորի անապատներում և իրեն նվիրում հայկական որբեր փնտրելու, գտնելու և որբախնամ կազմակերպություններին հանձնելու ծանր առաքելությանը: Ծպտվելով անգլիական պաշտոնյայի կամ ամերիկյան միսիոներին հագուստներով, ազգանվեր գործիչը հարյուրավոր որբեր է ազատում անապատներից ու թուրքական հարեմներից: Հեռյանը կոչով հորդորում էր ամերիկահայությանն ու եգիպտահայութեանը իրեն գումարներ տրամադրել, որ նա կարողանա արաբ շեյխերին կաշառելով գլուխ բերել որբափրկիչ գործը: Հաջողելով որոշակի գումար հայթայթել, Հեռյանը ծրագրում էր կրկին մեկնել անապատներ: Այս մտադրությամբ նա ժամանում է Կահիրե, որտեղ 1921թ. հուլիսի 7-ին հանկարծամահ է լինում:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 65:

<sup>10</sup> **Վ.Ղազարյանը** էջ 73-ում գրում է, որ չի կարողացել ստուգել ե՞րբ է լույս տեսել այս «Ծրագիր Վերակազմեալ Հնչակեան (Ազատական-Ազգայնական) կուսակցութեան» փաստաթուղթը: Մեզ հաջողվեց պարզել, որ այն լույս է տեսել առանձին գրքույկով 1919թ. Բոստոնում:

<sup>11</sup> ՌՄԿ վավերագրեր, էջ 73:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>13</sup> **Կ. Դալլաքյան**, նշվ. աշխ., էջ 2:

Փարիզի խաղաղության կոնֆերանսում ռամկավարները պաշտպանում էին Ազգային պատվիրակության տեսակետը: 1921թ. Լոնդոնի կոնֆերանսում և Լոզանում նրանք շարունակեցին աջակցել Պողոս Նուբարի պատվիրակության դիվանագիտական ջանքերին, այն խորին համոզմամբ, որ Միացյալ և Անկախ Հայաստանը պիտի բաղկացած լինի Արևմտյան և Արևելյան Հայաստաններից ու անպայման ելք ունենա դեպի ծով:

Կուսակցության Եգիպտոսի շրջանակը ծրագրում է Անգլիայից գնել 20 ինքնաթիռ, «օժտելու համար Հայաստանի բանակը օդային տորմիդով մը»<sup>14</sup>: Անհրաժեշտություն է առաջանում նաև պատրաստել օդաչուներ հայկական բանակի համար: Այդ նպատակով դիմումներ են արվում Իզմիրի և Ամերիկայի ռամկավար շրջանակներին, որպեսզի 50 օդաչու պատրաստեն: Օդանավերի համար բանակցություններն ընթանում են անգլիական զինվորական իշխանությունների հետ՝ 1920թ. ապրիլից-օգոստոս: Մինչ հոկտեմբեր գնվում է 10 ինքնաթիռ, իսկ նոյեմբերի 27-ին նաև մնացած 10-ը (յուրաքանչյուր ինքնաթիռ գնահատված էր 100 եգիպտական ոսկի): Բայց մինչև ռամկավար շրջանակները զբաղված էին օտար օդաչուներ գտնելու և հայերից օդաչուներ պատրաստելու գործով, իրադրությունը կտրուկ փոխվում է: Թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի պարտությունից և Հայաստանի խորհրդայնացումից հետո Անգլիական իշխանություններն արգելում են ինքնաթիռները Հայաստան ուղարկել<sup>15</sup>:

Ռամկավարներն այս շրջանում շատ ջանքեր թափեցին, որպեսզի ԱՄՆ-ի սենատն ընդունի Հայաստանի մանդատը, սակայն դա չիրականացավ: 1920թ. մայիսի վերջերին ԱՄՆ սենատը քննարկեց այդ հարցը և 23 կողմ 52 դեմ ձայների քանակով մերժեց այն<sup>16</sup>:

1921թ. շարունակվող միության բանակցությունները Հայ Ռամկավար և Ազատական կուսակցությունների միջև փետրվարին մտնում են ավարտական փուլ՝ նրանք համաձայնության են գալիս միասնական ծրագրի ու կանոնագրի շուրջ: Որոշ բանավեճի տեղիք է տալիս միայն նոր կազմավորվող կուսակցության անվան հարցը: Բանակցություններն ընդհանրապես ընթանում էին կառուցողական և համերաշխ մթնոլորտում Մ. Սվազլի և Ա. Թերզիպաշյանի փոխնիփոխ առենապետությամբ: Վերակազմյալ Մ. Գալֆայանն առաջարկեց նոր ստեղծվելիք կուսակցությունն անվանել «Ազատական Ժողովրդապետական»<sup>17</sup>, որը միանշանակ չընդունվեց և երկար վեճերի առիթ դարձավ: Ի վերջո ռամկավար Ա. Ինձիճյանն առաջարկեց «Ազատական Ռամկավար»<sup>18</sup> անունը: Սակայն կուսակցության անվան հարցը հետաձգվեց մինչև միության բանակցություններին Հայ Ժողովրդական կուսակցության մասնակցության խնդրի վերջնական ճշտումը<sup>19</sup>:

1921թ. օգոստոսին ՀԺԿ ներկայացուցիչ Մ. Պապաջանյանը մեկնում է Կ.Պոլիս, հանդիպում ունենում ռամկավարների ու վերակազմյալների հետ, որի

<sup>14</sup> «Ազգ-Պահակ», Բոստոն, 1922թ., սեպտեմբերի 30:

<sup>15</sup> «Զարթոնք», 1971թ., դեկտեմբերի 28:

<sup>16</sup> Մ. Ճիգմեճեան, Պատմություն Ամերիկահայ քաղաքական կուսակցության, 1890 – 1925, Ֆրեզնո, 1930, էջ 444:

<sup>17</sup> ՌԱԿ վավերագրեր, էջ 211:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 215:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 13:



արդյունքում վերջնականապես պարզվում է, որ ՀԺԿ-ն չի մասնակցելու միութ-  
յանը<sup>20</sup>:

Միության բանակցությունները գրեթե զուգահեռաբար ընթանում էին ռա-  
կավարների ու վերակազմյալների ամերիկյան հատվածների միջև և մշտական  
կապը պահպանվում էր նրանց ու Կ.Պոլսի կենտրոնների հետ: Երկար քննար-  
կումներից ու բանավեճերից հետո, մասնավորապես միմյանց հասցեին կուսակ-  
ցական պարբերականներում (ռամկավարական «Ժողովրդի Չայն» և ազատական  
«Առավոտ») հնչած ոչ տեղին ու անհարկի փոխադարձ մեղադրանքների խնդիրը  
հարթելուց հետո 1921թ. սեպտեմբերին միության պայմանները վերջնականա-  
պես մշակելու և ի մի բերելու համար երկու կուսակցությունների կողմից ընտր-  
վում են հավասար թվով՝ երեքական ներկայացուցիչ: Ռամկավարներից էին՝ Ա.  
Մալեմեզյանը, Կ. Փափազյանը և պրոֆ. Լ. Անանիկյանը, իսկ ազատականներից՝  
Հ. Շովիկյանը, Լ. Կյուլեզյանը և Ա. Տեր-Մարկոսյանը<sup>21</sup>: Բանակցությունները  
սկզբում ընթանում էին ազատականների ամերիկյան շրջանակի Բոստոնում  
հրատարակվող պաշտոնաթերթ «Պահակի» խմբագրատանը:

Ի վերջո տարբեր տեղերում մաս-մաս և զուգահեռաբար ընթացող բանակ-  
ցությունները, որոնք ընդհանրապես ընթանում էին կառուցողական մթնոլոր-  
տում և ցանկացած խոչընդոտ հաղթահարելու նպատակամղումով, տալիս են  
բաղձալի արդյունք: Ռամկավար և Ազատական կուսակցությունների լիազոր-  
ները համաձայնում են միության վերջնական պայմաններին և նոր կուսակ-  
ցության կազմավորմանը, որը պիտի կրեր «Ռամկավար-Ազատական» (Democ-  
rat-Liberal) անունը: Այն հռչակվում է Կ.Պոլսում՝ **1921թ. հոկտեմբերի 1-ին**: Նոր  
կուսակցության ստեղծման փաստաթուղթը ստորագրում են ազատականներից՝  
կենտրոնական վարչության անդամներ Մ. Սվազյանը, Հ. Երվանդը, Լ. Գույումջ-  
յանը, ռամկավարներից՝ Ա. Թերզիպաշյանը, Ա. Ինճիճյանը, Գ. Պեռզիկյանը:

Հիմնարար փաստաթուղթը, որ կրում էր «Ռամկավար և Ազատական կու-  
սակցության միութեան» վերնագիրը, հայտարարում էր, որ «Ազգայնական եր-  
կու կուսակցություններու (ՀՌԿ և ՌԱԿ – Ս.Ս.) միացումին համար յառաջ տար-  
ված բանակցությունները հաջողությամբ վերջացած ըլլալով այսօր կհռչակենք ա-  
նոնց անպայման և վերջնական միությունը՝ Ռամկավար Ազատական կուսակ-  
ցություն անունին տակ»<sup>22</sup>: Նորակազմ կուսակցությունը համագործակցության էր  
հրավիրում «ազգանվեր բոլոր կազմակերպություններին, որոնք այլևայլ կերպով  
նվիրված են Հայաստանի ազատության և վերաշինության գործին»<sup>23</sup>:

Ռամկավար Ազատական նորաստեղծ կուսակցությունը թիվ մեկ շրջաբե-  
րականով կուսակցության բոլոր շրջանային վարչություններին ու ակումբներին  
տեղեկացնում էր միության ակտի մասին և շեշտում, որ այն ինքնանպատակ չէ և  
մեզ բոլորիս պարտավորեցնում է այսուհետ ավելի համախմբված լծվել հայա-  
նպաստ գործունեության: Իսկ Կալիֆոռնիայի շրջանի պաշտոնաթերթ «Նոր  
կեանքի» խմբագիր Սարաֆյանը «Հայ ռամկավար կուսակցութիւնը» հռովածում  
գրում է. «Մեզի համար հայ ազգի ուրույն գոյութիւնը ամենասուրբ գաղափարա-

<sup>20</sup> ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 49:

<sup>21</sup> *Մ. Ճիզմեճեան*, նշվ. աշխ., էջ 490:

<sup>22</sup> ՌԱԿ վավերագրեր, էջ 220: Նաև՝ *Մ. Ճիզմեճեան*, նշվ. աշխ., էջ 491:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 47:

կան մըն է, զի հայ ազգի ինքնություն գոյութեան պահպանումը ապահովելու համար էր, որ հայ ժողովուրդը դարերու ընթացքին հանձն առավ քալել խաչի ճամփայեն»<sup>24</sup>: Իսկ ինչ վերաբերում է «ռամկավար» բառին, ապա նշվում է, որ «կուսակցութիւնը կհավատա, թէ հայ ժողովուրդը միշտ ձգտած է դէպի ռամկավարութիւն: Անկկա կհավատա, - գրում է Սարաֆյանը, - թէ հայ ժողովուրդը Հայաստանի անկախութեան հոյակապ տաճարը պիտի կանգնէ ռամկավարութեան անխորտակելի հիմունքին վրա ուր հաստատված են Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի ազատական պետութիւնները»<sup>25</sup>:

Նախկին կուսակցությունների բոլոր շրջանակները շտապեցին ողջունել միությունը: Միության հայտարարությունից հետո աշխարհի տարբեր հայաշատ կենտրոններում, որտեղ կային երկու կուսակցությունների տեղական կազմակերպություններ, միավորման գործընթացը շարունակվում էր: Նույնը կատարվում է նաև ՀՌԿ և ԱԿ պաշտոնաթերթերի հետ. նրանք միանում են և միասնական խմբագրակազմով լույս են տեսնում համատեղ անվամբ, ինչպես օրինակ «Ազգ» և «Պահակ» օրաթերթերը միացան և սկսեց լույս տեսնել «Ազգ-Պահակ» միասնական անվամբ: Լավատես ու հուսադրող հեռանկարներով խանդավառված, բազմաթիվ ոչ կուսակցականներ և խմբակներ ընդունվեցին նորակազմ ՌԱԿ-ի շարքերը և նորածին ՌԱԿ-ը քանակով ու որակով հասավ բավականին բարձր մակարդակի:

Ստեղծված նոր՝ Ռամկավար ազատական կուսակցություն (ՌԱԿ) ուներ իր յուրահատուկ խնդիրները և նոր որակ էր հայ քաղաքական կյանքում: Վերածվելով գաղութահայ կարևոր գործոնի, նորածին կուսակցությունը հետապնդում է երկու գլխավոր նպատակ՝ ազգապահպանում և Հայ Դատի հետապնդում՝ միաժամանակ աշխատելով բոլոր հնարավոր միջոցներով օժանդակել հայրենիքի բարգավաճմանն ու հզորացմանը:

1922թ. հունիսի 2-ին Կ.Պոլսի Գնալը կղզում գումարված ՌԱԿ-ի անդրանիկ համագումարը հստակ նշեց այն ճանապարհը, որով պիտի հետազայում ընթանար կուսակցությունը: Չկիսելով կոմունիստական վարչակարգի գաղափարախոսությունն ու գործելաճճը ռամկավարները ճիշտ կողմնորոշվեցին ստեղծված խառնաշփոթ իրավիճակում և հայտարարեցին, որ Խորհրդային Հայաստանում առնվազն հայ ժողովրդի գոյությունն ապահովված է արդեն և Արևմտահայաստանի Դատը հետապնդելու հետ միասին, իրենք բոլոր հնարավոր միջոցներով կաջակցեն Հայաստանի տնտեսական և բարոյական վերաշինությանը:

Մեծ ջանքերի գնով հաջողվեց 1924-25թթ. կազմակերպել հինգհազարանոց քարավանի ներգաղթը հայրենիք: Առավելապես ՌԱԿ-ի ջանքերով սկսեց կառուցվել ու ամրապնդվել հայրենիք-սփյուռք կամուրջը: 1924թ. հուլիսի 14-ին Փարիզում տեղի ունեցած երկրորդ ընդհանուր պատգամավորական ժողովը կարևոր դերակատարություն ունեցավ կուսակցության համար, որովհետև նրա որդեգրած ուղեգիծը գրեթե նույնությամբ շարունակվեց և հասավ մինչև մեր օրերը: Համագումարը մասնավորապես բանաձևեց, որ սփյուռքահայությունը կգործի հայրենիքի կառավարությանը համախորհուրդ, կաջակցի հայրենիքի վերաշինությանը, ազգահավաքման և ազգապահպանման գործին, ավելի կկազմակերպի հայ գաղութները և կամրապնդի հայրենիք-սփյուռք կապերը:

<sup>24</sup> «Նոր կեանք», 1919թ., հունիսի 11:

<sup>25</sup> Նույն տեղում:

Մշտապես հավատարիմ մնալով կուսակցության տեսական և գործնական քայլերի միասնականության սկզբունքներին, ՌԱԿ-ը սատար կանգնեց ՀԲԸՄ-ի, 1922թ. ծնունդ առած ՀՕԿ-ի, Կարմիր խաչի Հայաստանի մասնաճյուղի հայրենանվեր գործունեությանը, երկրորդ համաշխարհայինի տարիներին հակաֆաշիստական պայքարին և, հատկապես, 1924-48 և 1967թթ. ծավալված զանգվածային կամ մասնակի ներգաղթերին: Խիստ կարևոր դերակատարություն ունեցավ ՌԱԿ-ի ծավալած հայա և հայրենիքանպաստ քարոզչական աշխատանքը, որին լավագույնս ձեռնամուխ էին այն բազմաքանակ պարբերականները, որոնք մեծագույն զոհողությունների գնով լույս էին ընծայում ռամկավարներն աշխարհի տարբեր մասերում:

Իր կազմավորման հենց սկզբից ՌԱԿ-ը շարունակաբար հետապնդեց Հայ Դատը, մինչև որ 1965թ. տեղի ունեցան համազգային հուշատոներն ու երջանկահիշատակ Գերսամ Ահարոնյանի խմբագրությամբ լույս տեսավ «Հուշամատյան Մեծ Եղեռնի» հուշակոթող հատորը: Հետաքրքիր է, որ 1971թ. ՌԱԿ-ի 13-րդ համագումարում բանաձևվեց. «Հետապնդել Հայկական Դատը, արևմտահայ նահանգները ազատելու և հայերուն վերադարձնելու նպատակով: Միաժամանակ սկսիլ Դարաբաղն ու Նախիջևանը բարեկամական դիմումներով և այլ ճանապարհներով վերստանալու աշխատանքները, որովհետև Դարաբաղն ու Նախիջևանը կապասեն իրենց իրավատերերուն»<sup>26</sup>: Ընդհանրապես, ՌԱԿ-ը մշտապես ունեցել է մեկ զերագույն նպատակ՝ հայ ժողովրդի ազատությունն ու իր իրավունքների վերականգնումը պատմական հայրենիքում: Նրա գոյատևման ապահովությունը, որպեսզի կարողանա իր ազգային ազնվագույն հատկանիշները զարգացնել, իր ստեղծարար աշխատասիրության, իր զեղապաշտ հոգու վեհ թռիչքների, իր իմացական հարաճուն հանճարի արգասիքներով հասարակության առաջադիմության տաժանելի ճիգին իր խոնարհ նպաստը մատուցել:

Հավատարիմ իր հայրենապաշտ դավանանքին, ՌԱԿ-ը ոչ միայն ամբողջովին սատար կանգնեց Արցախյան շարժմանը, Սպիտակի երկրաշարժից տուժածներին առավելագույն նպաստ բերելու գործին, այլև անհապաղ ողջունեց Հայաստանի անկախացումն ու անմիջապես լծվեց բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով նորանկախ հանրապետությանը՝ հաղթահարելու առկա բազմաթիվ ու բազմապիսի դժվարությունները:

Դառնալով նորանկախ Հայաստանի երրորդ հանրապետության խորհրդարանական կուսակցություններից՝ ի դեմս նորածին ՀՌԱԿ-ի, և ունենալով մեծաքանակ ֆրակցիաներից մեկը, ռամկավարները կառուցողական ընդդիմության դիրքերից և հավատարիմ ազատական ռամկավար սկզբունքներին, շարունակեցին իրենց համեստ նպաստը բերել հայրենաշեն սրբազան գործին: Սակայն մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով այսօր կուսակցության հետագա ընթացքը շեղվել է իր զարգացման բնականոն ուղուց, ինչն, իմ խորին համոզմամբ, ժամանակավոր բնույթ է կրում և մոտ ապագայում, հույսով եմ, կշտկվի և ամեն ինչ կընթանա հարթ, խաղաղ և ստեղծագործական նվաճումներով լեցուն ճանապարհով: Որովհետև ոչ միայն ՀՀ-ում, այլև աշխարհի զարգացած բոլոր երկրներում, անհատի ազատության ու սեփականության իրավունքի հիմնարար դրույթները, որոնք ռամկավար-ազատական գաղափարախոսության հենքն են,

<sup>26</sup> Վ. Ղազարյան, ՌԱԿ, Ուղեցույց և համառոտ պատմություն, Ե., 1991, էջ 93:

կարողացել են քննություն բռնել, ապացուցել իրենց կենսունակությունը: Ավելին, ինչպես գրում է լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսության ժամանակակից տեսաբան Ֆ. Ֆուկույաման «լիբերալ-դեմոկրատիան կարող է լինել մարդկության գաղափարական զարգացման վերջնակետը և մարդկային կառավարման վերջնական ձևը», իսկ հայ ժողովուրդը դա հասկացել է սրանից ուղիղ 90 տարի առաջ՝ ի դեմս ՌԱԿ-ի ստեղծման:

**Сурен Саргсян – 90-летний юбилей Партии Рамкавар-Азатакан.** – Основанная 1 октября 1921 года Партия Рамкавар-Азатакан (либеральная демократическая партия) имеет одновековую историю. Ее идеологические корни восходят к идейному полю первой партии в армянской действительности – Арменакан. В течении всех лет существования ПРК придерживалась одного кредо – всеми средствами служить армянской нации и высокой идеи ее сохранения армянства. В лице своих преданных членов партия никогда не спасовала перед трудностями, с гордостью и с верой в будущие победы проходила свой почетный путь.

Не разделяя идеологию и практику коммунистического режима, правильно сориентировавшись в сложной ситуации, рамкавары, принимая Армению за единственную Родину армян, поддерживали ее во всех инициативах, вместе с тем продолжая борьбу за признание геноцида армян на международной арене. Оставаясь верной своему патриотическому долгу, партия полностью поддержала Арцахское движение и восстановление независимости Родины.

Сегодня партия несколько отклонилась от нормального пути, что является временным явлением и в ближайшем будущем ситуация, без сомнения, исправится, и все пойдет по гладкому и полному творческих достижений пути.

---

## СУДЕБНЫЕ ПОСТАНОВЛЕНИЯ ПО ДЕЛУ ПАРТИИ “ДАШНАКЦУТЮН” 1908-1909 гг.

ВАЛЕРИ ТУНЯН

Ряд террористических актов на Кавказе, совершенных представителями партии “Дашнакцутюн” в начале XX в. привлекли внимание охраны самодержавия России. Началось судебное следствие, где до сих пор не изученными являются очередность и содержание постановлений деятельности тайной полиции, восполнение которых является предметом статьи на основе материалов судебного процесса над партией “Дашнакцутюн”.

20 октября 1908 г. следователь по особо важным делам г. Новочеркаска Донской области Н. Лыжин занялся изучением телеграмм Тифлисской, Потийской, Ереванской, Шушинской и Новороссийской почтово-телеграфных контор за январь - 12 сентября 1907 г., относящихся к заведенному делу “О преступном сообществе революционной партии Дашнакцутюн”. Итоги получили отражение в постановлении следователя за 28 октября - 8 ноября 1908 г. Отмечалось, что 10 июня 1907 г. в с. Армавир представители “отряда устрашения” (“Агабегич мармин”) партии “Дашнакцутюн” Андраник Вартапетян и Хечо Мухтаров организовали покушение на хмбапета Миграна (Габриеля Кешишяна), руководителя фракции “Старый Дашнакцутюн”. Хмбапет получили три раны, а его товарищи - участники сражений в Османской Турции Андриас Вартапетян и Хечо Мухтаров погибли. В покушении участвовали представители Нораванского подкомитета (Армавирского) Геворг Бежанов, Аршак Чилингарян и другие.

Несостоятельной оказалась попытка реализовать майское постановление Венского съезда партии “Дашнакцутюн” об ликвидации противников нового социалистического направления деятельности партии Раненный Мигран оказался на излечение в больнице профессора Субботина г. Пятигорска. Однако смертельная угроза покушения заставила вечером 31 июля Миграна, с братом Апетом Вартеросяном, сестрой Зарой Казанджян, ее сыном Каспаром Назаровым и телохранителем Ованесом Шагиняном бежать в Новороссийск и Ялту. Это побудило направить в 10 августа в Новороссийск “главного боевика” партии и члена центрального Тифлисского комитета “генерал-губернатора” Хачатура Амирова, с помощниками - Хачатуром Аслановым и Леоном Саядовым. Поздно вечером следующего дня подозрительное поведение членов группы обусловило арест военным патрулем и направление в ближайший полицейский участок. В ходе обыска у Хачатура Амирова были выявлены документы, телеграммы, памятная книжка, удостоверяющие принадлежность к партии “Дашнакцутюн”<sup>27</sup>.

Следователь Лыжин констатировал: “Такой неожиданный арест произвел громадный переполох в Тифлисском центральном комитете и полетели из Тифли-

---

<sup>27</sup> НАА, ф. 95, оп.1, д. 1, л. 57, 59, 69, 80, 81.

са телеграммы в Армавир, Пятигорск, Новороссийск и Батуми. Приняты были все меры, чтобы освободить Хечо из под стражи”<sup>28</sup>. Новый отряд устрашения, из представителей Армавира, Бесслана и Пятигорска во главе с Каро (Амбарцум Агаджян) и Варданом был направлен в Ялту для убийства Миграна и его родственников. Покушения оказалось успешным лишь относительно семнадцатилетнего племянника Каспарова Назарова. Каро и члены группы - Аршак Сильван, Петроса Бодров, Ованес Саркисов (он же Мартирос), Арутюн Бегляров, Карапет Унано, Абраам Саносян, Вагаршак Калантаров, Анаит Парсаданян были арестованы. Лишь Вардану удалось 26 августа скрыться из Ялты в Новороссийск, куда он вызвал подкрепление из Тифлиса для освобождения Хечо из тюрьмы. Выслан новый отряд для сведения счетов с Миграном и всеми представителями старой партии “Дашнакцутюн”. До этого расправы были осуществлены в армянском районе Авлабар Тифлиса, в селении Армавир, хуторе Романовском Кубанской области, близ станции “Кавказской”, Пятигорске, где были сильны представители старой фракции.

В постановлении говорилось, что в 1906 г., когда революционное движение в России охватило и Кавказ большая часть членов партии “Дашнакцутюн” встало на путь борьбы против царского режима. Наряду с этим партия стремилась к низвержению султанского строя в Османской Турции. Противники нового курса во главе с Миграном Кешишяном к осени 1907 г., в своем большинстве, были разгромлены, а оставшиеся в живых прекратили партийную деятельность: “Между Кавказскими армянскими социалистами - революционерами остались одни социалисты или революционная партия”. По образу известного армянофобского публициста Величко был создан антипартийный эпитет для представления усиления деятельности революционной организации в обществе: “Армянский Величко (Новый Дашнакцутюн) позволяет себе образовать народные суды и требует народных жертв”<sup>29</sup>. Выявилась полностью “антиправительственная деятельность”, использовавшей шифрованные телеграммы для реализации своих замыслов<sup>30</sup>.

Отмечалось, что “Организационный устав” и программа партии “Дашнакцутюн” были изучены по документам, поступившим 17 августа. Определен характер и главная установка партии в империи: “В общих чертах она вполне тождественна с программой социалистов-революционеров. Главной задачей этой партии является деятельность направленная к ниспровержению существующего в России государственного строя и на изменение установленного основными законами образа правления и связанного с ним общественного строя, с целью учреждения в русском государстве демократической республики. Причем, это преступное сообщество представляет собой стройную и прочно организованную партию с Тифлиским центральным комитетом во главе и с комитетами и подкомитетами в разных городах Российской империи”.

Лыжиным была обоснована необходимость концентрации следствия по делу партии “Дашнакцутюн”: “В силу изложенного, является необходимость сосредоточить в одних руках следственное делопроизводство и всей партии “Дашнакцутюн”

---

<sup>28</sup> Там же, л. 8.

<sup>29</sup> Там же, л. 82.

<sup>30</sup> Там же, л. 105 - 107.

тюн”, действующей на всем пространстве русского государства”. Судебный следователь постановил: “О всем изложенном довести до сведения господина прокурора Новочеркасской судебной палаты, посылая ему копию с сего постановления”<sup>31</sup>.

Санкция была получена и уже 22 декабря 1908 г. в г. Ростове-на-Дону был осуществлен допрос Гарегина Амирова Геворгова Он являлся профессиональным революционером, активно перемещался по городам Кавказского края, и с июля 1907 г. работал в типографии “Гермес” в Тифлисе. Управляющим типографии являлся Арутюн Татрян. Гарегин Амиров признал родство с братом “генерал-губернатором” Хачатура Амирова, но причину ареста в Новороссийске не сумел назвать, поскольку последний раз с ним встречался 3 августа 1907 г. Хачатур Амиров, до этого, на протяжении полутора месяца, служил в конторе Павла Едигарова по содержанию почтовых экипажей. Лишь косвенно была установлена партийная принадлежность типографии, на основе смысла выявленной шифрованной телеграммы от 2 августа из Армавира в Пятигорска: “Для ликвидации дел Гермеса состоялось постановление, продать его. Необходимо ваше согласие”<sup>32</sup>.

5 января 1909 г. следователь Лыжин занес в протокол заявление свидетелей Габриеля Кешишяна, Апета Вартеросяна и Заруи Казанджяна, по делу партии “Дашнакцутюн что они вследствие постоянных угроз теракта и боязни быть убитыми не хотят проживать в России, желают выехать за границу, “но куда-пока указать не могут”<sup>33</sup>. Намечалось начальное проживание в г. Новороссийске, а после определения в вопросе местожительства указания своего адреса.

Не получив должной информации следователь Лыжин 6 января 1909 г. в Новочеркасске допросил 36 летнего Миграна, уроженца западноармянского г. Баберда (Паперцы), который никогда не был судим, имел “армянскую грамотность” и владел русским разговорным языком. В дополнение к своим показаниям в Екатеринодаре о деятельности в Турецкой Армении и расхождении во взглядах с представителями нового “Дашнакцутюна” свидетелем была изложена история побега из Пятигорска в Ялту. Из представленных фотографий партийных деятелей Мигран опознал Акопа Чилингаряна, имевшего влияние в партии, как руководитель террористических отрядов. Указаны видные деятели: “Доктор Будагов, доктор Егиазаров, доктор Арцруне и доктор Завриев - это члены той же партии; они принимают деятельное участие в партийных делах. Указана их причастность к текущему курсу партии”<sup>34</sup>. Отмечена принадлежность Айка Согомоняна к членству в центральном Батумском комитете, который угрожал Миграну расправиться с ним в случае приезда. Абраам Алексанян определен членом Ахалцихского подкомитета. Татевос Амирянц и его брат Арам Амирянц указаны боевиками Бакинского комитета (“Восканапат”), Татевос Саркисов - член подкомитета в Армавире, Саак Гароян - в Карсе, Аршак Галоян- Терека, Сейран Григорян из Эчмиадзина.

Были даны пояснения к той или иной личности, причем указана та или иная их роль и частично раскрыт состав одного из двух руководящих органов пар-

---

<sup>31</sup> Там же, л. 108.

<sup>32</sup> Там же, л. 89.

<sup>33</sup> Там же, д. 2, л. 143.

<sup>34</sup> Там же, л. 144.

тии - Восточное бюро. Лаборант учебного заведения с С.-Петербурге Давид Христофорович Завриев являлся членом Государственной Думы, а правитель дел канцелярии католика в Эчмиадзине архимандрит Усик Мкртич Зограбян состоял членом партии “Дашнакцутюн”. Акоп Чилингарян в 1905-1907 гг. в г. Ростове-на-Дону собрал с зажиточных кругов около 50 тыс. руб., переправлял закупленное оружие из Австрии на Кавказ. Для провоза ящиков с оружием по Владикавказской железной дороге их оформляли в виде ящиков с окорками. Они поступали к буфетчикам станции Тихорецкая, которые их распределяли в Баку либо Тифлис. Архимандрит Корюн в Елисаветполе и Завен в Баку собирали пожертвования. Архимандрит принимал активное участие в деле противодействию нападения татар на армянское население, организовал дружинников для Елисаветпольского комитета и руководил деятельностью зинворов. Хачан (“Хечо”) значился боевиком при Тифлисском центральном комитете. Артемий Мелконян (кличка “Мелик заде”) являлся учителем из Шуши, принимал участие в преследовании Миграна. Другим преследователем указан Гехам Мкртчян - приказчик у Барикова в Армавире. Доктор Минас Мурадов, как член Тифлисского комитета и главный член Восточного бюро, поддерживал связи с границей и к нему поступали средства из России. В его распоряжении в 1905 г. было 2 млн. партийных денег. Кроме того некоторое время он был редактором партийного официоза г. “Еркир”. Мегаворян Саркис (“Сако”) – главный распорядитель боевиков и начальник отряда устрашения, приживал в тифлисском районе Вере и был членом Восточного бюро.

Ночное время и усталость Миграна прервали допрос, который возобновился 8 января 1909 г. Были показано наличие двух руководящих органов партии “Дашнакцутюн” - Восточное бюро в Тифлисе и Западное бюро в Женеве. Контроль над деятельностью обоих бюро и центральными комитетами осуществлял Совет партии, состоящий из пяти человек. Имелся и финансовый главный совет партии. Бюро состояли из пяти человек и двух запасных членов. После Венского съезда в состав Восточного бюро входили доктор Минас Мурадов, доктор Амо Огаджанян, агроном Симон Заварян, Степан Зорян и Аветис Агаронян (писатель). Из запасных членов Миграну был известен лишь Гарегин Бастрмаджян (“Гаро”). Местом собраний Восточного бюро в Тифлисе были редакции армянских газеты - “Хариск”, “Жайр”, Жаманак” и другие. Количество центральных комитетов в Российской державе составляло 11: Баку - “Восканапат”, Карс - “Джраберд”, Ереване - “Мркистан”, Александрополь - “Кар”, Елисаветполе - “Айгестан”, Тифлис - “Мец кахак”, Батуми - “Навангист”, Владикавказ - “Жлат”, “Одесса” - название не было дано, Шуши - “Абаран”, Нахичеван - “Налбанд”.

Центральный комитет создавался в тех местностях, где имелись на лицо 35 групп, пять подкомитетов и один местный комитет. Так, имелись комитеты в Москве. С.-Петербурге и Астрахани и во всех городах Кавказа. Были названы наиболее активные деятели Тифлисского центрального комитетов - Гарегин Хажакян и Егише Топчан. Из представителей кавказской администрации членами комитетов являлись Новобаязетский уездной начальник и Ереванский уездной начальник Аракелов. При этом не все средства контролировались высшим партийным аппаратом. В 1907 г. хмбапет Мигран собрал квитанции от рабочих, полученных за пар-



тийный начет Тифлисского центрального комитета, чтобы доказать на съезде партии какие “злоупотребления” допускает Тифлисский комитет<sup>35</sup>.

После перерыва был составлен дополнительный протокол допроса свидетеля. Им была определена программная установка социалистов-революционеров: “Главной задачей партии новый “Дашнакцутюн” есть учреждение автономного армянского государства, отделение его от русского государства в качестве кантона как в Швейцарии, так чтобы в этом государстве был учрежден революционный образ правления. Причем Кавказ был бы часть демократической России”<sup>36</sup>. Были названы 103 членов только комитетов и подкомитетов революционной организации. Так, об одной представленной партии 15 фотографий было сказано:” Личности, изображенные на показываемых вами карточках я знаю, как членов армянского революционной партии “Дашнакцутюн”.

Обращено было внимание на внутрипартийные разногласия. Появление нового “Дашнакцутюна” обусловили прекращение революционной деятельности в Османской Турции. Поэтому возникла небольшая группа дашнакцаканов в 1200-1300 человек, которые стали пропагандировать исключительно цели русской социал-революционеров, программу которых они приняли, но для отличия стали называть себя “младодашнакцаканы”. “Новый Дашнакцутюн” наметал осуществить их преследование, но угроза столкновения с русскими “социалистами-революционерами” (эсерами) заставила отказаться от намерения. Младодашнакцаканы были вынуждены провозгласить себя “армянским отделом всероссийских социалистов-революционеров”, чтобы их не смешивали с новой фракцией дашнакцаканов. В свою очередь, они их стали именовать “гжитанав” (“умалишенные”) Представители новой фракции вступили в переговоры с “армянским отделом социалистов-революционеров”, чтобы добиться их возвращения в партийные ряды.

Затронут был вопрос террористической деятельности. При каждом центральном комитете партии “Дашнакцутюн” существовали отряды боевиков, в количестве от 40 до 100 человек. Самый большой отряд до 150 человек значился при Тифлисском центральном комитете. При Восточном бюро находился особый отряд “Агабегич мармин”. Его деятельность контролировал специальный координационный совет: из одного члена Восточного бюро, одного члена Тифлисского центрального комитета и одного от Бакинского комитета, а остальные представляли зинворов. Боевики получали жалованье от 15 до 100 рублей в месяц. Помимо этого, за совершенный теракт полагалась выплата до 200 руб. Членами Совета устрашения были указаны: Аветис Агаронян (от бюро) Саркис Манасьян (от Тифлисского ЦК), Карабахский Никол - партийная кличка “Карабахский Никол” (от Бакинского ЦК) Сако Мегаворян из с. Севкар Казахского уезда, два турецкоподданных хмбапетов - Сепо и Мурад, “генерал-губернатор” - Хачатур Амиров.

Из руководителей боевиков назван Александр Меликов Шарафян, которых был главой боевиков по северокавказскому району, с Терской (Чечня) и Кубанской областями, г. Ростову-на-Дону. Он получал 100 руб. жалованья в месяц и суммы на транспортные расходы. С 1905 г. этим отделом боевиков было совершено свыше 200 покушений.

---

<sup>35</sup> Там же, д. 1, л. 145 - 150.

<sup>36</sup> Там же, л. 151.

Наиболее выдающимся террористическим актом Мигран считал убийство ген. Алиханова в г. Александрополе в первых числах июля 1907 г. Алиханов Аварский командовал карательными отрядами в Нахичеванском и Гурийском уездах и был приговорен к смертной казни армянскими и грузинскими революционерами. Зимой 1906 г. ген. Алиханов проживал во Владикавказе, но вызванный из Тифлиса отряд в 10 боевиков не добился успеха. Дело в том, что, что ген. Алиханов будучи “осторожным” человеком предпочитал не выходить из дома. Он затем уехал в Александрополь, о чем Мигран узнал из сообщений газет находясь в пятигорской больнице. В полученной затем информации значилось, что в покушении из группы в десяти человек участвовали Хачатур Геворков (“Хечо”), Гарегин Геворков (“Мартин”) и “известный террорист” среди армян Дро. Назвать личность Дро (Драстамат Канаян) Мигран не сумел или не захотел: “Как зовут Дро - я не знаю”. Однако, затем уточнил, что Дро участвовал в мае 1905 в убийстве Бакинского генерал-губернатора Накашидзе, который ничего не предпринимал для прекращения армяно-татарских столкновений.

На вопрос Лыжина о желательности указать и другие важные террористически акты последовало сообщение об убийстве в Батуми присяжного поверенного Керима Султана Кенгерлинского (1905) полковника Богуславского, начальника пограничной стражи офицера Гр. Быкова в Сурмалинском уезде Ереванской губернии. Такой диапазон деятельности боевых групп мотивировался хорошей технической оснащённостью: “В распоряжении партии “Дашнакцутюн” имеются громадные склады бомб, ружей, револьверов и т. п, так что в каждом большом городе Закавказья имеется по два цейхгауза с оружием. Оружие приобретается как в России, так и за границей”<sup>37</sup>. Успешной акцией представлено освобождение “генерал-губернатора” Хачатура Амирова из Екатеринодарской тюрьмы, которую устроил Мкртич, что обошлось ЦК Тифлиса в 6 тыс. руб.

Использовалось пропагандистское и психологическое воздействие. Брат Миграна Апет Вартиросьян в июне 1907 г. в газетах “Жайр” и “Харисх” увидел напечатанные постановления Тифлисского комитета, на основе решения Венского сезда, об осуществлении террора над представителями “мигранизма” и его сторонниками. Именно поэтому он телеграфировал в Пятигорск, чтобы Мигран скорее бы переехал в Армавир. Не чурался этого подхода и сам Мигран. В газете “Мшак” им была прочтена статья против нового “Дашнакцутюна”, подписанная Величко – бывшего редактора г. “Кавказа”, известного своими нападениями на армян. Он стал использовать фамилию Величко против своих противников: “тот Величко порицал деятельность новой партии, а потому и я порицая деятельность её, в переносном смысле употреблял фамилию Величко в насмешку деятельности новой партии”<sup>38</sup>. Другой же критик деятельности “нового “Дашнакцутюна” Мушегянц удостоился печальной участи в Тифлисе.

10 января 1909 г. в состоялся допрос Апета Хачатурова Вартеросян - 29 лет, персидскоподданный, армяно-григорианского исповедания, проживающий временно в г. Новороссийске. Он подтвердил свою принадлежность к старой партии

---

<sup>37</sup> Там же, л. 152.

<sup>38</sup> Там же, л. 154.

“Дашнакцутюн”, вместе с братом Миграном, и отметил беспартийность сестры Зары Казанджян, хотя и была сторонницей партии “Дашнакцутюн”. Подтверждено, что четвертый съезд партии в Вене 1907 г. призвал к физической расправе над Миграном и его сторонниками. После чего последовало массовые избиения представителей старой партии. Лишь на Кавказе погибло до 60 человек. Были приведены данные по Ахалциху, Тифлису и Пятигорске. На представленных фотокарточках опознаны боевики центрального Тифлисского комитета Ваган Тономян, Асатур Ростомян, Баграт Мануков, Карапет Геворгянц, Гарегин Хумурьянц, Акоп Галустов, Мкртич Карапетян, Аршак Погосьян, Степан Хачикоянц, Александр Григорян, Гевург Акопов, Арутюн Григорян.

На других предъявленных карточках, свидетельствующий о высоком качестве работы тайной полиции, Арменак Сильвиан был опознан как председатель Ялтинского комитета партии. В разряд боевиков были зачислены также Карапет Вартамян и Гарегин Геворгянц. Акоп Чилингарян охарактеризован как один из главных боевиков партии, заведующий транспортировкой оружия в Закавказье из Москвы. Оно поступало в Новороссийск и транспортировалось почтовым трактом. Подтверждена была также революционная деятельность Алкесандра Шарафяна и Петроса Бодрова, что означало подтверждение показаний хмбапета Миграна. При этом Апет заявил: “Я хорошо знаю Александра Шарафяна (Шарифеев) - есть начальник террористического отряда, действующего в Предкавказье (или на Северном Кавказе), Владикавказе, Пятигорске, Армавире, Екатеринодаре, Ростове-на Дону и пр.”<sup>39</sup>. Сообщено, что Алавердян сумел задержать провожатого Сергея Абдулянца братьев Миграна и Апета при отъезде из Пятигорска, который целую сутки подвергался допросу о месте отъезда “паперцы” в погреб. Абдулянец был убит затем в Армавире. Место же пребывания в Ялте стало известно от буфетчиков станции “Кавказская” С. Давидова и Аршеева, являвшихся членами новой фракции.

Выяснилось наличие доступа новых дашнакцаканов к наместнику Кавказа Воронцова-Дашков, позволяющего ориентироваться в мероприятиях специального характера, свидетельствующий о наличии контрразведки: “Джумшуд Егамов - из Эривани, член новой партии “Дашнакцутюн”. Отец этого Джумшуда - уездной Кутаисский начальник а сын Джумшуд служит у наместника, чем то вроде секретаря. Через него армяне этой партии имеют сильную поддержку у наместника и поставляются в известность о намерениях властей предпринять те или иные меры против дашнакистов новой фракции”<sup>40</sup>.

Заявлено, что Симон Заварян член Государственной Думы входит также в состав Восточного бюро. Высокой оценки удостоена деятельность доктора Минаса Мурадова и Егише Топчяна. Последний был указан как один из главных составителей социалистической установки партии “Дашнакцутюн”, “принявшей программу социалистов-революционеров максималистов”. Никол Думан, которому шел 45-й год, охарактеризован был руководителем всех терактов партии и “Агабегич мармин”. Именно он ассигновал 10 тыс. руб. на освобождение генерал-губернатора Хечо из больницы Екатеринодарской тюрьмы. “Обласканный” денежным вни-

---

<sup>39</sup> Там же, л. 156.

<sup>40</sup> Там же, л. 156, 157.

мание врач привел здорового Хечо в тюремное отделение при войсковой больницы, а надзиратель передал ключи от выходной двери. При этом подкупленная русская женщина вывезла Хечо на фаэтоне из больницы. Вслед за ним в бега ударился часовой - армянин.

Были приведены новые и уточняющие сведения: “Уездной начальник Новобаязетского уезда Корганов - видный деятель в той же партии “Дашнакцутюн”. Я не понимаю, как он остается на правительственной службе, ибо о нем имелось дело в 1901-1903 гг. по обвинению в транспортировке оружия турецким армянам, когда он еще состоял в должности уездного начальника в Нахичеване Эриванского уезда”<sup>41</sup>. Корганов с середины 90-х годов 19 в. находился под полицейском контролем, но каждый раз выходил сухим из воды. Подтверждена и антиправительственная деятельность уездного начальника Аракелова. Указана тайная явка и место укрытия в краевой столице: “В г. Тифлисе существует столовая под названием “Эриванская столовая Анатолянца”, где укрываются, живут и столоваются террористы и другие гости”<sup>42</sup>.

11 января 1909 г. состоялся допрос Заруи Назаровны Казанджян, 38 лет, вдовы турецкого подданного, “грамотной по армянски”, временно проживающей в Новороссийске, но желавшей вернуть в отчий кров. Вместе с братьями Габриелем Кешишьяном (Миграном) и Апетом Вартеросьяном, являлась уроженкой г. Баберда Эрзерумского вилайета. Если братья являлись членами старого “Дашнакцутюна”, то она, вместе с погибшим сыном Каспаром Назаровым Казанджяном являлась сочувствующей старой фракции. Точно также она была настроена против новой фракции: “В стане Миграна называют эту партию собранием эксплуататоров, а программу ее ложной”<sup>43</sup>. Подтверждена информация, что Венский съезд “Дашнакцутюн” приговорил Миграна к смертной казни. Приговор взялся осуществить Мартиров Ованес (Саркисов), выдавший себя за сторонника Миграна, который так “ловко провел всех, что хмбапет назначил его телохранителем”. При этом Мартирос сумел удалить от Миграна верного ему телохранителя Ованеса Шаньяна, указав на него как сотрудника полиции, что заставило его уехать из Ялты. В итоге 27 августа Каспар погиб в парке от руки Мартироса. После бегства из Ялты все семейство оказалось в гостинице “Нью-Йорк” г. Екатеринодар.

На основе показаний свидетелей, следователь Лыжин добился 13 января 1909 г. постановления в Ростове-на-Дону, чтобы привлечь в качестве обвиняемых Карапета Аракелова, Мнацакана Саркисова и Геворга Аракелова. Уже 14 января состоялся допрос Геворга Аракеляна, бывший управляющий имения Мелик Нубарова в Тифлисе, редактировавший газету “Зангак” в Ереване и член “Агабегич мармина”. Опрошен был и Мнацакан Багдасаров Саркисов<sup>44</sup>.

4 февраля 1909 г. осуществлен дополнительный допрос свидетеля Миграна в г. Новочеркасске. Следователя Лыжина интересовало содержание понятия “Антарепат”. На это было указано, что им обозначают г. Сарыкамьш, Карсскую об-

---

<sup>41</sup> Там же, л. 157.

<sup>42</sup> Там же, л. 158.

<sup>43</sup> Там же, л. 160.

<sup>44</sup> Там же, л. 172.

ласть с Каракилисом. В этих местах складировалось партийное оружие. Один из них именовался “Антарапат первый”, а другой - “Антарапат” второй. Раскрыто было значение кодированных слов: тесто - динамит, сахар - порох, марки - побег. Архимандрит Корюн охарактеризован был как главный распорядитель Елисаветпольского центрального комитета. Спустя пять дней Мигран коснулся одну из операций по переброске оружия. 4 сентября 1906 г. в Феодосии полицмейстер и помощник пристава на пристани “Русского общества пароходства и торговли” задержали две бочки с указанием, что в каждой из них имеется 23 пуда вареного мыла, которые были предназначены для отправки в Батуми от имени Азизова. Вместо заявленной продукции оказалось 6 пуд 25 фунтов пуль для патронов к трехлинейным винтовкам, 10 фунтов патронов для тех же винтовок, 27 фунтов бездымного пороха, боевые патроны к винтовкам, а в трех мешках - 70 пудов пороха<sup>45</sup>.

Анализ собранной информации позволил Лыжину вынести постановление о ходе следствия по делу партии “Дашнакцутюн” с 4 по 8 февраля 1909 г. В нем указывалось, что с 1905 по 1908 гг. новый “Дашнакцутюн создал антиправительственные структуры в Российской державе из трех уровней: высшей, средней и низшей. Высший уровень составили “Восточное бюро” и “Совет партии”, располагавшиеся в г. Тифлисе. Второй уровень представляли центральные комитеты в Тифлисе, Одессе, Ростове-на-Дону, Владикавказе, Баку. Ереване, Шуши (“Апаражский”), Елисаветпольский (“Айгестанский”), Александрополе, Карсе и Батуми, которые собирали 2% доходов своих членов.

Партийная печать активно вела пропагандистскую деятельность и оповещала общественность о партийных установках. 2 ноября 1905 г. газета “Возрождение” г.Тифлиса, поместила воззвание бакинского центрального революционного комитета о создании партийной коалиции в составе местных структур российской социал-демократической рабочей партии, социал-демократической партией “Гнчак” и революционной федерации “Дашнакцутюн” как действенного средства противодействия вандализму и установлению порядка в г. Баку: “Поджоги и убийства совершаются беспрепятственно, не вызывая отпора со стороны администрации”. Такое состояние ситуации объяснялось деятельностью реакции, желающей нанести удар освободительному движению в России, что вызывало необходимость противодействия: “Мы, организации г. Баку, составили коалиционный союз для подавления хулиганствующей реакции. Для достижения этой цели новосозданный союз не будет останавливаться ни перед какими средствами: будут пущены в ход оружие и бомбы и террор по отношению к тем лицам, которые возьмут на себя роль быть вдохновителями и проводниками реакционных элементов”<sup>46</sup>.

Главным официальным органом партии являлась г. “Дрошак”. Были внимательно изучены публикуемые материалы. Особое внимание было уделено публикации подборке писем с 10-23 февраля 1905 г. из Баку об армяно-татарских столкновениях и безразличии ген. губернатора Накашидзе, представивших аналитическую сводку важных событий: “Сегодня, 7 февраля влиятельные граждане, армяне и татары, пошли к губернатору и просили принять меры для прекращения зверств, происходящим в

---

<sup>45</sup> Там же, л. 172, 232, 233.

<sup>46</sup> Там же, л. 843.

городе. Губернатор принимал их очень хладнокровно и открыто говорил, что ничего не может сделать, указывая на то что не имеет войска, Странный ответ<sup>47</sup>.

Отмечена последующая встреча начальника одной из армейских частей, который заявил Накашидзе, что при его желании в течении двух часов можно было бы прекратить происходящее варварство. В ответ последовало молчание: “Губернатор опустив голову молчал”. Это вызвало обращение представителей общественности к присутствующему мусульманскому кадию. Тот же заявил: “Я также это хорошо не понимаю, но мы не виноваты, это злодеяние его рук”<sup>48</sup>. Под “этим” понимался губернатор Нака-шидзе.

Внимание уделялось изменением в руководстве Кавказа. Газета “Дрошак” опубликовала письмо из С.-Петербурга 1 марта 1905 г. о назначении наместником графа Воронцова-Дашкова, привлекающее внимание отношением к историческим личностям: “Можно предполагать, что после бессмысленной храбрости Голицына, которая вселила всеобщее возбуждение, будет назначено такое лицо, которое, благодаря своему имени, прошлым и направлению, сможет внести в умах маломальское умиротворение. Так было в 1891 году, когда после главноначальствующего Дондукова-Корсакова был призван наместником Шереметев с целью предать забвению прошлое и смягчить недовольство”.

В происходящей кадровой перестановке виделся кризис царизма, который был вынужден направить приближенного “слугу” режима для исправления ситуации на Кавказе. Представлен политический портрет Воронцова-Дашкова для ориентации в его предстоящей деятельности: “Лихорадочный льстец Александра III, друг матери царя, член всемогущей и оппозиционной “олигархии”, ведущий дела в несчастной России. Воронцов-Дашков имеет желание и инструкцию непременно продолжить политику обрусения и упрочить порядок, не останавливаясь ни перед какими средствами”. Сделан обобщающий вывод: “Политика гонения и угнетения не успокоят, а наоборот дадут силу к политическому мятежу, которым охвачено все Закавказье”<sup>49</sup>.

В публикации “О бедствиях” (Тифлис, 25 июня 1906 г.) указывалось, что ереванский губернатор “князь” Наполеон представил доклад из 19 пунктов наместнику Кавказа о деятельности карательного генерала Алиханова, который “открыто поощрял” татар к нападению на армянское население. Граф Воронцов-Дашков был вынужден удалить Алиханова из Ереванской губернии. Красной нитью проводилось положение, что это явилось следствием нагнетания национальных страстей, причем “нападения на армян были подстрекаемы турецким правительством”, противоречащие державным интересам. Об этом прямо писалось: “Говорят, что доклад “князя” заставил наместника Воронцова-Дашкова переменить подход и осознать опасность. Русские только что образумились и поняли, что Нахичеванские ханы и татары-предводители начертали программу - уничтожить всех армян в Нахичеванском и Шарур-Даралагязском уездах, чтобы на громадном пространстве Персидской и Турецкой границ имели узко-магометанскую национальность”.

---

<sup>47</sup> Там же, д. 4, л. 1824.

<sup>48</sup> Там же, л. 1829.

<sup>49</sup> Там же, л. 1831.

Представлялась подвижки в видах кавказской администрации: “Эта программа без сомнения губительна для армян, поэтому здесь всячески старались вернуть армян на свои места. Пострадавшим даются земельные орудия, животных и материальную помощь. Даже хотят отделить татар от армян, чтобы армяне и татары больше в деревнях не жили бы вместе, а совершенно отдельно. Эту программу одобрил и “князь” Наполеон и в своем докладе подчеркнул это обстоятельство. Князь Бонапарте также требует, чтобы правительство помогло армянам вернуться на свои места, чтобы на Персидской и Турецкой границе был христианский элемент”<sup>50</sup>.

Для развития революционного движения на Кавказе четвертый съезд партии 28 февраля и в мае 1907 г. постановил иметь две ежедневные газеты на русском и армянском языках, а также ежемесячные партийные журналы. Из постановления партийного съезда также явствовало издание партийных брошюр, осуществляемой типографией в Женеве. Под давлением властей Кавказа, закрывавших революционные издания, последовательно издавались газеты с партийной направленностью - “Втак”, “Пайлак”, “Жаманак”, “Жайр”; журналы - “Барбиг”, “Грох” и “Библиотека Армении”.

В Тифлисе партийным издательством занималась типография “Гермес”, принадлежавшая мелкому арендатору, где печатались партийные брошюры. В начале 1907 г. закрыта за “крайнее вредное направление”. на время военного положения г. “Пайлак” (Сияние). Был арестован шрифт и опечатана типография “Гермес”. Редактору-издателю газеты было предложено в течении двух дней выехать за пределы генерал-губернаторства. Аналогичную судьбу разделила бакинская г. “Дзайн” (Голос). Кроме того конфисковывались отдельные номера. Так, по распоряжению Кавказского комитета по делам печати был конфискован номер газеты “Апага” (Будущее)<sup>51</sup>.

При этом иногда закон и террор властей вступали в противоречие. 16 июля 1907 г. состоялось заседание особого присутствия Тифлисской судебной палаты по делу редактора-издателя г. “Пайлак” присяжного поверенного М. А. Геворкова за напечатание в газете за № 4 от 12 апреля прокламации “Варандинского (Шушинского) уезда революционной партии “Дашнакцутюн”. Содержание представлялось вмешательством революционной организации в функции властей: “Жители Варанда, волостные старшинства упраздняются; вместо одного старшины будут назначаться несколько, для которых с нас будет взыскиваться больше расхода, потому что и армяне должны иметь свою нацию”.

Имелся призыв к свободному волеизъявлению масс: “Выбирайте того, который сумеет защитить вас и ваши интересы; выбирайте того, которого вы хорошо знаете, выбирайте молодых честных людей, которые защитят ваши интересы, а не интересы правительства”. Отменялся диктат правительственной администрации: “Выбирайте, не по той форме, как вам приказывает правительство, а по той как вас научил Дашнакцутюн”. Выбирайте тайным голосованием. Долой всех врагов народа. Долой живущих за счет народа. Да здравствует свободное избирательное право трудящегося народа”.

---

<sup>50</sup> Там же, л. 1873.

<sup>51</sup> Местное обозрение. - Тифлисский листок. 1907, 16 мая.

В ходе судебного заседания выяснилось, что призыв к варандинцам избирать старшин “тайным голосованием”, т. е. закрытой баллотировкой не запрещен законом в Закавказском крае, в силу чего редактор г. “Пайлак” не призывал к насилию и неповиновению закону. Его могли обвинить лишь в призыве к действию не в той форме к какой призывало правительство. Поэтому защитник обвиняемого заявил: “Предварительной цензуры нет. Поэтому призыв к тайному голосованию, привлечение к уголовной ответственности Геворкова ставит палату в положение цензуры”. Суд присяжных редактора г. “Пайлак” признал невиновным и по суду оправданным<sup>52</sup>.

В то же время за антипартийное издательство власти сумели закрыть тифлисскую типографию “Гермес” 4 апреля 1908 г. Имелся аналог в нефтяной столице региона. Журнал “Трох” издавался центральным комитетом партии “Дашнакцутюн” в Баку в “прекрасно” оборудованной типографии, которая была обнаружена полицией 24 июня 1908 г. Обыск выявил устав и программу 4 съезда партии “Дашнакцутюн”, отпечатавшиеся номера журнала “Трох”, материалы о терроре “Агабегич мармин”.

Партия представлялась прекрасно вооруженной организацией. Крупные склады оружия были устроены в Тифлисе, Баку, Владикавказе, а мелкие - Карсской области (“Антарapat главный”), Ереване, Елисаветполе, Каракилисе и других городах Кавказа. Причем в начале 1908 г. в селении Каракилис Александропольского уезда Ереванской губернии был найден большой склад взрывчатых веществ и боеприпасов. Аналогичный склад оружия был выявлен 23 февраля 1908 г. в г. Владикавказе. Полиции удалось также перехватить большую партию оружия, переправляемого “Жлатским” (Владикавказским) центральным комитетом. В выявленной документации из конторы Пило и Сергея Едигаровых выяснилось, что с 1905 по 1907 год партия переправила на Кавказ более 10 тыс. ружей, “громадное” число револьверов, более 100 тыс. патронов и 1000 бомб. Все это выдавалось заведующим складом по письменным требованиям. Констатировалось активное использование бомб при террористических актах: начальника штаба Кавказского военного округа ген.-лейт. Ф. Ф. Грязнова в Тифлисе (1906) и генерала Алиханова в Александрополе (1907).

При обыске в конторе Едигаровых 2 сентября 1907 г. в потайном ящиках письменного стола была обнаружена переписка Пило Едигарова и его сына Сергея. Среди ней значилось сообщение в бюро партии, что главным руководителем партии и комитетов в Елисаветполе является архимандрит Корюн или “Армянский самодержец Амазасп” (племянник скончавшегося католика Мкртича Хримяна). Ему подчинялись окружной начальник Човуш, Сепо, поверенный “Коля” (присяжный поверенный Николай Бабахян), Абраам (Абраам Гюльханзадян), Тер-Шмавон (учитель Армен Тер-Шмавон Безоян) и другие.

По показаниям Габриеля Кешишяна и Апета Вартеросяна, допрошенных под присягой, Пило и Сергей Едигаровы, отрицающих принадлежность к партии “Дашнакцутюн, являлись деятельными дашнакцаканами, хотя не принимали участие в деятельности центрального комитета. В июле 1907 г. Сергеем Едигаровым была приобретена от “Товарищества Гермес” типография, которой стал управлять Арутюн Тейрян. При необходимости Сергей Едигаров корректировал деятель-

---

<sup>52</sup> В суде. - Там же, 18 июля.



ность Тейряна: “Типография эта служила тайной конспиративной квартирой для партийной переписки”<sup>53</sup>. Лишь сведения полиции позволили понять характер деятельности типографии “Гермеса”, функционирующей с 1 января 1904 г. и 16 июля 1907 г. перешедшей к Едигаровым.

Во главе издательства находился Егише Топчян, член Тифлисского центрального комитета, заведующий пропагандой и партийными газетами. Составленная при его участия новая программа партии “Дашнакцутюн” была напечатана в газетах “Втак”, “Жайр”, “Еркир”, “Арори Кавказа”. Он же направлял деятельность “Библиотеки Армении”. С сентября 1907 г. по январь 1908 г. в типографии “Гермес” Едигаровых было напечатано 242 работ “Библиотеки Армении”. Среди них значились труды “крайне революционного направления”: “Очерки армяно-татарских столкновений”, “Философ-социолог”, “Дашнакцутюн”, “Богатые и Бедные”, “Удав”, “Национальный вопрос и социализм” и другие.

Сходным являлось положение в Баку. Обыски 25 февраля 1908 г. в квартирах Погоса Крикорова Авакяна и Мртича Григорьева Балаянца позволили выявить 218 брошюр революционного содержания. В том числе обнаружен был список 30 членов террористической группы “Вреж” (“Месть”) при Бакинском центральном комитете. Организации студентов-дашнакцаканов вели пропагандистскую работу среди профессиональных союзов, рабочих, духовных лиц и учащихся разных заведений. В тайной квартире Ованеса Айрапетова Газарянца (он же Акоп Хачаян и Погос Авакянец) 24 июня 1908 г., состоявшего заведующим склада издательства Бакинского центрального комитета, была выявлена аналогичная литература. Брошюра “Песни о свободе” призывала к вооруженному восстанию в Российской державе.

В постановлении затрагивалась деятельность духовной организации партии “Дашнакцутюн”, хотя её члены не представляли собой обособленной группы, а действовали в составе комитетов. Главным её лицом представлялся в г. Елисаветполе викарный архимандрит Корюн, а затем по значимости указывались архимандрит Егише и правитель дел канцелярии католика Усик. К активным участникам партии “Дашнакцутюн” причислялись священник Тер-Микаел в селении Рандаман Дарачичагского участка Новобаязетского уезда, священник Акоп Саркисян во Владикавказе и Тер-Николай Тер-Согомонов в селе Борисы-Армянские Арешского уезда Елисаветпольской губернии. При этом архимандрит Корюн всеми средствами поддерживал революционную дисциплину. На вопрос Тер-Арутюнова о значении террора революционный архимандрит ответил: “Кто не предан террору, тот должен быть убит, хоть будь тут сам епископ или сам католикос”<sup>54</sup>.

Была представлена углубленная характеристика новой партийной организации: “Революционная партия “Дашнакцутюн”, образовавшаяся в русском государстве из старой партии под тем же наименованием с 1905 г. и функционирующая ныне, представляет собой такое преступное сообщество, которое поставило задачей своей деятельности, путем забастовок, экономического, организационного и политического терроров и посредством вооруженного восстания - насильственное посягательство на изменение в русском государстве установленного законами ос-

---

<sup>53</sup> Там же, д. 1, л. 327.

<sup>54</sup> Там же, л. 249.

нового образа правления и ниспровержение, тесно связанного с ним общественного строя для учреждения федеративной демократической республики”<sup>55</sup>.

Показания Миграна и его родственников, свидетельствовали, что в пику сведениям счета со старыми товарищами, они встали на путь сотрудничества с тайной полицией России. Их показания, хотя часть сведений была известна по другим источникам, обнажили весь каркас управления партии “Дашнакцутюн”. При этом они были достоверны и очень ценны, хотя не все было подвластно и Миграну. Так, он не знал, либо не заявил, что Симон Заварян является лидером партии, а Аветис Агаронян значился вторым лицом. Показания Миграна были беспрецедентны по значимости для тайной полиции и армянских революционеров, хотя среди России у него, по иронии судьбы, был конкурент.

Судебное следствие по делу партии “Дашнакцутюн” было созвучно текущему политическому процессу. В январе 1909 г. в России разразился политический скандал. Выяснилось, что один из лидеров партии социалистов-революционеров и член ЦК - эсеров Азеф является платным агентом тайной охраны. Он принимал активное участие в разработке покушений на видных деятелей сановной России и представителей власти, в частности на министра внутренних дел К. В. Плеве, выходя за рамки отведенные ему изначально тайной полицией<sup>56</sup>. 11 февраля председатель Совета министров и министр внутренних дел П.А.Столыпин выступил в Государственной Думе по делу Азефа. Было заявлено, что благодаря деятельности Азефа замыслы социалист-революционеров становились известны властям и “своевременно разоблачались”<sup>57</sup>. Резон в позиции Столыпина имелся, поскольку Азеф сумел расстроить ряд проектов покушений на видных сановников - Петербургского ген.-губернатора, товарища министра внутренних дел и дворцового коменданта ген. Д. Ф. П Трепова, вел. князей Владимира Александровича и Николая Николаевича<sup>58</sup>. Столыпиным было заявлено о неизменности борьбу с революционным движением<sup>59</sup>.

В водоворот политических событий оказался втянут и наместник Кавказа Воронцов-Дашков. 5 февраля 1909 в Государственной Думе имело место обсуждение вопроса террора на Кавказе. Ответ представленный наместником через уполномоченного в Совете министров бароном Нольде не был принят, поскольку прямолинейный и великодержавный подход Думы к управлению Кавказом отличался от позиции Воронцова-Дашкова, предусматривающего гибкость и учет национальных особенностей Южной окраины, в частности в сфере обеспечения политической стабильности. Наместник Кавказа в докладной записке царю Николаю II от 11 февраля 1909 г. подчеркнул этот факт: “Обновление администрации и полиции мною производится неукоснительно во всех нужных случаях, что послужило, вызывая недовольство среди Кавказского чиновничества, ближайшим поводом к предъявлению мне запроса о терроре на Кавказе и отразилось в речах депутатов под видом “изгнания из края лучших русских людей”<sup>60</sup>.

---

<sup>55</sup> Там же, л. 258.

<sup>56</sup> **В. Жухрай**, Тайны царской охраны: авантюристы и провокаторы. М., 1991, с. 245.

<sup>57</sup> **С. С. Ольденбергский**, Царствование Николая II. М., 1992, с.387, 399, 400.

<sup>58</sup> **В. Жухрай**, Тайны царской охраны...с.68, 69.

<sup>59</sup> **С. С. Ольденбергский**, Царствование Николая II..., с.400.

<sup>60</sup> В кн.: Исмаил-заде Д. И. Граф И. И. Воронцов-Дашков. М., 2005, с. 377, 378.

Политический путь примирения населения Закавказья с самодержавием представлялся через проведение реформ - судебной, народного просвещения, осуществления колонизации лишь Кавказских степей и Черноморского побережья, развития начал самоуправления в виде земской реформы. Между тем этот подход встречал противодействие центральных учреждений империи и Государственной Думы, которые требовали лишь зачинивания гаек. Наместник отмечал: “У меня уходит совершенно бесцельно масса времени на поверку и отписывание опровержений разных сведений, доставляемых мне Министерством внутренних дел с просьбою дать объяснения по вопросам о забастовке на сельдяных промыслах (?) под Тифлисом, объединения лезгин (?) с молочанами в Эриванской губернии, о движении среди армян (?) в Кутаисской губернии, о бесте (? - право неприкосновенности в мечетях и домах высших духовны лиц) среди персидскоподданных в Баку, о готовящемся объединении Дагестана с Азербайджаном”.

Выражено было возмущение давлением силовых структур на кавказскую администрацию, особенно в сфере безопасности: “При такой осведомленности центральных учреждений, упорно при этом не желающих ве рить донесениям с мест, а стремящихся, наоборот, продиктовать последним свою точку зрения, как, например, диктуется жандармскому надзору своя петербургская окраска местных событий, и он вынужден для достижения удовольствия департамента полиции заведомо доносить о событиях в неверном освещении, которое мне впоследствии по запросам приходится опровергать, - очевидно, серьезно говорить о возможности управления краем из Петербурга не приходится”<sup>61</sup>. Дано было согласие на предложение Думы о проведении сенаторской ревизии управления Кавказским краем, что должно было коснуться и вопроса политического управления. Однако, ревизия должна была охватить время не только правление Воронцова-Дашкова, но и предшественника главноначальствующего кн. Г. С. Голицына, чтобы выяснить корни “бывших непорядков” и достижений новой администрации<sup>62</sup>.

Между тем судебный следователь углублялся в познании деятельности партии “Дашнакцутюн”, о чем свидетельствует постановление от 13 марта по 20 апреля 1909 г. Был уточнен состав, род занятий пяти членов Восточного бюро и отдела устрашения: 1) Аветис Агаронян - ректор Тифлисской армянской семинарии Нерсисян (партийная кличка “Гариб), член “исполнительного террористического Совета”; 2) Амазасп Оганджянян - врач, партийная кличка “Амо”; 3) Степан Зорян - “Ростом”; 4) Арутюн Шарикян - главный член (“Партев”) и член “Агабегич мармин”; 5) Бастрмаджян Гарегин, горный инженер, кличка “Таро”, один из руководителей партийных боевиков; 6) Минас Мурадов - “Мрмурян”, “Симонян”, “Аро”. Членами лишь “Агабегич мармин”- террористического совета признавались - Думан (“Карабахский Никол”), Саркис Мегаворян, Мурад и Сепо. Оформлен был список центральных комитетов, комитетов и подкомитетов, хотя некоторые упоминались под партийными прозвищами. В нем значились Иосиф Аргутинский-Долгорукий (“Ишхан”), представитель Ереванского центрального комитета “Дасакхос” при центральном комитете Ростова-на-Дону, который 22 июня 1907 г. в Пяти-

---

<sup>61</sup> Там же, с. 380

<sup>62</sup> Там же, с. 385, 386.

горске участвовал в убийстве генерала Карагозова; Давид Христофорович Завриев – титулярный советник, лаборант института путей сообщений Петербурга и член местного комитета, являвшийся контрагентом по распространению в С. – Петербурге партийных газет – “Еркир” и “Харис”; Абрам Саркисяц (“Абро”) старший боевик из отряда “Агабегич мармин”, который в 1905-1906 гг., вместе с Акопом Чилингаряном, транспортировал оружие в Закавказье, участвовавший в покушениях по г. Тифлису: в 1906 г.- Шихамяна, 1907 г. – Шахназарова, Мушега Аракеляна, ротмистра Стайко, в марте 1908 г. – помощника надзирателя Издобского и Пустовойтова, 3 июля в г. Александрополе – ген. Алиханова, 8 августа в Батуми – начальника местной тюрьмы Прехтеля. Левон Тайрян, состоящий в Тифлисском центральном, участвовал в покушениях над Миграном и Апетом Вартиросяном. Гарегин Хажакян (“Хажак”) в Тифлисском центральном комитете, заведовал антиправительственной пропагандой. Был представлен и список погибших представителей кавказской администрации в 46 человек. Фиксировалось, привлечено 169 человек в качестве обвиняемых<sup>63</sup>.

29 апреля 1909 г. Департамент полиции направил отношение Донскому охранному отделению об удовлетворении товарищем министра внутренних дел ходатайства по выделению ежемесячного пособия в 60 руб. семейству “паперцам” – Миграну, Апету и Заруи, ввиду оказанных ими услуг по раскрытию членов организации партии “Дашнакцутюн”<sup>64</sup>.

Необходимость уточнений показаний побудила Лыжина 29 апреля 1909 г. в Ростове-на-Дону осуществить вновь допрос Миграна. Требовалось уточнить личность руководителя Ереванской и Бакинской самообороны Думана: “Я, Габриель Кешишьян, дополнительно показываю: лицом, изображенным на показываемой вами карточке, где изображен, как вы говорите, Нерсес Лазарев Нерсесян, мне совершенно неизвестно. Я утверждаю, что Нерсесян не есть тот партийный деятель “Думан” о котором я упоминал в своих известных показаниях”<sup>65</sup>. Было отмечено широкий диапазон перемещений, связанный с партийными поручениями, связанных с центрами этнических напряженности: до 1905 г. он жил в пригороде Баку – Балаханлы, переехал в Ереван, в начале 1906 г. оказался в Баку, в сентябре-октябре в Тифлисе, Поти и Ростове-на-Дону. Текущее местопребывание было неизвестно<sup>66</sup>.

**Վալերի Թունյան – Դաշնակցություն կուսակցության գործով դատական քննությունները 1908 – 1909-թթ.:** – Հոդվածում վերլուծության են ենթարվում դաշնակցական առանձին գործիչների դատական գործերը, որոնք սարքում էր Նովոչերկասկի դատական քննիչ Լիժինը: Նորահայտ փաստերի հիման վրա բացահայտվում են այն կեղծ մեղադրանքները, որոնք ցարական պահնորդական դեպարտամենտը ներկայացնում էր այդ գործիչներին:

<sup>63</sup> НАА, ф.95, оп.1, д. 1, л.317-340.

<sup>64</sup> Там же, оп. 2, д.1, л.2.

<sup>65</sup> Там же, оп. 1, д. 1, л. 348.

<sup>66</sup> Там же, л. 350.

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՂԿՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ  
(1920Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ – 1921Թ. ՓԵՏՐՎԱՐ)**

**ՆԱԹԵԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանի համաձայնագրով Հայաստանում տեղի ունեցավ իշխանության փոփոխություն, ժողովրդավարական պետության տեղը բռնատիրական իշխանություն հաստատվեց՝ արտաքին ուժերի ճնշման տակ<sup>67</sup>:

Ալ. Խատիսյանի խոսքերով՝ «Իշխանությունը օտար էր ժողովրդին: Անոր կողմնակցվեին ռուս զինուորական ուժը և քաղաքական ոստիկանությունը՝ Չեկան, որոնք իր հենակետերն էին»<sup>68</sup>:

Խորհրդային իշխանության հաստատման պահին երկրի քաղաքական և տնտեսական վիճակն անմխիթար էր. նորաստեղծ հանրապետության տարածքի կեսից ավելին բռնագավառված էր թուրք նվաճողների կողմից: Այդ օրհասական պայմաններում հայ ժողովուրդը նոր իշխանությունից, Երևանի համաձայնագրի դրույթներից և բոլշևիկների՝ բազմիցս տրված խոստումներից ու հայտարարությունից ելնելով, հույսով էր, թե կպաշտպանվեր Հայաստանի անկախությունը, կվերականգվեր պատերազմի հետևանքով քայքայված տնտեսությունը, վերջ կդրվեր պատերազմին, և թուրքերը կհեռանային Հայաստանի սահմաններից: Բացի այդ, այն համոզումը կար, որ Ռուսաստանի միջամտությամբ բարեկամական հարաբերություններ կհաստատվեին Թուրքիայի և Հայաստանի միջև, կվերականգվեր երկրի խաղաղությունը, և ժողովուրդը խաղաղ շինարարության հնարավորություն կունենար, Ռուսաստանը տնտեսական խոշոր օգնություն ցույց կտար, կվերականգնվեր երկաթուղային հաղորդակցությունը Հայաստանի և հարևաններ Վրաստանի, Ադրբեջանի ու Պարսկաստանի միջև, Ռուսաստանից հագուստեղեն և այլ ապրանքներ կբերվեին, Բաքվից՝ վառելիք և վերջապես հալածանքի չէին ենթարկվի ոչ կոմունիստական քաղաքական կուսակցությունների պատկանող անդամները<sup>69</sup>:

Դժբախտաբար ժողովրդի սպասելիքներից ոչ մեկը չարդարացավ, ու դեպքերը ընթացան ի վնաս հայության ու Հայաստան աշխարհի<sup>70</sup>:

Դեկտեմբերի 4-ին Քանաքեռից Երևան մտավ բոլշևիկյան զորքը, նրա հետ էլ՝ Բաքվում կազմված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն, որը Ադրբեջանից Հայաստան էր մտել դեռևս նոյեմբերի 29-ին: Նույն օրը ժամանել էին Ռազմհեղկոմի նախագահ Սարգիս Կայանը և հեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանը: Սյուս անդամները՝ Ալ. Բեկզադյանը և Ի. Դովլաթյանը, տեղ հասան մի քանի օր անց, իսկ Ասքանազ Մոավյանն ու Սահակ Տեր-Գաբրիելյանը դեռևս

<sup>67</sup> Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանը բոլշևիկյան մուրճի եւ թրքական սալի մէջ, Երևան, 1993, էջ 540:

<sup>68</sup> **Ալ. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումը ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 277:

<sup>69</sup> **Ս. Աստուածատրեան**, Փետրուարեան ապստամբութիւնը, Հայրենիք, Բոստոն, 1965, թիվ 9, էջ 30:

<sup>70</sup> Տե՛ս Իրազեկ, Մոսիկ անցյալից, Պեյրուք, 1956, էջ 94:

Մոսկվայում էին և տեսակցելու էին Լենինի հետ՝ օգնության խնդրով: Ի դեպ, Սահակ Տեր-Գաբրիելյանը մնալու էր այնտեղ՝ որպես Ռուսաստանում Խորհրդրդային Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ:

Հեղկուն էլ դարձավ Խորհրդային Հայաստանի անդրանիկ մարմինը, որի ձեռքն անցավ Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքը:

Դեկտեմբերի 4-ին լրացվեց և վերջնականապես ձևավորվեց Հեղկումի կազմը՝ նախագահ՝ Սարգիս Կապան, արտաքին գործոց և հանրային կրթության կոմիսար՝ Ասքանազ Մոավյան, արտաքին առևտրի և պարենավորման կոմիսար՝ Ալեքսանդր Բեկզադյան, իսկ Սիլինը՝ Հայաստանում գտնվող ռուսական կարմիր բանակի հրամանատար:

Խախտվում էր Երևանի համաձայնագրի 6-րդ հոդվածը, որի համաձայն՝ Հեղկումի կազմի մեջ պետք է մտնեին երկու ձախ դաշնակցականներ՝ Դրոն և Հ. Տերտերյանը: Ս. Վրացյանը վկայում է, որ երբ Դրոն ու Հ. Տերտերյանը տեսակցություն են խնդրում Հեղկումի նորեկ անդամներից, մերժվում են: Ս. Կապանն ու Ա. Նուրիհջանյանը բռն լիճաբանության մեջ մտան Բ. Լեգրանի հետ, որ դաշնակցականների էր ներառել իշխանության կազմի մեջ և նրանց հետ դաշինք կազմելով՝ իշխանության խաղաղ, առանց կռվի փոխանցման պատճառ դարձել:

Նրանք արհամարհեցին համաձայնագիրը, մերժեցին տեսակցել տապալված իշխանության ներկայացուցիչների հետ և նրանց հեռացրին Հեղկումի կազմից<sup>71</sup>:

Փաստորեն, Հեղկումը Երևանի համաձայնագրի խախտումով սկսեց իր գործունեությունը: Բնորոշ է, որ համաձայնագրի խախտողներից առաջինը Ռուսաստանի կողմից այն ստորագրած Բ. Լեգրանն էր: 1920թ. դեկտեմբերի 2-ին Լեգրանը հեռագրով հաղորդեց Գ. Օրջոնոկիձեին, որ կարգադրել է ձերբակալել Հ. Օհանջանյանի կառավարության վարած քաղաքականության անմիջական պատասխանատուներին:

Ձերբակալվեցին Հ. Օհանջանյանը, Ա. Դարբինյանը, Ավ. Սահակյանը, Հովհ. Քաջազունին, Ն. Աղբալյանը և բազում ուրիշներ:

Հենվելով արխիվային մի փաստաթղթի վրա՝ Գ. Գալոյանը գրում է, որ ձերբակալությունները կատարվեցին ոչ թե դատարանի որոշմամբ, այլ Բ. Լեգրանի հետ նույն դեկտեմբերի 2-ին ստորագրված «Հրամանաթղթի» հիման վրա, որում ասված էր՝ անհապաղ ձերբակալել Հայաստանի հին կառավարության (Հ. Օհանջանյանի կաբինետի) բոլոր անդամներին և միջոցներ ձեռնարկել կից ցուցակում նշված անձանց անհապաղ ձերբակալելու համար<sup>72</sup>:

Հանձնարարվեց քաղաքացիական և զինվորական բոլոր իշխանություններին ու Հայաստանի բոլոր քաղաքացիներին ամեն կերպ աջակցել ձերբակալություններին, իսկ խանգարողները կպատժվեն հեղափոխական ժամանակների օրենքներով:

Հեղկումի ձեռնարկած այս քայլերն ամբողջովին հակասում էին այդ նույն օրը Դրոյի և Տերտերյանի հետ ստորագրած համաձայնագրի ոգուն և ըստ էության

<sup>71</sup> Տե՛ս **Ս. Վրացեան**, Էջեր մօտիկ անցեալից, Հայրենիք, 1923, Բոստոն, թիվ 2, էջ 73:

<sup>72</sup> Տե՛ս **Գ. Գալոյան**, Հայաստանը և Մեծ տերությունները 1920-1923թթ., Երևան, 1999, էջ 374:

չեղյալ հայտարարում այն: Այս լուրջ քայլը խոր դժգոհություն արագ բերեց երկրում և սկիզբ դրեց հակախորհրդային խմորումներին:

Այսպիսով՝ վերցնելով իշխանությունը՝ Հայիեղկունը անմիջապես դիմեց ոչնչով չարդարացած քաղաքական բռնաճնշումներին:

Խորհրդային իշխանության նորաստեղծ պետական մարմինների համակարգում հատուկ դեր էր վերագրվում հանրապետության Արտակարգ հանձնաժողովին, որն ըստ Հայիեղկունի համապատասխան դեկրետի՝ ստեղծվում էր «հակահեղափոխության, շահադիտության (ապեկուլյացիայի) և ի պաշտոնե հանցագործության դեմ մաքառելու համար»<sup>73</sup>:

Արտակարգ հանձնաժողովը դարձավ խորհրդային իշխանության ամուր հենարանը, որը զինված ուժերի հետ միասին ապահովելու էր այդ իշխանության պահպանումն ու ամրապնդումը՝ գործի դնելով բոլոր հնարավոր միջոցները, առաջին հերթին՝ բռնությունը հասարակության և մարդկանց նկատմամբ: Բ. Լեգրանի հետ կնքած համաձայնագիրը վերջնականապես չեղյալ համարվեց, և դեկտեմբերի 6-ին անմիջապես գործի անցավ Արտակարգ հանձնաժողովը՝ Չեկան, որը դեկտեմբերի վերջերին հաշվառման ենթարկեց բանակի բոլոր սպաներին, և 70 զինվորականներ անմիջապես աքսորվեցին Բաքու:

Հեղկունի համար անընդունելի էր նաև Դրոյի ներկայությունը Երևանում: Մեծ էր նրա ունեցած ազդեցությունը ժողովրդի և ընդհանուր հանրային կարծիքի վրա: Նրանից ազատվելու միջոցն էլ գտնվեց: 11-րդ բանակի հրամանատար Ա. Գեկկերը (Հեկկերը) նրան Բաքու հրավիրեց՝ «*Իրադարձությունների մասին զեկուցում տալու համար*»: Ա. Վրացյանը գրում է, թե բոլորին հայտնի էր այդ հրավերի իմաստը, բայց ուրիշ ճամփա չկար, Դրոն չէր կարող չհնազանդվել: Ավելին՝ նա փաստեր հավաքեց՝ ավելի ճշգրտորեն և լիակատար զեկույց ներկայացնելու տիրող սարսափելի իրավիճակի մասին: Դրոն դեռ հույս ուներ, որ ռուս բոլշևիկ ղեկավարությունը քայլեր կկատարի դրությունը փրկելու համար<sup>74</sup>:

Դրոն 1948 թ. փետրվարի 18-ին «Արևելքում» հրատարակում է մի հոդված՝ «*Բոլշևիկները ինչպես դրժեցին իրենց խոստումները*» խորագրով՝ Տ. Ջարեհ ծածկանունով: Հոդվածում նա, Երևանից իր հեռացմանը անդրադառնալով, գրում է, թե որոշեց գնալ «հակառակ անոր, որ իր ձեռքի տակ գտնուող հայկական բանակի թիւը աւելի մեծ էր, քան եկուոր սովետական բանակը»<sup>75</sup>:

Կուսակցության որոշմամբ ու իր համաձայնությամբ, քաղաքացիական կռիվների առիթ չտալու համար Դրոն աքսորի ճամփան բռնեց և 1921թ. հունվարի 10-ին դուրս եկավ Երևանից: Հեղկունը Երևանում հայտարարեց, թե Դրոն որոշ ժամանակ Մոսկվա պիտի գնա «*քաղաքագիտական դասընթաց անցնելու համար*»: Իրականության մեջ Չեկայի հրամանով Դրոն աքսորվեց, իսկ Մոսկվայում, իմանալով այդ մասին, չառարկեցին<sup>76</sup>:

<sup>73</sup> ՀՄԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, Էջմիածին, Պրակ. 1, էջ 7-8:

<sup>74</sup> Մ. Վրացեան, Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի մէջ, էջ 554:

<sup>75</sup> Դրոյի հոդվածը, ուր նաև նկարագրվում է հայ սպաների աքսորը տե՛ս Գ. Լազեան, Հայաստան և հայ դատը հայ և ռու յարաբերություններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 269-271: **Կարո Սասունի**, Փետրուարեան ապստամբութիւնը, Պէրոյթ, 1970, էջ 54:

<sup>76</sup> Ռ. Փիրույան, Հայաստանը և Հ.Յ.Դ.-բոլշևիկ հարաբերությունների ոլորտում (1917-1921թթ.), Երևան, 1997, էջ 317:

Հարկ է նշել, որ 1921թ. հունվարի 15-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմին ուղղված նա-  
մակում Սահակ Տեր-Գաբրիելյանը Կենտկոմի անդամներին հուշեց, որ մինչև  
խորհրդա-թուրքական կոնֆերանսը հարկավոր է ազատվել *«դաշնակցական  
ախտից՝ անգամ, եթե Դրոն և մյուսները միանգամայն անկեղծորեն աշխատում  
են մեզ հետ»*<sup>77</sup>:

Դրոյի Հայաստանից հեռացնելու ևս մի դրդապատճառ էլ կար. հարկավոր  
էր *«հանգստացնել»* քեմալականներին:

Դրոյի հեռանալուց հետո Չեկան ավելի սանձարձակ սկսեց գործել: Գ. Ա-  
թարբեկյանի պահանջով 1921թ. հունվարի 20-ին կատարվում է նախկին սպանե-  
րի նոր ցուցակագրություն և ձմռան ցրտին նրանց բոլորին ոտքով, Մեմֆոնովկայի  
լեռնանցքով, հասցնում են Աղստաֆա, այստեղից գնացքով Բաքու, ապա՝ Ռյա-  
զան: Նրանց մեջ էին գեներալներ Թ. Նազարբեկովը, Պ. Փիրումովը, Մ. Միլիկովը,  
Ա. Հովսեփյանը և ուրիշներ: Գեներալ Պողոս Բեկ - Փիրումյանը, չտանելով ա-  
հավոր նվաստացումը, Երևանում ինքնասպան եղավ (հունվարի 19-ին):

Հայ նախկին սպաների գրանցումը կատարվում էր նախկին պառլամենտի  
շենքում, որը շրջապատված էր հեծյալներով ու գնդացիներով: Նրանց  
համախմբելով Քանաքեռում՝ հաջորդ օրն առավոտյան ճանապարհեցին: Նման  
ճանապարհորդության համար անպատրաստ սպաները 170 կմ կտրեցին-անցան  
ոտքով: *«Ճանապարհին չեն կերակրել, - գրել է Ալ. Բեկզադյանը, - սնվել են վա-  
ճառելով իրենց հազին ունեցածը: Թեթև հագնվածները խիստ մրսել են: Խոսում  
են Մեմֆոնովկայի լեռնանցքում ցրտահարվածների մասին: Դիլիջանում նրանց  
կողոպտել են»:* Եվ այնուհետև թերթը տպագրել է բժիշկ Թումանյանի տեղեկութ-  
յունները սպաների մասին: *«Մահվան ոչ մի դեպք տեղի չի ունեցել: Նրանք քայ-  
լում էին առույգ: Ելենովկայից մինչև Մեմֆոնովկա շարժվում են մյուս խմբերը, բո-  
լորը ողջ և առողջ: Ես չէի սպասում նման հանգիստ, համբերատար և կայտառ  
տրամադրություն: Բոլորը միաձայն ասում էին, որ իրենց համար մեկ է՝ ապրել և  
ծառայել Խորհրդային Հայաստանում, թե Խորհրդային Ռուսաստանում»:* Միա-  
ժամանակ թերթը տեղեկացնում է, թե Երևանում սուտ լուրեր են տարածում  
սպաների սարսափելի աքսորի հետ կապված: Գրելով, թե հակահեղափոխությա-  
նը չի հաջողվի օգտագործել սպաների «դժբախտությունը»<sup>78</sup>:

Գործընթացը սկսվեց նախ, նրանց մի մասին Բաքու ուղարկելով՝ 11-րդ  
բանակում պաշտոն տալու պատրվակով: Հետո տեղի ունեցավ զանգվածային  
աքսոր՝ հունվարի 24-ին: Աքսորվեցին 1200 սպաներ, որոնց մեջ էին Թ. Նազար-  
բեկյանը, որը խորհրդայնացումից հետո նշանակվել էր Հայաստանի կարմիր բա-  
նակի սպարապետ ու Դրոյի խորհրդական, զորավարներ Միլիկյանը, Հախվերդ-  
յանը, Ղամազյանը և ուրիշներ<sup>79</sup>:

*«Սպայութեան հանկարծակի աքսորը, - գրում է Կ. Սասունին, - այդպիսի  
տմարդի միջոցով՝ մեծ հուզում առաջ բերաւ Երևանի և զավառներուն մեջ: Կա-  
տարվածը նոր չարիքներուն նախանշանն էր: Այդ խելագար գործելակերպը, զոր  
ընդգրկված էին խորհրդայնացած Հայաստանի երեխայամիտ վարիչները կը*

<sup>77</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 60:

<sup>78</sup> Կոմունիստ, 2 փետրվար, 1921, Երևան:

<sup>79</sup> Տե՛ս Գ. Լազեան, նշվ. աշխ., էջ 278



*ստիպեին յուրաքանչյուր անհատի մտածել, որ վաղը հերթը իրեն պիտի հասնի»<sup>80</sup>:*

Հետաքրքիր է , որ երբ 1921թ. փետրվարի 4-ին Ս. Վրացյանը տեսակցություն ունեցավ Գ. Աթաբեկյանի հետ, խոսեց սպաների աքսորի մասին, հենց ինքը՝ Աթաբեկյանը ընդունեց, որ իրենք տմարդի են վարվել սպաների հետ<sup>81</sup>:

Հայկական բանակի սպայական անձնակազմի աքսորից հետո բոլշևիկների բռնություններն ավելի սաստկացան:

Նրանց գաղափարախոսները կարծում էին, որ Հայաստանում այլևս չկա այն ուժը, որը կհամարձակվի զսպել իրենց: 1921թ. հունվարի վերջին «ձախերի» ճնշման տակ Հայկումկուսի պլենումը որոշեց անհաշտ պայքար ծավալել ՀՅԴ-ի դեմ, ձերբակալել և մեկուսացնել կուսակցության բոլոր կոմիտեների ու կազմակերպությունների ղեկավարներին, նախկին կառավարության անդամներին:

Որոշվեց ձերբակալել նաև «Հայ ժողովրդական» կուսակցության ղեկավար անդամներին:

Պլենումի որոշումների մասին «ձախերի» ներկայացուցիչներ՝ Գ. Ալիխանյանը, Ա. Նուրիհջանյանը, Բ. Դովլաթյանը 1921թ. հունվարի 27-ին հայտնեցին Բաքու՝ Օրջոնկիձեին: Հունվարի 28-ին Գ. Օրջոնկիձեին դիմեց նաև Ս. Կասյանին ու Ա. Մռավյանին, որոնք դեմ էին արտահայտվել Հայկումկուսի Պլենումի որոշումներին:

Ս. Կասյանն ու Ա. Մռավյանը գտնում էին, որ բռնությունների քաղաքականությունը հղի է ծանր հետևանքներով, այն ոչ միայն հեղինակագրկում է խորհրդրդային իշխանությունը բնակչության աչքում, այլ կարող է հանգեցնել անկազմակերպվածության և անկախության<sup>82</sup>:

Գ. Օրջոնկիձեի պատասխանը չհապաղեց, 1921թ. փետրվարի 1-ին նա և Մ. Օրախելաշվիլին Կովկասյան բյուրոյի անունից, որը փաստորեն դատավորի դեր էր ստանձնել կողմերի միջև, Ա. Նուրիհջանյանին ու Ս. Կասյանին հայտնեցին բյուրոյի որոշման մասին: Նրանում մասնավորապես նշվում էր՝ «*Քաղաքական իրադարձությունը հրամայաբար պահանջում է անողորմ պայքար մղել, դաշնակցական կուսակցությունը լիակատար լիկվիդացնելու համար, հարկավոր է մեկուսացնել կազմակերպությունների ղեկավարներին*»: Կովկասյան բյուրոն միաժամանակ զգուշացրեց, որ հակաժողովրդական կուսակցության լիկվիդացման համար մղվող պայքարը ոչ մի դեպքում չպետք է վերածվի թեկուզ դաշնակցության անցյալով մտավորականության դեմ հախուռն պայքարի<sup>83</sup>:

ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի այս որոշում - հրահանգից հետո Հայաստանում զանգվածային ձերբակալություններ սկսվեցին, դրանից զերծ չմնաց նույնիսկ հայ մտավորականությունը: Ձերբակալելով և բանտերը լցնելով հարյուրավոր քաղբանտարկյալների՝ հայ բոլշևիկները զգուշացրին, որ դաշնակցականների կողմից հակախորհրդային շարժում ծավալելու և իշխանությունը զավթելու աննշան փորձի դեպքում կզնդակահարեն պատանդներին և կդիմեն ռազմահեղափոխական ժամանակների բոլոր խիստ միջոցների կիրառությանը՝ անզամ

<sup>80</sup> Գ. Մասունի, նշվ. աշխ., էջ 54:

<sup>81</sup> Մ. Վրացեան, Էջեր մօտիկ անցյալից, Հայրենիք, 1923, թիվ 4, էջ 40:

<sup>82</sup> Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման մի քանի հարցեր, Երևան, էջ 20:

<sup>83</sup> Մ. Ալիխանյան, Գ. Վ. Օրջոնկիձեին և Մովսեսական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974, էջ 113:

նրանց ընտանիքների անդամների նկատմամբ: Այդ մասին նշվեց ՀՄԽՀ Չեկայի նորանշանակ նախագահ Շ. Ամիրխանյանի՝ փետրվարի 10-ի հայտարարության մեջ<sup>84</sup>:

Փետրվարի 9-ի լույս 10-ի գիշերը տեղի ունենցան մասսայական ձերբակալություններ: Ձերբակալվածների թվում էին նաև Լևոն Շանթն ու Նիկոլ Աղբալյանը: Վերջինս հիվանդ էր և նրան տարան հենց անկողնուց<sup>85</sup>:

Փետրվարի 13-ին Հայհեղկոմի նախագահին ուղղված գեկուցագրում Շ. Ամիրխանյանը տեղեկացնում է, որ ձերբակալվել է 106 մարդ՝ միաժամանակ հուշելով, որ նրանցից շատերը անմեղ են<sup>86</sup>:

*«Չեկան, - գրում է Հովհ. Քաջազունին, - անսպառ եռանդով կատարում էր իր փրկարար գործը, այնպիսի մի եռանդով, որ Հայաստանի բանտերում այլևս անեղ գցելու տեղ չէր մնացել»<sup>87</sup>:*

Բանտարկյալները պահվում էին անտանելի պայմաններում, գնդակահարության մշտական սպառնալիքի տակ:

Շեղկումը, սակայն, չբավարարվեց միայն հեղափոխության «թշնամիների» բնաջնջելով: Բռնություններից զերծ չմնաց նաև հասարակ ժողովուրդը: Ժողովրդի նկատմամբ բռնությունների կիրառման գործընթացն սկսվեց Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրից: Չնայած նրան, որ ժողովրդի գոնե մի մասը սրտանց ուրախ էր Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ, մեծ հավատ ունեւր դեպի Ռուսաստանը, որի ուժի ու հարստության մասին հիշողությունները դեռ թարմ էին, չնայած որ մեծ ակնկալիքներ ունեւր, որ ռուսը կգա ու կբերի հաց ու խաղաղություն, այնուամենայնիվ ժողովուրդը հուսախաբ եղավ<sup>88</sup>:

Ժողովուրդը սպասում էր տեսնել լավ հանդերձավորված, կարգապահ, բազմաքանակ զորք, բայց տեսավ երկու հարյուր խղճուկ զինվորականներ՝ նիհար, անկարգ, պառատոտված կամ էլ հայ զինվորների վրայից հանած հագուստով: Եվ կարծես՝ հիասթափությունն էլ ավելի կատարյալ դարձնելու համար ռուսական զորքի հետևից եկավ հայկական բանակի հեծյալ զորամասերից մեկը՝ գեղեցիկ, մաքուր հագնված, առույգ, կանոնավոր ու կարգապահ<sup>89</sup>:

Խնդիրը բարդանում էր նրանով, որ Շեղկումը ռուս զինվորականներին տեղավորեց ոչ թե զորանոցում, այլ մասնավոր բնակարաններում, և անգամ հայկական բանակի համար Անգլիայից ուղարկված համազգեստը հատկացվեց նրանց:

*«Ընտանիքներից շատերը տղամարդիկ չունեին: Նրանց այր մարդիկ կամ սպանած էին պատերազմում, կամ գերի ընկած և կամ արքտորուած ու բանտ դրուած հենց բոլշևիկների ձեռքով: Ու հայկական տներում տեղավորուած կարմիր բանակայինները ազատ ասպարեզ էին գտնում արատաւորելու ընտանեկան սրբութիւնները՝ անհուն վրդրոհում ու ցասում առաջ բերելով ժողովրդի մէջ»<sup>90</sup>:*

<sup>84</sup> Հոկտեմբերյան սոցալիստական մեծ ռևոյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, /փաստաթղթերի և նյութերի ժողովածու/, Երևան, 1960, էջ 476:

<sup>85</sup> Մ. Վրացեան, Հայաստանը բոլշևիկյան մուրճի եւ թրքական սալի մեջ, էջ 529:

<sup>86</sup> Հոկտեմբերյան սոցալիստական մեծ հեղափոխությունը... Հայաստանում, էջ 480:

<sup>87</sup> Հ. Քաջազունի, Հ.Յ.Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1923, էջ 50:

<sup>88</sup> Մ. Վրացեան, Ինչու՞ և ինչպե՞ս խորհրդայնացավ Հայաստան, Հայրենիք, Բոստոն, 1941, թիվ 4, էջ 73:

<sup>89</sup> Տե՛ս Իրազեկ, նշվ. աշխ., էջ 92:

<sup>90</sup> Մ. Սստուածասրեան, նշվ. աշխ., էջ 41:

1920թ. դեկտեմբերի 8-ին Ռազմհեղկումը հրաման արձակեց պարենային և այլ ապրանքների հայտնաբերման մասին: Պետական, հասարակական հիմնարկություններին և մասնավոր անձանց հանձնարարվում է տեղեկացնել իրենց մոտ գտնված պարենավորման մթերքների, վառելիքի ու լուսավորության նյութերի մասին: Հրամանը չկատարողներին սպառնում էր Հեղափոխական տրիբունալի պատիժը<sup>91</sup>:

Ընդունվեցին բռնագրավման մասին նորանոր դեկրետներ ու հրամաններ: 1920թ. դեկտեմբերից մինչև փետրվարի սկիզբն ընդունված որոշումների թիվը հասնում էր մեկուկես տասնյակի, որոնք վերաբերում էին Հայաստանի կարմիր բանակի կարիքների համար փոխադրական միջոցների հայթայթմանը: Կազմակերպվեց երաժշտական գործիքների ցուցակագրություն՝ հիմնարկությունների ու միությունների կարիքների համար բռնագրավելու նպատակով: Ցուցակագրման ենթակա էին Հայաստանի բոլոր գրադարանները՝ առանց բացառության, որոնք կարող էին բռնագրավման ենթարկվել կրթական հաստատությունների ու միությունների համար:

Ստեղծվեց մի դրություն, երբ ժողովուրդը այլևս իր ունեցածի տերը չէր: Պետական պաշտոնյաները, ոստիկանները և զինվորականները՝ պահակներով գտնվող սանձարձակորեն խուժում էին տները և օրենքի անունով հափշտակում-տանում էին ամեն ինչ՝ արծաթ, ոսկի, կարասիներ, հագուստ, ուտելիք, ձի, անասուն, ձերմակեղեն, մինչև իսկ թել ու ասեղ<sup>92</sup>:

Դատարկվեցին պետական պահեստները: «Միանգամայն արգիլուեց գիւղից գիւղ կամ քաղաք երթնելութիւնը: Դադարեց առևտուրը: Կեանքը համարեա թէ բոլորովին կանգ առավ իհարկէ ոչ բոլշևիկների համար: Միայն նրանք էին, որ գիշեր-ցերեկ անսանձ կերպով երթնելում էին ամենուրեք և յաճաճ Երևանի նշանաւոր գինիով և «Այրարատ» գործարանի կոնեակով խրախճանքներ սարքում»<sup>93</sup>:

Ծավալված բռնագրվումների և դրանց շուրջը ստեղծված մթնոլորտի մասին են վկայում հետևյալ փաստերը և հաղորդումները:

«Կատարվում է անխուսափելին» առաջնորդ հոդվածում «Կոմունիստ» թերթը հրատարակել է նյութեր Երևանում հունվարի 27-ին կատարված «ընդհանուր խուզարկության» մասին՝ հայտնաբերելով *«պարենի այն ավելցուկը, որ ամուր պահված էր նկուղներում ու հորերում: Չարմանքից ու վրդովումից ապշել էին քաղաքի ունևորները, վարժապետական կրթված մտավորականությունը, սպեկուլյանտները ու ճարպակալած քաղքենիները»*: Թերթը, ողջունելով *«հեղափոխության խորացման այս առաջին նշանը»* վստահություն էր հայտնում, որ բուրժուական հակահեղափոխական տարրերին ընդհանրապես ուժաթափելու գործը կշարունակվի անհրաժեշտ հետևողականությամբ ու քաղաքացիներին փոխադրելով գյուղ, օրինակ՝ կծառայի գյուղական կուլակներին ոչնչացնելու, չքավորությանը կազմակերպելու հեղափոխական շարժման: *«Կատարվում է անխուսափելին, - եզրափակում է թերթը, - հեղափոխությունը մտնում է հունի մեջ»*<sup>94</sup>:

<sup>91</sup> ՀՄՊՀ դեկրետների և հրամանների ժողովածու, Պրակ. 1, էջ 8:

<sup>92</sup> Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանը բոլշևիկյան մուրճի եւ թրքական սալի մեջ, էջ 544:

<sup>93</sup> **Գ. Գիւլխաղանեան**, Բոլշևիկեան սարսափները Հայաստանում և Վրաստանի խորհրդայնացումը, Հայրենիք, Բոստոն, 1966, թիվ 11, էջ 53:

<sup>94</sup> Կոմունիստ, 29 հունվարի, 1921:

Գյուղում ծանր իրավիճակ ստեղծվեց. մի կողմից այն ունեզրկվեց, մյուս կողմից՝ ենթարկվեց «դասակարգային շերտավորման»:

Բոլշևիկների վարած ներքին քաղաքականության պատճառով երկրում ստեղծված դժնդակ վիճակն իր երկհատոր՝ «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ԽՍՀՄ-ը» ուսումնասիրության մեջ լավագույնս ներկայացրել է պատմաբան Բագրատ Բոբյանը: «*Հեղկոմը, - գրում է նա, - բռնեց անխնա և վճռական ռեկվիզիցիայի ու բռնագրավումների ուղին, առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշվի առնելու գյուղացիական ընդհանուր տնտեսական դրությունը և նրա հոգեբանական վիճակը: Դրա հետ մեկտեղ ռեկվիզիցիաները տեղի են ունենում անկազմակերպ, չունեին ծրագրած ու հեղափոխական դասակարգային բնույթ և ուղեկցվում էին անհարկի բռնությունների կիրառմամբ: Առանց կազմակերպված ու կարգապահ ապարատի, առանց նախնական ազիտացիոն նախապատրաստության և երկրի յուրահատուկ պայմանները հաշվի առնելու, Հեղկոմը նետում էր լոզունգ՝ ռեկվիզիցիայի ենթարկել և բռնագրավել պարենը. Քաղաքներում՝ մասնավոր անձերից և հացի պաշարները՝ գյուղերից*»<sup>95</sup>:

Բ. Բոբյանը մեկ առ մեկ թվում է Հեղկոմի ընդունած հակաօրինական հրամանագրերը և կատարած ապօրինի գործերը: Մանրամասն փաստերով ու խորհրդային օրենսդրության տվյալներով ցույց էր տալիս, որ Հեղկոմի վարմունքը ապօրինի է. բռնագրավման քաղաքականության մեջ նա ոտի տակ էր տալիս խորհրդային իշխանության հրատարակած օրենքները ու սահմանած կարգերը: Թեև Հեղկոմը ու նրա իշխանությունը օրենքի սկզբունքները համարում էին իրենց համար պարտավորեցուցիչ, որովհետև Խորհրդային Ռուսաստանի դեկրետների զորությունը Հեղկոմի դեկրետով տարածված էր և Հայաստանի սահմաններում, բայց կյանքում իշխանությունները կիրառում էին «սեփական հեղափոխական և անգիր օրենքներ»:

Նույնը տեղի ունեցավ և պարենավորման մթերքների բռնագրավման խնդրում, որը կատարվեց՝ առանց ընտանիքի կարիքները հաշվի առնելու և առանց ցանքսի պահանջները նկատի ունենալով<sup>96</sup>:

Հայաստանում տիրող իրավիճակը խորհրդայնացման առաջին երկու ամիսներին մանրամասն նկարագրել է Հովհ. Քաջազունին: Ահա թե ինչ է գրում նա. «Պաշտոնյաներն ու կուսակցական գործիչները գրավել էին քաղաքի լավագույն տները, կահ-կարասին, անկողինները: Հեղկոմը հրատարակում է ամեն օր դեկրետներ ու հրամաններ, որոնք նպատակ ունեին ամրապնդելու Հայաստանը պրոլետարական դիկտատուրան և միաժամանակ լայնացնելու ու խորացնելու համաշխարհային մեծ հեղափոխությունը:

...ժողովուրդը հանկարծակիի էր բերվել, շշմել, ահաբեկվել: Չէր հասկանում, թե ինչ է կատարվում շուրջը: Չէր հասկանում, թե ինչ են իրենցից ուզում այդ կարմիր աստղավորները... Մենակ բուրժուազիան չէր շշմել, շշմել էին նաև աշխատավոր զանգվածները, որոնք «բուրժուազիային» հավասար տուժում էին բոլշևիկյան իրավակարգից: Մենակ բուրժուազիան չէր, որ թալանված էր, անարզված, նույն էր և ամբողջ ժողովուրդը՝ բացի բոլշևիկներից:

<sup>95</sup> **Б. Борьян**, Армения, Международная дипломатия и СССР, М.-Л, Ч II, стр. 126.

<sup>96</sup> **Б. Борьян**, նշվ. աշխ., էջ 128:

*Այլևս ոչ ոք տեր չէր ո՛չ իր ունեցածի, ո՛չ իր աշխատանքի: Կոմունիզմը հասկացվել էր ու իրականացվում էր այն մտքով, թե ոչ բոլշևիկների ունեցածը հալալ էր բոլշևիկներին»<sup>97</sup>:*

Հեղկոմի իշխանության օրոք ծանր էր երկրի ոչ միայն ներքին վիճակը, այլ նաև արտաքին դրությունը:

Հակառակ իրենց տրված հանդիսավոր խոստումներին ու հանձնարատություններին՝ բոլշևիկները ապիկար գտնվեցին նաև արտաքին քաղաքականության մեջ:

Խորհրդայնացումից հետո էլ Հայաստանը կտրված մնաց արտաքին աշխարհից: Վրաստանը արգելեց Բաթումից պարենի ու ապրանքների փոխադրությունը՝ դրանով իսկ ավելի խորացնելով Հայաստանի շրջափակումը: Իրավիճակը նույնն էր նաև տարածքային վեճերի պարագայում (Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան, Լոռի):

1920թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի Հեղկոմի ղեկավար Նարիման Նարիմանովը Հայհեղկոմին ուղարկեց մի հեռագիր, որով Խորհրդային Ադրբեջանը Հայաստանին եղբայրաբար զիջում է Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը: Բայց կյանքը ցույց տվեց, որ Ն. Նարիմանովի հեռագիրը մնաց լույս փաստաթուղթ: Ղարաբաղը մնաց Ադրբեջանի ձեռքում, Նախիջևանն էլ՝ թուրք-բոլշևիկյան ուժերի կողմից ռազմակալված:

Ռուսաստանից պարեն ստանալու հույսն էլ ի դերն եղավ: Նախ՝ Ռուսաստանն ինքն էլ անոթի էր, երկրորդը՝ ձմռան սառնամանիքների և բուք ու բորանի պատճառով հաղորդակցությունը շատ էր դժվարացել:

Բոլշևիկները հավատացնում էին ամենքին, թե թուրքերի թշնամությունը դեպի հայերը հետևանք է դաշնակցականների նկատմամբ տաժաժատելության. բավական է Հայաստանը հայտարարել խորհրդային և եղբայրական ձեռք մեկնել թուրքերին, թուրք-հայկական հարաբերությունները կբարելավվեն, և թուրքական բանակը անմիջապես կհեռանա Ալեքսանդրապոլից ու Կարսից: Բայց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո քեմալականները չղաղարեցին հայ ժողովրդի դեմ իրենց դավերը: Այժմ նրանք սկսեցին տարածել նոր վարկած, թե Հայաստանի նորահաստատ իշխանությունը կեղծ է, ըստ էության խորհրդային չէ, այլ դաշնակցական իշխանության մի տարբերակ՝ քողարկված բոլշևիզմի դրոշով: Եվ որպես ապացույց նշում էին Հայաստանի առաջին խորհրդային կառավարության մեջ դաշնակների ղեկավարներից մեկի՝ Դրոյի ներկայությունը: Պարզ է, որ թուրքերը այդ անում էին, որպեսզի անհրաժեշտ հող նախապատրաստեն Հայաստանի դեմ նոր գործողություններ ձեռնարկելու համար:

Հիրավի, խորհրդայնացումը ոչ մի նշանակություն չունեցավ թուրքերի հետ հարաբերությունների հարցում, թուրքերը մազաչափ անգամ չփոխեցին իրենց վերաբերմունքը դեպի հայերը, վերջ չտվին հալածանքներին, բռնություններին, թալանին ու սպանություններին հայկական շրջաններում:

Բ. Բորյանը շատ ճիշտ է նկատում, որ արտաքին քաղաքականության և մասնավորապես Թուրքիայի խնդրում կրած պարտության և ներքին սխալների հետևանքով էր, որ Հեղկոմը ձախողվեց: «Այդ բոլորը անմիջապես մի շարք

<sup>97</sup> Հ. Քաջազնունի, նշվ. աշխ., էջ 52:

բախումներ առաջ բերեց բնակչության հետ և հանգեցրեց այն բանին, որ Հայաստանի խորհրդայնացումից երկուսուկես ամիս անց հակահեղափոխությունը, օգտագործելով իրեն համար ստեղծված չափազանց նպաստավոր պայմանները, ապստամբություն առաջ բերեց երկրում»<sup>98</sup>:

Կացությունը Հայաստանում անտանելի էր դարձել: Հեղկունը կարծես տրնտեսություն էր հիմնում ժողովրդի ունեցվածքի բռնագրավմամբ: Երկիրը դեկավարում էր լրտեսական ուժեղ ցանցի միջոցով:

«Բոլշևիկների ներխուժումը ժողովրդի մասնաւոր կեանքի բոլոր անկիւնները զայրոյթ պատճառեց նոյնիսկ անոնց, որոնք քաղաքականութեան հետ ոչ մի առնչութիւն չունէին: Այդպիսի պայմաններում էլ զարմանալի չի, որ պայթեցաւ փետրուարեան ապստամբութիւնը», - գրում էր Ալ. Խատիսյանը<sup>99</sup>:

Այսպիսով՝ Հայաստանում բոլշևիկների կողմից իրականացված բռնությունները հանգեցրեցին ներքաղաքական իրադրության կտրուկ սրման, որի արդյունքը եղավ Փետրվարյան ապստամբությունը:

**Натела Григорян – Первые месяцы деятельности Ревкома Армении с декабря 1920 года по февраль 1921 г. 2 декабря 1920г.** – Согласно ереванской конвенции в Армении установились советские порядки. Нарушением пунктов данного соглашения Ревком начал свою деятельность. В статье детально представлена как внешняя, так и внутренняя политика Ревкома Армении, которая привела к решительному обострению внутривластической ситуации.

---

<sup>98</sup> **Б. Борьян**, նշվ. աշխ., էջ 156:

<sup>99</sup> **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ. էջ 285:

# Ա Չ Գ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԱՉԳԱՏՈՆՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄՆԱՑՈՒԿՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (ըստ XIX–XX դդ. ազգագրական նյութերի)

### ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Մեր նախորդ հոդվածում (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, 2011, թիվ 2) ներկայացրել էինք հայոց ազգակցական համակարգի հասարակական, գաղափարական միասնության վերապրուկների դրսևորումները, իսկ սույն հոդվածում նպատակ ունենք խոսել տարածքային միասնության վերապրուկների դրսևորումների մասին:

Ազգատոհմի տնտեսական և գաղափարական շահերը պահանջում էին ունենալ փոխադարձ օգնության, տնտեսական-արտադրական կյանքը կազմակերպելու և ինքնապաշտպանության հնարավորություն, որի գլխավոր պայմանը ազգի ընտանիքների համատեղ բնակվելն էր՝ երբեմն կազմելով առանձին գյուղ կամ գյուղակ, իսկ հետագայում՝ առավելապես առանձին թաղամաս: Համախմբված թաղը հայ իրականության մեջ ամենից առաջ ենթադրել է պաշտպանական նկատառումներ, մանավանդ այն պարագայում, երբ ազգակցական խումբն ունեցել է ընդհանուր օգտագործման համար հողակտոր, ոռոգման համակարգ, համատեղ ցանքս, ընդհանուր արտադրական կառույցներ՝ ջրաղաց, ձիթհան, դարբնոց, կալ, գոմ, մարագ և այլն: Ինքնապաշտպանության խնդիրը առաջ էր գալիս ոչ միայն նյութական շահերի, այլև բարոյական նորմերը պահպանելու, ազգակցական խմբի արժանապատվությունը բարձր պահելու մղումներից: Բնակավայրերի առաջացման պատմությունը ցույց է տալիս, որ դրանք սկզբնապես բնակեցված են եղել մի գերդաստանի ճյուղավորումից առաջացած ընտանիքներով, և հետագայում է, որ համալրվել են ազգատոհմերին պատկանող ընտանիքներով: Այդպիսի բնակավայրերն էլ հիմնականում ունեցել են այս կամ այն գերդաստանի հիմնադրի անվանումները<sup>100</sup>: Ազգովի թաղերով բնակեցման համակարգը ավելի կայուն էր ու հարատևել է մինչև XX դարի 50-ական թթ. լեռնային և նախալեռնային բնակավայրերում, որտեղ չկար բնակչության հոսունություն: Նրանցում թաղերի միջև բնական սահման են հանդի-

<sup>100</sup> Չեխ պատմաբան Ֆրանտիշեկ Պալացկին (1792–1876) առաջինն էր, որ «Չեխ ժողովրդի պատմություն» (1836) աշխատության մեջ ուշադրություն դարձրեց չեխական գյուղերի անվանման հատուկ ձևին՝ «իչի» կամ «ովիչի» վերջավորությամբ: Հեղինակը այդ ձևը անվանել է «պատրոնիմիական» կամ հայերիս մոտ ընդունված ազգանվամբ: Ըստ Պալացկու՝ հին Չեխիայում, ինչպես և բոլոր սլավոնների մոտ հնում ընտանիքներն աճելով, չէին բաժանվում, այլ պահպանում էին իրենց միասնությունը: Այս եղանակով առաջանում էին հին չեխական բնակավայրերը, որոնց բնակիչները սկզբնապես կազմում էին մի ընտանիք: Այստեղից էլ այդ գյուղերի անվանման համապատասխան ձևը: Դրա հետևանքով «պատրոնիմիա» եզրույթը տարածվեց և առաջին անգամ մտավ գիտական շրջանառության մեջ: Այն սկզբնապես հիմնականում կրել է բնակավայրերի հիմնադրի կամ ազգակցական խմբի անվանումները: Սակայն բնակավայրի պատրոնիմիական (ազգ, ազգատոհմ) անվանումները հետագայում մոռացվել են, բնակավայրերը ձեռք են բերել նոր անվանումներ՝ նրանց մեծացման, ազգակցական կազմերի փոփոխության, բնակչության քանակական աճի և այլ պատճառներով: (Տե՛ս *Մ.Օ. Կոսեն*, Семейная община и патронимия, М., 1963, էջ 92):

ասցել կիրճերը, բլուրները, գետակները և այլ բնաաշխարհագրական առարկաներ, իսկ հովտային գոտու գյուղերում դրանք հեշտությամբ խառնվել են իրար:

Ազգովի թաղերը սովորաբար կազմվում էին ազգի հիմնադրի ընտանիքի տրոհման և դուստր ընտանիքների առաջացման հետևանքով: Առանձնացած դուստր ընտանիքներն իրենց տները վերակառուցում կամ կառուցում էին կողք-կողքի, միմյանց կպած: Մայր ընտանիքից բաժանված յուրաքանչյուր նոր ընտանիքի համար նախօրոք կառուցված տան համալիրը կցվում էր մայր համալիրին: Հետագայում բաժանված նոր ընտանիքի շենքերը դարձյալ կցվում էին նախորդներին և հնարավորության դեպքում շարք էին կազմում փողոցի մի եզրի վրա: Փաստորեն գերդաստանի երբեմնի տան մեկ մուտքի փոխարեն սրա շուրջն աճած պատկից տները բազմապատկվում, նոր տարածություն էին գրավում: Դռները, որ հին սովորության համաձայն բացվելու էին միայն արևելյան կողմից, այժմ բացվում էին գրեթե բոլոր կողմերից: Նրանց կտուրները կազմում էին մի ընդհանուր հարթություն: Ազգակից ընտանիքների տները թիկունք-թիկունքի էին տալիս, ժամանակի ընթացքում լայնանում և երկարում էին: Իսկ եթե տեղանքը հնարավորություն չէր տալիս, կցաթաղն ընդունում էր անկանոն շրջանի, քառակուսու և այլ տեսք՝ հորիզոնի բոլոր կողմերն ուղղված դռներով: Այս պարագայում խիստ նեղվածությունն անխուսափելի էր դառնում:

Ազգակցական թաղերի տները միմյանց հետ ներսից թողնված նեղլիկ դռներով կամ պատուհաններով հաղորդակցվել են, որոնք հայտնի են «ակնատ» կամ «դրիճակ» անվամբ: Մրանք տնտեսական նշանակությունից զատ ունեցել են նաև պաշտպանական նշանակություն: Ազգակցական կցատները և անգամ կցաթաղերը առաջին հերթին ինքնապաշտպանության համար էին: Դրանցով ազգի ընտանիքներն հարևանություն էին անում՝ լուրեր հաղորդում, իրեր փոխանակում, վտանգի դեպքում՝ ինքնապաշտպանությունն ապահովում: Ուրախ կամ բոթաբեր լուրերը մեկ ակնթարթում թաղի մի ծայրից մյուս ծայրն էին հասնում և, եթե անհրաժեշտ էր լինում, թշնամու հարձակումների դեպքում ոտքի էր կանգնում ամբողջ ազգը՝ ինքնապաշտպանության կազմակերպման նպատակով: Մակայն ազգակցական թաղն ընդհատող փողոցների, ձորակների և ամեն տեսակ խոչընդոտների պարագայում այդպիսի լուրերը հասցվում էին տնից դուրս գալով: Այս և այլ պատճառներով ազգակից ընտանիքները համախմբվելով՝ կենտրոնանում էին մայր ընտանիքի շուրջը՝ ստեղծելով մի ազգակցական թաղ, որը կրում էր ազգի հիմնադրի անունը:

Ազգակցական այդ թաղերը փորձում էին որքան հնարավոր է թույլ չտալ օտարի մուտքն իրենց մեջ: Խոսելով Հարք գավառի հայկական գյուղական բնակավայրերի, դրանց կառուցապատման մասին՝ Բենսեն վկայում է, որ այս կողմերում բնակարանը կառուցելիս երկու հարևան շինության միջնորմի մեջ թողնում են «փոքրիկ անցք՝ ակնատ»<sup>101</sup>: Հայաստանի Հանրապետության շատ շրջաններում մինչև XX դարի 20-30-ական թթ. պահպանվում էին ակնատավոր բնակարան ունեցող որոշ թաղամասեր կամ առանձին բնակարաններ: Այսպես, անգամ Գյումրի քաղաքի երկու մեծ թաղամասերի՝ «Գեղացոց մահլի» և «Ձորի բողազի» կամ «Ձորի մահլի» հարևանությամբ ապրող ընտանիքների բնակարաններին կից պատերին անընդմեջ բացված ակնատների միջոցով քաղաքի այս զանգվածի

<sup>101</sup> Տե՛ս *Քենսե*, Բուլանըխ կամ Հարք գավառ, ԱՀ, գ. Ե, Թիֆլիս, 1899, էջ 43:



բնակչությունը վտանգի դեպքում արտակարգ արագությամբ հաղորդակից էր լինում քաղաքի անցուղարձին: Ստեփան Լիսիցյանը գրում է, որ դեռևս XX դարի 20-ական թթ. վերջերին Մեղրու շրջանի գյուղերի ազգակցական կամ հարևանական թաղամասերի բնակարաններին կից կամ ընդհանուր պատերին բացում էին հատուկ քառակուսի անցքեր՝ «միմյանց կրակ, ուտելիք, ամանեղեն, մանր իրեր կամ տեղեկություններ փոխանցելու համար: Դրանք խոսում են անմիջական հարևանների միջև անցյալում գոյություն ունեցած սերտ տնտեսական և, ամենայն հավանականությամբ, նաև ազգակցական կապերի մասին»<sup>102</sup>:

Բնակարանային ժողովրդական ճարտարապետության ասպարեզում համապատասխան կառուցվածքների հանդիպում ենք նաև հարևան ժողովուրդների մեջ<sup>103</sup>:

Ազգակցական թաղերի ընդլայնումը հանգեցնում էր կցաթաղերի առաջացմանը, և ակնատային համակարգը գործում էր գրեթե ամբողջ բնակավայրով մեկ: Ակնատները կամ այսպես կոչված «անթել հեռախոսի» այդ նախնական ձևերը հայերի մեջ նոր չէր, և, ինչպես ցույց են տալիս Կարմիր բլուրի պեղումները, հայտնի էր դեռևս ուրարտական ժամանակներից: Ըստ անվանի հնագետ Ն. Մարտիրոսյանի հետազոտությունների՝ նման պատկեր է արձանագրվել դեռևս նախաուրարտական վաղ բրոնզեդարյան բնակատեղիներում: Տոհմական բնակատեղիները բաղկացած էին ընտանեկան միակտուր թաղերից, որոնք հազիվ էին իրարից բաժանվում ծուռ ու մուռ, նեղ փողոցներով: Բնակավայրի յուրաքանչյուր թաղ աճում ու ընդլայնվում էր յուրովի, իր ներքին օրենքներին համապատասխան՝ նահապետական ընտանեկան համայնքի տրոհմանը զուգահեռ: Այդ համայնքների տնտեսական ու կենցաղային պահանջներով էին պայմանավորված գոյություն ունեցող «տնաշինարարական» հաստատուն ու որոշակի կանոնները, որոնք ակնհայտորեն հանդես են գալիս, օրինակ, Կարմիր բլուրի նախաուրարտական շինությունների համալիրներում և իրենց ճարտարապետական ձևերով հիշեցնում են Արարատյան դաշտավայրի հնագույն բնակատեղիները, հատկապես Շենգավիթի վաղ բրոնզեդարյան բնակատեղին, ինչպես և Հին Արևելքի վաղ երկրագործական ցեղերի կացարանները<sup>104</sup>: Ակնատներ էին սարքում նաև բակերի պարիսպների վրա, որով հարևանություն էին անում: Դրանք տնտեսական և պաշտպանական նշանակություն ունեին ոչ միայն ազգակցական ընտանիքների, այլ նաև ողջ գյուղական հասարակության համար<sup>105</sup>:

Սասունում, Դերսիմում և Արևմտյան Հայաստանի լեռնային այլ գավառներում հիշատակվում են գյուղեր, որոնք բացառապես բնակեցված են եղել ազգականներով<sup>106</sup>: Հայկական գյուղը վերածվում էր կցաթաղերի մի զանգվածի՝ կլորության ձգտող հատակազօնով: «Ազգի» ընտանիքների տները շատ հաճախ այնպես

<sup>102</sup> Տե՛ս *Տ. Լիսիցյան*, Из материалов по изучению жилищ Армении, 1, Крестьянское жилище Мегринского района, “Известия Кавказского историко-археологического ин-та”, Тифлис, 1927, VI, էջ 131:

<sup>103</sup> Տե՛ս *Մ.Օ. Շուվին*, Կովկասի ժողովուրդների պատրոնիմիան, ՊԲՀ, 1963, № 1, էջ 97:

<sup>104</sup> Տե՛ս *Ա.Ա. Մարցիросյան*, Город Тейшебаини, Ереван, 1961, նկ. 8-10, էջ 28-31, նույնի՝ Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 160-190:

<sup>105</sup> Տե՛ս *Վ. Բլոյան*, Кровнородственный “азг” и родственные отношения у армян, “Советская этнография”, 1952, № 1, նույնի՝ Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 155-165:

<sup>106</sup> Տե՛ս *Չ. Հալաջյան*, Դերսիմի հայերի ազգագրությունը, ՀԱԲ, հ. 5, Երևան, 1973, էջ 201, *Վ. Պետոյան*, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 230-231:

էին կ'պած միմյանց, որ ամբողջության մեջ հիշեցնում էին միասնական ճարտարապետական համալիր: Նման պարագայում կտուրները վերածվում էին անցողիներին, ժողովարանների, մանկական ու սպորտային խաղերի, հարսանեկան պարերի, խմբական աշխատանքների՝ երիշտա կտրելու, բուրդ փռելու, վերմակ կտրելու և այլ միջոցառումների վայրերի<sup>107</sup>: Փողոցի ձևը թելադրվում էր տարբեր ազգակցական խմբերի շփումից, նայած թե ինչպես, ինչ ուղղությամբ էին կառուցվում ազգակցական թաղերը, նույն ձևով էլ առաջանում էին փողոցները: Հարևան ազգակցական խմբերը փոխադարձ համաձայնությամբ ճանապարհը հարմարեցնում էին փոխադրական միջոցների տեսակներին: Փողոցի ձևը և մեծությունը թելադրում էին կողմերը, մանավանդ գորեղ «ազգ»-ը, որը հնարավորին չափ սեղմում էր, փոքրացնում այն: Կողմերի պահանջի վրա ազդում էր նաև գյուղական հասարակության պահանջը: Ծուռտիկ փողոցները ծառայելու էին երկանիվ սայլերով փոխադրություն կատարելուն: Այս էր պատճառը, որ հայկական գյուղը մինչև 1920-ական թվականները կցատների մի խիտ գանգված էր՝ կլորության ձգտող հատակագծով: Ազգակցական թաղերը սակավ բացառությամբ, գուրկ էին տնամերձ հողերից: Այգիները մեծ մասամբ գտնվում էին թաղերից դուրս: Թաղերն ու փողոցները կազմվում էին հիմնականում տարերայնորեն, առանց պլանավորման:

Ազգակցական կցաթաղի մեջ ոչ ազգակից որևէ ընտանիքի խցկումը անհանդուրժելի էր: Այս երևույթը Արևմտյան Հայաստանի լեռնային շատ բնակավայրերում որպես սովորույթ պահպանվել էր մինչև եղեռնը և արտագաղթը: Ազատոհմի որևէ ընտանիք վերանալու դեպքում նրա տունն ու տեղը ժառանգում էր ամենամերձավոր ազգականը՝ որդին, եղբայրը, հորեղբայրը և այլն: Վերացման եզրին կանգնած ընտանիքը, սակայն, բարոյական իրավունք չունեի տունը կտակել ոչ ազգակից որևէ ընտանիքի: Այդպիսի քայլ նախաձեռնելիս ամբողջ ազգը դիմադրում էր նրան: Բայց տնփեսան իրավունք ուներ ժառանգել աներոջ տունը և նրա վարելահողերը: Ազգանդամն իրավունք չունեի վաճառել իր վարելահողերը ոչ ազգակից գնորդին: Ազգը նրան խորհուրդ էր տալիս այդ հողերը վաճառել ազգի որևէ անդամին՝ ազգի հարստությունը «ներսում» պահելու դիտավորությամբ:

Սակայն XIX դարի վերջերին և հատկապես XX դարի սկզբներին, երբ տնտեսական հարցերում ազգի ընտանիքները ձեռք էին բերում տնտեսական ինքնուրույնություն, ազգապետի հեղինակությունն անկում էր ապրում, շուկայական հարաբերությունները հայկական գյուղ էին թափանցում և անխուսափելի էր դառնում տունն ու տեղը նաև օտարին վաճառելը: Նման պայմաններում խախտվում էր համատեղ ապրելու միտումը, ազգակցական կապերը սկսում են թուլանալ և քաղաքամերձ գյուղերից առանձին ընտանիքներ դրամական վաստակի համար մեկնում

<sup>107</sup> Համանման նկարագրություն է թողել Արևմտյան Հայաստանի քրդերի կենցաղը հետազոտող Մ. Շվուրը. «Մի թաղի կամ հաճախ ամբողջ գյուղի տների կտուրները միննույն բարձրությամբ իրար անմիջապես կից, կներկայացնեն մի հսկայական հրապարակ, ուր տեղի կունենան համայնական աղոթքները, հասարակական ճշկերույթները, հարսանեկան և այլ տոնական զվարճություններն ու պարերը: Միևնույն հրապարակ-կտուրի վրա քրդուհիները կփռեն չորացնելու համար նոր խաշած ձավարը, լվացած աղոնը, կանաչ ծխախոտը, կեավուրներեն գողացված տավարի մորթերը: Ապրիլ ամսի կեսերեն սկսած մինչև աշուն, մինչև սեպտեմբերի վերջերը նույն այդ կտուրներն կփոխվին ընդհանուր կամ համայնական ննջարանի: Այդտեղ էր ննջում նաև հյուրը» (Մ.Տ. Շվուր, Քրդերը Տաճկաց Հաստատում, Մ. Պետերբուրգ, 1905, էջ 76):

էին արտագնա աշխատանքի արդյունաբերական կենտրոններ: Ազգատոհմային կապերը լավ պահպանված էին մնում հիմնականում լեռնային և նախալեռնային, հաղորդակցության ուղիներից կտրված բնակավայրերում: Ազգի ունևոր ընտանիքը օտարի մուտքն արգելելու նպատակով սեփականացնում էր գաղթող ազգակցի տունն ու հողատարածքը: Այս պարագայում անհնարին էր դառնում տուն ու տեղը օտարին վաճառելը: Մակայն միշտ չէ, որ ազգի հարուստ ընտանիքը գնելով սեփականացնում էր ազգականի տունը, երբեմն անխուսափելի էր դառնում այն օտարին վաճառելը: Նման վաճառք կայանում էր այն դեպքում, երբ նոր թաղակիցը իրենց հետ խնամփական կամ բարեկամական և այլ կապեր ուներ: Գնալով համատարած բնույթ էր ստանում կցաթաղերի մեջ տարբեր եղանակներով այլ ազգատոհմերի ներկայացուցիչների հաստատվելը: XIX դ. վերջերին և XX դարի սկզբներին ազգակցական կապերը վերջնականապես փոխարինվեցին հարևանական, տարածքային կապերով, երբ ազգովի տարածքային միասնության պահպանումը դառնում էր գրեթե անհնարին: Այդ գործընթացը արագանում է XX դարի 20-30-ական թթ. խորհրդային շրջանում ինդուստրացման և կոլեկտիվացման նոր քաղաքականության կենսագործման պատճառով:

Նոր առաջացող անհատական ընտանիքը նոր տուն կառուցում էր մի այլ հողամասում, օրինակ՝ երբեմն էլ գյուղից դուրս՝ չանվանակոչված տարածքներում՝ առաջացնելով նոր թաղամասեր, որոնք անվանվում էին տարածքի բնական դիրքին համապատասխան կամ էլ տրվում էր մականուն՝ «անկիտուր մահլա» (թաղ) անվամբ:

Հարթավայրային շրջաններում տարածքային ընդհանրությունը պահպանվում էր հիմնականում մերձավոր ազգականների շրջանակներում: Ազգակցական թաղերի պահպանման հարցում կարևոր դեր էր խաղում բնակչության մշտական բնակեցվածությունը և արտահոսքի բացակայությունը: Այն գյուղերում, որտեղ բնակչության հոսք չկար, ազգակցական թաղերն ավելի կայուն էին պահպանվում: Դրանք հիմնականում գուրկ էին տնամերձ հողից կամ այլ տարածություններից:

Տարածքային միասնությունը դրսևորվում էր նաև հեռագնա անասնապահության ժամանակ. սարվորների կացարանները՝ *օղաները*, հիմնվում էին կողք-կողքի: Տավուշում օղա էին անվանում ամառանոցներում և ձմեռանոցներում սարվորների ժամանակավոր տները: Եթե նույնիսկ բուն բնակավայրում տարածքային ամբողջականությունը խախտվել էր, ապա նույնը չէր կարելի ասել օղաների վերաբերյալ, որտեղ անպայման ազգակիցները հաստատվում էին կողք-կողքի: Եղել են դեպքեր, երբ ձմեռանոցները վեր են ածվել մշտական բնակավայրերի: Ձմեռանոցում հաստատված ազգը ժամանակի ընթացքում բազմանալով՝ սկսում է յուրացնել շրջապատի ազատ տարածքները՝ տներ կառուցելով: Ժամանակի ընթացքում դրանք վեր էին ածվում մշտական բնակավայրի: Պապական տնից անջատված դուստր ընտանիքները, բնակվելով իրար կողքի, ստեղծում էին ազգակցական թաղամաս: Նման բնակավայրի օրինակներ են եղել Տավուշի Արծվաբերդ, Նավու, Ենոքավան, Խաշտարակ գյուղերը, Գեղարքունիքի մարզի Թթուշուր բնակավայրը և այլն<sup>108</sup>: Դեռ ոչ վաղ անցյալում Տավուշի Արծվաբերդ գյուղում

<sup>108</sup> Տե՛ս Ս. Զ. Կարաբեյան, Родственная группа, «азг» у армян, Ереван, 1966, էջ 87-88:

հարևանությամբ ապրել են Ասիլբեկյան գերդաստանի սերունդները՝ Ավետի երեք որդիների ընտանիքները, սակայն թաղամասը հայտնի է այլ անվանումով՝ Բուղաքար: Պատճառը այլ ազգի ընտանիքների միաձուլումն է եղել տվյալ թաղամաս և կցաթաղի վերածված թաղամասն էլ ստացել է բնական դիրքի հետ կապված աշխարհագրական անվանում: Այդ նույն գյուղում ազգակից ընտանիքները հիմնականում համախմբված են բնակվել:

Մինչև XX դարի կեսերը Իջևանի տարածաշրջանի Աջաջուր գյուղում հստակ առանձնանում էին ազգակցական թաղերը: Ընդհանուր առմամբ գյուղն այդ տարիներին ուներ 35 թաղ, որոնք պահպանում էին ոչ միայն ազգի անվանումը, այլ նաև ազգի միատարրությունը: Օրինակ՝ **Մելիքբեկյանց** թաղում բնակվում էին մոտ քառասուն ազգակից ընտանիքներ, իսկ **Ղալթախյան** ընտանիքները՝ երեսունմեկ էին, որոնք զբաղեցնում էին երկու թաղամաս՝ մեկում՝ քսաներկու, մյուսում՝ ինն ընտանիքներ<sup>109</sup>:

Ազգի տարածքային միասնությունը երևում է նաև ընդհանուր ազգակցական գերեզմանաշարք ունենալու մեջ, գրեթե այնպես, ինչպես ազգակցական թաղերը: Ազգակցական հատուկ գերեզմանատներ մեզ հայտնի չեն: Քանի դեռ որևէ գերդաստան միայնակ էր լինում, սրա գերեզմանաշարքը կրում էր ընտանեկան բնույթ: Այդպիսի շարքերը չէին մեծանում: Բայց ազգակցական խմբի մեծացմամբ մեծանում էին նաև ազգակցական գերեզմանաշարքերը:

Գերեզմանաշարքն իր հերթին, եթե հնարավոր էր լինում, պահպանում էր ընտանիքների դասավորության կարգը: Գոնե ամուսինների համար այդ բանը կիրառվում էր առանց վերապահության: Մի գերեզմանաշարքը լրանալիս ընտրվում էր նորը: Մեր օրերում գերեզմանաշարքերը կրում են առավելապես ընտանեկան, քան ազգակցական բնույթ:

Ի մի բերելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ XIX-XX դարերում մենք ունեցել ենք ազգակիցներով համախմբված ապրելու երեք ձև.

1. Երբ ողջ ազգն է զբաղեցրել մի գյուղ. այս ձևը առավել տարածված է եղել միջնադարում: Այս մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել X դարի պատմիչ Թովմա Արծրունին. «Եվ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թե՛ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղաց ուժգին խանչիցե, հազիւ թե՛ ուրէք կարիցե՛ առնուլ զբոմբին ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով»<sup>110</sup>:

Վաղ միջնադարյան հիշատակություններից երևում է, որ բնակավայրերի մեծ մասը իրենց անվանումները ստացել են առանձին ազգերի անուններից՝ Ռշտունյաց գավառ կամ Ռշտունիք, Սյունաց աշխարհ կամ Սյունիք և այլն: Այս անվանումները ծագել են նախարարական տների անվանումներից, որոնք եղել են տվյալ երկրամասերի իշխանները: Արևմտյան Հայաստանի որոշ բնակավայրերի անվանումների ստուգաբանությունը ևս կապվում է ազգանվանումների հետ, որպիսիք են՝ Կձանք, Արենանք, Աղամանք և այլն<sup>111</sup>: Աբխազիայում և Ռուսաստանի Դաջնության Ռոստովի մարզում XIX դարի վերջերին հայկական բնակավայրերը կոչվում էին

<sup>109</sup> Տե՛ս **Յ. Կարաբեյան**, Родственная группа, «азг» у армян, էջ 76:

<sup>110</sup> Տե՛ս **Թովմա Արծրունի**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 134:

<sup>111</sup> Տե՛ս **Ե. Գարսայեանյան**, Մասուն (ազգագրական նյութեր), Երևան, 1963, էջ 3-4, 50:

թվաքանակով գերիշխող ազգի անունով<sup>112</sup>: Սա առավել արտահայտված էր արոտավայրային ժամանակավոր բնակավայրերում: Եթե նույնիսկ բուն բնակավայրում տարածքային ամբողջականությունը չէր պահպանվում, ապա նույնը չէր կարելի ասել արոտավայրային բնակավայր-օդաների վերաբերյալ, որոնցում ազգակիցները անպայման հաստատվում էին կողք-կողքի՝ մի ժամանակավոր սեզոնային բնակավայր կամ առանձին թաղամաս հիմնելով: Օրինակ՝ Բերդում Անանյանների թաղի ընտանիքները 1950-ական թվականներին կորցնելով իր նախկին միասնությունը՝ բնակվում էին քաղաքի տարբեր հատվածներում, միայն ազգի հիմնադրի թոռների՝ երեք եղբայրների տներն էին իրար կողք-կողքի, մինչդեռ բիմաներում՝ արոտավայրային կացարաններում նույն ազգի տները մի թաղամաս էին հիմնել: Նույն պատկերն էր նաև ձմեռանոցներում, որոնք անգամ կրում էին հիմնադիր ազգի անվանումը: Ե. Կարապետյանի հավաստմամբ Սասունում սովորույթի համաձայն՝ գումերն ու մարագները հիմնվում էին արոտավայրերի մոտ, գյուղերից դուրս, հետագայում դրանք աստիճանաբար մեծանալով՝ վերածվում էին ազգակցական մշտական բնակավայրերի: Նա թվարկում է Սասնա գավառի մեծ ազգերի անվանումներով հիշատակվող մի շարք գյուղեր, որոնցից են՝ Բլոկանք, Կծանք, Գիլոնք գյուղերը՝ Խուրթի շրջանում, Սրցանք, Հուսենք, Աբու թաղ, Միրի թաղ, Սարենք՝ Մոտկանի շրջանում, Փսանք, Թաթանք, Քաջառենք, Մկյենք, Բալոյենք՝ Փսանաց շրջանում, Մաղտուն, Ահարոնք, Խիանք, Դվալենք, Սպաղանք, Հլոդինք՝ Խիանքի շրջանում<sup>113</sup> և այլն: Ըստ մեր բանասացների՝ Տալվորիկի 11 թաղերը ներկայացված են իբրև ազգակցական բնակատեղիներ, որոնք հետագա դարերում վերածվել են ինքնուրույն գյուղերի, և դրանցից շատերը կրել են ազգակցական անվանումներ՝ Իրիցանք, Ալյանցիք: Նույնը Շատախ գավառում՝ Հրեկոնք, Վիժնանք, Ջալալիք, Դուլանք, Արջոնք, Շեղկոնք, Ջնալենք, Թաթանք Ճախրկանք, Մտրպանք, Քրդամանք, Մաղենք, Քիպթաղ, Դամկենք, Քաշքենք, Ծուռեկանք, Հազգոյի շրջանում՝ Փիրշենք, Ջիլանք և այլ գյուղերը, որոնք եղել են ազգակիցներով բնակեցված փոքր գյուղեր, հետագայում է, որ աճել և մեծացել են<sup>114</sup>: Սասնա ազգակցական անվանումներով գյուղերի մի զգալի մասը փոքր գյուղեր էին՝ 14-15 տներից բաղկացած, որոշ մասն էլ՝ 250-300 և ավելի տներից: Առաջինները մեծամասնությունն էին կազմում:

Վ. Պետոյանի հավաստմամբ Սասունի գավառի գյուղական հասարակությունը մեծ մասամբ բաղկացած էր մոտավոր և հեռավոր ազգակցական կապ ունեցող ընտանիքներից, դրա համար էլ հարս էին բերում հիմնականում հարևան գյուղերից<sup>115</sup>: Գ. Հալաջյանը նույնպես նշում է, որ Դերսիմում կային գյուղեր, որոնք բնակեցված են եղել միայն մեկ ազգակցական խմբի ընտանիքներով<sup>116</sup>:

XIX դարի վերջին արձանագրվել են արևելահայերին վերաբերող նյութեր՝ բնակավայրը մի ազգակցական խմբի ընտանիքներից կազմված լինելու մասին: Այդպիսին են Ե. Լալայանի հաղորդած տեղեկությունները Լոռվա Իգահատ և Արդվի բնակավայրերի մասին: Դրանցից յուրաքանչյուրը բնակեցված էր մեկ ազ-

<sup>112</sup> Տե՛ս **Յ. Կարաբեյան**, Родственная группа, “азг” у армян, էջ 89-92:

<sup>113</sup> Տե՛ս **Ե. Կարապետյան**, Սասուն, էջ 3-4; Վ. Պետոյան, Սասնա ազգագրություն, Երևան, 1965, էջ 9-10, 14-15; Ա. Քալանթար, Սասուն, Թիֆլիս, 1895, էջ 15 և այլն:

<sup>114</sup> Տե՛ս **Ռ. Նահապետյան**, ԴԱՆ, տ. 4, 1973 թ., Աշնակ, էջ 44-48, տ. 6, Իրինդ, 1973, էջ 23-31, տ. 12, Ուջան, 1975, էջ 24-27 և այլն:

<sup>115</sup> Տե՛ս **Վ. Պետոյան**, նշվ. աշխ., էջ 312:

<sup>116</sup> Տե՛ս **Գ. Հալաջյան**, Դերսիմի հայերի ազգագրությունը, էջ 230-231:

գով՝ Իգահատը՝ Շահվերդյաններով, Արդվինը՝ Քալանթարյաններով: Ուշագրավ է, որ այդ ազգերի անուններով չեն կոչվել նշված բնակավայրերը<sup>117</sup>:

2. Ազգակցական թաղեր հիմնելով: Այս ձևը XIX դարի վերջերին տարածված էր Հայաստանի լեռնային ու նախալեռնային շրջաններում: Արևելյան Հայաստանի գյուղերում ազգակցական թաղամասերով բնակեցման մասին Ստ. Լիսիցյանը գրում է, որ ամբողջական թաղամասեր կրում էին ազգակցական անվանումներ. Հաղպատում՝ Եղիազարյանների, Դսեղում՝ Չատինյանների, Թումանյանների, Գորիսում՝ Մինասանց, Դուռնց: Դեռ 1960 թ. Խնձորեսկում արձանագրվել է 13 ազգակցական թաղ: Միսիանի Լծեն գյուղը, որ փոված է բարձր լեռան վրա, վատ ճանապարհների պատճառով առանձնացվել է հարևան գյուղերից և երկար ժամանակ բնակեցված էր մեկ ազգի ընտանիքներով՝ Գրիգորյաններով, որոնք այստեղ էին տեղափոխվել 1830 թ. Պարսկաստանի Խոյ գավառից: Ավելի ուշ այստեղ են հաստատվում Լեռնային Ղարաբաղից Վարդանյան, Սահակյան, Մանուկյան ընտանիքները: Վերջիններս իրենց հերթին հիմնում են իրենց ազգանվամբ թաղամասեր<sup>118</sup>: Ինչպես գրավոր, այնպես էլ դաշտային ազգագրական նյութերն աներկբա հավաստում են Հայաստանի տարբեր շրջաններում ազգակցական թաղերով բնակեցման համակարգի գոյությունը մինչև XIX դարի վերջերը և XX դարի սկզբները, երևույթ, որ նաև կովկասյան ժողովուրդների կենցաղին բնորոշ ամենակայուն հատկանիշներից մեկն է եղել<sup>119</sup>:

Նույնը առավել կայուն ձևով տարածված էր Արևմտյան Հայաստանում, որի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ջեյթունցին՝ իր «Ջեյթունի անցյալն ու ներկայէն» աշխատության մեջ: Ըստ նրա՝ Ջեյթունում կային չորս հիմնական թաղեր՝ Շովրոյանների, Յաղուբյանների, Ենիդունյանների և Սուրենյանների<sup>120</sup>: Թվարկված թաղամասերն իրարից բաժանվում էին որոշակի աշխարհագրական սահմաններով՝ ձոր, գետ և այլն, որոնց առկայության պատճառով թաղերը մեկուսացված էին:

3. Փոքր կազմ ունեցող ազգակցական թաղերով, որոնց մեջ մտնում էին ամենամոտ ազգականները: Մա ամենատարածված ձևն էր: Այսպիսի փոքր, առավել մերձավոր ընտանիքներով ապրելու սովորույթը պահպանվել է հատկապես խորհրդայնացման շրջանում, հարթավայրային բնակավայրերում: Այստեղ ազգակցական կապերը փոխարինվում էին հարևանական տարածքային կապերով:

Նշանավոր ազգագրագետ Վ. Բոդյանը 1949 թ. Արտաշատի շրջանի Շահումյան գյուղում դաշտային ազգագրական նյութեր գրառելիս ուշադրություն է դարձրել այստեղ ազգակցական թաղերով բնակվող համակարգի՝ **Ղարիբենց** և **Բարսեղենց** ազգակցական թաղերի նկարագրմանը: Հեղինակը գրում է, որ 1949 թ. Ղարիբենց թաղն ուներ հետևյալ պատկերը.

1. Ավագի տուն = Ղարիբենց ազգից = Ղարիբյան:
2. Թումասի տուն = Ղարիբենց ազգից = Ղարիբյան:
3. Հարթենի տուն = Ղարիբենց ազգից = Ղարիբյան:
4. Առաքելի տուն = Ղարիբենց ազգից = Մայարյան:

<sup>117</sup> Տե՛ս **Ե. Լալայան**, Բորչալու գավառ, Երկեր, հ. 3, Երևան, 2004, էջ 152:

<sup>118</sup> Տե՛ս **Ջ. Կարաբեյան**, նշվ. աշխ., էջ 76:

<sup>119</sup> Տե՛ս **Մ.Օ. Կոսովեն**, Կովկասի ժողովուրդների պատրոնիմիան, էջ 95-97:

<sup>120</sup> Տե՛ս **Ջեյթունցի**, նշվ. աշխ., էջ 21:

5. Ակոբի տուն = Ղարիբենց ազգից = Շահգեղյան:
6. Գաբրիելի տուն = Ղարիբենց ազգից = Շահգեղյան:
7. Եգորի տուն = Ղարիբենց ազգից = Հակոբյան<sup>121</sup>:

Այստեղ, դժվար չէ նկատել, որ Ղարիբյան ազգատոհմի ներսում արդեն առաջացել էին դուստր ընտանիքներ, որոնք, սակայն, դեռևս պահպանում էին տարածքային միասնությունը: Սակայն նույն գյուղի մեկ այլ՝ **Բարսեղենց տներ** ազգանվամբ թաղում արդեն ապրում էին խնամիական կապեր ունեցող երկու ընտանիք.

- |                                                                                                                                                                                                                                                                   |   |            |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|------------|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Թևոսի տուն = Բարսեղենց ազգից:</li> <li>2. Ներսոֆի տուն = Բարսեղենց ազգից:</li> <li>3. Մարգարի տուն = Բարսեղենց ազգից:</li> </ol>                                                                                        | } | եղբայրներ: |
| <ol style="list-style-type: none"> <li>4. Մարքրայի տուն = Մարգարի քեռին՝ Հախվերդենց ազգից:</li> <li>5. Վիրաբի տուն = Բարսեղենց ազգից (Ազիզյան):</li> <li>6. Ալեքսանի տուն = Խազըտի ազգից՝ Բարսեղենց խնամին:</li> <li>7. Խաջոյի տուն = Բարսեղենց ազգից:</li> </ol> |   |            |

Ուշագրավ է, որ այս դեպքում ազգակցական թաղերը որոշակի դեր են կատարել կոլեկտիվացման շրջանում: Արտադրական բրիգադները կազմվում էին տարածքային սկզբունքով՝ ընդգրկելով առանձին թաղեր: Դրանք հիմնականում համընկնում էին հին ազգակցական թաղերի հետ: Համատեղ ապրելու սովորույթը շատ հաճախ վճռական դեր է խաղացել հատկապես գյուղի այս կամ այն պաշտոնի ընտրարշավի ժամանակ, երբ յուրաքանչյուր ազգ ձգտում էր համախմբված ընտրել իր ազգականին՝ բրիգադիր, գյուղապետ և այլ պաշտոններում: Բացառիկ դեպքերում է, որ գյուղում ազգակցական թաղերի մեջ կարող էին հայտնվել օտար ընտանիքներ: Թաղերով ապրելու սովորույթը խախտվում էր այն դեպքում, երբ թուլանում և անկում էր ապրում ազգապետի հեղինակությունը: Սովորույթի համաձայն, ինչպես նշեցինք, գաղթող ազգականի տանն ու տեղին տիրանում էին միայն նրա մերձավոր ազգականները:

Ինչն՞վ էր պայմանավորված համատեղ ապրելու ձգտումը. ամենից առաջ երբեմնի տոհմական համախմբվածության հնագույն ավանդներով, երկրորդ՝ ազգակիցների տնտեսական սերտ կապերով, որ դրսևորվում էր փոխօգնության ձևերով, երրորդ՝ բարոյական անաղարտության պահպանումով, չորրորդ՝ ազգակցական խմբերի միջև ծագող վեճերի ժամանակ գործողություններ ծավալելու անհրաժեշտությամբ և այլն: Դրա համար էլ ազգակցական կցաթաղի մեջ ոչ ազգակից ընտանիքի գոյությունը անհանդուրժելի էր համարվում:

1920-1930-ական թվականներից ի վեր հասարակական զարգացման նոր պայմանները, աշխատանքի կազմակերպման, հողագործության և անասնապահության նոր ձևերը բնականորեն վերափոխեցին գյուղատիպերը, աստիճանաբար հիմնվեցին նոր թաղեր, ուր կանոնավոր փողոցների վրա, իրենց հատկացված տնամերձ հողամասերում կառուցվեցին լուսավոր, ժամանակակից տներ, վերացան հին ազգակցական թաղերն ու դրանց մնացուկները:

<sup>121</sup> См. u **В. Бдоян**, Кровнородственный “азг” и родственные отношения у армян, “Советская этнография”, 1952, № 1:

**Рафик Нагапетян – *Пережитки родственно-территориальной общности в армянской действительности (на основе этнографических материалов XIX–XX вв.)***. – Традиция совместного проживания на единой территории является одной из отличительных черт родственных групп. В древние времена эта традиция проявлялась в формировании общих поселений, или, что наиболее характерно, – в совместном проживании в родственных кварталах. Традиция совместного проживания родственных групп в армянской действительности сохранялась вплоть до начала XX века, а в отдельных регионах – до середины XX века. Система совместного проживания отдельными селами особенно устойчиво сохранялась в быту горных или предгорных районов, в частности – среди выходцев из Западной Армении. Родственный квартал из себя представлял своеобразный архитектурный комплекс, одним из важных элементов которого являлись плоские крыши, используемые в целях передвижения, организации совместных работ, спортивных игр, проведения собраний, и т.д. Во внутренних стенах таких совместных родственных домов открывались узкие дверца или окна (“акнаты”), которые способствовали укреплению солидарности и взаимопомощи. В частности, они использовались с целью оказания материальной помощи и поддержки, обмена и передачи информации, оповещения об угрозе нападения иноземцев и организации совместной обороны.



# Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՏՈՒՐՔԸ  
1941–1945 թթ. ՀԱՅԳԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

## ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական խոշոր իրադարձությունները հաճախ բախտորոշ են դառնում ժողովուրդների ներկայի ու գալիքի համար, անջնջելի հետք թողնում ժամանակակից սերունդների ճակատագրի վրա: Դրանք ժամանակների հեռվից կարող են վերիմաստավորվել, անգամ խորհրդանշական արժեք ստանալ:

Երկրորդ աշխարհամարտը որքան էլ մարդկային ու նյութական հնարավորությունների ողբերգականորեն աննախադեպ մեծ չափերով կորուստ պատճառեց, սակայն, միաժամանակ (կորստի այդ չափերով հանդերձ) մարդկային պատմության մեջ եզակի է թե՛ նվաճված հաղթանակի փառավորությամբ, և թե՛ այդ հաղթանակի՝ համաշխարհային պատմական մեծությամբ: Հաղթանակ, որը նվաճող հերոսների հիշատակը հավերժացնելու, հավետ անթառամ պահելու համար սերունդները անչափ մեծ բարոյական պարտավորություն են կրում:

«Սասունցի Դավիթ» ժողովրդական հերոսական վեպը պատմող-կերտողների օրինակով ԴԱՌՆԱՆՔ ՈՂՈՐՄԻՆ ՏԻ ՏԱՆՔ... բայց այստեղ ո՞ր մեկին, համաշխարհային ռազմական տարեգրության մեջ նմանը չունեցող հաղթանակի ո՞ր հերոսին ու նահատակին, երբ նրանք միլիոններով են հաշվվում...

Ուրեմն՝ **դառնանք ողորմին տի տանք** նրանց բոլորին՝ բոլորովին պատանի, թե հասուն այր, գյուղացի թե քաղաքացի, անուս թե գիտական մտքի տեր, տղամարդ թե կին՝ հմտությունների, զբաղմունքների, մասնագիտությունների բոլոր-բոլոր բնույթներով:

Միլիոններ կազմող այդ բազմությունից այստեղ խոսքը հայ բանաստեղծական ընտանիքի ներկայացուցիչների մասին է:

Թող ինձ ներվի աշխարհասասան պատերազմին ժամանակակից մանկան իմ տեսածից մի քանի փաստ վերհիշելու համար:

Ահա տրամվայներից վիրավոր զինվորներով պատգարակներ են իջեցնում ռազմական հոսպիտալի վերածված դպրոցական շենքի մայթին: (Այդ նպատակին ծառայող տրամվայներին ետևի մասից դռներ էին բացված): Մարդիկ մոտենում ու հետաքրքրվում էին զինվորների առողջական վիճակով՝ ինչ վերք էին ստացել և այլն ու հուսադրում: Նրանց մեջ պատահում էին և հայեր:

Ահա դպրոցական առաջին տետրերս՝ ճակատներին ահեղ թնդանոթներ նկարած, իսկ նկարների տակ խոշորատառ ազդեցիկ ռազմակոչը՝ «Մա հ գերմանական օկուպանդներին»:

Ականջներինս մեջ մելամաղձոտ երգի մի ծվեն է մնացել.

*Էն քաղաքի անունն էր Կերչ*

*Որը տվեց հայերի վերջ.*

*Գնում եմ ետ դառնալու չեմ,*

*Սուեք մորս՝ վիրավոր եմ...*

Մեռնող զինվորը չի ցանկանում սիրասուն մորը ցմահ մրմուռի մասնել: Թող որդուն երբևէ գտնելու հույսի թելը ուղեկցի նրան:

Անցնենք մեր թեմային:

Ահեղ պատերազմում հայ զինվորների շարքերից աճեցին մարշալներ ու գեներալներ, հերոսի ոսկե աստղի արժանացածների (գոհված կամ ապրող) պատկանելի մի բանակ: Եվ դա՝ մի փոքրաթիվ ժողովրդից:

... Ի լրումն պատճառական բոլոր հիմքերի՝ հայը նաև չէր մոռանում, որ Արաքսի մյուս ափում մարտական պատրաստության մեջ զնդեր կային՝ այս ափի խաղաղությանը սպառնացող... Եվ **պատերազմը կենաց ու մահու պայքարի կոչեց** այն բոլորին, որ կարող էին գենք վերցնել ամբարտավան **թշնամուն դեմ ելնելու**: Բանվորը բաժանվեց դազգահից, ճարտարագետը՝ նախագծումներից, արվեստագետը՝ ստեղծագործական որոնումներից, բանաստեղծը...

Բանաստեղծը չբաժանվեց գրչից: Հանուն հայրենիքի բանաստեղծը մաքառեց երկու գենքով՝ գրչով ու հրացանով: Նա հերոսին վայել մաքառման մեջ տեսավ հայրենիքի ու մարդու ազատ գոյատևումը, սրտի վարակիչ խոսքերով ներբողեց հայրենի հողը կրծքով պաշտպանելու սուրբ գործը: Չկար ու չէր կարող այլընտրանք լինել, և նա սեփական արյամբ նվիրագործեց հայրենիքի նկատմամբ ունեցած պարտքը:

Այո՛, բանաստեղծներն ընկան կրկնակի գենքով մաքառելիս՝ որերորդ անգամ վավերացնելով իրենց իսկ պապերից եկած գերագույն իմաստությունը... «Մահ ոչ իմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն»:

Բանաստեղծի գոհվելը բազմախորհուրդ է, հիշատակը՝ նվիրական ու թանկ: Նրա կյանքի խորհուրդը ապրում է մեր մեջ, նրա սրտի ազնիվ բաբախումները խառնվում են մեր կյանքի տրոփումներին, նրա խոհերը մեր կյանքը տոգորում են մարդկայնորեն լավի ու լավագույնի երազներով, ապրելու և ստեղծագործելու ավյուն բորբոքում մեր մեջ:

Դերենիկ Չարխյան... Կյանքի քսանյոթերորդ ամռանը, սակայն իր կյանքի բուն ամռանը չհասած, ֆաշիզմի դեմ մղված կատաղի մարտերից մեկում գոհվում է բանաստեղծական, գեղանկարչական, երաժշտական ակներև ընդունակություններով օժտված Դերենիկ Չարխյանը:

Տոգորող քնարականություն ունեն նրա թողած բանաստեղծությունները, ուր հախուռն հույզերով ազնիվ ու զգայուն մի սիրտ է բաբախում: Հազվագյուտ անմիջականությամբ, հարուստ հույզերով նա սիրահարված է կյանքին, հայրենի բնության անմահ գեղեցկություններին՝ լեռներին ու դաշտերին, աղբյուրներին, անտառներին ու ծաղիկներին, արևին և այդ ամենը արժեքավորող մարդուն:

Կարդում ես Չարխյանի «Թողեցի մենակ», «Կարոտ», «Իմ յար գարունն է նորից կանաչել», «Իմ Երևան», «Գալիքի բարեկամիս», «Տեսա դաշտում», «Դո՛ւ էլ, վարդենի, պիտի թառամես», «Թե մարտում ընկնեմ» բանաստեղծությունները ու չես կարողանում հետևողական լինել «զգաստ» ընթերցողի քո դերում՝ հետևելու դրանց բանաստեղծական չափին ու ձևին, արվեստին ու պատկերավորմանը... Բանաստեղծի խորհրդածությունների անմիջականությունը վարակիչ է, նրանք քո մեջ «հայտնաբերում» են հույզի ու ապրումի շատ ընդհանրություններ: Տարվում ես...

Կարդանք հիշված բանաստեղծություններից վերջինը՝ «Թե մարտում ընկնեմ» խորագրված.

*Թե մարտում ընկնեմ, տխուր մի մնա,  
Անսեր մի մնա, սիրիք դու մեկին,  
Թող ջահել սիրտդ սիրով արբենա,  
Ափսոս է վարդը թռչնի գարունքին:  
Ես հող կդառնամ դաշտում սիզավետ,  
Կդառնամ ծաղիկ, անուշ կբուրեմ,  
Դու եկ ինձ այցի նոր սիրածիդ հետ,  
Քաղիք ինձ, ձեռքդ քնքուշ համբուրեմ:  
Համբուրով վերջին կարոտս առնեմ,  
Իսկ դու իմ անուշ բույրով արբենաս,  
Ու քո ձեռքի մեջ թող ես թառամեմ,  
Ախ, կուգեմ դու միշտ անթառամ մնաս:*

Լիաբուռն կարոտի զգացում, տենչաշաղախ կենսասիրություն, կյանքի պաշտամունք և... բաժանման ափսոսանք... Ջգացմունքների այս հարստության առկայությամբ են արժեքավորվում ռազմի և անձնագոհության քնարական նրա հավաստումները.

*Գնում եմ կովի, կռիվն է վերջին,  
Գնում եմ երկրիս իմ պարտքը տալու,  
Հերոսի փառքով հուր կովի միջին`  
Հերոսների հետ անմահանալու:*

**Թաթուլ Հուրյան`** տաղանդավոր բանաստեղծ... Նրա ստեղծագործությունները ընթերցելիս դարձյալ անհնար է խորապես չհուզվել, մտովի չտեղափոխվել բանաստեղծի ապրած օրերը, չապրել նրա ապրած վեհ դրաման: Թեմատիկ ու արտահայտչական լայն կարելիություններ խոստացող բանաստեղծ էր նա, պոետական առողջ ընկալումների ստեղծագործող: Այս կողմերը դրսևորվել են նրա այն ստեղծագործությունների մեջ, որոնք կարողացավ տալ իր փոթորկուն կյանքի ընթացքում:

Մանկական հուշ, ժամանակակից կյանք, Ֆրիկ, Մայաթ-Նովա, Աբովյան, Հայրենական պատերազմ, ահա այն թեմաները, որոնք ներշնչել են Հուրյանի քնարը:

Խորապես ապրած և անմիջական են սևաստուպոյան շարքի բանաստեղծությունները, որոնք Հուրյանը թղթին է հանձնել ռազմաճակատում: Այդ շարքից «Երկու մանուկ» բանաստեղծությամբ նա ֆաշիզմի նկատմամբ վրեժի հուր է բորբոքում ընթերցողի կրծքում: Սակայն բանաստեղծության ենթատեքստը ավելի քան հարուստ է խոհերով:

Հասարակականի և անձնականի ներդաշնակ միացումով Հուրյանի բանաստեղծությունները դարձել են ավելի ներգործող ու տպավորիչ: Արդար գործի հաղթանակը նորից կբացի խաղաղ կյանքի դռները, մարդիկ կանցնեն ստեղծագործ աշխատանքի, երջանկության վերստեղծումը կդառնա համընդհանուր գործ:

Բանաստեղծը հավատացած է, որ ինքն էլ ողջ կմնա, քանի որ ապրելու անհուն տենչը կհաղթի մահին, և ինչքա՛ն անելիքներ ունի:

*Նա թողել է տունն իր և իր մանկանը սիրած,  
Նա երգեր է թողել անավարտ ու անտիպ...*

Իսկ եթե ընկնի հերոսի մահով, որն ավելի քան հավանական է...

*Թող գայլիքի երգը մեզ հուշարձան լինի...*

Մարգարեական ի՛նչ պաղարյուն եզրափակում:

Նրանք թվով շատ են՝ հայրենիքին իրենց կյանքը զոհած հայ բանաստեղծները, նրանցից ամեն մեկը հայրենասիրության, անձնագոհության թեման արժարծելիս բերում է մի նոր հնչերանգ և հարստացնում ու իմաստավորում հավերժ գեղեցիկ այդ գաղափարը:

Հմայակ Նալբանդյանի՝ ռազմաճակատ մեկնող քնարական հերոսը Սասունցի Դավթի պես բաժանումից առաջ հրաժեշտի հուզիչ խոսք է ուղղում հայրենի բնությանը, մանկության օրրանին:

*Դալար մնաք ծիլ ու ծառ, կարմիր լալա, կարմիր վարդ,  
Առատ բերքով օրորվիր հայրենական ոսկե արտ,  
Նախիրներով, հոտերով լեցուն մնաք, սա՛ր ու ձոր,  
Հավերժ հնչեք ու կանչեք, սառն աղբյուրներ ու ծործոր:*

Արտաշես Բորենցը իր «Թե...» վերնագրված բանաստեղծության մեջ անդամաճանության ու անմահության խոհն է արծարծում, համոզված, որ ինքը կապրի բոլոր այն դեպքերում, երբ շառաչուն մարտերից չդառնա տուն, երբ իրեն այլևս կյանքում չտեսնեն, երբ իր ստվերը չերևա հայրենի սարերում, երբ... թշնամու սև սուրը խոցի իր սիրտը: Ըստ բանաստեղծի՝ իր մայրը միշտ պետք է հավատա, որ որդին ապրում է, բայց...

*Ու թե վախից սարսափահար  
Դարձա տունն ոնց դավաճան,  
Համարիր ինձ, անողոք մայր,  
Մեռած, մեռած հավիտյան...*

Արսեն Հովհաննիսյանի տողերում մի առանձին ներդաշնակությամբ են միախոյունվում բաժանման կարոտը, զգացմունքների քնքշագին զեղումը և վրիժառության վճռականությունը:

*Մնաս բարև, բարձրանիստ, ով հպարտ Մասիս,  
Իմ գեղանի լայնանիստ Արարատյան դաշտ,  
Հաղթանակ է տենչում լոկ, քեզ պես հզոր հոգիս,  
Որ լցված է վրեժի ցասումներով անհաշտ:*

...Այստեղ կրկին մանկության մի վերհուշ՝ արդեն լույսով ու ջերմությամբ ողողուն:

1947-ի մայիսմեկյան շքերթում հեքիաթի մեջ ճախրողի երանավետ զգացողությունն ունեի (բոլոր խավերի՝ խինդով ծփացող երթերի մեջ էր և դպրոցական աշակերտությունը): Դեռ-գունոնա, կլարնետ ու շեփոք, երգ ու պար՝ ինքնաբուխ, ինքնամոռաց՝ «սիրտ պայթելու չափ պայծառ»: Իսկ երգերի մեջ մեկը՝ ամենուր և տիրապետող – «Գարո՛ւն Երևան, սիրո՛ւն Երևան...»:

Մթնոլորտը բռնված էր այդ երգով, և տունդարձին ազատ երգում էի՝ վերջին տունը հատկապես անսխալ.

*Երգը շուրթերիս կռիվ գնացի,  
Քո կյանքի համար անվախ կովեցի,  
Կրակ կովում, կրակ հեռվում  
Պատկերիդ պայծառ կարոտ մնացի:*

«Այդ երգի բռնկումը տոնահանդեսով մեկ հենց այնպես չէր», – խորհում եմ հիմա: Դա հաղթական երգ էր, ասել աշխարհամարտը շահած ժողովուրդներից մեկի երգը՝ Երևանի անունով, բայց Հայաստանին ձոնված: Հաղթանակ, որի նվաճողներից շատ-շատերին չվիճակվեց արյան ծովերում ապրած հոգեխարշ կարոտը մարել...

Նրանց թվում էին հայ ժողովրդի ոգու սերմնացանների այդ սերունդը, որ պիտի հաղթողի բերկրության իր երգերը հյուսեր:

Ահա նրանք՝ Գրիգոր Գարունց, Մեսրոպ Մերուժան, Գրիգոր Արսունի, Եփրեմ Լոռեցց, Թևան Խաչյան, Հրանտ Վահանյան, Արտո Չովեցց, Հուսիկ Շահեն, Գուրգեն Հունանյան, Անդրանիկ Խոբեցց, Վաղարշակ Շահինյան...

Այսօր դժվար չէ, իհարկե, նրանցից շատերի կերտած պատկերներում նկատել դասական հեղինակների ազդեցություն, բանաստեղծական վարպետության պակաս, շտապողականություն, ձևի անմշակություն և այլն: Սակայն նույնքան էլ տեսանելի է, որ նրանցից շատերը կարող էին մնայուն ստեղծագործությունների հեղինակ դառնալ, եթե...

**Եթեն**, իհարկե, չի կայացել, և նրանցից մեզ մնացել է սուկ այն, որ հասցրել էին թղթին հանձնել: Այդ քիչն էլ, սակայն, մեզ այնքան նվիրական է ու թանկ: Չէ՞ որ հետագա մեր ապրած խաղաղ կյանքով ու ձեռքբերումներով նրանց ենք պարտական նաև՝ հանուն որի նվիրեցին իրենց ունեցած ամենաթանկը՝ սիրով ու երազներով բարբախուն երիտասարդ կյանքը:

**Хачатур Варданян – *Дань армянской поэзии отечественной войне в 1941-1945 годах.*** – Вторая мировая война, которую народы Советского Союза по праву называют Великой Отечественной, масштабам не имела прецедента. Она исключительна не только по героизму победившей стороны, но и по тяжелым потерям для вовлеченных в нее народов. В катаклизмах войны из бойцов малочисленного армянского народа выросли прославленные маршалы, генералы, многочисленные герои Советского Союза.

В статье представляется творческий и боевой дух сынов-поэтов армянского народа, которые восстали против жестокого врага пером и оружием.

Они были молоды, некоторые из них были известны по своему таланту, некоторые творчески только раскрывались и были многообещающими.

Вслед за именами Дереника Чархчяна, Татула Гуряна, Амаяка Налбандяна, Арсена Оганесяна идут полутора десятка молодых имен...

Все они пали героически воевая с огромной ненавистью в сердцах.

---

## ՄԻՄՎՈԼԻԶՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ԾԻԱԾԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

### ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Միմվոլիզմը փիլիսոփայական - գեղագիտական և գրական - գեղարվեստական հոսանք է, որն աշխարհի երևույթների հիմքում դնում է սիմվոլը՝ հասկանալով այն որպես իդեալականի և զգայականի համադրություն: Միմվոլիզմի գեղագիտական հիմքն իրական աշխարհի երկատվածության դրույթն է, որի համաձայն, մեզ շրջապատող տեսանելի երևույթներից բացի, կա մեկ ուրիշ, ավելի վեհ, կատարյալ իրականություն, որտեղ, սակայն, անհնար է թափանցել գեղարվեստական պատկերավորման սովորական միջոցներով: Դրա համար անհրաժեշտ է դիմել սիմվոլի:

Միմվոլը (հուն.՝ նշան, հասկանիչ) հավաքական ու ընդգրկուն հասկացողություն է: Յուրաքանչյուր սիմվոլ համադրական է, բայց ոչ թե մեխանիկորեն, քանակապես, այլ օրգանականորեն, որակապես:

Կ. Սվայանն իր «Проблема символа в современной философии» աշխատության մեջ սիմվոլի էությունը բացատրում է նրա ձևի և բովանդակության հակադրամիասնությամբ<sup>122</sup>:

Միմվոլի մեջ ձևը և բովանդակությունը կազմում են մի ամբողջական համակարգ, այսինքն՝ դրանք ոչ միայն կառուցվածքային, այլև միմյանց հետ անհրաժեշտաբար հարաբերվող տարրեր են, որոնք ձևավորում են երկշերտայնություն: Առաջին շերտը հանդես է գալիս որպես ձև (կամ ձև դարձած բովանդակություն), իսկ երկրորդ շերտն ավելին է, քան ձևը (այն արդեն բովանդակություն դարձած ձև է):

Միմվոլիզմը՝ որպես գրական - գեղարվեստական ուղղություն, առաջացավ Ֆրանսիայում 19-րդ դարի 80-ական թվականների 2-րդ կեսին, երբ բուրժուական մշակույթն սկսեց անկում ապրել: 80-ական թթ. սիմվոլիզմը հանդես եկավ որպես ակնհայտորեն անկումային (դեկադենտական) ուղղություն, որին հարեցին ժամանակի խոշոր ֆրանսիական բանաստեղծները՝ Պոլ Վերլենը, Արթուր Ռեմբոն, Բոդլերը, Ստեֆան Մալլարմեն:

1885 թ. ֆրանսիական գրականության մեջ ի հայտ եկան մի խումբ երիտասարդ բանաստեղծներ (Էդուարդ Դյուժարդեն, Ժան Մորեաս, Ռենե Զիլ, Անատոլ Բաժյու, Մտյուարտ Մերիլ, Գյուստավ Կան, Շառլ Մորիս, Անրի դը Ռենյե և ուրիշներ), որոնք թեև կողմնորոշված էին դեպի Վերլենի պոեզիան, բայց համախմբվեցին Մալլարմեի շուրջ: Միմվոլիզմի գաղափարագեղագիտական ծրագրերի ձևակերպման գործում մեծ դեր խաղաց հենց այդ երիտասարդ բանաստեղծներից մեկը՝ Ժան Մորեասը՝ իր «Միմվոլիզմի մանիֆեստը» հոդվածով, որը ստագրվեց 1886 թ. «Ֆիգարոյում»: Մորեասը հանդես եկավ սիմվոլիզմի պաշտպանությամբ՝ ի պատասխան Պոլ Բուրդի «Դեկադենտ բանաստեղծներ» քննադատական հոդվածի:

---

<sup>122</sup> Տե՛ս Կ. *Свасьян*, Проблема символа в современной философии, Ер., 1980, с. 89 -119:

Որո՞նք էին սիմվոլիզմի առաջացման գրական - գեղարվեստական նախադրյալները Ֆրանսիայում: Վերլենը գրում էր, որ երիտասարդ բանաստեղծները սիմվոլիզմի ուղին բռնեցին՝ հոգնելով «այսպես ասած՝ նատուրալիստական, տխուր ու խեղված պատկերների միօրինակությունից»<sup>123</sup>:

«Սիմվոլիզմի առաջացումը գրականության մեջ, - մատնանշում էր Անդրե Բոնյեն, - տրամաբանական հետևանքն էր այն առարկումների, որոնք հարուցել էր պոզիտիվիզմը»<sup>124</sup> (նատուրալիստների գեղագիտության հիմքում ընկած «լուսանկարչական ճշգրտությամբ» կյանքն արտացոլելու սկզբունքը):

Խորհրդապաշտները դրսևորեցին զուտ գաղափարական դիրքորոշում՝ հաստատելով, որ արվեստը չպետք է արտացոլի իրական աշխարհը, որին նրանք քամահրանքով էին վերաբերվում: Արվեստը, ինչպես գրում էր Ժան Մոբեասը սիմվոլիզմի մասին իր հայտարարագրում, պետք է պատկերի «վեհ իրականությունը», այն, ինչ ընկած է ճանաչողության հնարավորությունների սահմաններից դուրս: Արվեստը, այդպիսով, միատիկական բնույթ էր ստանում, առընչվում կրոնի հետ: Մտածողության համար անմատչելի (տրանսցենդենտալը) սիմվոլիստները փորձում էին արտահայտել սիմվոլների միջոցով, որոնք, ըստ նրանց, կարող էին «բացահայտել չասվածը»: Այդ միտքն ընդլայնվել էր Բոդլերի մի սոնետի հիման վրա, որտեղ ասվում էր, թե կան ակնհայտ համապատասխանություններ հնչյունների, գույների ու բույրերի միջև: «Գերզգայականն» արտահայտելու համար, նրանց համոզմամբ, անհրաժեշտ էր տարբեր միջոցներով (թմրանյութ, ալկոհոլ և այլն) թուլացնել կամքի ու գիտակցության հսկողությունը ստեղծագործական պրոցեսի վրա՝ ձգտելով պասսիվին, սոսկ տպավորությունների ընկալմանն ու փոխանցմանը: Փաստորեն, արվեստագետից արդեն չէր պահանջվում ո՛չ ըմբռնողություն, ո՛չ ընդհանրացում: «Եթե այն, ինչ բանաստեղծը բերում է այնտեղից (տրանսցենդենտալության ոլորտից) ունի ձև, նա դա ներկայացնում է ձևակերպված,- գրել է Ռեմբոն,- եթե այն անձն է, նա դա ներկայացնում է անձն»<sup>125</sup>: Սիմվոլիստները կիրառում էին ազատ ոտանավորի ձևը, որը, ըստ նրանց, պիտի «ազատագրեր» պոեզիան տրամաբանական մտածողության հետ կապից: Բայց այն այդպես էլ լայն գործածություն չունեցավ:

Ի վերջո, ո՞րն էր ֆրանսիացի սիմվոլիստների նորարարությունը, և ինչու՞ նրանց տեսությունը ֆրանսիական պոեզիան կանգնեցրեց փակուղու առջև: Նրանք քնարերգություն ներմուծեցին փոխակերպված սուբյեկտիվ գործոնը: Սիմվոլիստական երկչերտ (առարկայական և վերացական) կերպարի մեջ սկսեցին առավել մեծ դեր խաղալ սուբյեկտիվ հոգեբանական զուգորդումները: Արտացոլման օբյեկտ դարձավ մարդկային ներաշխարհը՝ իր բարդ ու հակասական, նուրբ ու խորհրդավոր ծալքերով: Բայց, մյուս կողմից, այդ անհատապաշտությունը հասնում էր ծայրահեղության: Այսպես՝ Մալլարմեն համարում էր, որ անհատն ընդունակ է կամքի ուժով վերացնել պատահականության իշխանությունը մարդու վրա, իսկ Վերլենն ու Ռեմբոն լուրջ հարցադրում էին արել՝ արդյոք բանաստեղծն Աստված է, թե՞ «ընդամենը» մարգարե: Սիմվոլիստական կերպարի երկրորդ շերտը նրա անդրաշխարհային բովանդակությունն է, երբ զգացողու-

<sup>123</sup> P. Verlaine, Oeuvres complètes, t. 5, P., 1911, p. 378.

<sup>124</sup> A. Beaunier, La Poésie nouvelle, P., 1902, p. 20.

<sup>125</sup> A. Rimbaud, Oeuvres complètes, p. 255.

յունը դառնում է անդրաշխարհի խորհրդանիշը: Տվյալ դեպքում առաջնայինը ոչ թե անհատը կամ նրա հոգին է, այլ Աստված. մարդը խոնարհվում է աստվածության առաջ, հրաժարվում ըմբոստության ոգուց, դառնում չեզոք, ընկճված, անտարբեր ուրիշ մարդկանց ու իրերի նկատմամբ: Հենց այդ անկումայնությունն էլ 1890-ական թվականներին վերջ դրեց սիմվոլիզմին Ֆրանսիայում, թեև սիմվոլիստական առանձին գաղափարներ շարունակեցին արժարծվել տարբեր ուղղությունների կողմից:

Սիմվոլիզմն իր ծագումով արևմտաեվրոպական գրական ուղղություն է, բայց ընդլայնվելով յուրացվել է նաև ուրիշ ազգերի (այդ թվում՝ ռուս և հայ) տեսաբանների ու գրողների կողմից:

Ռուսաստանում սիմվոլիզմը հանդես եկավ իրար հակադիր մի քանի գրական խմբերի տեսքով: Ամենաբազմադամը «Северный вестник» պարբերականի շուրջ միավորված խումբն էր (Դ. Մերեժկովսկի, Ջ. Գիպպիուս, Ն. Մինսկի, Ֆ. Սոլոգուբ, Կ. Բայլմոնտ և ուրիշներ): Հաջորդ խումբը կազմում էին երեք բանաստեղծներ՝ Վլ. Գիպպիուս, Ա. Դոբրոլյուբով և Վ. Ստեպանով: Երրորդ խումբը, որը հանդես էր գալիս «Ռուս սիմվոլիստներ» բանաստեղծական ժողովածուներով, գլխավորում էր Վ. Բրյուսովը:

Սիմվոլիզմի ծագումը Ռուսաստանում առնչվում է 1890-ական թվականների հետ, երբ Դ. Մերեժկովսկին 1892 թ. կարդաց «Անկման և ժամանակակից գրականության մեջ նոր հոսանքների պատճառների մասին» դասախոսությունը: Ռուսական սիմվոլիզմը պատմականորեն կապվում է բուրժուական հասարակության սկզբնավորվող մայրամուտի հետ: Ի հակադրություն ժողովրդայնության գաղափարական արժեքների՝ ավագ սիմվոլիստների քնարերգության մեջ ի հայտ է գալիս մարտնչող անհատապաշտությունը (ինդիվիդուալիզմը): Լայն ճանաչում է գտնում Նիցշեի փիլիսոփայությունը՝ «գերմարդու»՝ ուժեղ անհատի պաշտամունքով, որը հակադրված էր ամբոխին: Այսպես, օրինակ, Բայլմոնտն իր բանաստեղծություններից մեկում գրում է.

Ես ասում եմ մարդկությունը,  
Ես նրանից շտապ փախչում եմ.  
Իմ միակ հայրենիքը  
Իմ ամայի հոգին է<sup>126</sup> :

Նիցշեի փիլիսոփայության մեջ սիմվոլիստներին հատկապես գրավում էր լուսավորի հակադրությունը, բուռն հակումը խաթարվածի, հիվանդագինի, տարաշխարհիկի նկատմամբ: Այս իմաստով բնորոշ է երիտասարդ Բրյուսովը. «Իմ հաջորդ գիրքը «Ռա ես եմ» - կլինի հսկայական ծաղր՝ ուղղված ամբողջ մարդկային ցեղին, - գրել է նա 1896 թ. փետրվարին իր օրագրում, - նրանում չի լինի ոչ մի առողջ խոսք, և իհարկե կգտնվեն նրա երկրպագուներ»<sup>127</sup>:

20-րդ դարասկզբին ռուս գրականության մեջ հանդես եկավ «կրտսեր սիմվոլիստների» սերունդը (Ա. Բլոկ, Ա. Բելի և այլք): Իսկ 1910 թվականից սիմվոլիզմը Ռուսաստանում անկում ապրեց:

Հայ գրականության մեջ, ի տարբերություն արևմտաեվրոպականի և ռուսականի, սիմվոլիզմը հանդես եկավ այլ մեթոդի, գլխավորապես ռոմանտիզմի

<sup>126</sup> Русская литература конца XIX – начала XX в., М., 1968, с. 210.

<sup>127</sup> В. Брюсов, Дневники, М., с. 23.



հետ միաձուլված: Այդ պատճառով մեզանում հազվադեպ է ոչ միայն գրողների որևէ խմբի ստեղծագործության մեջ սիմվոլիզմի ամբողջական դրսևորումը, այլև նրանց կազմակերպչական համախմբումը: Այս մեթոդի սկզբունքները մեր գրականության մեջ որոշակիորեն արտահայտվեցին 20-րդ դարասկզբին:

Սիմվոլիզմի հարցը ժամանակի քննադատության տեսադաշտում էր: 1903 թ. Ն. Ադոնցը հասուկ հոդվածով ձգտում էր տարբերակել սիմվոլիզմը (խորհրդապաշտություն) և դեկադենտությունը (անկումայնություն)՝ վերջինս անվանելով մի հրոսակություն, որն ընդունակ է միայն ավերումների, իսկ սիմվոլիզմը համարելով ավերումների վրա նոր շենք կանգնեցնելու ձգտում: Միմեռն Հակոբյանի՝ 1906 թ. հրատարակված հոդվածում սիմվոլիզմն անմիջականորեն կապվում էր ժամանակի հասարակական իրադրության (ռուսական առաջին հեղափոխություն, հոսալքման տրամադրություններ և այլն) հետ. «Հոգնած ռեալիստական աշխարհայացքից, հուսախաբված գրական փիլիսոփայությունից՝ նախ (սիմվոլիստները - Հ.Վ.) կամենում են մի ընդհանուր թռիչքով թևակոխել հոգեկան և մտավոր այն սահմանները, ուր ավելի դյուրությամբ են հետախուզվում հավիտենական ճշմարտություններն ու տիեզերական գերագույն օրենքները...»<sup>128</sup>:

Արևմտահայ քննադատության մեջ ևս փորձեցին սիմվոլիզմը տեսականորեն հիմնավորել: Արվեստի ուղին խորհրդապաշտության մեջ տեսնելով՝ Վ. Զարյանը «Մեհյան» հանդեսում գրում էր. «Առարկաները մեզի համար տիեզերքի արծարծումներն են, մենք անոնց մեջ մեծ խորհուրդ կը նշմարենք, անոնց շունչ կուտանք, կապրեցնենք և կը լվանք աստվածային լույսով: Առարկաները սիրել առարկաներուն համար՝ թանձրապաշտություն ըսել է, իսկ անոնց մեջ խորհուրդ նշմարելը՝ աստվածանալ ըսել է. ես կը կարծեմ, որ արվեստին հատուկ ուղին այս վերջինն է»<sup>129</sup>:

Իրենց ստեղծագործությունների մեջ այլ մեթոդի հետ գիրկընդխառն սիմվոլիզմին են դիմել Մ. Մեծարենցը, Վ. Տերյանը, Վ. Թեքեյանը, Վրթ. Փափազյանը, «հեթանոս շարժման» ներկայացուցիչները (Գ. Վարուժան, Միամանթո, Լ. Շանթ), իսկ Ե. Զարենցի դեպքում սիմվոլիզմը հանդես է գալիս որպես ստեղծագործական առանձին շրջան: Դա Զարենցի քսանհինգամյա գրական ուղու առաջին հնգամյակն է՝ 1912-1917 թվականները, որոնց տիրույթում ամենաընդգծված սիմվոլիստական երկը «Ծիածան» բանաստեղծական ժողովածուն է (հրատարակված Մոսկվայում 1917 թ. և նվիրված «Իրիկնային քրոջը»՝ Կարինե Քոթանջյանին):

Զարենցի «Ծիածան»-ում անժխտելի է թե՛ արևմտաեվրոպական և թե՛ ռուս սիմվոլիստներից կրած ազդեցությունը: Ուշագրավ է, որ հայ գրականության մեջ, իր կրած ազդեցությամբ ու ընդհանրություններով հանդերձ, սիմվոլիզմը դրսևորեց ուրույն տարբերություններ՝ պայմանավորված ազգային - հասարակական կյանքով ու գրողների անհատական խառնվածքով: Հիշենք Ե. Զարենցի անմիջական նախորդներին՝ Մ. Մեծարեցին ու Վ. Տերյանին: Մեծարենցը՝ այդ «հիվանդ, հանճարեղ պատանին», գործածելով սիմվոլիզմի որոշակի դրույթներ, ինչպիսիք են տենչանքը ուրիշ մի աշխարհի, «ուր չէին մրսի հեզ երագներն իր որբուկ», անհատական սիմվոլիզմի (գիշեր, հաշիշ, մեղու, նավակ) կիրառումը և այլն, «ուղղափառ» սիմվոլիզմին բնորոշ չոր եսապաշտությանը դիմադարձեց ջերմ այլասիրությամբ: Նմանա-

<sup>128</sup> Մ. Հակոբյան, Սիմվոլիզմը դրամայի մեջ, «Մուրճ», 1906, N 3, էջ 79:

<sup>129</sup> Վ. Զարյան, Հեթանոսություն և «Մեհյան», 1914, N 5, էջ 67:

պես և Տերյանի պոեզիան, որտեղ հիանալիորեն արտահայտվել են սիմվոլիստական պոեզիայի երկպլանային դրույթը, բանաստեղծական պատկերի վերածուրդ տրամադրություն ու հոգեվիճակ արտահայտող սիմվոլի, թախծի և մենության մոտիվները, ուրիշ՝ վեհ աշխարհի անդադարձուրը («Ես գիտեմ լուսեղեն մի երկիր»), կյանքն իբրև հավերժական շրջապարտույտ դիտելը («Պտտվի՛ր, պտտվի՛ր, կարուսե՛լ»), լեզվի բարձր երաժշտականության, անթերի հղկվածության հասկանիչները: Մինչդեռ բուն սիմվոլիզմին բնորոշ կրոնամիստիկական տարրերը, պոեզիան իբրև մոգական արարողություն դիտելը, անհատապաշտության ու մարդասոցության գաղափարները չեն առնչվում Տերյանի պոեզիային:

Սիմվոլիստական մեթոդի հետ ունեցած ընդհանրության և ազգային-անհատական խառնվածքի դրսևորումով բանաստեղծական հետաքրքիր երևույթ է Չարենցի «Ծիածան» ժողովածուն: Ի՞նչ է խորհրդանշում «*Ծիածան*» խորագիրը: Ծիածանը, ինչպես ամեն մի սիմվոլ, բովանդակում է մեկից ավելի խորհուրդ. նախ՝ այն բնության բոլոր գույների ամբողջությունն է, ապա երկիրն ու երկինքն իրար կապող կամուրջ: Նշվածներից բացի, ծիածանը նաև հաշտության խորհրդրդանիշն է<sup>130</sup>: Պատահական չէ «Ինքնադատության փորձ մը» հոդվածում իր «Ծիածան» ժողովածուի խորագրի կապակցությամբ Մեծարենցի մեկնաբանությունը: Ըստ նրա՝ ծիածանը խորհրդանշում է համակ բնությունը, որի թարգմանը պիտի լինի բանաստեղծը. «Տեսնենք հիմակ, թե բանաստեղծին մտքին մեջեն ինչպե՞ս ծիածանվեր են հավիտենական զգացումներն ու մտածումները: ... Բանաստեղծը Բնության ցուլացումը պետք է ըլլա, թե ոչ՝ բանաստեղծ չէ՛ իրապես...: Բանաստեղծին ձայնը տիեզերական հարաբերականության մը լարը պետք է ըլլա՝ բոլոր գոյություններուն համադրական թրթռումովը տրոփուն»<sup>131</sup>:

Խորհրդապաշտները ծիածանի գույների մեջ ընտրություն էին կատարում: Ըստ 20 -րդ դարի ռուս սիմվոլիստների մշակած ծրագրի՝ աշխարհը գույների մի համադրություն էր, չկար արտաքին աշխարհ, կային միայն մարդու զգացողությունները, իսկ կապույտը, ոսկին և մանուշակագույնն ստեղծում էին արտաքին աշխարհի պատրանք: Չարենցը նույնպես իր ժողովածուում առանձնացրել է երեք գույն՝ «Կապույտը», «Ոսկին», «Մանուշակագույնը», որոնցում ամփոփել է կյանքի ու սիրո իրար հաջորդող երեք հիմնական փուլերը՝ ծնունդը, հասունացումն ու մահը:

Սիմվոլիզմը բնութագրելիս Չարենցի մատնանշած դրույթները, որոնք են՝ ա) սեր, բ) միախառնումը բնության հետ, գ) «ստեղծվող առասպելներ», դ) հայրենիք, ե) մահ<sup>132</sup>, տարբեր սիմվոլների միջոցով գործածվել են ժողովածուում: Ընդ որում՝ կիրառված սիմվոլները գլխավորապես «բաց» սիմվոլներ են՝ ոչ միայն աստվածաշնչյան, այլև առասպելաբանական: Թերևս բացառություն է կազմում ամբողջ ժողովածուի լայնքն ու խորքն ակոսող «*քույր*» խորհրդանիշը: Այն չպետք է շփոթել «*կապույտ աղջկա*» հետ, որը երազայինի, ցնորականի, անիրականի սիմվոլն է. Աստվածամոր նման և՛ կա, և՛ չկա: Որպես սիրած կին կերպավորված տեպալյին քույրը միաժամանակ հայրենիքի խորհրդանիշն է: Չարենցին բնորոշ կերպավորման այս ձևն առկա է նաև նախորդ ստեղծագործություններում՝ «Կա-

<sup>130</sup> Տե՛ս *Մ. Դարբինյան*, Եղիշե Չարենց, Եր., 1990, էջ 142:

<sup>131</sup> *Մ. Մեծարենց*, Երկեր, Եր., 1986, էջ 167, 175:

<sup>132</sup> Տե՛ս *Ե. Չարենց*, ԵԺ, հ. 6, Եր., 1967, էջ 527:

պուտայա հայրենիք» պոեմում, «Հրո երկիր» շարքում: Ասվածի մեջ համոզվելու համար գուցադրենք բանաստեղծական մեկական հատված «Հրո երկիր» շարքից և «Ծիածան»-ից.

Ես ի՞նչ անեի, քու՛յր իմ, երբ չկար  
Այլևս ոչինչ.  
Ո՛չ կապույտ հոգուս թևը խելագար,  
Ո՛չ կույս աչերիդ ձյունը ամոքիչ.  
Ձեռքերդ նիհա՛ր, դալկացա՛ծ, ծարա՛վ,  
Պարզել էիր դու-  
Ո՞վ գիտե, արդյոք Հյուսի՞ս, թե՞ Հարավ,  
Թե՞ - դեպի ստվերն Արևի - հոգու («Հրո երկիր»)<sup>133</sup>:

Մենք չգիտենք, քու՛յր իմ, մեզ կապույտը ու՞ր կտանի,  
Թե լուռ լինենք, լուռ ու հեզ - կապույտը ու՛ր կտանի:  
...Կորցրել ենք աշխարհի ճամփաները հին,  
Իմ ո՛րք ընկեր, քու՛յր իմ, մեզ կապույտը ու՛ր կտանի  
(«Ծիածան», ԵԾ, 1, 108):

«Ծիածան»-ի գունային խորհրդանիշների համակարգում առանցքային է ընտրյալ երեք գույների՝ կապույտի, ոսկու և մանուշակագույնի իմաստային պարզաբանումը:

*Կապույտը* ամեն ինչի՝ կյանքի, սիրո նախասկզբն է, երկնայինի կրողը, անմեղության, անաղարտության աստիճանը, միևնույն ժամանակ կապույտը տրտմություն է ու ցավ.

Կապույտը հոգու աղոթանքն է, քու՛յր,  
Կապույտը - թախիծ,  
Կապույտը - կարոտ թափանցիկ, մաքուր,  
ՈՒ հստակ, ու ջինջ:  
Կապույտը - արցունք, ու կապույտը - ցող  
Հոգու, երկնքի (ԵԾ, 1, 73):

Ի՞նչ է խորհրդանշում *ցողը*, որը ժողովածուում հանդես է գալիս նաև բառային այլ միավորների մեջ՝ *ցողաթաց*, *ցողաբույր*, *ցողոտ*: Ցողը սուրբգրային խորհրդանիշ է. Մովսեսի պատգամներում Աստծո խոսքը համեմատվում է ցողի, բարեբեր անձրևի հետ, որը կենարար ուժ է բնության համար, իմաստային նույն հիմքով ցողը համեմատվում է նաև Սուրբ Հոգու հետ:

Գունատ կապույտն անէանում է արևի ոսկու հրավառ բռնկումից: Ոսկին կենսական սիրո հասունացման բերկրալից պահն է.

Ես հավատում եմ հասկի շշուկին, խոսքին-  
Երբ հազել ես արևի թափանցիկ ոսկին:  
Հեռաստանները հացի - ոսկեգույն, ոսկեգույն,  
Դու նայեցիր, ժպտացիր իմ գունատ հոգուն:  
Աչքերիդ մեջ, հոգուս մեջ, քու՛յր իմ, կա՛ր, քու՛յր իմ, կար  
Ոսկու շշուկ, ոսկու փայլ, ոսկու ճաճանչ ոսկեվառ (ԵԾ, 1, 85):

<sup>133</sup> **Ե. Չարենց**, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1962, էջ 29 (Չարենցի վեցհատորյակից բերվող մյուս մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծի մեջ, կնշվեն հատորը և էջը):

Մակայն «արևի ոսկու» բերած բերկրանքն էլ վաղանցիկ է, և այդ վաղանցիկության խորհուրդն արտահայտվում է *թիթեռի* միջոցով, որը նաև հանուն ուրիշի՝ ինքնայրուամի գաղափարի կրողն է.

Արևը - որպես մի ոսկի թիթեռ,  
Իսկ երկինքը կա - ու կապույտ է դեռ:  
Զնգում են թևերն՝ արնագույն ու վառ,  
Այրվում է նա - ինչու, ու՛մ համար (ԵԺ, 1, 86):

Անհրաժեշտ է պարզել նաև *արևի, աստղի* և ընդհանրապես *լույսի* խորհուրդը «Ծիածան»-ում: Լույսը, որ ժողովածուում հաճախ է գործածվում ոչ միայն առանձին, այլև տարբեր ածանցներով ու բառաբարդումներով կազմված բառերում (*լուսե, լուսավոր, լուսամփոփ, լուսավառ, լուսակաթ, լուսածպիտ, լուսաճեմ*), ըստ Ս. Գրքի, խորհրդանշում է Աստծուն, այն հաճախ կապվում է տիեզերական մարմինների՝ աստղի, լուսնի, արեգակի հետ, որոնք մի դեպքում աստվածային ծագման իմաստ ունեն, մի այլ դեպքում գործածվում են ուղիղ իմաստով:

Ընտրված վերջին գույնը՝ *մանուշակագույնը*, կյանքի ու սիրո մայրամուտի, մահվան խորհուրդն ունի.

Իջնում է ահա մի տրտում մշուշ  
Մանուշակագույն (ԵԺ, 1, 88):  
Երազները, քու յր, երանգներ էին, -  
Խամրեցին միգում, -  
Խամրեցին, հանգան մայրամուտային  
Իրիկնաժամում մանուշակագույն (ԵԺ, 1, 90):

*Մայրամուտային եզերքը կապույտ, Հավերժական Կապույտ, Կայանը հեռավոր, Ամենտի երկիր, Ամենտի եզերքը կապույտ* արտահայտությունները, որոնց հանդիպում ենք Չարենցի երկում, ըստ եզիպտական դիցաբանության, կրում են անդրշիրիմյան եզերք իմաստը:

Մեր նկատած մյուս խորհրդանիշներից են *գինին*՝ որպես Աստծո արյուն, որը բովանդակում է կենսարարության խորհուրդը, *դղյակը*՝ որպես փակ, ներամփոփ տիրույթ, որը հաճախ է գործածվում սիմվոլիստների բառապաշարում, *քամին*՝ իբրև ճակատագրի սիմվոլ:

«Ծիածան»-ի խորհրդանիշների համակարգում ամփոփիչ նշանակություն ունի *խունկը*, որը ժողովածուում հանդես է գալիս նաև *խունկեղեգ, խնկաբույր* ձևերով: Ըստ Ս. Գրքի՝ խնկարկման անուշ բույրը երկիրը երկնքի հետ կապող, աղոթքներն ու օրհնանքներն Աստծուն հասցնող միջոց է: Այս համատեքստում խունկը ծիածանի իմաստային համարժեքն է՝ որպես երկրի ու երկնքի միջև հաշտության արտահայտություն.

Իսկ երազներն այրվեցին ու անցան:  
Բայց ջինջ մնաց քո աչքերում, իմ հոգում-  
Մի սրբացած, անբջացած ծիածան՝  
Վերջին սիրո մի լուսավոր ամոքում (ԵԺ, 1, 94):  
Եվ մարմինը քո խնկաբույր - հնամենի խունկեղեգ-  
Կայրեմ որպես զոհաբերում - Հավերժական Կապույտին  
(ԵԺ, 1, 123):

Եղիշե Չարենցի «Օրիածան» բանաստեղծական ժողովածուում, այսպիսով, կիրառվել են սիմվոլիզմի տեսության որոշակի դրույթներ (սիմվոլների օգտագործում, պատկերի վերացարկման սկզբունք, անդրաշխարհային բովանդակության արտացոլում), ինչպես նաև խորհրդանիշների միջոցով ուրվագծվել են ազգային - անհատական խնդիրներ: Այս իմաստով առավել խոսուն է 1922 թ. «Չարենց - նամե» պոեմում բանաստեղծի տված բնութագրումը.

«Օրիածանը»...

Արևն է այնտեղ -

Նաիրյան թախիծի միջից.

Հրկիզված իմ հոգին բանտել

Եվ ուզում էր անդարձ շիջի<sup>134</sup>:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *История французской литературы*, том III, издательство Академии наук СССР, Москва, 1959.
2. *Литературно - эстетические концепции в России конца XIX - начала XX в.*, издат. «Наука», М., 1975.
3. Обломиевский Д. *Французский символизм*, издат. «Наука», М., 1973.
4. *Русская литература конца XIX - начала XX в.*, (девяностые годы), издат. «Наука», М., 1968.
5. *Русская литература конца XIX - начала XX в.*, (1908 - 1917 гг.), издат. «Наука», М., 1972.
6. Свасьян К. *Проблема символа в современной философии*, издат. АН арм. ССР, Ер., 1980.
7. Ավետիսյան Ջ. *Գրականության տեսություն*, Եր., «Նաիրի» հրատ., 1998:
8. Դարբինյան Մ. *Եղիշե Չարենց: Մարդու եղերական երկվության երգիչը*, Եր., «Նաիրի» հրատ., 1990:
9. Թամրազյան Հր. *Եղիշե Չարենց*, Եր., «Արևիկ» հրատ., 1987:
10. Մեծարենց Մ. *Երկեր*, Եր., «Սովետ. գրող» հրատ., 1986:
11. Չարենց Ե. *ԵԺ*, հ. 1, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1962:
12. Չարենց Ե. *ԵԺ*, հ. 6, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1967:
13. Չարենց Ե. *Պոեմներ, Բանաստեղծություններ*, Եր., Երևանի համալս. հրատ., 1984:
14. Ջրբաշյան Էդ. *Գրականության տեսություն*, Եր., Երևանի համալս. հրատ., 1972:
15. Ջրբաշյան Էդ. *Գեղագիտություն և գրականություն*, Եր., Երևանի համալս. հրատ., 1983:

**Асмик Ванян – Теория символизма и сборник «Радуга» Египше Чаренца.** – В статье рассматривается теория символизма и его практическое проявление в «Радуге» Чаренца. Символизм западноевропейское литературное течение, которое возникло во Франции, но со временем распространилось и усвоилось теориками и писателями других народов (русский, армянский), подвергаясь методическим и творческим изменениям.

<sup>134</sup> Ե. Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Եր., 1984, էջ 131:

## ՈՐՔԱՆ Է ՏԵՎՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՍԸ

### ՄՈՒՇԵՂ ՄԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Եթե Առաջին համաշխարհային պատերազմը երիտթուրքերի իշխանությանը հնարավորություն տվեց իրագործելու իր հրեշավոր ծրագիրը, ապա Ֆաշիստական Գերմանիան, աչքի առաջ ունենալով թուրքերի փորձը, մեծ ոգևորությամբ ու սառնասրտությամբ Երկրորդ համաշխարհային պատերազմին գուգահեռ իրականացրեց հրեաների ցեղասպանությունը: Գաղափարախոսությունը կարող է լինել արդար և կեղծ: Օրինակ բոլոր ազգերից վեր, բացառիկ, գերազգ լինելու գաղափարը կեղծ է՝ անկախ թե այն որ ազգին է վերագրվում: Այն խտրականության, իրավազրկման հիմք է դառնում: Բռնությամբ, իրավազրկմամբ ու խտրականությամբ լուծել միտող բոլոր գաղափարական ձեռնարկումները չեն կարող իրավացի լինել, դրանք կեղծ են: Ցեղասպանությանը միտված կամ դրան նպաստող որևէ գաղափարախոսություն, հասկանալի պատճառներով, ընդունելի չէ:

Ահա թե ինչու ցեղասպանություն տեսած ժողովրդի համար առավել քան կարևոր է դառնում Հայրենական մեծ պատերազմի, ֆաշիզմի դեմ պայքարի խորհուրդը: Այս ոչ երկրորդական իրողությունը Խորհրդային պետության փլուզումից հետո մի որոշ ժամանակ անտեսվեց, նույնիսկ հնչեցին կարծիքներ թե արժե՞ր արդյոք, որ մենք այդպիսի անձնուրաց նվիրվածությամբ պայքարեինք ֆաշիզմի դեմ: Գոնե այսօր ակնհայտ է, որ այս հարցի վերաբերյալ երկրորդ կարծիք լինել չի կարող: Մեր պապերի մաքառումը խորապես արդարացված ու տեղին է եղել, և առանց չափազանցության կարելի է պնդել, որ նաև նրանց արյան գնով է մարդկությունը փրկվել մեծագույն չարիքից:

Հայտնի խոսք է, որ «երբ թնդանդթները որոտում են, մուսաները լռում են»: Մակայն պատերազմական այս որոտի մեջ ու դրանից հետո էլ մուսաների ձայնը չլռեց: Մեր շատ գրողների ու բանաստեղծների քնարը թրծվեց վառողի հոտով (Համո Սահյան, Վ. Դավթյան, Հր. Հովհաննիսյան, Ս. Խանգաղյան, Ս. Մարգարյան և այլք): Պատերազմի տեսանելի և անտեսանելի կողմերը բազում են: Պատերազմ կոչվող վիշապի շոշափուկները շատ երկար են ու երկար ժամանակ էլ զգացնել են տալիս իրենց:

Ահա թե ինչու այն ներխուժում է նաև մաթևոսյանական հեռավոր Ծմակուտ, հովիվների հանրապետությունից պոկում է հովվին, հասուն խոտհարքից հնձվորին ու շարտում նրանց անորոշ հեռուները: Իսկ հետո գյուղական՝ տղամարդու զորեղ ձեռք պահանջող կյանքն ավելի է դժվարանում ու դառնանում:

Իր ինքնանկարի փորձը Հրանտ Մաթևոսյանը սկսում է Մեծ հայրենականի սկզբի նկարագրությամբ. «Շրջկենտրոնից չորս քեռիս ռազմաճակատում էին, հիմա զորակոչվել էին հայրս և իր հորեղբորորդի Շաքրոն, որ նաև մորս հորաքրոջ որդին էր: Երկու քեռիս՝ Հայկազն ու Վարդանը, չվերադարձան, Շաքրոն չվերադարձավ, Ոսկան մեծ քեռիս վերադարձավ չփակվող վերքից արյուն տալով, խմել

սկսեց և մինչև հիմա խմում է»<sup>135</sup>։ Ոսկան քեռին, փառք աստծո, եկել է, սակայն եկել է չփակվող վերքերով, արյուն տալով և ուշադրություն դարձնենք, որ վերքը ամոքելու համար խմում է մինչև հիմա։ Այնուհետև Մաթևոսյանը շարունակում է իր հարազատ միջավայրից թվարկել մարդկանց անուններ, որոնք այդ պատերազմի մեջ են եղել (ի դեպ, նույն կերպ մեզնից յուրաքանչյուրը ևս կարող է տալ հարազատ մարդկանց անուններ)։ «Շաքրոն հինգ ժառանգ է թողել, գոհված երկու քեռիս ժառանգ չեն թողել, և դա ամենացավալին չէ, քանի որ կենտրոններից ու ժամանակի քաղաքակրթությունից հեռու մեր Ահնիձոր գյուղում շատ տղերք անգամ լուսանկար չեն թողել, նրանց պատկերը իրենց տոհմի ուրիշ տղաների մեջ պատահաբար էթե կրկնվել է՝ ուրեմն որևէ պառավ երբեմն հիշում է, որ այդպիսի մեկը կար հեռավոր նախապատերազմական ժամանակներում»։ Եվ այս ողբերգական իրադարձությունների շղթան հեղինակը շարունակում է հիշատակել զսպված ցավով։ Մի այնպիսի դրություն էր, որ որքան ճակատին էր զինվոր պետք, նույնքան էլ գյուղին էր բանող ձեռք պետք։ Եվ ի՞նչ ծանր երկընտրանք, երբ հայրը պիտի որոշեր, թե որդիներից որը պիտի ճակատ մեկներ, այսինքն՝ գնար մահվան երախը և որի ուսերին պիտի ծանրանար թիկունքի ծանր բեռը։

Սակայն «այնպես պատահեց, որ Իգնատի ետևից նաև Շաքրոյին տարան» և հարևան «Դսեղ գյուղից դարձյալ երեք որբ ավելացավ»։ Սա գրողի պատանության պատմությունն է և իր սերնդակիցներին նա դիպուկ կերպով համարում է «վերջին պատերազմում սերնդովին որբացած «կարտոլի տղերք»։ Իսկ կարտոլի հայտնությունը այս սերնդի համար ամենաքաղցր կոնֆետից էլ քաղցր ու սպասված է եղել։

«Գրականության կոչման մասին» հոդվածում Մաթևոսյանը գրում է. «Կարիք կա՞ տանկյակ օրինակներ բերել՝ ասելու համար, որ զգացմունքների լիակատարություն մեր մեջ արթնացնում է միայն երեկվա օրը, որովհետև անցյալի մասին հիշողությունների հովիտը բնակեցված է մեզ համար ցանկալի կամ աստիճան մարդկանցով և դեպքերով՝ մեր հիշողությունների այդ ոսկե նստվածքով, միայն որն էլ կարող է դառնալ գրականություն, արվեստ...»<sup>136</sup>։

Նույնիսկ թուուցիկ հայացք նետելով Մաթևոսյանի արձակին, ակնհայտ է դառնում, որ գրողի այս դիտարկումը բխում է նրա գրական փորձից։

Հայրենական պատերազմի արձագանքները Հրանտ Մաթևոսյանի գրականության մեջ ըստ էության հասկանալու համար մեզ կրկին օգնության է գալիս հեղինակն ինքը. Ինչպես հայտնի է Մարտիրոս Մարյանի արվեստի հանդեպ գրողը մեծագույն սեր ու պատկառանք էր տածում և իր ինքնանկարի փորձում գրում է նկարչի այն կտավների մասին, որոնք ստեղծվել են մեզ համար արյունոտ ժամանակներում (հայոց ցեղասպանություն, Հայրենական պատերազմ)։ «Եվ այդուհանդերձ, նկարչական իր վիթխարի ժառանգությունը հայոց գեհեների այդ յոթնամյա տևողության պատկերաշարից որևէ զիծ ու գույն չի արձանագրում, և ավելին՝ այդ տարիները նրա ստեղծագործության վերընթացում նշանավորվում են ծաղիկներով ու դիմանկարներով, որոնք ուղղակիորեն ոչինչ չեն ասում այդ տարի-

<sup>135</sup> Հր. Մաթևոսյան, Վիպակներ, Երևան, 1990, էջ 8։ Այսուհետ այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ միայն էջը։

<sup>136</sup> Литературная Армения, 1968, N11, С. 67.

ների մասին: Եվ ապա քսանհինգ տարի անց, կարծես արգելելով մտածել՝ թե («Ազգային քաղաքիկի ծաղիկները») պատահական վրիպանք էին, գերմանական ճակատից վերադարձող հայ զինվորներին Մարյանը դիմավորեց նու՛յնպես՝ «Ծաղիկներով», գույնի, լույսի, կարոտի ու շենշող լավատեսության այդ կտավի լրիվ անվանումն է՝ «Ծաղիկներ Հայրենական Մեծ Պատերազմի Հայ Մարտիկներին»: Այստեղ հարկ է նկատել, որ Մաթևոսյանը ևս ուղղակիորեն գրեթե ոչինչ չի ասում պատերազմական այդ տարիների մասին: Այդ մասին ասում է իր հրապարակումներից մեկում. «1941 թվականի հունիսի երկրորդ շաբաթում, անհետախոս մեր խուլ գյուղում, նվաղեց մի պառավ ու գուշակեց արյուն, կոտորած, սով»<sup>137</sup>: Ահա պատերազմի սեղմ բնութագիրը՝ արյուն, կոտորած, սով:

Պատերազմական որոտ, հրաձգություն չկա մաթևոսյանական արձակում: Այստեղ մի չար ձեռք, անտես, Ծմակուտից հեռու պայթեցրել է մի անասարսուռ ռումբ, որի մահաբեր բեկորները խուժել են նրա ստեղծագործության խաղաղ, դաշնավոր աշխարհ և տակնուվրա արել նրա անդորրը: Այս դեպքում ես Մաթևոսյանը առանձնանում է իրերի ուերևությունների խորքը թափանցելու, նրանց չերևացող կողմերը վեր հանելու բացառիկ ներքնատեսությամբ: Իր «Մումիա» վիպակում, ուր գրողը անդրադառնում է կյանքի ու արվեստի փոխհարաբերության հավերժական ու ծեծված նյութին, հիշում է Հայրենական մեծ պատերազմի մասին գեղարվեստական ֆիլմ նկարելու սցենարի մասին: Գրողի համար առաջին պլան է մղվում ոչ թե մերոնց հերոսականությունը ցուցադրելը, հաղթանակների պլակատային գովերգումը, թշնամու ստորությունն ու դաժանությունը ի ցույց դնելը, որոնցով, ի դեպ, ողողված էր Խորհրդային կինոն ու գրականությունը, այլ առաջին հերթին կարևորում է պատերազմի անուսարսափը, նրա բերած վիշտն ու տառապանքը վեր հանելը. «Հազար ինը հարյուր քառասունմեկից մինչև հազար ինը հարյուր քառասունութ թվականը ես կերել եմ ձմռանը կարտոլ, ամռանը՝ խոտ, մեկ ամիս՝ ձավարի կոշտ քուսպ, երկու շաբաթ՝ ոսպի քուսպ, մեկ անգամ՝ ամերիկյան ձվափոշու ձվածեղ-ամերիկյան օգնությունը եղել է մեր ծախսերի կես տոկոսի կես տոկոսը: Հանդում քաղցից ուշաթափ եղավ ամենալավ հնձվոր Վանին» (էջ 64): Իսկ այս հնձվոր Վանին պիտի կարողանար հնձել, որ խրամատում կանգնած զինվորի ձեռքը չդողար, դիպուկ կրակեր: Պատերազմին անդրադառնալիս Մաթևոսյանը չի մնում բնաշխարհի սահմաններում և նրա «Օգոստոս» պատմվածքի հերոսը՝ Անդրեն, սայլի սոնին տաշելիս տխրությամբ ու ավառասանքով է հիշում զոհված պատերազմական ընկերոջը. «Մարտինը... Իջևանցի տղար էր, այսպես լայն երեսներով, Կերչի մոտ խփվեց, խեղճ Մարտին. սերժանտ էր, ազգանունը Սահակյան... խ՛եղճ Սահակյան Մարտին... լայն երեսներով, ունքերը խիտ, եսպես ծիծաղը լացի պես տղա էր...» (էջ 78):

Այս հողվածը գրելիս բացեցի Մաթևոսյանի «Մեր վագրը» ժողովածուն և գրքի առաջին էջում կարդացի հետևյալը. «Մեր վագրը» ժողովածուն առաջին գիրքն է՝ գրված պատանիների համար»<sup>138</sup>: Վերընթերցելիս ծանր տխրության պահեր ապրեցի և եկա այն համոզման, որ այս գիրքը պատանիների համար շատ դառն ու դաժան է:

<sup>137</sup> **Հր. Մաթևոսյան**, Մպիտակ թղթի առջև, Երևան, 2004, էջ 67:

<sup>138</sup> **Հր. Մաթևոսյան**, Մեր վագրը, Երևան, 1978, էջ 2: Այսուհետ այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ նշելով հրատարակության տարեթիվը և էջը:



Ահա «Վազքը» պատմվածքը, ուր դպրոցական անհոգ կյանքի չարաճճի ա-  
նորյայի մեջ աննկատ, միջուկային ռումբի պայթյունին հաջորդող թունավոր աղ-  
տոտվածության նման ալիք-ալիք տարածվում է պատերազմը. «Օտարի հոր սիր-  
տը հիվանդ էր. նվում էր ու չէր մեռնում, նվում-նվում էր ու չէր մեռնում: Նվնվում  
էր ու ռազմաճակատ չէր գնում, իրենց տանը իր որդու կողքին էր, մեր կողքին չէր,  
իր որդու կողքին էր: Նա գյուղի միակ տղամարդն էր... նա ամաչում էր այն բանի  
համար, որ ինքը գյուղի միակ տղամարդն է: Նա մեր մայրերի ձեռքից կացինը  
վերցնում էր, որպեսզի ինքն աներ փայտ ջարդելու տղամարդու այդ գործը, մի  
երկու անգամ խփում էր գերանին և կնճռտվում ու բռնում էր սիտը: Նվում էր ու  
չէր մեռնում, նվնվում ու չէր մեռնում: Նվալով կար, հայր էր, իր օտար որդու  
հայրն էր, իր որդուն էր օգնում՝ լուծելու մաթեմատիկայի խնդիրները, իսկ մեր  
հայրերը ռազմաճակատում էին» (1978, էջ 29):

Պատերազմը գյուղից տարել էր այն բոլոր տղամարդկանց, որոնք կարող  
էին զենք բռնել և գյուղում թողել էր մեկին, որը չէր կարող անգամ կացին բռնել:  
Իսկ պատերազմը իր երկաթյա ծանր ու դաժան թաթը դրել էր նաև երեխաների  
վտիտ ուսերին. «Վաղ լուսաբացի սառնամանիքը ճաքճացրել էր իմ ձեռքերը. Ես  
մի կերպ կարողանում էի խոտ տալ կովերին, մի կերպ բռնում էի թիու կոթը և  
մաքրում գոմը, բայց չէի կարողանում գրիչ բռնել-գրիչի տակ մատներիս մեջ սուր  
ծակոցով փշեր էին արթնանում: Մեր բոլորիս ձեռքերն էին ճաքճքված, ես ինչու՞  
եմ ասում «իմ ձեռքերը», «իմ մատները», որվհետև ես հիշում եմ իմ ցավը» (1978,  
էջ 34): Իսկ այդ ցավի անունը պատերազմ է: Այդ ցավի երկար շղթայի մեջ Մաթևո-  
սայանի պատանի հերոսը հիշում է նաև այս մեկը. «...Ես այս պատմությունը ի-  
զուր սկսեցի. չգիտես թե ինչպես կարող է պատահել, որ օճառ չլինի, որ լվացքը  
մոխրաջրով անեն, որ քեզ մոխրաջրով լողացնեն, չգիտես թե քոսն ինչ է, թե մենք  
ինչու էինք կաղնու կեղևը տղոցարաններից շալակած բերում գյուղ, թե ոջիլն ինչ  
է. թե մեզ ինչու չէին թողնում մազ պահել. չգիտես, թե ինչ է քո մերկ մարմնին  
կպած կռշտ բրդի անընդհատ գոյությունը և որ մենք չէինք կարող հանել, շարտել  
բրդե այդ ծակծկող, անընդհատ քորեցնող ու ծակծկող կոպիտ գործվածքը (մեր  
մայրերն ասում էին՝ «գործքը», «գործը»): Դու չգիտես, թե ինչ է պատերազմը»  
(1978, էջ 40): Ահա թե ինչու պատերազմը նաև պատանու կռշտացած ձեռքն է, որ  
դժվարանում է գրիչ վերցնել, մոխրաջրով լողանալն է, ոջիլն է և ուրիշ շատ բա-  
ներ:

Չայտնի է, որ մաթևոսանյական «կարտոլի տղերքի» սերնդի խաղերի մեջ  
անպայման կարևոր տեղ ունեն այսպես կոչված ռազմական խաղերը, որ մի տե-  
սակ կոփում էր այդ սերնդին, վաղվա զինվոր ու հերոս կռում: Բայցևայնպես այս  
խրոխտ խաղի մեջ հնչող «ուռա» տխուր էր. «Նրանք գորավարժություն էին ա-  
նում: Նրանց հրացանները մեզ հեռվից իսկական էին երևում, նրանց ձայների պա-  
տանեկան հնչումը, խլանում էր խմբային աղաղակի մեջ, և դա թվում էր իսկա-  
կան գրոհ Սուր բրդի լանջերն ի վար Մեծ հովտով դեպի Ձնծաղկի բլուր... Ութե-  
րորդ դասարանցիները դեռ միայն «ուռա» էին գոռում, իրենց հերոսական աղա-  
ղակը լցրել էին իրենց ականջները և չգիտեին, որ դա տխուր ու հիմար «ուռա» է»  
(1978, էջ 49): Պատանեկան այդ խրոխտ ուռաներին ու փայլուն հաղթանակին  
գյուղացի ծերունին բարեհոգի հեզնանքով է վերաբերվում. «-Այ տղա, այ տղա, այ  
տղա,- կանչեցին: -Այ տղա, էդ ի՞նչ եք անում,- կանչեց մի ծերունական մաղված  
ձայն: Սարգիս կծան պապն էր՝ իմ պապի եղբայրը, կովը ջրելու էր բերել: Կովը

լղար էր, մեջը ուժ չկար մեզնից խրտնելու, պոչը բռնած, որպեսզի կովը չըկնի, թե՛ ինքը չըկնի: Պապը ծիծաղեց մեր վազքի վրա.- Էդ ի՞նչ եք անում, այտա, թփթփալով գնում եք, Գերմանիան անկարծ կխրտնի ձորը կընկնի» (1978, էջ 53): Այս պատկերում Գերմանիայի «խրտնելուց» գատ կա նաև պատերազմական մեկ այլ ներկայություն ևս. լղար, կենսական ուժերից զրկված, ցամաքած կովն ու նույնքան հյուժված ծերունին, որ բռնել է կովի պոչից:

Պատանիների այս սերունդը գիտեր նաև գերմաներեն խոսել, և խաղի վերջում պիտի ասեր՝ «Հիտլեր կապուտ»:

Մաթևոսյանի այս գրքում ուշադրության է արժանի նաև «Պատիժը» պատմվածքը, ուր նույնպես նկատելի է պատերազմի պատճառած վերքերը՝ ցավից մխացող ու չսպիացող: Պատանի հերոսի՝ Արմիկ Մնացականյանի համար պատերազմը մի տեղ կարծես սկսվել ու ավարտվել էր. իր հայրը կար, իրենց ընտանիքի գլխին էր ու հայրություն էր անում: Եվ հիմա հայր ու որդի «անհայտ որդիների այդ գյուղում» պիտի տղամարդու գործ անեին. -Հայրը փայտահատ և գերի ռումինների վրա տասնապետ էր, պատերազմը նոր էր վերջացել կամ դեռ չէր վերջացել. հոր հագին գուցե իրոք բանակային վերարկու լիներ չեմ հիշում» (1978, էջ 74): Իսկ հետաքրքիր է՝ ինչու՞ էր կինը ամուսնու՝ տասնապետության զինվորական կարևոր գործը ծաղրում: Պարզվում է ի ծնե աշխատավոր նրա ամուսինը մաթևոսանյական բեռնաձիերից մեկն է, երկրի ջիղը, և այդ մարդը, «որ ամաչում էր մի բաժակ ջուր ուժել» անգամ իր հարազատ որդուց, պիտի աշխատեցներ գերի ռումիններին: Այստեղ Մաթևոսյանը շեշտում է, որ իր «խղճի ձեռքին այդ մարդը գերիների գերին էր և ոչ թե նրանց տասնապետը»: Եվ ահա գերիներին թողած գնում էր սարը՝ գոմի կոտրված դուռը նորոգելու, իսկ որդին էլ հոր հետ ճամփա էր ընկել, արդեն տղամարդ էր և գնում էր հեռու ձյունապատ ու սառցակալած դաշտից խոտ բերի: Վերելքն սկսելուց առաջ հայր ու որդի ետ են նայում և ի նչ տեսնում. «Վերելքն սկսելուց առաջ հայրը ետ՝ գյուղին նայեց, և տղան նույնպես նայեց գյուղի վրա, ոչ մի ձայն չկար և կարծես ծուխ էլ չկար: Գյուղը կարծես մարած էր: Այս անգամ տղան տեսավ հոր կոկորդ խցված դառը գունդը: Ռազմաճակատից քառասունուր տղա ետ չէր եկել, քառասունուր հնձվոր, սայլվոր, եզնարած, ուսուցիչ, մաճկալ, փայտահատ, հյուսն՝ մի ամբողջ զնգուն համերգ: Հայրը զզվանքով այն արեց՝ այն է՝, այսինքն թե չի հասկանում ինչ եղավ, ինչ պատահեց, այդ ինչ չար խորհուրդ էր:

-Խեղճ, - ասաց հայրն ու թքեց, - մեզանից էլ խեղճ... բերանները կապած խեղճ անասուն են:

Դա գուցե սառած ամբողջ աշխարհի մասին էր, գուցե միայն գերիների, որոնք մեզ պես ու մեզնից էլ խեղճ էին, բայց ահա աշխարհը հանգցրել էին: Հայրը չպատմեց, հայրը չէր պատմում, ըստ երևույթին պատմելու բան չկար, քանի որ հայերը ռումիններեն չգիտեր, գերիները՝ հայերեն, և հայրն ու գերիները՝ ռուսերեն: Իսկ ինչը որ լուռ, առանց լեզվի է լինում՝ քստմնելի էր. գերիները ձմեռը գուտ կարտոլից սպիտակում էին, գարնանը կանաչում՝ խոտ ուտելուց: Ռումինների ռուսերեն «ռուկի վերխ» և հոր գերմաներեն «հենդի հոխ» հրամանները վաղուց դարձել էին հիմարություն, և հիմա նրանք՝ հայրն ու ռումինները, սառած գետակն ի վար տասը կիլոմետրի վրա անտառում էին, փայտ էին կտրում, որպեսզի գարնան վարարումների հետ քշեն երկաթուղի, և նրանց արանքում ատելություն չկար, քանի որ նույնիսկ ատելու համար է ուժ հարկավոր:

Բայց ավելի մեծ ուժ և՛ հորը, և՛ գերիներին, ծառ կտրելուց և խորանարդ առ խորանարդ որպես գերության գերեզմանոց, դարսելուց և միմյանց ասելուց շատ ավելի մեծ ուժ մի ուրիշ բանի էր հարկավոր, և նրանք չունեին. Հաճարենու դարավոր անտառը նրանք հատում էին այնտեղ, ուր Հովհաննես Թումանյանի տունն էր լինելու. Իրենց գերության ու տգեղ գործի խորանարդները. Նրանք բարձրացնում էին իրենց լուսավոր այն բացատում, որ փովելու էր Հովհաննես Թումանյանի տան առաջ: Իրենց գերությունը նրանք բերել բնակեցրել էին հենց այդտեղ և ավերում էին Թումանյանի բարության ու սիրո աշխարհը և ուժ չունեին հասկանալ, որ տգեղ բանի են-նրանք հագիվ կային» (1978, էջ 85): Ահա այստեղ է, որ առանց չափազանցության, հստակ ուրվագծվում է Մաթևոսյանի պացիֆիզմը: Իհարկե, արդարացի չէ գրողին, արվեստագետին միանշանակ իզմերի սահմանների մեջ տեղավորելը: Մաթևոսյանի գրականությունը այս առումով առավել լայն, արձակ տարածություններ է զբաղեցնում: Մակայն այստեղ ակնհայտ է, որ Մաթևոսյանը պատերազմական թեմային անդրադառնալիս հակամարտ կողմերի միջև կրակի գիծը հստակ չի բաժանում մեր ու թշնամու միջև: Գրողի մոտ այս սահմանը այլ բնույթի է, առավել խորքային, բարոյական բնույթի, ուր շոշափվում է մարդու և հակամարդու բախումը: Այսինքն՝ պատերազմը հավասարապես իր խելահեղ պտույտի մեջ է առնում երկու կողմերին էլ, և այստեղ ջնջվում է կրակի գիծը: Գերի ռումինների խղճուկ գոյությունը ընթերցողի մոտ ոչ թե հաղթանակած կողմի հպարտությունն ու ատելությունն է արթնացնում, այլ ընդհանրապես կարեկցանքն ու խղճահարությունը: Գերու գոյությունը մեր հայրենիքի արձակ, ազատ տիրույթներում, ուր առավել լայն առումով մեծ գոյի դաշնավոր խորհուրդն է իմաստավորում, գերին չպիտի տեղ ունենար այդտեղ: Հաճարենու դարավոր անտառում Թումանյանի՝ ասել է թե մեր մտքի, երազանքների ու անեղծ կարտոների ոգեղեն տունն էր լինելու, այլ Թումանյանի, որ երագում էր հաշտ ու խաղաղ մարդկության մասին, իսկ նրանք անխնա կտրում էին այդ անտառը, ուրբեմն նրանք տգեղ բանի էին, կամա թե ակամա եղծում էին կյանքի ներդաշնակությունը: Եվ ուրեմն պետք չէ, որ նրանք մնան մեր դարավոր հաճարենու անտառում, պետք է գնան, հավանաբար նրանք էլ ունեն իրենց կեչուտը, իրենց Թումանյանը, որ մի հեռու տեղից կանչում է իր երկրի զավակներին: Որպեսզի պացիֆիզմի վերաբերյալ մեր խոսքը մերկապարանոց չհնչի, հիշենք Էռնեստ Հեմինգուեյի «Ում մահն է գուժում զանգը» պացիֆիստական վեպը: Այստեղ ևս, ինչպես Մաթևոսյանի արձակում կրակի գիծը հստակ չի բաժանում, այդ բաժանումը մարդկային-բարոյական դաշտում է: Վեպի ընթերցողը հավասարապես կարեկցանքով է համակվում հակամարտող երկու կողմերի նկատմամբ: Հեմինգուեյի ստեղծագործության մեջ այս առումով ուշադրության է արժանի հատկապես կամուրջը պայթեցնելու դրվագը. սրտի թրթիռով սպասում էս, որ Ռոբերտ Ջորդանը գլուխ բերի կամրջի պայթեցումը, բայց ոչ պակաս ցավ ու ավստասանք էս ապրում կամուրջը հսկող գերմանացի ժամապահի մահվան համար: Այդ նույն ցավը ապրում է հենց ժամապահին գնդակահարողը: Ահա ժամապահի՝ կենդանի մարդկային գծերի նկարագիրը, որը քիչ հետո պիտի գնդակ ստանար, պիտի գոհվեր մարդը՝ իր երազներով ու հոգսերով. «Ժամապահը նստել էր ու կոթնել պատին: Հիմա էլ գլխին նույն գործած գլխարկն էր: Էլի սավորված չէր: Այտերը փոս էին ըն-

կած, այտուկները ցցված էին: Թավ հոնքերը ուներ, որ գալիս-միանում էին կենտրոնում»<sup>139</sup>:

Եվ ապա գալիս է ժամապահին գնդակահարողի դառը խոստովանությունը. «Ժամապահին ես չէի ուզում սպանել և տանջվում էի...»<sup>140</sup>:

Նույն կերպ, ցավալի, մարդկային կորստի զգացողություն ես ունենում, երբ կարդում ես գերմանացի սպայի գնդակահարության դրվագը, և այնուհետև ծանոթանում սպայի գրպանից հանված նրա նամակներին, որ ստացել էր քրոջից, սիրած աղջկանից, իրեն կարոտով սպասողներից: Ռոբերտ Ջորդանի արձակած գնդակը ծակում անցնում է Հիսուսի պատկերով զարդարված գերմանացի սպայի կուրծքը: Գնդակահարվում է նաև Հիսուսը՝ մարդկային բարոյականությունը, խիղճն ու հավատը. «Նրա ձախ կրծքին Ռոբերտ Ջորդանը տեսավ Քրիստոսի սիրտը խորհրդանշող կարմիր ծանուցանիշը:

Ռոբերտ Ջորդանը նշան բռնեց ուղիղ նրա կրծքի կենտրոնին, ծանուցանիշից քիչ ցած»<sup>141</sup>:

Վերստին դառնալով պատերազմական սրբած ու սմբած գյուղին՝ հարկ է նկատել նաև, որ հարազատի կորուստը, ճակատից հետ չգալու սիրտ մաշող տագնապները, սովը, զրկանքը, այնուամենայնիվ չէր կոտրել գյուղի մեջքը: Գյուղացին ուժերի գերագույն լարումով՝ կին, ծեր, երեխա տքնանքով ու տառապանքով ապրում էին, ապրում էին լացի ու ծիծաղի մեջ, քանզի նրանց ջանքերով էր նաև կոփվում մեծ հաղթանակը. «Թոզի բիձոնց կովը աղբյուրի ձորն էր ընկել, ինչքան կին կար ճվճվում, անիծում ու թոկերով քաշում էին՝ ցեխից դուրս չէր գալիս... Լապտերի դեղին, հիվանդոտ, չեղած լույսով՝ կանայք ծղրտում, տնքում ու անիծում էին հավասարապես Հիտլերին ու Թոզի բիձուն: Առվակն ի վար ցեխ էր, կովին ներս էին քաշում, առվակն ի վեր՝ կտրուկ գառիթափ, և կանայք պարանները գցել ու կովին դեպի լանջն էին քաշում, ձյունախառն հողը նրանց ոտքի տակ փախչում էր, և կանայք ծղրտում ու անիծում էին Հիտլերին, կովին, Թոզի բիձուն՝ թե ինչու չի կարողացել մի դույլ ջուրն ինքը տանել-հղի, նիհար կովը բերել ձորն է գցել: Հետո գյուղամիջից եկան լապտերը հանգցնել ու ձայները կտրել տվին, գյուղի վրա իրքնաթիռի հոնդոց էր պտտվում, և լուռ կանայք կովի վրա կարպետ գցեցին, և կովը ցեխի մեջ խրված, սպասեցին: Ասում էին. «Հիտլե՛ր, թոփը փորումնդ տրաքի», հետո ասում էին. «Իհի, Թոզի բիձա, մի ջոկ թոփ էլ քու փորումնդ տրաքի» ու անգործությունից ծիծաղում էին» (1978, էջ 233): Այդ նույն կանայք, «կատակ ու շիտակ, արտաքրուստ ժպիտով անիծեցին կոների ուժը այն հնձվորի, որ այդտեղ եղել էր, հնձել էր, հիմա այդտեղ չէր, բայց կանայք նրանք այնպես էին զգում, որ կարծես նա այդտեղ էր: «Իհի, - Անիծեցին կանայք, - կայծակը թիկունքիդ տա. էս ո՞վ է, ախչի էս սրտախորովը»: Այսինքն թե՛ նրա թիկունքին խփելու համար իրենց ձեռքը թույլ լիներ: Մոր շրթունքները անձայն շարժվում էին, մայրը թաքուն ժպտում էր, նա չգիտեր զսպի՝ իրեն ու թե իրենը չի, բայց կա, անտառի ու գյուղի գլխով՝ տասը կիլոմետր ներքններում է, գերիների մեջ... փախած, թաքուն՝ մի երկու ժամով եղել է այստեղ» (1978, էջ 236): Իհարկե, եթե ամուսինը կա թեկուզ տասը կիլոմետր հեռու, ուրեմն արդեն պիտի շարժի

<sup>139</sup> *Էռնեստ Հեմինգուեյ*, Ում մահն է գուժում զանգը, Երևան, 1985, էջ 321:

<sup>140</sup> Նույն տեղում, էջ 329:

<sup>141</sup> Նույն տեղում, էջ 331:

նան հարևան կանանց նախանձը, քանի որ նրանցից շատերի որդիներն ու ամուսինները հեռու -հեռավոր աշխարհներում են՝ կենդանի<sup>օ</sup>, գերի<sup>օ</sup>, թե<sup>օ</sup> սպանված ու անթաղ: Եվ դրա համար էլ այդ տղամարդը անտղամարդ գյուղում պիտի ամաչեր իր ներկայությունից, քանի որ «շատ մեծ անամոթություն կլիներ լույսի արևի մեջ լայնաթիկունք ու առողջ կանգնել որք այդ գյուղում՝ թե ես ահա կամ և ինձ համար գերանդի եմ քաջում»: Ահա այդ նույն գյուղում, թևը պատերազմի դաշտում թողած մի տղամարդ էլ կա, որ հազիվ սայլվորություն է անում և համագյուղացիների հանդիմանանքին արժանանում, որ անվարժ է գյուղական ծանր գործերում. «-Էդ դու էլ ե՛ս կնիկ: - Դե որ մի թևանի եմ, - եկավ սայլվորի հուսահատ բողոքը, - կնիկ եմ ու կնկանից մի բան էլ պակաս եմ, իմ ի՞նչն է տղամարդ»: Տղամարդ չէ, որովհետև չի կարող մաճ, գերանդի, կացին բռնել, երկրի ջիղը թուլանում էր դրանից: Բայց վերստին նկատենք, որ սա դեռ ամենացավալին չէր, իհարկե, ցավ էր, նվացող ու բաց վերք էր: Իսկ ողբերգությունը այն էր, որ դեղին խշշան արտը հատունացել էր, սպասում էր իր հնձվորին, ու հնձվորը չկար... չէր գալու. «Դեղին, խշշան արտերում թուխ, մերկ տղերքը հնձի էին եղել՝ նրանց տարել էին պատերազմ, գերմանական տանկերի դեմ: Փափուկ սարերի մերկ երամակները քշել էին պատերազմ, գերմանական տանկերի դեմ: Մերկ այդ երամակից ոչ մի ձի ետ չեկավ: Տղերքից մի երկուսը եկան, և մեր մայրերը լաց էին լինում և լացի միջից ասում էին. «Անդրանիկն եկավ, Շաքրո՞՞ն»: (1978, էջ 240):

Եկածները իրենց հետ բերեցին նաև ընկածների ողբերգությունը, և նորից լաց ու ծիծաղ եղավ, ծիծաղը շատացավ «թել առ թել, թելիկ առ թելիկ հյուսվում էր նոր ժպիտը: Ինչպես որ ծաղիկներն են փունջ դառնում»:

Ահա այդ փունջն էր, որ Մարտիրոս Մարյանը նկարեց ու նվիրեց Հայրենական մեծ պատերազմի մարտիկներին:

**Мушер Саруханиян – *Сколько длится война.*** – В статье исследуются отклики Великой Отечественной войны в творчестве Гранта Матевосяна. Особо отмечается то, что Матевосян заостряет внимание не на те следствия которые порождаются этими действиями. Матевосян принципиально отвергает войну, считая ее большим злом. Таким образом, рассказы Матевосяна указывают на его пацифизм.

# Լ Ե Զ Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Լ Ե Զ Վ Ա Կ Ա Ն Ա Ր Տ Ա Ն Ա Յ Տ Չ Ա Մ Ի Զ Ո Ց Ն Ե Ր Ը Գ Ե Ղ Ա Ս Ս Ա Ր Ց Ա Ն Ի՝ Մ Ե Ծ Հ Ա Յ Ր Ե Ն Ա Կ Ա Ն Ի Ն Ն Վ Ի Դ Վ Ա Ս Ք Ն Ա Ր Ե Ր Գ Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ե Զ

### Լ Ո Ւ Մ Ի Ն Ե Թ Ո Ւ Մ Ա Ն Ա Ց Ա Ն

Հայրենական Մեծ պատերազմը մեծ բեկում առաջացրեց գրականության գաղափարական ուղղվածության մեջ: Անհատապաշտության հզոր ալիքը ժամանակավորապես հետ մղվեց հայրենասիրության, հայրենիքի պաշտպանության, թշնամու նկատմամբ վրեժի և ասելության գաղափարների ճնշման տակ:

Պատերազմին անմիջական արձագանքեց նաև պոեզիան: Բանաստեղծները շիկացած, հրեղեն խոսքով ցասման ու ասելության տրամադրություններ էին առաջացնում թշնամու նկատմամբ, բորբոքում ժողովրդի պայքարի տենչը, հաղթանակի հավատ ներշնչում:

Պայթող ռումբերի որոտին խառնվեց ժողովրդական ցասումը, արկերի շառաչին՝ հայրենաշունչ երգերը: Ինչպես կյանքում, այնպես էլ քնարական երգերի մեջ անբաժանելի դարձան ռազմաճակատն ու թիկունքը:

Այդ մարտական պոեզիայի լավագույն վարպետներից է Գ. Սարյանը: Զգացմունքների նրբությունը և ջերմությունը, ընդհանրացումների ազնվությունը Գ. Սարյանին դարձրել են ժողովրդի սիրելի երգիչներից մեկը:

Իբրև խոսքի արվեստ՝ գեղարվեստական գրականությունն իր պատկերները, բազմազան ոճական ձևերն արտահայտում է լեզվի միջոցով:

Գեղարվեստական խոսքի ոճական միջոցների համակարգում կարևոր դեր ունեն մակդիրները: Մակդիրները բխում են բնութագրվող առարկաների ու երևույթների էությունից, ունեն իմաստային խորություն, հարստացնում են խոսքի բովանդակային կողմը, ուժեղացնում նրա արտահայտչականությունն ու հուզականությունը:

Գ. Սարյանի քնարական աշխարհում հմտորեն օգտագործված են տարատեսակ մակդիրներ, որոնք ոչ միայն առանձնացնում, շեշտադրում են առարկայի, երևույթի այս կամ այն հատկանիշը, գեղարվեստորեն բնութագրում նրան, այլև իրենց մեջ ամփոփում են բանաստեղծի հուզական գնահատանքը, դառնում առարկայի կամ երևույթի հանդեպ հեղինակի հոգեբանական արժևորման արտացոլանք<sup>142</sup>: Օրինակ՝

Մարիբ այս *դաժան հրդեհն* աշխարհի,

Բացվի՛ր առավոտ, բացվի՛ր առավոտ...<sup>143</sup>

(Խոսք առավոտյան, 232):

<sup>142</sup> Մակդիրների տեսակավորման ժամանակ առաջնորդվել ենք **Ֆ. Խղաթյանի** «Ոճարանական բառարան»-ով, Երևան, 2000թ., էջ 115-117:

<sup>143</sup> **Գ. Սարյան**, Երկեր, Երևան, 1956թ.: Այսուհետև երկից մեջբերումները կտրվեն տեղում՝ փակագծերի մեջ նշելով միայն բանաստեղծության էջը և վերնագիրը:

**Հպարտ լեռներ, դաշտեր դալար**

Արդյոք նորից կգա՞մ տուն...

(Հպարտ լեռներ, դաշտեր դալար, 238)

*Դաժան հրդեհ* կապակցության մեջ մենք տեսնում ենք հեղինակի մտահոգությունը պատերազմի հասցրած դաժան վնասների վերաբերյալ և ցանկանում վաղվա օրը տեսնել պայծառ արշալույսով: *Հպարտ, դալար* մակդիրներում առկա է բանաստեղծի խանդավառ լավատեսությունը ապագայի հանդեպ, որը հնչում է զինվորի շուրթերից. դա սոսկ լեռներ, կամ դաշտ չէ, այլ գեղեցիկ մի պատկեր այն կյանքի, որի համար մարտնչում է նա, որը նրա մեջ դաստիարակել է արիություն և խիզախություն:

Գ. Մարյանը շեշտադրում է բնութագրվող առարկայի կամ երևույթի կոնկրետ որևէ հատկանիշը՝ հուզական-գունային բնորոշմամբ խտացնելով տվյալ կողմի որակական թանձրությունը, կերպավորումը՝ *կայույտ լեռներ (241), կայույտ առու (96), կանաչ հորձանք (96), լուրթ ոլորտներ* (ն.տ.):

*Կանաչ հորձանքով* ծփում են խաղաղ սրտերն անսահման,

Եվ շեն գյուղերի ծուխն է բարձրանում *լուրթ ոլորտներով...* (96)

*Կանաչ, լուրթ* մակդիրներն արտացոլում են բանաստեղծի լավատեսական, պայծառ տրամադրությունը:

Մարյանի քնարերգության մեջ օգտագործված մակդիրները ոչ միայն նրբակերտում են առարկան կամ երևույթը, այլև դառնում փիլիսոփա-գեղագետի հուզական վերաբերմունքի գեղեցիկ արտացոլանքը՝ զով համբույր, շքեղահյուս գորգեր, զանգակ աղբյուրներ, մինարենների նիրհուն կատարներ:

Իսկ Մեծ հաղթանակի առթիվ գրված «Տաղ Հայաստանին» բանաստեղծությունը լի է գեղարվեստական գեղեցիկ պատկերներով՝ ձյունագագաթ սարեր, ոսկեսապատ դարեր, փռչիապատ քարեր, զվարթահոս ջրեր, շաքարահոս ճոռեր, հայրենաբաղձ լարեր, ծաղկաքանդակ լարեր, երջանկասփյուռ գալիք՝

Հայաստանի **ճառագայթված**

Հույսերն են անուշ,

Ազատ կյանքի ծիլ արձակած

Բույսերն են անուշ,

նոր օրերի **երջանկասփյուռ**

**գալիքն** ավետող

Մեր ջրերի հենքից քանված

լույսերն են անուշ: (196)

Լեզվի պատկերավորման միջոցներից է համեմատությունը, որը գործածվում է առավելապես գեղարվեստական խոսքում: Համեմատության հիմքը համեմատվող առարկաների կամ երևույթների միջև եղած նմանությունն է կամ ընդհանրությունը, որի շնորհիվ ուժեղացվում է բանաստեղծական խոսքի հուզական ներգործությունը, ավելի ցայտուն ու տպավորիչ է դառնում նկարագրվող երեվույթը՝

Անցավ: Մի ափսոսա: Օրենքն է այդ կյանքի

*Անցնող մարդու նման անցորդ է և օրը* (116):

Կամ՝

Եվ հովն է խաղում **ինչպես ծաղկաշունչ բույրերի հոսանք.**

Սահելով անցնում, փարվում հանդերի դալար կանաչին.

Ու Մասիսն *ինչպես երկնքից կախված վիթխարի մի զանգ*  
Փայլում է հեռվում թվում է թե պիտի դողանցի ... (98):

Գ. Սարյանը առաջին համեմատության մեջ շեշտադրում է մարդկային կյանքի անցողիկ, թռիչքային լինելը, երբ օրը համեմատում է անցորդի հետ:

Երկրորդ համեմատության մեջ մեղմիկ հովի և ծաղկաշունչ բույրերի հոսանքի մեջ մի ընդհանուր եզր է գտել՝ մեղմություն, մաքրություն, որը լավատեսության զգացումով է պարուրում ընթերցողին: Իսկ Մասիսի՝ երկնքից կախված վիթխարի զանգի հետ համեմատելը բանաստեղծությանը տալիս է հզոր շեշտ, հաղթանակի նկատմամբ հավատ ներշնչում:

Խոսուն ու կենդանի համեմատություններով աչքի է ընկնում «Դեպի կառավանարան» պոեմը:

Ինչու՞ պատերազմի ամենաթեժ օրերին Գ. Սարյանն անհրաժեշտություն զգաց դիմելու եղեռնին: Հարցն այն էր, որ պատերազմը վտանգի էր ենթարկել հայ ժողովրդի ոչ միայն այսօրը, այլև նրա դարավոր պատմությունը: Իսկ պատմությունը միայն հերոսական պայքարի էջեր, ռազմական փառքի հիշողություններ չի թողել. նա հարուստ է նաև ազգային մեծ վշտերով և ականատես է եղել այնպիսի կորուստների, որոնք ժողովրդի ճակատագրական պահերին դառնում են հատուկ կանչեր՝ բորբոքված պահելով նաև վրեժի և ատելության կրակը: Կոմիտասը, Վարուժանը, Սիամանթոն այդ շիկացած մորմոքի կրողներն են, որոնց վերկենդանացումը բարոյական անհրաժեշտություն էր, երախտագիտական պարտքի արտահայտություն:

Գ. Սարյանն իր ասելիքը սկսում է բնության ընդգծված հակադրությունների նկարագրությամբ.

Փովեց ծովի վրա ահեղ իրիկնաժամ,  
Արեգակի վերջին հայացքն այնտեղ հանգավ,  
*Գողգոթայի նման իր լռությամբ դաժան*  
Կանգնել էր ափի մոտ խորհրդավոր մի նավ:  
*Կանգնել էր նա ինչպես մռայլ մի դամբարան,*  
Եվ հայ մի բազմություն հեծում էր ծովափին,  
Վերջին հրաժեշտի հայացքն ուղղված նրան,  
*Հուղարկավորն ինչպես տխուր հողաթմբին (483):*

Պոեմի հենց սկզբից ընթերցողը պարուրվում է մռայլ տրամադրությամբ, և համեմատությունները ոչ միայն ներկայացնում, վեր են հանում առարկայի այս կամ այն հատկանիշը, այլև միաժամանակ արտահայտում են խոսողի, հեղինակի վերաբերմունքը, նրա տրամադրությունը այս կամ այն անձի, որն է երևույթի, իրողության նկատմամբ<sup>144</sup>:

Երևույթը կամ պատկերը ներկայացվում են այնպես, ինչպես դա կարող է տեսնել, հոգեբանորեն ապրել ու զգալ տվյալ միջավայրի մարդը. Ահա տաճիկ սպաների «անասնական հայացքները», որոնք կարծես դաշույն կախվել են երկու հարյուր հայ մտավորականների գլխին՝

<sup>144</sup> **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Եր., 2002թ., էջ 342:

<sup>144</sup> Նույն տեղում, էջ 345:



Տաճիկ սպաների հայացքն անասնական  
Դաշույնների նման կախված գլուխներին:

Գ. Մարյանը ընթերցողին դահիճների նկատմամբ համակում է ատելութ-  
յամբ:

Բազմությունը վերջին հրաժեշտն է տալիս կառափնարան գնացողներին՝  
Կոմիտասին, Դ. Վարուժանին, Սիամանթոյին և մյուսներին. նրանց է միանում  
նաև ծովը՝

Եվ ծովն էր անսահման հուզված սրտի նման  
Խփվում իր ափերին *ինչպես մահվան սարսուռ* (484):

Բայց անսասան է Կոմիտասը, մեծ է հպարտության զգացումը՝ «Կանգնել  
էր Կոմիտասը *ինչպես տաճարի սյուն*»:

Իսկ հայոց պատարագի «Տեր ողորմյան», ձուլվելով ծովի մրմունջներին ու  
աղերսանքի նման տարածելով օդում, ավելի է ընդգծում ոճրի մեծությունը՝

Քամին նրա վերջին հնչյուններն էր բերում  
Ծովի ցայտող ջրի *պաղ շիթերի նման* (485):

Պոեմի վերջում, Մարյանը քաղաքական հետաքրքիր համեմատություն է  
կատարում, որով ամեն ինչ ասվում է նաև կայսերական Գերմանիայի մասին,  
այն Գերմանիայի, որ տարիներ անց ներխուժել է մեր հողը՝ այս անգամ արդեն  
բնաջնջման ավելի ահավոր նպատակներով՝

Իսկ երկնքում լուսնի մահիկն ամպասքող  
Սահելով դուրս նայեց ուրախ ու տիրաբար,  
Ինչպես Վիլիելմ կայսեր հայացքի տակ պարող  
Ծախված գեղեցկուհու ժպտուն ատամնաշար... (485):

Գ. Մարյանին հետաքրքրում է ոչ միայն պատկերի թարմությունը, այլև վե-  
րաբերմունքի դրսևորումը, զգացական վերաբերմունքի արտահայտումը:

Չափածո խոսքի գեղարվեստականության պատկերավորման արտահայտ-  
չամիջոցների շարքում իր ուրույն տեղն ունի այլաբանությունը: Փոխաբերու-  
թյունը այլաբանության տարատեսակ է, խոսքի պատկերավորման, ոճավորման  
այնպիսի միջոց, որի հիմքում ընկած է երկու առարկաների կամ երևույթների  
նմանությունը, և դրա շնորհիվ գրողը նրանցից մեկի անունը փոխարինում է մյու-  
սի անվամբ կամ նրանց բնորոշ որևէ հատկանիշներով<sup>145</sup>:

Իրոք, գրողի հմտությամբ ու տաղանդով է պայմանավորված փոխաբե-  
րությունների ճիշտ գործածությունը, երևույթների միջև նմանություններ ու  
առնչություններ տեսնելու կարողությունը:

«Իմ մորմոքները» բանաստեղծության մեջ պոետը ցանկանում է, որ իր մոր-  
մոքները զուլալ աղբյուրներ դառնան, ջրեն դալար ծառերը և անտառներ դար-  
ձած՝ «զով տան աշխարհին»:

Կամ՝ «Խոսք բարի երթի» շարքի «Խոսք առավոտյան» բանաստեղծության  
մեջ հեղինակը բարի լույսի հետ է կապում աշխարհի խաղաղությունը՝

Բացվի՛ր առավոտ, քո լույսը բարի,  
Քաղենք արտերի բերքերն արևառ

<sup>145</sup> Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 345:

Մարիբ այս դաժան հրդեհն աշխարհի,  
Տու ը խաղաղ մեր կյանքն՝ ուրախ և արդար (232):

Նույն շարքի «Սպասում» բանաստեղծության մեջ այլաբանական պատկերի միջոցով զգում ենք հաղթանակի շունչը և սպասում քաջերի վերադարձին՝  
...Գորովալի մեր սրտերը փռած ահա ձեր ճամփին,  
Կարոտավառ մեր հույզերը և մեր սերը ձեր ճամփին,  
Մեր երկիրը սպասում է, սպասում է, ձեր գալուն(248):

Հարկ է նկատել, որ Գ. Սարյանի խոսքարվեստում ուրույն տեղ են զբաղեցնում *փոխանությունները*: «Պատգամ» բանաստեղծության մեջ հեղինակը մարտիկին պատվիրում է ամուր պահել ուժ ու զորություն տվող հայրենի հողով լցված փաթեթը՝

Ընդունիր սակայն, պահիր քո ծոցում  
Փոքրիկ փաթեթն այս հայրենի հողի:  
Նա քեզ կըտա ուժ, կըտա զորություն,

Այդ նշանն է մեծ մեր ժողովրդի

Այդ նշանի տակ չըկա պարտություն,  
Թող կամքը նրա քեզ առաջնորդի: (235):

Այստեղ՝ «հայրենի հող» արտահայտությամբ, հեղինակը մատնանշում է նաև տվյալ ժողովրդին, որն ապրում է այդ հողի վրա, այսինքն՝ երբեմն մարդկանց անունը (հայ ժողովրդի) փոխարինվում է նրանց ապրած տեղի անունով:

Սև ծովն էր ալեկոծ փրփրում իր ափերին,  
Թմրել էր **Պոլիսը** փարթամ պարտեզներում (483):

Պոլիսը (այսինքն՝ բնակիչները), որի յաթաղանից դեռ կաթկթում էր հայ անմեղ կանանց ու երեխաների արյունը, «թմրել էր փարթամ պարտեզներում»:

Փոխաբերությանը, որպես լեզվական պատկերավորման միջոցի, բնորոշ է բանաստեղծական *անձնավորումը*, երբ հաճախ բնության երևույթները շնչավորվում, ստանում են մարդկային գծեր: Բառերի ու կապակցությունների ինքնատիպ նշանակությունների հայտնաբերումով բնապատկերի մեջ շոշափում ենք կենդանի կյանքի զարկերակը: Բառերն ու զուգորդությունները նոր իմաստ են ստացել հետևյալ գողտրիկ բնանկարում.

Իրիկնանում էր օրն աշնան,  
Իջնում է մութը կրկին,  
Գետը ձորում՝ որոտաձայն  
Փշրվում է զայրագին:  
Չորագլխին, մտած խոր քուն,  
Հանգչում է լուռ մի գյուղակ,  
Այնտեղ մի կին է դեռ արթուն,  
Միայնակ մի հարկի տակ: (232)

Զգացվում է, որ տողերի տակ թաքնված, չմեկնված անհանգստություն կա, տազնապ ու սարսուռ, որոնք բանաստեղծը փորձում է վերածել պատկերների, իմաստավորել՝ ներդաշնակելով ժամանակի ու աշխարհի տիրող մտայնությանն ու ոգուն:

Իսկ «Լուսանկարը» պոեմում շնչավորվել են ծաղիկները, որոնք թախծում են նահատակված պատանու համար.

Ծաղկանոցով անցավ աղջիկն առավոտյան,  
Ու ծաղիկներն ամեն էլան քնից,  
Եվ նայեցին՝ լացած մանուկների նման  
Յողի շիթեր կախված աչիկներից... (383):

Բնությունն ի վերջո մարմնավորում է մարդուն, նրա ճակատագիրը, երազանքը, կարոտն ու թախիծը: Նրա խորհրդավոր երանգների մեջ բեկբեկվում է մարդկային հոգին՝ մերթ լուսավոր ու պայծառ, մերթ հազիվ նշմարելի առկայծումներով:

Մեծ է ու բազմաբնույթ *դարձվածի* ոճական արժեքը գեղարվեստական խոսքում, այն նախ և առաջ պատկերավոր ու տպավորիչ է դարձնում խոսքը, նպաստում նրա հակիրճությանն ու սեղմությանը, ազգային երանգավորում հաղորդում և՛ հեղինակի, և՛ կերպարների խոսքին, բացահայտում նրանցից յուրաքանչյուրին բնորոշ լեզվամտածողությունը:

Պոետը բարի ճանապարհ է մաղթում ռազմաճակատ մեկնող ընկերներին՝ ցանկանալով նրանց հաղթանակ և բարի վերադարձ («Ֆուսք բարի երթի»)

Կջարդեն նրանք թշնամուն անարգ,  
Դավթի կուռը քաջ՝ իմ ընկերներին,  
Հայրենի երկրի արեգակը բարկ  
Զորավիգ լինի իմ ընկերներին>:(234)

Այս տողերով մեկ անգամ ևս համոզվում ենք, որ դարձվածները յուրաքանչյուր ժողովրդի ազգային մտածողության լեզվական դրսևորումներ են և, բնականաբար, նպաստում են լեզվի ժողովրդայնությանը:

Մարյանի խոսքի արտաքին հանդարտության մեջ կա և՛ անհանգստություն, և՛ թախիծ:

«Մայրական խոսքեր» հուզիչ բանաստեղծության մեջ Մարյանն արտահայտում է մոր կարոտն ու անհանգստությունը պատերազմ մեկնած որդու համար: Մայրական խոսքերն ու օրհնանքները ուժեղացնում, մեծացնում են բանաստեղծության հուզականությունը՝

Թող բարի փովի քո ճամփին, որդի՛,  
Հոգիս պահապան թող լինի միշտ քեզ... (283):

Ժողովրդական մաղթանքներն ու օրհնանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն, վերածվել են դարձվածների:

Մայրը վերհիշում է որդու մանկությունը, այն երջանիկ օրերը, երբ նա թթե-նու տակ իր առաջին քայլերն է անում, մանկական թոթովն է սկսում.

Օրոցքիդ թեքված համբուրել եմ քեզ,  
Ասես *գարուն է բացվել իմ հոգում:*  
*Ես աշխարհի մեջ դարձել եմ աշխարհ,*  
Ուրախությունից լացել, խնդացել...  
Առանց խմելու եղել եմ գինով,  
*Ես ուրախության գինի եմ դարձել...*

Հոգում գարուն բացվել, աշխարհի մեջ աշխարհ դառնալ, ուրախության գինի դառնալ արտահայտությունները բացահայտում են մայրական երջանկության գագաթնակետը:

«Գիրք սիրո և հերոսության» շարքում ուշագրավ է «Սոնա» բանաստեղծությունը: Սրտի սրբազան դողով է Սոնան հետևում որդու յուրաքանչյուր քայլին: Մայրը՝ մարդկային գեղեցկության ամենավսեմ գագաթումների մարմնացումը, գիտակցելով պատերազմի արհավիրքները, երբեք լավատեսական գագաթումներ չի ունենում: Սոնայի ժողովրդական խոսքն էլ ավելի արտահայտիչ է դարձնում պատկերը.

Վա՛խ, քո ջանին մեռնեմ, բալա  
Վա՛խ, քո ճամփին մեռնեմ ես... (376):

Գեղարվեստական ոճի տարբեր ժանրերում իբրև խոսքի պատկերավորման միջոց գործածվում է *չափազանցությունը*, որի միջոցով հեղինակը նպաստում է որևէ գաղափարի, գգացմունքի, կրքի ավելի ցայտուն արտահայտմանը: Հեղինակային չափազանցություններն ավելի ազդեցիկ են դարձնում ոգեշնչված, կռվի դաշտ նետված զինվորին՝

Նրա սրտում ամպրոմպներ կան, վրեժի կայծակ,  
Նրա սրտում կա հաղթություն բորբ արևածագ:

Կամ՝

Եվ ողջ երկրի ուժն անսահման  
Զգաց իր կրծքի տակ:

Գեղարվեստական խոսքում հաճախ ենք հանդիպում բառերի, բառակապակցությունների, նախադասությունների, որոնցից յուրաքանչյուրի կրկնությունը, նայած խոսքային միջավայրին ու նպատակադրմանը՝ ոճական տարբեր արժեք կարող են ունենալ:

Կրկնության հիմնական դրսևորումներից են հարակրկնությունը, վերջույթը, որոնք նպաստում են հանգավորմանը, ապահովում անցումները բանաստեղծի միջև<sup>146</sup>:

Ըստ Արտ. Պապոյանի՝ արտահայտչական այս միջոցին դիմում են առավելապես նրանք, ովքեր սերտ են կապված ժողովրդական ստեղծագործությանը և սնվում են նրա ակունքներից<sup>147</sup>:

«Գրոհի պահին» բանաստեղծության մեջտեղում և վերջում հանդիպում ենք հետևյալ երկտողի կրկնությանը՝

Արձագանքում է անտառը-պայթյուն ու շառաչ,  
Գրոհում են մեր զնդերը, գրոհում առաջ (242):

Այս դեպքում կրկնությունը դարձել է իմաստի սաստկացման միջոց: Իսկ «Հոգնած նայում եմ ես ճամփաներին» բանաստեղծության յուրաքանչյուր քառատողի երկրորդ և չորրորդ տողերը կրկնվում են՝ առավել խորացնելով սպասման գգացողությունը, չվերադարձած սերմնացանների կորուստը:

<sup>146</sup> Ա. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000թ., էջ 168:

<sup>147</sup> Արտ. Պապոյան, Չափածոյի լեզվաբանական արվեստի հարցեր, Երևան, 1976թ., էջ 94:

Գ. Սարյանի խոսքին ներդաշնակ նվագներ են հաղորդում բառական համահնչյուն միավորները, որոնց գործածությունը գեղարվեստորեն հիմնավորվում է՝ պահպանելով բնականությունը:

Խոսքին նվագայնություն հաղորդելու համար նա գտնում է ոչ միայն նմանաձայնական ձևեր ու կազմություններ, այլև անբացատրելի ներհուն ինչ-որ զգացողությամբ՝ հիշյալ միավորներին տալիս է արտաքին - հնչյունական մի այնպիսի տեսք, որը յուրովի ներդաշնակում է դրանց ներքին իմաստներին՝

Երբ իջնի մեղմ, քնքուշ մի **հով**,  
Խաղաղ ծփանարտերը **ծով**.  
Եվ երբ լցվի սիրտըդ **սիրով**,  
Հիշես հանկարծ ինձ **կարոտով**.  
Գիտցի՛ր, որ ես մեր արտերում,  
Ամեն հասկից քեզ եմ նայում:

Ընդգծված բառերը, բանաստղերին հաղորդում են զգայական լիցք ու կայծ, խոսքը դարձնում առավել մեղեդային: Նմանահնչյուն բառերով բանաստեղծական պատկերները խոսքը դարձնում են երաժշտական տոներով հարուստ:

Բանաստղին մեղեդայնություն հաղորդելը ամեննին ինքնանպատակ չէ, այն, ըստ ամենայնի, բխում է իրեղեն նյութից, որը Հ. Թումանյանի արտահայտությամբ «ձայն ու ձև է հուշում գրողին, կերպավորում նրա ոգևորության գեղմունքը»<sup>148</sup>:

Այսպիսով՝ պատերազմական և ետպատերազմյան շրջանում հրապարակված ստեղծագործությունների տիրապետող նյութը պատերազմական հաղթական ավարտի, երիտասարդ զինվորի՝ հայրենի եզերքի կարոտի, մոր տառապալից սպասումների, հույսի ու հավատի, քաղաքացիական պարտքի գիտակցական արտահայտությունն էր: Դա էր ժամանակաշրջանի տիրապետող ոգին, որն իր արտահայտությունն ունեցավ լեզվական յուրօրինակ արտահայտչամիջոցներով:

Սովորական, նույնիսկ հասարակ բառապատկերով Գ. Սարյանը հասնում է հուզական տպավորության: Նրա բանաստեղծությունները վերհուշեր են, մտորումներ, խոստովանություններ և բնությունից քաղած տպավորությունների արծարծումներ:

Նրա բանաստեղծական ներհուն խառնվածքով է բացատրվում և՛ խոսքի արտահայտման պարզությունը, և՛ պատկերային համեմատությունների սեղմությունը, և՛ լեզվի սահունությունը:

**Лусине Туманян – Языковые средства выразительности в лирике Г. Сарьяна, посвященной Великой Отечественной войне.** – В статье рассматриваются языковые средства выразительности, которые нашли свое проявление в лирике Г. Сарьяна, посвященной Великой Отечественной. Военная лирика Г. Сарьяна более мягка, нет переполоха, но есть глубокие человеческие чувства, тревога, жгучая боль и тоска, которые получают своеобразное оформление посредством различных средств выразительности.

<sup>148</sup> Հ. Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Երևան, 1969թ., էջ 269:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՄԱՍՈՒԼԸ

ԱՆՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆ

1980-ականների կեսերին Խորհրդային Հայաստանում լույս էր տեսնում շուրջ 200 պարբերական, որոնք, ըստ իրենց բնույթի, կարելի է դասակարգել մի քանի խմբերի. հանրապետական պարբերականներ (սրանք ամենամեծ տպաքանակ ունեցողներն էին՝ կուսակցական ու պետական ղեկավար մարմինների պաշտոնաթերթերը), շրջանային թերթեր (Խորհրդային Հայաստանի վարչական 37 շրջանները նույնքան էլ թերթ ունեին, յուրաքանչյուրը տվյալ շրջանի կուսակցական շրջանային կոմիտեի ու ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի համատեղ պաշտոնաթերթն էր), քաղաքային, ավանային և գյուղական թերթեր, բազմատպաքանակ մամուլ (համալսարանների և գործարանների ներքին պարբերականներն էին), գիտական, մանկական, նաև գրական մամուլ (այստեղ առանձնանում էին «Գրական թերթ»-ն ու «Գարուն» ամսագիրը. առաջինը Հայաստանի գրողների միության, երկրորդը Հայաստանի Գրողների միության (ՀԳՄ) և Հայաստանի Լենինյան Կոմունիստական երիտասարդական միության (ՀԼԿԵՄ) համատեղ հրատարակություններն էին): Մամուլի այս օրգանների կողքին տպագրվում էր նաև ՀԳՄ-ի «Ոգնի» երգիծական հանդեսը, որն ուներ ամենամեծ տպաքանակը Խորհրդային Հայաստանի պարբերական մամուլում: «Ոգնի»-ի լայն ժողովրդականության գաղտնիքը պետական-կուսակցական ու վարչական մեքենայի և հասարակական արատների քննադատության մեջ էր՝ հաճախ սարկազմով գրված հողվածների և դիպուկ ծաղրանկարների միջոցով: Խորհրդային Հայաստանի պաշտոնական մամուլում արցախահայության պահանջատիրությանն առաջինն անդրադարձավ հենց «Ոգնի»-ն՝ տպագրելով Զորի Բալայանի «Հիմա՞ էլ լռենք» ծավալուն հողվածը: «Հրապարակայնության և վերակառուցման ազնիվ ոգով» խորագրի ներքո տեղ գտած հողվածում մտահոգություն էր հնչում, որ «այսօր խոսում ենք այն մասին, թե ինչպես են ամսագրերը տպագրում սուր ստեղծագործություններ մեր պատմության մասին, որը չի կարելի ջնջել մեր կենսագրությունից»<sup>149</sup>: Ապա ավելացնում, որ «հայ գրողներս զարմանալի կերպով ժամանակի ու ժողովրդի առաջ կանգնել ենք տառացիորեն դատարկաձեռն... Ասես հնարավոր է գտնել մեկ ուրիշ ժողովուրդ, որն ապրել է մի ճիվաղի կազմակերպած ցեղասպանությունը և մտավորականության ջարդերը հետագայում: Ինչու՞ չենք այդ մասին ազատ գրում»<sup>150</sup>: Հողվածագրին անհանգստացնում է, որ հայ գրողների թղթապանակները դատարկ են հենց այն ժամանակ, երբ «ժողովուրդն ու ժամանակը զգում են ճշմարտացի ու կրքոտ խոսքի կարիքը: Ասես մեզ հայտնի չէ, որ ազգային հարցը մեր երկրում խեղաթյուրվել է անձամբ Ստալինի կողմից, որը կամայականորեն որոշել էր, թե որ ժողովուրդն ինչ սահմաններ պիտի ունե-

<sup>149</sup> «Ոգնի», հուլիս, 1987թ.:

<sup>150</sup> Նույն տեղում:

նա...»<sup>151</sup>: «Ով է մեզ իրավունք տվել լռելու», - եզրակացնում է Զորի Բալայանը, ով պիտի դառնար արցախյան շարժման ղեկավարներից: Երգիծաթերթի այս համարձակ հրապարակումը հանդեսի համար անհետևանք չմնաց. այդ մասին հետագայում գրեց գլխավոր խմբագիրը<sup>152</sup>:

Բացի վերոնշյալից, 1980-ականների կեսերին լույս էին տեսնում նաև բազմաբնույթ պարբերականներ՝ գյուղատնտեսական, մանկավարժական, կրթական, առողջապահական, տնտեսական և այլ: Լույս էր տեսնում նաև Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը: Արցախի ու արցախահայության մասին տեղեկատվություն, հատկապես պատմական ակնարկներ տպագրում էր հենց այս պարբերականը:

1987-ի մայիսին Քաղբանտարկյալների պաշտպանության հայկական կոմիտեն հրատարակեց «Տեղեկագիրը»՝ հայերեն և ռուսերեն: Հայրենական մամուլի առաջին ծիծեռնակը՝ «Տեղեկագիր»-ը, շարված էր մեքենագիր եղանակով, էջերը համարակալված ու կազմված չէին: Ամիսներ հետո հրատարակվող ԱԻՄ պարբերականները՝ «Անկախություն» թերթն ու «Հայրենիք» հանդեսը տեղեկացնում է, որ «Տեղեկագրի» ընդամենը 7 համար է լույս տեսել՝ մինչև 1988-ի հունվար»: Փաստորեն ազատ մամուլի փշոտ ճամփան հարթելու ոչ դյուրին գործն արեց հենց այս թերթը՝ չնայած «Տեղեկագիր»-ը սահմանափակ թվով էր բազմացվում և զգալի դեր չունեցավ երկրի հասարակական և քաղաքական կյանքում<sup>153</sup>:

1987-ի սեպտեմբերին հիմնվեց Ազգային Միացյալ կուսակցությունը, որն սկսեց հրատարակել միանգամից երկու պարբերական: Հոկտեմբերին լույս տեսավ «Հրապարակայնություն» հանդեսը, նույն ամսվա 24-ին՝ «Անկախություն» շաբաթաթերթը: Առաջինն այսօր գտնել հնարավոր չէ, որովհետև չի պահպանվել թերթի և ոչ մի օրինակ, երկրորդի դեպքում վստահաբար կարելի է ասել, որ «Անկախություն»-ը համարձակ հարցեր էր առաջադրում անկախության և ժողովրդի առջև ծառայած խնդիրների վերաբերյալ՝ այդ թվում Լեռնային Ղարաբաղի:

Թերթը հենց առաջին համարից ԱԻՄ-ի նախագահ Պ. Հայրիկյանի «Մենք և մեր պայքարը» հրապարակման միջոցով կոչ է անում գործել, որովհետև «հայության ներկա կացությունն այլևս անհնար է հանդուրժել...»<sup>154</sup>:

Թեև այսօրվա չափանիշներով դիտարկելու դեպքում գուցե կարելի է ասել, որ թերթի հրապարակումները շատ դեպքերում չէին տեղավորվում լրագրության սահմաններում (ոճի, ժանրի, ձևի առումով), բայց այդ շրջանի մամուլի համար այն իսկապես ազատ ու համարձակ խոսք էր: Ինչևէ, «Անկախություն»-ը ոչ-կոմունիստական քաղաքական երկրորդ<sup>155</sup>, իսկ միութենական հանրապետության անկախությունը քարոզող առաջին շաբաթաթերթն էր ամբողջ Խորհրդային Միությունում<sup>156</sup>:

<sup>151</sup> «Ոգնի», հուլիս, 1987թ.:

<sup>152</sup> *Արամայիս Մահակյան*, «Մեր ծիծաղելի վիճակը... Փորձեր և փորձանքներ(«Ոգնու» գլխին եկած փորձանքներից մի քանիսը)», «Ոգնի», 1990, մայիս, էջ 4:

<sup>153</sup> Տես՝ *Գեորգ Շազըճեան*, «Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը», Անթիլիաս 2004թ., էջ 40:

<sup>154</sup> «Անկախություն» շ/թերթ, 24 հոկտեմբերի, 1987թ., Երևան:

<sup>155</sup> Խորհրդային Միության առաջին այլընտրանքային քաղաքական շաբաթաթերթը 1.08.1987-ին Մոսկվայում լույս տեսնող «Էքսպրես խրոնիկա» թերթն է:

<sup>156</sup> *Գեորգ Շազըճեան*, Նշվ. աշխ., էջ 42:

Դեռևս 1987-88թթ. «Անկախություն»-ը Արցախի հարցի լուծումը տեսնում էր Հայաստանի անկախության վերականգնման ու ԼՂԻՄ-ի բնակչության ինքնորոշման իրավունքը հարգելու մեջ: Ի դեպ՝ թերթը օրինականացնելու նպատակով բազմիցս խմբագրակազմը դիմել է համապատասխան մարմիններին: Խնդրանքը մերժվել է, և «Անկախություն»-ը ստիպված լույս է տեսել մինչև 1990-ի կեսերը՝ ընդհատակյա:

Զանգվածային լրատվության միջոցների պետական-կուսակցական մենաշնորհի պայմաններում Խորհրդային Հայաստանի հասարակությանը շարժման մեջ դնելու հիմնական միջոցներից մեկը ոչ պաշտոնական մամուլն էր: ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու շարժման առաջամարտիկ «Միացում» կազմակերպությունը, Իգոր Մուրադյանի ղեկավարությամբ, դեռ 1987-ի վերջին պարբերաբար թողարկում էր համարակալած թռուցիկներ՝ հայերեն և ռուսերեն անջատ տարբերակներով: Մեկ էջանոց այդ թերթիկները կարևոր դեր խաղացին հատկապես մտավորականությանը և ուսանողությանը ռոքի հանելու գործում: «Արցախի ձայն» թռուցիկն իսկապես Արցախի ձայնն էր Խորհրդային Հայաստանում, քանի որ այն տեղեկություններ էր հաղորդում ԼՂԻՄ-ում կատարվող իրադարձությունների, ժողովրդական հուզումների ու հայերի նկատմամբ իրականացվող ադրբեջանական բռնությունների մասին<sup>157</sup>:

Այսպես կոչված ձայնագուրկ մամուլի պայմաններում ավելի ակտիվ դերակատարությունը թռուցիկներինն էր: «Շաժմանը նախորդող ժամանակահատվածում մամուլը պասսիվ դերում էր, ուստի այդ շրջանն իրավամբ կարելի է համարել թռուցիկների հեղափոխություն»<sup>158</sup>:

Այդուհանդերձ, արցախահայության համար ժամանակը նոր հուն էր մտնում, մինչդեռ ժամանակի մամուլը կրավորական դիրք էր գրավել՝ ապատեղեկատվություն տարածելով կամ՝ լռելով:

1985թ. ապրիլին Մ. Գորբաչովը հայտարարեց վերակառուցման քաղաքականության մեկնարկը, ինչը խորհրդային կայսրության փոքր ժողովուրդներին հնարավորություն տվեց խոսել ազգային հարցերից<sup>159</sup>: Բայց արդյո՞ք վերակառուցումն ու հրապարակայնությունը խորհրդային Հայաստանի մամուլի համար զարգացման նոր հեռանկարներ էր բացում... Ըստ էության սկիզբ դրվեց դարաբաղյան պայքարի նոր փուլին: Այդ մասին էին վկայում «Ղարաբաղը վերակառուցման քննությունն է» կամ «Ղարաբաղը վերակառուցման փորձաքարն է» և նման բովանդակությամբ մի շարք պաստառներ, որոնց կարելի էր հանդիպել առաջին ցույցերի ու հանրահավաքների ժամանակ<sup>160</sup>:

Երկրում սկսված բարեփոխումները հույս ներշնչեցին արցախցիներին, և նրանք պատգամախոսների մի քանի խմբեր ուղարկեցին Մոսկվա, հազարավոր ստորագրություններով խնդրագիր հղվեց Մ. Գորբաչովին՝ Արցախը գերությունից ազատելու պահանջով<sup>161</sup>: Ասել է, թե շարժման բուն մեկնարկին նախորդել էր նախապատրաստական բուռն շրջան:

<sup>157</sup> **Գեորգ Եազրճևան**, «Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը», Անթիլիաս 2004թ., էջ 48:

<sup>158</sup> www.yerkirmedia.am ՀՀ-ում ԼՂՀ I ներկայացուցիչ Մանվել Սարգսյան, 20 փետրվար, 2010թ.:

<sup>159</sup> Տես՝ **Թ. Հակոբյան** «Կանաչ ու սև. Արցախյան օրագիր», Երևան-Ստեփանակերտ, 2008 թ. էջ 426:

<sup>160</sup> www.yerkirmedia.am ՀՀ-ում ԼՂՀ I ներկայացուցիչ Մանվել Սարգսյան, 20 փետրվար, 2010թ.:

<sup>161</sup> **Շ. Մկրտչյան** «Արցախ», Երևան 1991թ., էջ 74:



Փաստենք, որ 1987թ. հոկտեմբերի 18-ին Երևանում անցկացվել է դարաբաղյան հարցով առաջին ցույցը՝ ի բողոք հայաբնակ Չարդախլու գյուղում շարունակվող բռնությունների: Այս մասին ընթերցողներին տեղեկացնում է միայն «Անկախություն»-ը՝ «Չարդախլուի դեպքերի մասին» հրապարակման միջոցով<sup>162</sup>: Աղբրեջանի Շամխորի շրջանի Չարդախլու հայկական գյուղում ամռանը վեճ էր ծագել տեղի բնակիչների և շրջանի աղբրեջանական ղեկավարության միջև: Գյուղացիները դեմ էին կոլտնտեսության նոր ղեկավարի նշանակմանը: Ամիսներ շարունակվող վիճաբանությունները հոկտեմբերի կեսերից պարբերաբար վերածվում էին բռնությունների...

Ի դեպ՝ 1987-ի աշնանը Երևանում կազմակերպվում էին բնապահպանական խնդիրներին նվիրված հանրահավաքներ: Սկիզբ էր առնում էկոլոգիական շարժումը:

«Վերջապես սուտ, բթացնող քարոզների սարսափի թմբիից արթնացած հայ ժողովուրդը համարձակվեց թեթևակի բացել աչքերը... Եվ հոկտեմբերի 17-ին մտավորականությունը դուրս եկավ ցույցի: Ոտքի կանգնեց նաև Սփյուռքը՝ սատարելու կենսաբանական եղեռնի ենթարկվող իր եղբայրներին...»<sup>163</sup>:

«Էկոլոգիական շարժումն առաջին հերթին ակտիվ հասարակության նախապատրաստումն էր: Նոր իրավիճակի ընկալման փոփոխությունից օգտվելով՝ այն ակտիվիստները, ովքեր ձևավորում էին Շարժումը, մարդկանց սկսեցին կանչել երթերի ու ցույցերի»<sup>164</sup>: Հենց այդ հանրահավաքների ժամանակ էլ առաջին անգամ բարձրաձայնվում է Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու հարցը:

Ինչ վերաբերում է բնապահպանական խնդիրներին, ապա դրանք Հայաստանում սրվել էին դեռևս 1980-ականներին: Բնապահպանական շարժումը ձևավորվել էր մի քանի խնդիրների շուրջ՝ ստումակայան, Սևանա լիճ, «Նաիրիտ» գործարան, Երևանի, Ալավերդու, Վանաձորի օդի աղտոտվածություն<sup>165</sup>: «Կենսաբանական ցեղասպանությանը» նվիրված հրապարակումներն ամենաշատը հանդիպում ենք «Անկախության» էջերում: Ըստ բնապահպանների՝ 1987-88թթ. էկոլոգիական ուղղվածություն ունեցող շարժումը համազգային անկախության երանգ ստացավ և դարձավ ավելի շուտ քաղաքական, քան էկոլոգիական շարժում:

Այս թեմաները դուրս էին լրագրողների ուշադրությունից և մեր դիտարկմամբ՝ իրադրությունը չի փոխվում նաև 88-ից հետո, երբ իրադարձություններն արագ զարգացում են ունենում:

Խորհրդային Հայաստանում բավական մեծ տպաքանակ ունեցող Հայաստանի կոմկուսի, Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի և Մինիստրների խորհրդի օրգան «Սովետական Հայաստան»-ը լուր էր: Թերթի հունվարի 1-ից մինչև փետրվարի 21-ի համարներում գոնե մեկ անգամ չի հիշատակվել Լեռնային Ղարաբաղ անունը: Փոխարենը ԽՍՀՄ ԿԿ պլենումի որոշումներն են, Կենտկոմի քաղբյուրոյի նիստի արձանագրությունները: Մի խոսքով՝ կյանքը ընթանում էր բնականոն

<sup>162</sup> «Անկախություն» շ/թերթ, 2 հունվարի, 1988թ., Երևան:

<sup>163</sup> Նույն տեղում:

<sup>164</sup> www.yerkirmedia.am ՀՀ-ում ԼՂՀ I ներկայացուցիչ Մանվել Սարգսյան, 20 փետրվար, 2010թ.

<sup>165</sup> Տես՝ Թ. Հակոբյան «Կանաչ ու սև. Արցախյան օրագիր», Երևան-Ստեփանակերտ, 2008 թ. էջ 432:

հունով, այնպես, ինչպես նշել էր ԽՄԿԿ Կենտկոմի գլխ. քարտուղար Ս. Ս. Գորբաչովը ժողովրդին հղած ամանորյա ուղերձում՝ միաժամանակ չմոռանալով ընդգծել. «...Հասարակական կյանքում ավելի ու ավելի են հաստատվում լայն դեմոկրատիզմն ու հրապարակայնությունը...»<sup>166</sup>: Միայն փետրվարի 21-ի համարի վերջին՝ 4-րդ էջում տպագրված է «Արմենայրես»-ի հաղորդագրությունն այն մասին, որ «վերջին օրերս Աբովյան քաղաքի բնակիչները մտահոգություն են հայտնում կենսապատրաստուկների փորձնական գործարանի ընդլայնման և վերակառուցման առթիվ: Հավաքվելով միտինգի՝ նրանք արտահայտվեցին այդ օբյեկտում աշխատանքները դադարեցնելու օգտին, պատճառաբանելով, թե իբր արտադրությունը էկոլոգիապես անվտանգ չէ: Փետրվարի 19-ին Աբովյան քաղաքի մի խումբ բնակիչների ընդունեց Հայկական ՄՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը... Տրվեցին բացատրություններ: Ստեղծված է բարձրացված հարցերի քննարկման կառավարական հանձնաժողով: Միննույն հաղորդագրությունը տեղ է գտնում նաև «Երեկոյան Երևան»-ի<sup>167</sup> վերջին էջում:

Հունվարի 8-ին ՄՄԿԿ ԿԿ տեղի է ունենում հանդիպում «մասսայական ինֆորմացիայի միջոցների, գաղափարախոսական հիմնարկների և ստեղծագործական միությունների ղեկավարների հետ»: Գորբաչովի ելույթին հաջորդում է հարց ու պատասխան: «Դեմոկրատացումը վերակառուցման էությունն է, սոցիալիզմի էությունը»<sup>168</sup> երեք էջանոց հրապարակման մեջ դարձյալ չենք հանդիպում Ղարաբաղ անունը:

Ինչպես և նախատեսված էր, 1988-ի փետրվարի 12-ին Ստեփանակերտում, Մարտակերտում, Հաղրություն, Ասկերանում կայացած կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովներում, սակայն, հակառակ Ադրբեջանի ղեկավարության ցանկության, պաշտպանվեց հայ ազգաբնակչության՝ մարզը մայր Հայաստանի հետ վերամիավորելու ձգտումը: Ելույթներ են ունենում Ստեփանակերտի ձեռնարկությունների ղեկավարները և դատապարտում Բաքվի՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ տասնամյակներ շարունակվող խտրական քաղաքականությունը:

Մարզի բոլոր քաղաքներում և շրջկենտրոններում անցկացվում են միտինգներ և ցույցեր: Սակայն առաջինը Հաղրույթ ավանում պիտի զգացվեր ազատատենչության ու արդարության շունչը: Դա 1988-ի փետրվարի 12-ն էր: Առաջին ստորագրահավաքը, առաջին հանրահավաքը սկսվեց Հաղրույթում, թերևս այն պատճառով, որ Շարժման առաջին ակտիվիստներն ու նախաձեռնողները արմատներով կամ ծնունդով հենց այդ շրջանից էին:

Արցախում առաջին զանգվածային ցույցերին՝ սկիզբ առած պատմական իրադարձություններին լրատվական առաջին անդրադարձը կատարվեց մեկ շաբաթ անց միայն, այն էլ պաշտոնական հաղորդագրության տեսքով: Իսկ ժողովրդական-հասարակական կենդանի արձագանքներ տպագրելու համար մարզային թերթին պետք եղավ ևս 10 օր:

Լեռնային Ղարաբաղի շրջաններ էին մեկնել մարզի տարբեր պաշտոնյաներ՝ փորձելով տեղերում «հանգցնել» ժողովրդական ընդվզումը: Մարզխորհրդի

<sup>166</sup> «Մովետական Հայաստան», հունվարի 1, 1988թ. N 1(20322):

<sup>167</sup> «Երեկոյան Երևան», փետրվարի 22, 1988թ.:

<sup>168</sup> «Գրական թերթ» N3(2371), 15 հունվարի, 1988թ.:

գործկումի նախագահ Վլադիմիր Օսիպովը ժամանեց Հաղորոթ, ուր մոտ հազար մարդ էր հավաքվել. Հաղորոթի համար չչսված բան<sup>169</sup>: Այս մասին անդրադարձ կա միայն «Անկախություն» շաբաթաթերթի էջերում:

Մարզկումի նախկին առաջին քարտուղար Կևոբկովի անօրինականությունների մասին մամուլը պիտի բացահայտ խոսի միայն 88-ի աշնանը: «Լեռնային Ղարաբաղ. ոչ հեռու անցյալից» խորագրի ներքո կարդում ենք Ստեփանակերտի քաղաքովետի գործկումի կուլտուրայի բաժնի վարիչ Լևոն Մկրտչյանի «Ղարաբաղյան ճակատագիր» հուշագրությունից մի հատված: Այնտեղ ներկայացված է 1975թ. մարտին տեղի ունեցած ԼՂ-ի կուսակցության մարզային կոմիտեի հանրահայտ պլենումում հնչած Կևոբկովի 3 ժամից ավելի տևած զեկուցումը: Այն հնչեց իբրև մարզի աշխատավորության, նրա մտավորականության դատավճիռ: Ըստ զեկուցման՝ «ԼՂ-ն դարձել է ազգամուլների երկրամաս»: Անդրադառնալով կևոբկովյան տարիներին մարզի վիճակին, «Երեկոյան Երևան»-ը նկատում է. «Ղարաբաղը կաթսայում, թե՛մ կրակի վրա եռում էր, բայց դեռ չէր պայթում: Դեռ դիմանում էր»:

Հաղորդում սկսված հանրահավաքը հաջորդ օրը տեղափոխվում է Ստեփանակերտ: Իսկ փետրվարի 17-ին (երեք օր առաջ ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի նստաշրջանից) Ջորի Բալայանը ելույթ է ունենում ՄԱԿ-ում՝ երեսունից ավելի պետությունների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ: Ելույթի մեծ մասը նվիրված էր Ղարաբաղի թեմային: Ուշագրավն այն է, որ գրեթե ոչ ոք չգիտեր, թե այդ ինչ Ղարաբաղ է և որտեղ է գտնվում<sup>170</sup>:

Փետրվարի 18-ին տեղի է ունենում Աբովյանի կենսապատրաստուկների գործարանի բանվորների բողոքի ցույցը: Մի քանի հարյուր ցուցարար ոտքով շարժվում է Երևան՝ բողոքելու գործարանում տեխնոլոգիական վնասակարության հետ կապված խնդիրներից և պահանջելու, որ գործարանը փակվի: Ցուցարարները համաձայնում են իրավիճակն ուսումնասիրելու նպատակով մասնագիտական հանձնաժողով ստեղծելու առաջարկին: Այս ցույցի մասին միայն «Անկախությունն»<sup>171</sup> է գրում: Հաջորդ օրը՝ փետրվարի 19-ին, Թատերական հրապարակում սկսվում են հանրահավաքները, որոնք արդեն կապ չունեին բնապահպանական խնդիրների հետ: Հրապարակում քննարկվող գլխավոր թեման Ղարաբաղն էր<sup>172</sup>:

Փետրվարի 19-ին հրապարակվեց «Ազերիսֆորմ»-ի հաղողագրությունն այն մասին, որ ԽՄԿԿ Կենտկոմը տարածքային ոչ մի հարց չի քննարկել և չի էլ քննարկելու:

Ինչևէ, Ղարաբաղն արհեստական հարց չէր, և այդ կնճիռը գալիս էր 20-րդ դարի առաջին տասնամյակներից: Խորհրդային յոթ տասնամյակներում այդ հարցը քննարկվել է, այսինքն՝ Ղարաբաղյան խնդիրը շարունակ եղել է քաղաքական օրակարգում, բայց ոչ մամուլի դիտակետում:

Մինչև Ղարաբաղյան Շարժման բուն մեկնարկը՝ 88-ի փետրվարին ու նաև դրան հաջորդող ամիսներին խորհրդահայ մամուլում քիչ կամ թերևս աննշան

<sup>169</sup> Թ. Հակոբյան «Կանաչ ու սև. Արցախյան օրագիր», Երևան-Ստեփանակերտ, 2008 թ. էջ 28:

<sup>170</sup> Զ. Բալայան «Դժոխք և դրախտ», Երևան 1995թ. էջ 85:

<sup>171</sup> «Անկախություն», 22 փետրվարի, 1988թ.:

<sup>172</sup> Թ. Հակոբյան Նշվ. աշխ., էջ 14-16:

հրապարակումներ կարելի է գտնել Ղարաբաղի դարավոր պատմության մասին, որը հայոց պատմության անբաժան մասն է: Մա ևս պակաս կարևոր հարց չէ. հայկական այդ երկրամասում պահպանվող քրիստոնեական հազարավոր վանքերի ու եկեղեցիների, կոթողների և այլ հուշարձանների մասին մամուլը տեղեկություններ չի հաղորդում: Նման բովանդակությամբ պատմական անդրադարձ հիշեցնող հրապարակումներ կարելի է գտնել թերթերի՝ միայն 88-ի փետրվարից հետո լույս տեսած համարներում: Այնինչ բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ անգամ ամերիկյան մամուլի արխիվներում առկա բոլոր հրապարակումներում Արցախը հիշատակվում է որպես «հայկական երկրամաս» կամ «Հայաստանի մարզ՝ Ղարաբաղ» և այլն<sup>173</sup>:

«Washington Post»-ը գրել է, որ «Ղարաբաղը բոլշևիկների՝ 1923թ. որոշմամբ Ադրբեջանին անցած ոչ մեծ լեռնային տարածք է»<sup>174</sup>:

Անշուշտ, խորհրդահայ մամուլը հնարավորություն չունեի բարձրաձայնելու Լեռնային Ղարաբաղի հայության դեմ ադրբեջանցիների իրագործած քաղաքական ցեղասպանության մասին, որը միտված էր մի նպատակի՝ արգելակել հայկական երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացումը, բնակչության աճը, ոտնահարել հայ բնակչության շահերը, իրավունքները և ստեղծել այնպիսի իրավիճակ, որը կարագացներ հայրենի երկրամասից բնիկ հայերի դուրսադուրը:

Ուսումնասիրելով Ղարաբաղի հայ բնակչության Ադրբեջանի լծի տակ եղած 70 տարվա կյանքը (1921-1988)՝ գալիս ենք այն համոզման, որ այդ երկրամասում ոտնահարվել են մարդու գրեթե բոլոր իրավունքները: «Տասնամյակներ շարունակ այստեղ իշխել է կամայականությունը...»<sup>175</sup>. մեջբերումը Հ. Պողոսյանի «Ղարաբաղ. ըմբռնման ուղին» ծավալուն հրապարակումից է: Ու թեև Ղարաբաղյան հիմնախնդիրը բազմաթիվ ակունքներ ունի, բայց, ցավոք, դրանց որոնումը խորհրդահայ մամուլում մինչև 1988 թվականը, անիմաստ է՝ չնայած պատմական փաստերը խնդրի մասին շատ են ու անվիճելի:

«Ինչու՞ էին արցախահայության բողոքները տասնյակ տարիներ մնում անհետևանք: Ինչու՞ Ղարաբաղի համար կենսական բոլոր հարցերը քննարկվում են նրա սահմաններից դուրս, այն էլ՝ առանց Ղարաբաղցիների մասնակցության (Ղարաբաղը բանակցային կողմ չէ մինչ օրս - Ա.Մ.): Ինչու՞ էին քողարկվում դարաբաղցիների հանդեպ կատարվող հանցագործությունները»: Այս և բազմաթիվ այլ հարցերի մասին խոսելը (առավել ևս մամուլի միջոցով) սովետական իշխանության օրոք, մեղմ ասած, այնքան էլ հեշտ չէր, քանի որ նման հարցադրումները, որպես կանոն, դիտվում էին իբրև հանցանք, լավագույն դեպքում՝ մնում անարձագանք:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո 1917թ-ի դեկտեմբերի 16-ին Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիում ստեղծվեց Հայոց ազգային խորհուրդ, որը 1918-ի հունիսի 22-ին վերանվանվեց Լեռնային Ղարաբաղի կառավարություն: Այդ ժամանակ Ղարաբաղցիների հիմնական պայքարն ուղղված էր 1918թ.-ին Բաքվում թուրք օկուպանտների կողմից ստեղծված մուսավաթական Ադրբեջանի հանրապետության նվաճողական քաղաքականության դեմ, որն առաջին իսկ օրից

<sup>173</sup> www.armor.am. Հ. Նահապետյան, «ԱՄՆ-ի մամուլը ԼՂ-ի մասին՝ 1918-1988թթ.»:

<sup>174</sup> "Washington Post", 29 փետրվարի, 1988թ.:

<sup>175</sup> Հ. Պողոսյան «Ղարաբաղ. ըմբռնման ուղին». «Հայրենիքի ձայն», օգոստոսի 24, 1988թ.:

ձգտում էր տեր դառնալ Լեոնային Ղարաբաղին: Մուսավաթականները հրահրեցին ազգամիջյան ընդհարումներ, կործանեցին հայկական մի շարք բնակավայրեր, հրդեհի ու կողոպուտի մատնեցին Շուշի քաղաքի հայկական թաղամասերը<sup>176</sup>: Այս մասին բավական մանրամասն ներկայացնում է Բ. Ուլուբաբյանը «Լեոնային Ղարաբաղ. պատմաաշխարհագրական ակնարկ» մեծածավալ հրապարակման մեջ: Թերթի մի քանի համարներում շարունակաբար հրատարակվող այս պատմական անդրադարձը, ինչպես Ղարաբաղին առնչվող գրեթե ցանկացած նյութ, առանց լուսանկարների է: Հոդվածագիրը փորձում է, պատմական փաստերը մեկտեղելով, բացատրել, թե «ինչպես եղավ, որ ԼՂ-ն առնվեց Սովետական Ադրբեջանի սահմանների մեջ»<sup>177</sup>:

Պատմական գիտությունների թեկնածու Հրանտ Աբրահամյանի ծավալուն անդրադարձը հայկական Արցախին է վերաբերում: «Արցախյան գոյամարտ. 1917-1923թթ.» հրապարակման մեջ հեղինակը ներկայացնում է Արցախն ու արցախցիներին՝ հիշելով անգամ «1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Արցախի ազատագրումը պասկական լծից»: Այնուհետ մեկ առ մեկ ներկայացնում 1917-ից Արցախում տեղի ունեցած հիշարժան իրադարձությունները, քաղաքական ծանր իրադրությունը մինչև 1918-ին Շուշիում անցկացված Ղարաբաղի հայության առաջին համագումարը: «Ղարաբաղը մերժեց Ադրբեջանին ենթարկվելու պահանջը», - հիշեցնում է պատմաբանը: Հ. Աբրահամյանի պնդմամբ՝ «Ղարաբաղի հայության առաջին համագումարը, ժամանակի մամուլի վկայությամբ, ստեղծելով կառավարություն, դրանով իսկ հռչակեց իր «անկախության իրավունքը»<sup>178</sup>, բայց...:

Լրագրող Հովհ. Ինճիկյանի «Հեղափոխության մարտիկը» հրապարակումը, որը նվիրված է Բ. Կնունյանցի 110-ամյակին, անդրադառնում է նաև «հինավուրց Շուշիի, Ալեքսանդրապոլից հետո երկրորդ զարգացած մշակութային կենտրոնին»<sup>179</sup>:

Որոշ պատմաբաններ հաստատում են, թե ղարաբաղյան շարժումն սկսվել է 1921թ. մարտի 16-ին, երբ Մոսկվայում ստորագրվեց ռուս-թուրքական պայմանագիրը<sup>180</sup>:

Երբ Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր (1920 թվ. նոյեմբերի 29), Բաքվից հեռագրում են, որ «այսօրվանից Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած տարածքային վեճերը համարվում են վերացված» և «Լեոնային Ղարաբաղը... Նախիջևանը ճանաչվում են Հայկական Խորհրդային Հանրապետության մասը»: Այդ առնչությամբ «Պրավդա» թերթում տպագրվել էր Ստալինի կոչը՝ ուղղված հայ ժողովրդին: Այնուհետև ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն իր 1921 թվականի հունիսի 3-ի նիստում միաձայն որոշում է. «Հաստատել Լեոնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելիության մասին ՀԽՍՀ կառավարության դեկլարացիան»: Մույն դեկլարացիան տպագրում է նաև «Բակինսկի ռաբոչի» թերթը<sup>181</sup>: Թվում էր, թե տարածքային վիճելի հարցերը մեկընդմիջտ կարգավորվեցին, բայց

<sup>176</sup> «Հայրենիքի ձայն», հունիսի 15, 1988թ. N 25 (1193), Երևան:

<sup>177</sup> Նույն տեղում, հունիսի 22, 1988թ., Երևան:

<sup>178</sup> «Հայրենիքի ձայն», նոյեմբերի 2, 1988թ., Երևան:

<sup>179</sup> «Սովետական Հայաստան», նոյեմբերի 24, 1988թ., Երևան:

<sup>180</sup> **Զ. Բալայան** «Դժոխք և դրախտ», Երևան 1995թ. էջ 10:

<sup>181</sup> «Бакинский рабочий» 22 июня 22, 1921:

Ադրբեջանի ղեկավարները կտրուկ շրջադարձ կատարեցին իրենց դիրքորոշման մեջ: Թերթը չի հիշեցնում, թե ինչպես 1921 թվականի հուլիսի 4-ին ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն վերստին անդրադարձավ ԼՂ-ի վարչատարածքային պատկանելիության հարցին և որոշեց երկրամասը միացնել Խորհրդային Հայաստանին: Սակայն մեկ օր հետո բյուրոն հայկական մարզը հանձնեց Խորհրդային Ադրբեջանին՝ խոստանալով մարզային «ինքնավարության լայն իրավունքներ»: «Հայրենիքի ձայն»-ը գրում է, որ անտեսվեցին Լեռնային Ղարաբաղի բնակչության 96,4 տոկոսը կազմող հայերի կամքը, պատմամշակութային և ազգային-տարածքային գործոնները (ի դեպ՝ պատմական փաստերը մեկտեղելով՝ թերթը փորձում է բացատրել, թե «ինչպես եղավ, որ ԼՂ-ն առնվեց Սովետական Ադրբեջանի սահմանների մեջ»<sup>182</sup>):

Այնուամենայնիվ, 1923 թվականին ստեղծվում է ԼՂԻՄ-ը, որը սակայն իր մեջ չէր ներառել հայկական բոլոր գավառները: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի խորհրդահայ թերթերը չեն խոսում այն մասին, որ նորաստեղծ ինքնավար մարզի վարչատարածքային վերաձևումներ կատարելիս նրանից պոկեցին գրեթե կեսը, իսկ հայերի պահանջներից մեկը, մարզը «Արցախի հայկական ինքնավար մարզ» վերանվանելը, մնաց անարձագանք:

Հաջորդող տարիներին ԼՂԻՄ-ն Ադրբեջանի կազմից հանելու և ՀԽՍՀ-ին միավորելու հարցով ղարաբաղցիները բազմիցս դիմեցին ԽՍՀՄ կենտրոնական իշխանության ղեկավարներին: Սակայն կենսական հարցը շարունակ փակուղի էր մտցվում: Փակուղում էր նաև մամուլը, երբ վերակառուցում, նորացված գաղափարախոսություն անվան տակ լռում էր իր համար այնքան կենսական հարցի մասին:

Ղարաբաղի հիմնահարցի մասին պատմական անհերքելի փաստերը չեն լռում: Լուռ էր միայն մամուլը, քանզի նման փաստերը չէին կարող տեղ գտնել խորհրդային մամուլում, սակայն ուշագրավ է, որ Շարժման առաջին, բայց խորհրդային վերջին տարիներին մամուլի էջերում կային այնպիսի հրապարակումներ, որոնք վկայում էին Ղարաբաղի հայկականության մասին, ներկայացնում նրա պատմությունը: Թեպետ դրանք քիչ թիվ են կազմում, բայց հիշատակության արժանի են: Այդ հրապարակումները, հաշվի առնելով ժամանակաշրջանը, կարելի է որակել մեկ բառով՝ համարձակ, ավելի ճիշտ՝ զգուշավոր համարձակություն:

Լրագրող Մավր Դանիելյանը «Ղարաբաղյան հանդիպումներ» խորագրի ներքո «Կաչաղակաբերդը» հոդվածում պատմում է Ստեփանակերտից Գանձասար տանող ճանապարհի, ավտոբուսի ուղևորների, Կաչաղակաբերդի մասին և առիթը բաց չի թողնում խոսելու Արցախի պատմության, մեղիքությունների, հարուստ անցյալի ու ամենակարևորը՝ դրանց հայկականության մասին: «Որքա՞ն բերդեր ու վանքեր կան Ղարաբաղում». հարցի պատասխանը հեղինակը տալիս է Կիրակոս պատմիչի, Բաֆֆու, Լեռնի աշխատություններից արված հիշատակումների միջոցով<sup>183</sup>:

Նույն պարբերականի «Երախտավոր անուններ» խորագրի ներքո Ս. Ավագյանի «Լեռնային Երկրամասի հայրենանվեր գեղանկարիչը» հրապարակումը

<sup>182</sup> «Հայրենիքի ձայն», հունիսի 22, 1988թ., N 26 (1194), Երևան:

<sup>183</sup> «Երկրոյան Երևան», հուլիսի 27, 1988թ., Երևան:

ներկայացնում է արցախցի գեղանկարչուհի Մարգարիտ Ալեքսանյանի կյանքն ու գործունեությունը: Այս անգամ ևս հեղինակը ընթերցողներին հիշեցնում է «Արցախի՝ իբրև անվանի մարդկանց հայրենիք»-ի մասին: Մարդիկ, որոնք անջնջելի հետք են թողել հայ մշակույթի և ընդհանրապես պատմության մեջ<sup>184</sup>:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում խորհրդահայ մամուլում Արցախի պատմության ու հիմնախնդրի մասին ամենաուշագրավ, ամենահետաքրքիր ու ամենաձավալուն տեղեկատվության հանդիպում ենք Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի «Հայրենիքի ձայն» թերթում<sup>185</sup>: Լրագրող Թ. Սաֆարյանի «Կանչ» հրապարակման մեջ կարդում ենք հեղինակի մտորումները, ով երկար տարիներ բացակայել է հարազատ գյուղից ու մի օր վերադառնալով շրջում է հարազատ վայրերով, հանդիպում հարևաններին, որոնցից քչերն են մնացել ու խորհում է. «Ցավալի է, շատ ցավալի, որ մենք այսօր միայն հասկացանք այն, ինչը ուրիշների համար Արցախում և նրա շուրջ 1921-ից սկսած իրականացվող ծրագիր էր: Ու ը էինք, երբ նրանք խեղաթյուրում էին մեր պատմությունը, երբ հեղափոխության լոզունգներով առ այսօր հողափոխություն են անում»<sup>186</sup>:

«Այս ժողովուրդը վճռական է», - պատասխանելով Բակուր Կարապետյանի հարցին՝ ասել է ռուս անվանի բանաստեղծ, ՄՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար, ՄՍՀՄ պետական և Եղիշե Չարենցի անվան մրցանակների դափնեկիր, սոցիալիստական աշխատանքի հերոս Միխայիլ Դոլդինը: Հայաստան այցելության ժամանակ նա եղել է նաև ԼՂԻՄ-ում<sup>187</sup>:

Ըստ էության՝ Ղարաբաղի՝ տարիների ընթացքում ավելի խորացող ու խճճվող խնդիրը ժամանակագրական առումով կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի:

Առաջին ընդգրկում է 18-րդ դարի 20-ականներից մինչև 19-րդ դարի սկիզբը, երբ հայ ազատագրական ուժերը փորձում էին եվրոպական քրիստոնյա պետությունների օգնությամբ ազատագրել Հայաստանը և վերստեղծել հայկական պետականությունը: Փոխարենը հայկական երկրամասում արհեստականորեն ստեղծվում է Ղարաբաղի մուսուլմանական խանությունը:

Երկրորդ փուլը ընդգրկում է 1800թ. մինչև 1917թ. ռուսական հոկտեմբերյան հեղափոխությունը: Այդ ժամանակաշրջանում ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների թատերաբեմում հայտնված Հայաստանը, Արցախը մեծ փորձությունների ենթարկվեցին, արցախագետ Ա. Հակոբջանյանի դիտարկմամբ, Ղարաբաղը բաժանելով Լեռնային և Դաշտային մասերի: Դաշտայինը հայաթափված համարելով՝ օղակը սեղմեցին Լեռնային Ղարաբաղի պարանոցին<sup>188</sup>:

Երրորդ փուլը սկսվեց Արևելյան Անդրկովկասում՝ Ադրբեջանի հանրապետություն ստեղծելուց հետո (1918թ. հուլիսի 4-ին իբրև վարչական տարածք) և ավարտվեց 1988թ. արցախյան Շարժմամբ: Արցախցիների փայլուն հաղթանակով

<sup>184</sup> «Երեկոյան Երևան», հոկտեմբերի 28, 1988թ., Երևան:

<sup>185</sup> «Հայրենիքի ձայն», օգոստոսի 31, 1988թ., Երևան:

<sup>186</sup> Նույն տեղում, սեպտեմբեր 14, 1988թ., Երևան:

<sup>187</sup> «Հայրենիքի ձայն», մայիսի 11, 1988թ. N 20 (1188), Երևան:

<sup>188</sup> Ծ. Մկրտչյան «Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան», Ստեփանակերտ 2003, էջ 27:

ավարտվեց Ադրբեջանի ԽՍՀ-ին բռնակցված Լեռնային Ղարաբաղի 70 տարվա պատմությունը:

Թերթի մի քանի համարներում տպագրվել է Բագրատ Ուլուբաբյանի «Լեռնային Ղարաբաղ. պատմաաշխարհագրական ակնարկ» հրապարակումը՝ հատվածաբար: Այն ներկայացնում է Արցախի պատմությունը՝ սկսած մ.թ.ա.-ից մինչև 1920-ականները<sup>189</sup>: Ի դեպ՝ ինչպես այս, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի պատմությանը վերաբերող մյուս բոլոր հրապարակումները տպագրված են առանց լուսանկարների:

Այստեղ, սակայն, հնարավոր չէ ամբողջությամբ բացահայտել բոլոր այն ոճրագործությունները, որոնք հայկական Ղարաբաղում կատարվել էին 70 տարիների ընթացքում, առավելապես այն պատճառով, որ մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող մամուլը հնարավորություն չի էլ ունեցել արձագանքել իրադարձություններին:

Ի վերջո՝ իրադարձությունները պիտի զարգանային նոր թափով ու հզոր ալիք դառնային: Սկսվում ու թափ էր առնում դարաբաղյան շարժումը, միաժամանակ կարևոր շրջան էր սկսվում նաև հայաստանյան մամուլի համար. պատասխանատվության ու անպատասխանատվության շրջան, երբ մամուլը փորձում էր արձագանքել զարգացող իրադարձություններին և երբ լռեցվում էին մամուլի արձագանքները: Ամեն ինչ առջևում էր, իսկ դրա համար պիտի բացվեր 88-ի փետրվարի 20-ի պատմական առավուտը:

**Anna Mkrtichyan – *The birth of the Karabagh movement and the press.*** – During the last years of the soviet union period in Armenia were published more than 200 newspapers. We can separate them in some groups- national, regional, political and so on. There were also some kinds of newspapers which were cultural, educational, social, economical and etc. For example “Vozni” (Hedgehog) had the most printing in the Soviet Armenia and it was the first magazine where was published the first article about Karabagh and its problems. Zori Balayan wrote about the goals of the people of Nagorno Karabagh. Of course for this article “Vozni” would be frustrated in future. Some years ago the editor wrote about it. Another newspaper “Hayreniqi dzayn” (The voice of motherland) usually established historical articles about Nagorno Karabagh, about the people, nature, traditions, culture, churches and so on. Of course “Ankaxutyun” (The independence) was the free newspaper in those years, but it was illegal and had a short life.

As the press didn't have any chance to present the reality and show the response of Karabakh movement, it began the revolution of leaflets. At that time they did their best to provide the information.

So the period was very historical and difficult, but unfortunately the press wouldn't be able to do its functions. They presented only the messages of information agencies or they kept silence.

Everything was changed after the 20<sup>th</sup> of February in 1988. On this day it took place a historical session in NK. As a result- a decision about unification of Karabagh with Armenia. It meant new period for the press.

---

<sup>189</sup> «Հայրենիքի ձայն», հունիսի 8, 1988թ., N 24 (1192), Երևան:



# ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ԽՄԲԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԲԱՐՈՑԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՎՐԱ

### ԱՆՈՒՇ ՈՍԿԱՆՅԱՆ

Ժամանակակից աշխարհում ցանկացած տեսակի աշխատանքային և գործարար հարաբերություններում օրեցօր ավելի մեծ ուշադրություն է դարձվում միջանձնային հարաբերություններին, անձնակենտրոն գործողություններին, որտեղ որպես կենտրոնական օղակ գտնվում է անձը իր ողջ հոգեբանական ու ֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Յուրաքանչյուր կոլեկտիվում և՛ դեկավարներին, և՛ ենթակաների շարքում լինում են այնպիսի մարդիկ կամ մարդկանց խմբեր, որոնց տրամադրությունը, վարքը, գործողությունները և ընդհանրապես ներկայությունը ազդում են ողջ կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Բազմաթիվ սոցիալ-հոգեբանական տեսություններ [Բիհեյվիորիզմ, Բանդուրայի սոցիալական ուսուցման տեսություն և այլն] ուսումնասիրել են մարդկային հարաբերությունները, միջանձնային և միջխմբային կոնֆլիկտները, դեկավար-ենթակա փոխհարաբերությունների առանձնահատկությունները, և եկել այն եզրակացության, որ յուրաքանչյուր խնդիր կամ կոնֆլիկտային իրավիճակ, որն առաջանում է կոլեկտիվում, ունի իր յուրահատուկ հիմքն ու համապատասխան պատճառները [Мананикова, “Психология управления”]: Մակայն գիտության մեջ սակավ ուշադրության է արժանացել մեր կողմից առաջադրված թեման, որը հստակ տարրանջատում է խմբի ներսում առաջացած «վիրուսներին ու հակավիրուսներին» և աշխատանքն սկսում այն ազենտներից, ում միջոցով վարակը տարածվում և ախտահարում է ամբողջ կոլեկտիվը:

Վերոհիշյալ տիպին պատկանող անձանց միջանձնային հարաբերություններն էլ իրենց ազդեցությունն են ունենում անձնակազմի մյուս աշխատակիցների աշխատունակության, տրամադրության ու տրամադրվածության վրա: Այսպիսով, նկարագրված խմբերին և անհատներին անվանելով «Վիրուս»՝ գտնում ենք, որ ինչպես ցանկացած կենսաբանական օրգանիզմում, կարելի է ստեղծել նաև «Հակավիրուս», որի օգնությամբ հնարավոր կլինի մոբիլիզացնել համապատասխան ուժերն ու ռեսուրսները հանուն աշխատանքային խմբի կամ կազմակերպության համընդհանուր նպատակների ու շահերի: Մույն հոդվածում կներկայացնենք «Վիրուս» և «Հակավիրուս» խմբերի միջև փոխհարաբերությունների ազդեցությունը աշխատանքային խմբի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա:

Այսպիսով, աշխատանքային խմբերում լինում են այնպիսի անդամներ, որոնց վարքային որոշակի դրսևորումները հանդես են գալիս որպես խմբի վիրուս և ախտահարում կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտը: Մրանից բխում են հաջորդ կետերը՝ «Վիրուս» խմբի ազդեցությունը կարելի է չեզոքացնել՝ ստեղ-

ծելով «հակավիրուս» խմբեր: «Հակավիրուս» խմբի մեջ կարող են ընդգրկվել ադեկվատ ինքնագնահատականով, հուզականորեն հավասարակշռված, էմպատիկ կարողությամբ օժտված, բարձր պատասխանատվության տեր մարդիկ: Ստորև կներկայացնենք մեր կողմից կատարված հետազոտություններից մի հատված, որն ուղղված է կոլեկտիվի ներսում առկա վիրուսների բացահայտմանը և դրանց դեմ կիրառվող հակավիրուսների գործողությունների պլանավորմանը:

Որպես հետազոտվողներ ընտրել ենք երկու աշխատանքային կոլեկտիվ՝ համեմատաբար ավելի բարձր և ցածր բարոյահոգեբանական մթնոլորտով: Վերջինիս մակարդակը որոշել ենք՝ նախապես, թվով 6 աշխատանքային տարբեր կոլեկտիվներում անցկացնելով խմբի բարոյահոգեբանական մթնոլորտը բացահայտող մեթոդիկայով: Արդյունքում ընտրված երկու կոլեկտիվները՝ Տավուշի մարզպետարանի կառավարչական մարմինը և Տավուշի մարզի Իջևան համայնքի «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության աշխատանքային կոլեկտիվը, ենթարկվել են հոգեբանական հետազոտության (յուրաքանչյուրից 15 անդամներ):

Հետազոտությունն իրականացնելու համար օգտագործել ենք հոգեբանական հետևյալ մեթոդներն ու մեթոդիկաները՝ գրույց, դիտում, հարցաթերթ, սոցիոմետրիական հարցում, Բաս-Դարկիի ազդեցիվության հարցարան, Կետտելի հարցարան, կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտի ախտորոշման մեթոդիկա:

Թեմայի ուսումնասիրվածության համար հիմք են հանդիսացել Ուոթսոնի, Սքինների, Բանդուրայի, սոցիոլոգ Հարի Յուկլի և այլոց աշխատություններ: Միջխմբային հաաբերություններն առավել պատկերավոր նկարագրելու նպատակով համեմատական ուսումնասիրություններ ենք կատարել ֆիզիոլոգիական ու կենսաբանական աշխարհում և ցույց տվել, որ միևնույն սկզբունքով գործընթացներ տեղի են ունենում նաև սոցիալ-հասարակական կյանքում: Որպես ֆիզիոլոգիական մասի տեսական հիմք վերցրել ենք կենսաբան Դ. Ի. Իվանովսկիի, հոլանդացի միկրոկենսաբան Մ. Բեյերսկի, միկրոբիոլոգ Վ. Ի. Ազոլի, ամերիկացի վիրուսաբան Մ. Ֆրանկլինի աշխատությունները: Ֆիզիոլոգների և կենսաբանների ուսումնասիրությունները մեզ օգնության հասան հասարակական և կենսաբանական աշխարհում առաջացող վիրուսների և նրանց առաջխաղացման ու զարգացման գործընթացի համեմատականներ տանելու և խնդիրը ավելի պատկերավոր ու տեսանելի դարձնելու համար: Մի շարք հարցերին պատասխան գտնելու համար դիմեցիք բժշկական գրականությանը, վիրուսների մասին արված հետազոտություններին ու մեկնաբանություններին՝ առավել լավ պատկերացնելու համար նույն երևույթի տարածումը «հասարակական» օրգանիզմում:

Կարճ անդրադարձ կատարելով վիրուսների աշխարհին կենսաբանության տեսանկյունից՝ նշենք, որ «Վիրուս» բառը լատիներենից թարգմանաձև՝ (virus) նշանակում է թույն: Բավականին բարդ ու բազմաբովանդակ է վիրուսների աշխարհը, նրանց բազմանալու գործընթացը և ընդհանրապես տեղեկատվությունը: Հազարամյակներ շարունակ վիրուսների մասին մարդկությանը ոչինչ հայտնի չի եղել՝ չնայած որ նրանք ավելի քան 500 հիվանդությունների պատճառ են եղել: Եվ միայն տասնամյակներ առաջ հանդիպելով նրանց կողմից առաջացած աղետների (ջրծաղիկ, դեղին տենդ, պոլիոմերիտ), որոշ բացահայտումներ կատարվե-

ցին: Ընդամենը 1892 թվականին կենսաբան – գիտնական Դմիտրի Իոսովիչ Իվանովսկին առաջին անգամ հայտնաբերեց այդ անտեսանելի գոյացությունները [Гриншпун И. Б. «Введение в психологию»]: Նրան հաջողվեց ապացուցել, որ կենդանի բջիջներում գոյություն ունեն մոլեկուլներից ավելի փոքր գոյացություններ, որոնք հետագայում անվանվեցին վիրուս: Նրանց վիրուսներ անվանեց հոլանդացի միկրոկենսաբան Մ. Բեյերսկը, որը, կրկնելով նախորդի փորձերը, նկատեց, որ այդ գոյացություններն օժտված են թունավոր հատկություններով: Բոլոր վիրուսները ճանաչում են «իրենց բջիջներին» և տարբերում «ուրիշներին», օրինակ թութունի տերևի խճանկարի վիրուսը ոչ մի վտանգ չի ներկայացնում կաղամբի տերևների համար [Финнер Ф., Мак-Ослен Б., Мимс С., «Биология вирусов животных»]: Կամ Ա կոլեկտիվի վիրուսը կարող է լրիվ անվտանգ լինել Բ կոլեկտիվի համար: Չնայած հետագայում կա վերակառուցվելու և ադապտացվելու խնդիրը, որի դեպքում պոտենցիալ վիրուսը դառնում է վտանգավոր նաև այդ կոլեկտիվի համար:

Վիրուսն ինքնին չափազանց փոքր գոյացություն է, ավելի փոքր, քան մոլեկուլը, սակայն նրա ազդեցությունը, ինչպես տեսանք, չափազանց վտանգավոր և հաճախ մահացու է ոչ միայն առողջ բջիջների, այլև ամբողջ օրգանիզմի համար: Մարդկային հասարակության մեջ ևս առկա են վիրուսներ, որոնք «անգեն» աչքով անհնար է նկատել, սակայն հասկանալով վիրուսների տարածման և դրա դեմ պայքարի ալգորիթմը կարելի է նույն մեխանիզմն օգտագործել և խմբային հարաբերություններում: Եվ այսպես՝

- *Վիրուսների ծագում*՝ նրանք կարող են լինել տվյալ խմբի նախկին անդամը, կամ կոլեկտիվում նոր ընդգրկված մարդիկ:
- *Վիրուսների կառուցվածքի ուսումնասիրություն*՝ մենք գիտենք, որ մի խմբին պատկանող վիրուսը բոլորովին անվտանգ է մյուսների համար, ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել տվյալ վիրուսի կոնկրետ շարժառիթը և դիտարկել նրա վարքը՝ փորձելով հասկանալ նրա գործողությունների ենթատեքստը:
- *Պայքար վիրուսների դեմ*՝ այս փուլը բավականին պարզ և հասկանալի է: Նախ հարկավոր է ունենալ հակավիրուս թիմ և վերահաս վտանգի գիտակցումն ու հստակ պատկերացումը: Վիրուսների դեմ պայքարը մղվում է երկու հիմնական ձևերով՝ քաղաքակիրթ և բարբարոսական: Առաջինի դեպքում ցուցաբերվում է մեղմ մոտեցում, իսկ երկրորդի դեպքում անհրաժեշտության դեպքում ընտրվում է ագրեսիվ մարտավարությունը:

Այս օրինակափություններն ու մեխանիզմները իրենց բացատրությունն ու հիմնավորումը գտան, երբ առաջին անգամ վերհիշյալ առաջարկներն ու դատողությունները փորձարկվեցին ճամբարային գործունեության շրջանակներում: Դիտման և զրույցի մեթոդով ընտրելով հակավիրուս խմբեր, որոշակի պլան մշակվեց պարբերաբար գոյացող ու մթնոլորտն ախտահարող վիրուսների դեմ, որոնց դերում հանդես էին գալիս ինչպես խմբեր, այնպես էլ առանձին անհատներ: Դիտարկումները ցույց տվեցին, որ «վարակակիրը» (այն անձը, որը հանդիսանում է վարքի կրկնօրինակման օբյեկտ) հաճախ ունենում է թիմի ընդհանուր շահերից ու նպատակներից բավականին հեռու սկզբունքներ ու հեռանկար, նրա պատկերացումներն ու ընկալումները աշխատանքային կոլեկտիվի ու ընդհա-

նուր նպատակների մասին խիստ տարբերվում են բոլորից, ուստի և, ընթանալով դեպի իր տեսիլքը, նա աստիճանաբար վարակում է մյուսներին՝ վերբալ կամ ոչ վերբալ ձևով՝ իր շուրջը համախմբելով համակարծիք թիմակիցների:

Հետագա հետազոտություններն ավելի համոզիչ կերպով ընգծեցին վիրուսների ազդեցությունը ամբողջ խմբի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Հարկ է նշել, որ հակավիրուս խումբը և նրա համար նախագծված գործառնությունը դառնում են գործիք ցանկացած կոլեկտիվում վիրուսների դեմ պայքարի համար: Եվ արդեն բոլորովին կապ չունի, թե ինչ խմբի հետ ենք աշխատում՝ արվեստագետների միության, ֆուտբոլի թիմի, թե կառավարչական կոլեկտիվի: Այսպիսով, ամփոփ ձևով ներկայանենք այն հիմնական եզրահանգումները, որոնք առավել կարևոր են այս հետազոտությունների արդյունքում:

Աշխատանքային կոլեկտիվներում առկա «վիրուսների» աշխատանքը կարող են չեզոքացնել «հակավիրուս» խմբերը, որոնց միշտ կարելի է ստեղծել: Կոլեկտիվի անդամներից առավել ինտելեկտուալ կարողություններով, նյարդային հավասարակշռվածությամբ, էմպատիկ ունակություններով օժտված մարդկանցից կարելի է ստեղծել որպես «հակավիրուս» խմբի ներկայացուցիչներ: Յուրաքանչյուր կոլեկտիվում ձևավորվում և գործում են առանձին «հակավիրուսներ», որոնց ազդեցությունն առավել արդյունավետ դարձնելու համար հարկավոր է մոբիլիզացնել նրանց ռեսուրսները և գործել որպես թիմ: Կոլեկտիվի անդամների բացասական լիցքերով հագեցած վարքն ու տրամադրությունը ազդում է խմբի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, որն էլ հող է նախապատրաստում վարակի տարածման համար: Սոցիալ-հասարակական հարաբերություններում գործող վիրուսների և հակավիրուսների փոխհարաբերությունների հիմքում ընկած մեխանիզմների աշխատանքը շատ նման է վիրուսների տարածման ու չեզոքացման ֆիզիոլոգիական մեխանիզմների աշխատանքին:

Ուսումնասիրելով խմբային աշխատանքի արդյունավետությունն ապահովող միջոցներն ու երևույթները՝ պարզ է դառնում, որ աշխատանքային պայմանների և կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի միջև ընտրություն կատարելիս նախապատվությունը տրվում է թիմի համախմբվածությանը՝ մարդկային կապիտալի կառավարման կարևորությանը: Ոչնչացնելով կոլեկտիվն ախտահարող վիրուսներին և ընթացք տալով առողջ ու օգտակար բջիջներին՝ մենք ապահովում ենք պարարտ հող աշխատանքային խմբի ինչպես մասնագիտական, այնպես էլ ստեղծագործական ու գործունեության զարգացման համար: Եվ այս օրինաչափության հիմքում կարելի է գտնել հայտնի տնտեսագետ Լի Յակոկայի հետևյալ խոսքերը. «Ունեցիր փող, հարստություն, բոլոր տեսակի ռեսուրսներ, բայց ամենից առաջ կարողացիր ապահովել մարդկային ռեսուրսը, քանի որ նրա մեջ է հաջողության գրավականը» [Фромм Э., «Анатомия человеческой деструктивности»]:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гриншпун И.Б. *Введение в психологию*, М.: Международная педагогическая академия, 1994г.
2. Мананикова *Психология управления*, Учебное пособие, М. 2008, 319 стр.

3. Финнер Ф., Мак-Ослен Б., Мимс С. *Биология вирусов животных*, Издательство: Мир, М-1977, 450с.
4. Фромм Э. *Анатомия человеческой деструктивности*. Перевод/Авт. Вст. Ст. П. С. Гуревич. – М. : Республика, 1994. :
5. Danelson R. Forsyth *An Introduction to Group Dynamics* (Monterey, Calif.: Brooks/Cole 1983):
6. Richard D., Irwin INC *Effective Behavior in Organizations*, third edition, 1984

**Ануш Восканян – Влияние условно сформированных групп на психологическую атмосферу коллектива.** – В современных деловых отношениях рабочий коллектив считается самым главным ресурсом для обеспечения эффективной деятельности. В любом коллективе бывают такие сотрудники, или группа штатных сотрудников настроение и поведение которых отрицательно влияет на эффективность деятельности и поведения других сотрудников. Таких людей соответственно мы называем «Вирусы», и вся наша работа направлена на создание противоположной группы, которая является «Антивирусом». Последняя будет бороться за общие интересы и правила коллектива.

**ԿՈՊԻՆԳ-ՎԱՐՔԱԳԻԾԸ ԽՐՈՆԻԿ ՇԻՎԱՆԴԻ  
ԱՂԱՊՏԱՑԻԱՅԻ ՊՐՈՑԵՍՈՒՄ**

**ՎԱՉԱԳԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

Անձի հոգեբանական պաշտպանությունն իրենից ներկայացնում է սոցիալական, սոցիալ-հոգեբանական և անհատական-անձնային մեխանիզմների բարդ, բազմամակարդակ համակարգ:

Կարելի է առանձնացնել մարդու հոգեբանական պաշտպանվածության կազմակերպման երեք մակարդակ և երեք ուղղություն՝

1. սոցիալական /ամբողջ հասարակության մասշտաբով/,
2. սոցիալ-խմբային /տարբեր սոցիալական խմբերի շրջանակներում/,
3. անհատական-անձնային:

Սոցիալական մակարդակով հոգեբանական պաշտպանությունն իրականացվում է տեղեկատվական հոսքերի կարգավորման և կազմակերպման միջոցով, ինչպես նաև տեղեկատվության մշակման և գնահատման որոշակի ալգորիթմների ներդրման ձևով հասարակության մեջ: Այս մակարդակի վրա որպես անձի հոգեբանական պաշտպանությունն ապահովող սուբյեկտներ հանդես են գալիս պետությունը և հասարակությունը, որոնք գործում են որոշակի սոցիալական ինստիտուտների, մասնավորապես կրթական համակարգի, ինչպես նաև սոցիալ-մշակութային արժեքների տարածման համակարգերի միջոցով:

Սոցիալ-խմբային մակարդակում հոգեբանական պաշտպանությունն իրականացվում է տվյալ խմբերին հատուկ տեղեկատվական հոսքերի և աղբյուրների տարածման և օգտագործման միջոցով, ինչպես նաև այդ խմբերին յուրահատուկ տեղեկատվության մշակման և գնահատման մեթոդներով և ներգործման ձևերով: Որպես սոցիալական խմբեր կարող են հանդես գալ ընտանիքը, արտադրական կառույցները, հասարակական, քաղաքական, կրոնական և այլ կազմակերպություններն ու միավորումները:

Անհատական-անձնային մակարդակով հոգեբանական պաշտպանությունն իրականացվում է ներանձնային և միջանձնային հոգեբանական պաշտպանության մեխանիզմներով: Միջանձնային հոգեբանական պաշտպանության մեխանիզմները ենթադրում են անձի պաշտպանությունը միջանձնային կոմունիկատիվ հարաբերությունների ժամանակ և պաշտպանությունը տեղեկատվական-հոգեբանական վնասակար ազդեցություններից:

Շիվանդությունը հանդիսանում է մարդու համար փորձություն, յուրահատուկ հոգեկան վնասվածք, որը համալիր ազդեցություն է թողնում նրա օրգանիզմի վրա: Սոմատիկ հիվանդությունները, առանձնապես խրոնիկական, երկարատև ընթացք ունեցողները, զգալի ազդեցություն են թողնում հիվանդի հոգեբանական վիճակի վրա: Միաժամանակ ձևավորվող հոգեբանական փոփոխությունները և բարդություններն իրենց հերթին բացասաբար են ազդում սոմատիկ հիվանդության ընթացքի վրա, դժվարացնում նրա բուժման ընթացքը: Առաջանում է մի այնպիսի շրջան, երբ մարմնական ախտաբանական փոփոխությունները բե-

րում են հոգեբանական վիճակի և անձի բացասական ձևափոխումների, իսկ վերջիններս էլ իրենց հերթին ավելի են խորացնում հիվանդության ընթացքը: Հոգեմարմնական գործոնները բազմաթիվ հիվանդությունների ժամանակ այնքան սերտ են փոխկապակցված և այնքան մեծ է հոգեկան գործոնների նշանակությունն այդ հիվանդությունների պատճառագիտության, ախտաբանական զարգացման մեջ, կլինիկայում և բուժման համալիրում, որ այդ հիվանդությունները ստացել են հոգեմարմնական /պսիխոսոմատիկ/ հիվանդություններ անվանումը: Նման հիվանդությունների թվին են պատկանում այնպիսի տարածված և ծանր նոզոլոգիաներ, ինչպես սրտամկանի ինֆարկտը և ստենոկարդիան, ստամոքսի խոցային հիվանդությունը, բրոնխիալ ասթման, հիպերտոնիկ հիվանդությունը, տարբեր հոդային ախտահարումները, մաշկային հիվանդությունները և այլն: Այս հիվանդությունների լիարժեք բուժման և վերականգնման համար խիստ կարևորվում է հոգեբանական օգնության նշանակությունը: Հատկանշական է, որ մեծ քայլերով առաջընթաց է ապրում կլինիկական հոգեբանությունը, որի ուսումնասիրության հիմնական օբյեկտը հանդիսանում է հիվանդ մարդու հոգեբանությունն իր բազմաբնույթ դրսևորումներով, նրա վրա ազդող գործոնները:

Խրոնիկական մարմնական հիվանդությունները բերում են հիվանդի կենսակերպի որոշակի առանձնահատկություններ՝ սննդակարգի, ֆիզիկական և էմոցիոնալ ծանրաբեռնվածությունների սահմանափակումներ, աշխատանքի և հանգստի ռեժիմի փոփոխություններ, բուժական միջոցառումների շարունակական կիրառում: Հիվանդն իր վիճակին, իր հիվանդությանը որոշակի սուբյեկտիվ գնահատական է տալիս, որը ռուս հայտնի հոգեբան, նեյրոհոգեբանության հիմնադիր Լուրիայի կողմից կոչվել է հիվանդության ներքին նկարագիր: Այն իր մեջ ընդգրկում է չորս բաղադրիչ՝ սենսի-տիվ կամ զգայական, որոնք արտացոլում են հիվանդի ցավերը և խանգարումները; էմոցիոնալ, ռացիոնալ և մոտիվացիոն կամ կամային՝ կապված հիվանդության հաղթահարման ուղղված գիտակցված և նպատակաուղղված գործողությունների հետ:

Հիվանդի մոտ էմոցիոնալ ապրումները խթան են հանդիսանում ակտիվ ճանաչողական գործունեության համար, որը հաճախ արտահայտվում է տենդագին փնտրտունքի ձևով՝ նպատակաուղղված իր հիվանդության մասին ավելի շատ տեղեկատվություն ստանալուն: Այդ տեղեկատվության հիման վրա նա կառուցում է որոշակի տրամաբանական սխեմա, հայեցակարգ բացահայտելու իր համար իր հետ տեղի ունեցածը: Այդ հայեցակարգի կառուցման ընթացքում տեղեկատվության գլխավոր աղբյուրը հանդիսանում է բժիշկը, նրա խոսքը: Բացի այդ հիվանդը սկսում է լսել հարազատներին, ծանոթներին, հիշում իր կարդացածը և լսածն իր հիվանդության մասին, նոր տեղեկություններ քաղում տեղեկատվության գիտահանրամատչելի աղբյուրներից: Հիվանդության մասին հիվանդի կառուցած հայեցակարգը հաճախ լինում է սխալ և հեռու իրականությունից: Հիվանդության մասին հիվանդի պատկերացումները պայմանավորում են նրա հետագա վարքագիծը. նա գնում է բժշկի մոտ, կամ դիմում է այլընտրական բժշկությանը, կամ զբաղվում է ինքնաբուժությամբ:

Վերջին ժամանակներում հոգեբանության մեջ լայնորեն քննարկվում է կոնֆլիկտի հաղթահարման խնդիրը կոմպինգ-վարքագծի՝ հաղթահարող վարքագծի օգնությամբ: Կոպինգ կամ ստրեսի հաղթահարում հասկացությունը դիտ-

վում է որպես անձի այնպիսի գործունեություն, որը պահպանում է հավասարակշռությունը միջավայրի պահանջների և սեփական պահանջմունքների միջև:

Կոպլինգ-վարքագիծն իրենից ներկայացնում է սուբյեկտի գիտակցված վարքագիծ՝ ուղղված ստրեսի հոգեբանական հաղթահարմանը: Կոպլինգ տերմինն առաջին անգամ օգտագործել է ամերիկացի հոգեբան Աբրահամ Մալտուն:

Ժամանակակից կլինիկական հոգեբանության մեջ լայն ճանաչում է գտնում այն թեզիսը, ըստ որի հիվանդը պետք է հանդիսանա ոչ թե բժշկական խորհուրդների պասսիվ կատարողը, այլ նաև ինքնուրույն ակտիվություն ցուցաբերող և առկա հիվանդության հաղթահարման գործում: Անձի նման պատասխանը կոչվում է հիվանդության հաղթահարման ֆենոմեն (W. Brautigam, 1999) և, ըստ էության, հանդիսանում է կոպլինգի արտահայտություն (R.S. Lasarus, 1966; J.H. Amirkhan, 1990):

Հիվանդության հաղթահարման ֆենոմենն ունի էմոցիոնալ, ճանաչողական և վարքագծային բաղկացուցիչներ: Այն, առաջին հերթին, իրենից ներկայացնում է հիվանդի հատուկ ձևով կազմակերպված աշխատանք, որը, բժշկական նշանակումների կատարմանը զուգահեռ, իր մեջ ներառում է պացիենտի կողմից մշակված առողջացնող գործողությունների օժանդակ համալիր: Այդ գործողությունները լրացնում են հիմնական բուժական գործընթացը և բարձրացնում նրա որակը:

Տարբերում են կոպլինգ-վարքագծի երկու հիմնական տիպ՝ ակտիվ և պասիվ: Կոպլինգ-վարքագծի ակտիվ տիպը հանդիսանում է ստրեսային իրավիճակի ազդեցության նպատակաուղղված վերացումը կամ փոփոխումը, իրեն շրջապատող իրավիճակի հետ անձի ստրեսային կապի թուլացումը: Պասիվ տիպը դիտվում է որպես ստրեսի հաղթահարման ներհոգեկան եղանակի կիրառում, որն ուղղված է էմոցիոնալ լարվածության նվազմանը, այլ ոչ թե ստրեսային իրավիճակի փոփոխմանը: Եթե ակտիվ կոպլինգ-վարքագիծը կարելի է դիտել որպես կոպլինգ՝ ֆոկուսացված հիմնախնդրի վրա, ապա պասիվ կոպլինգ-վարքագիծը՝ կոպլինգ՝ ֆոկուսացված էմոցիաների վրա:

Հոգեբաններն առանձնացնում են կոպլինգ-վարքագծի երեք հիմնային ձևեր՝

- հիմնախնդրի լուծում. սա իրենից ներկայացնում է ակտիվ վարքագծային ստրատեգիա, որի ժամանակ մարդն աշխատում է օգտագործել իր ունեցած բոլոր անձնային ռեսուրսները հիմնախնդրի արդյունավետ լուծման եղանակ գտնելու համար;
- սոցիալական աջակցության փնտրում. սա իրենից ներկայացնում է ակտիվ վարքագծային ռազմավարություն, որի ժամանակ մարդը հիմնախնդրի արդյունավետ լուծման համար օգնության և աջակցության է դիմում իրեն շրջապատող միջավայրին՝ ընտանիքին, բարեկամներին;
- խուսափում. ենթադրում է հիմնախնդրից հեռացում նրա լուծումը փնտրելու փոխարեն: Սա ամենահիմնական վարքագծային ռազմավարություններից է, որի հետևանքով ձևավորվում է դեգադապտիվ, կեղծ-հաղթահարող վարքագիծ: Այս ռազմավարության օգտագործումը պայմանավորվում է տվյալ անհատի մոտ կոպլինգ-ռեսուրսների և կոպլինգ-ունակությունների անբավարար զարգացումով: Հնարավոր է խուսափելու այնպիսի պասիվ եղանակի կիրառումից, ինչպիսին է հեռացումը հիվանդության մեջ կամ ակտիվ օգտագործումը: Կարելի է նաև բոլոր-



վին հեռանալ հիմնախնդրի լուծումից՝ օգտագործելով խուսափման ակտիվ եղանակը՝ սուիցիդը:

Կոպիինգ-վարքագիծն ապահովող կարևորագույն գործոններից մեկը հանդիսանում է սոցիալական աջակցությունն այնպիսի տեղեկատվության տեսքով, որը թույլ է տալիս մարդուն զգալ, որ իրեն սիրում են, գնահատում, հոգում իր մասին, որ ինքը հանդիսանում է սոցիալական միջավայրի մաս և նրա նկատմամբ ունի փոխադարձ պարտավորություններ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն մարդիկ, որոնք աջակցություն են ստանում ընտանիքից, բարեկամներից, իրենց համար կարևոր նշանակություն ունեցող մարդկանցից, ավելի ամուր ատողություն ունեն, ավելի հեշտ են տանում դժվարությունները և հիվանդությունները:

Սոցիալական աջակցությունը մեղմացնում է ստրեստների ազդեցությունն օրգանիզմի վրա՝ դրանով իսկ պահպանում է հոգեկան առողջությունը, հեշտացնում է աղապտացիայի պրոցեսը և նպաստում հիվանդություններին դիմանալուն:

Կոպիինգ-վարքագծի անձնային ռեսուրսների թվին են պատկանում ճիշտ Ես-կոնցեպցիան, ադեքվատ վերահսկողությունը, սոցիալական աջակցության ընկալումը, ցածր նեյրոտիզմը, էմպատիան, աֆիլյացիան: Ճանաչողական ոլորտի հետ կապված են հիմնախնդրային վերլուծությունը և հեռացումը, էմոցիոնալ ոլորտի հետ՝ էմոցիոնալ լիցքաթափումը, լավատեսությունը, պասիվ համագործագրությունը, ինքնատիրապետումը, իսկ վարքագծային ոլորտի հետ՝ հեռացումը, ակտրոտիզմը, ակտիվ խուսափումը, աջակցության փնտրումը, կառուցողական ակտիվությունը:

Կոպիինգ-վարքագիծը հոգեբանական պաշտպանության մեխանիզմների հետ համարվում է հարմարողական պրոցեսի և անձի կողմից ստրեսային իրավիճակներին հակազդման կարևորագույն ձև : Եթե պաշտպանական մեխանիզմները հանդիսանում են պասիվ և ոչ կառուցողական պրոցեսներ, ապա կոպիինգ-մեխանիզմներն ակտիվ են և կառուցողական: Եթե հոգեբանական պաշտպանության պրոցեսներն հանգեցնում են միայն հոգեկան դիսկոմֆորտի մեղմացմանը, ապա կոպիինգ-վարքագիծն ուղղված է իրավիճակի ակտիվ փոփոխմանը և նշանակալի պահանջումներին բավարարմանը:

Հիվանդների մոտ առավել արդյունավետ կոպիինգ-ռազմավարություններ են համարվում համագործակցությունը, մասնավորապես բժշկի հետ, աջակցության ակտիվ փնտրումը սոցիալական կամ բուժական միջավայրում, հիվանդության խելամիտ անտեսումը, հիմնախնդրային մոտեցումը:

Կոպիինգ-մեխանիզմի ընտրությունը որոշակիորեն կախված է անձի հատկանիշներից: Այսպես, այն անհատները, որոնց բնորոշ են ինքնակարգավորման բարձր մակարդակը, ինքնավստահությունը, փոփոխություններին պատրաստակամությունը, բարձր ռեֆլեքսայնությունը, ցուցադրում են կոպիինգ-վարքագծի ակտիվ, գործուն տիպ: Եթե անձին բնորոշ են ինքնակարգավորման ցածր կարողություն, բացասական տրամադրվածություն իր իսկ նկատմամբ, ինքնամեղադրման և կոնֆլիկտայնության բարձր մակարդակ, ցածր ռեֆլեքսայնություն, ներամփոփություն, ապա նման պացիենտներին հատուկ են կոպիինգի էմոցիոնալ-հակազդող ձևերը: Կոպիինգի խուսափող տիպի վարքագիծ է նկատվում այն պացիենտների մոտ, որոնց բնորոշ են ինքնակարգավորման համակարգի ցածր զար-

գացումը, ինքնամեղադրման բացակայությունը, Ես-ի բարձր աստիճանը, նորի ընկալման ցածր պատրաստականությունը, Ես-կոնցեպցիայի ռիզիկոությունը:

Կոպլինգ-մեխանիզմների ընտրությունը կախված է հիվանդության տեսակից: Օրինակ, ներապթենիայով հիվանդների համար բնորոշ է ակտիվ կենսակերպը, հակումը դեպի ակտիվ գործունեություն. ֆոբիաներով հիվանդներին առավել բնորոշ են հիմնախնդրային վերլուծությունը, ինֆորմացիայի փնտրումը կամ պասիվ համագործակցությունը, իսկ հիստերիկ հիվանդներն առավել հաճախ օգտագործում են հոգեբանական պաշտպանության մեխանիզմները, մասնավորապես արտամղումը և բացասումը:

Կան բազմաթիվ տվյալներ, որոնք վերաբերում են կոպլինգ-վարքագծի կիրառման ասպեկտներին տարբեր խրոնիկական հիվանդությունների ժամանակ: Հետազոտությունները ցույց են տվել, որ խրոնիկական հիվանդությունների ժամանակ առավել հաճախ հանդիպում են հիվանդների դեզադապտացիայի կամ համեմատական ադապտացիայի դեպքեր, գերակշռում է պասսիվ կոպլինգ-վարքագիծը:

Ընդ որում, հոգեմարմնական հիվանդությունների /սրտամկանի ինֆարկտ, հիպերտոնիկ հիվանդություն, ռևմատոիդ արթրիտ/ ժամանակ պասիվ կոպլինգ-վարքագծի հաճախականությունն ավելի արտահայտված է, քան ոչ հոգեմարմնական սոմատիկ հիվանդությունների ժամանակ: Նույնիսկ կարելի է հետևություն անել, որ որոշ սոմատիկ ախտահարումների առաջացման համար ելակետային գործոն է հանդիսանում ադապտացիոն մեխանիզմների խանգարումը և հոգեկան դեզադապտացիան:

Բացի այդ, պարզվել է նաև, որ խրոնիկական սոմատիկ հիվանդությունների ժամանակ ժամանակի ընթացքում տեղի է ունենում հիվանդի հարմարում իր վիճակին. նա դառնում է ավելի պասիվ դժվարությունների հաղթահարման հարցում և ինչ-որ չափով հաշտվում է իր հիվանդության հետ:

Այսպիսով, կարելի է ասել, որ խրոնիկական սոմատիկ հիվանդությունների ժամանակ ձևավորվում է յուրահատուկ վարքագիծ՝ կոպլինգ-վարքագիծ, որը նպաստում է հիվանդագին վիճակի ադապտացիային, հիվանդության դեմ ակտիվ պայքարին: Սոցիալական աջակցությունը հիվանդին մեծ նշանակություն ունի ճիշտ կոպլինգ-վարքագիծ ձևավորելու համար, որն իր հերթին հիվանդի ադապտացիայի և ռեաբիլիտացիայի, հասարակական կյանքին վերադառնալու կարևոր գործոն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бройтигам В. *Психосоматическая медицина*. Перевод с. англ. / Бройтигам В., Кристиан П., Рад М., Москва, ГЭОТАР медицина, 1999, с. 373
2. Грачев Г.В. *Информационно-психологическая безопасность личности: Состояние и возможности психологической защиты*, Москва, 1998
3. Исаева Е.Р. *Совладающее со стрессом и защитное поведение личности при расстройствах психической адаптации различного генеза*, автореферат диссертации на соискание ученой степени доктора психологических наук, Санкт-Петербург, 2010
4. Карвасарский Б.Д. и др. *Клиническая психология*, Москва, 2007

5. Крюков Н.Н., Николаевский Е.Н., Поляков В.П. *Ишемическая болезнь сердца* (современные аспекты клиники, диагностики, лечения, профилактики, медицинской реабилитации, экспертизы), ИПК Содружество, Москва, 2010
6. Крюкова Т.Л. *Психология совладающего поведения*, Кострома, Авантитул, 2004
7. Малкина-Пых И.Г. *Стратегии поведения при стрессе*, Московский психологический журнал, N12, май, 2005
8. Третьяков А.Ю. *Значение феномена преодоления болезни при ряде психосоматических заболеваний в терапевтической клинике*, автореферат диссертации на соискание ученой степени доктора медицинских наук, Москва, 2009
9. Amirkhan J.N. *Factor anatically driven measure of coping: the strategy indicator*, J. of Personality and Social Psychology, 1990, v. 59, p.1066 – 1074
10. [www.coping.su](http://www.coping.su)

**Вачаган Саргсян – Копинг-поведение в процессе адаптации хронического больного.** – Настоящая статья посвящена широко обсуждаемой и актуальной в клинической психологии теме, какой является тема применения копинг-механизмов в комплексе лечения и адаптации хронических больных. На обзоре литературных источников показаны типы копинг-механизмов. В статье говорится также о влиянии различных факторов на выборе больным варианта копинг-поведения. В первую очередь на этот выбор влияют личностные особенности больного и характеристики заболевания. Так, известно, что при психосоматических хронических заболеваний чаще встречаются пассивные формы копинг-поведения.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ԱՐՄԵՆ ԵՐՄԻՍՅԱՆ, ՎԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հայտնի է, որ շուկայական տնտեսության կայացման և զարգացման գործընթացներում էական ազդեցություն ունի ճկուն հարկային համակարգի առկայությունը: Հետևաբար հարկային համակարգի շարունակական բարեփոխումներն ու կատարելագործումը անցումային տնտեսությամբ երկրների համար պետք է լինի պետության տնտեսական քաղաքականության առանցքային բաղադրիչներից: Մեր հանրապետությունում տնտեսական ազատական հարաբերություններին անցման փուլում իրականացված բարեփոխումների կարևոր ուղղություններից էր հարկային և մաքսային ոլորտների կատարելագործմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացումը: Ակնհայտորեն, իրականացված քայլերի արդյունքում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Հարկային համակարգի բարեփոխումները պետք է իրականացվեն հաշվի առնելով ինչպես զարգացած եվրոպական, այնպես էլ տարածաշրջանային երկրներում իրականացվող հարկային քաղաքականության ձևավորման միտումները: Հայտնի է, որ մեր հանրապետությունը հռչակել է միջազգային, այդ թվում նաև եվրոպական արժեքներին քաղաքական և տնտեսական ինտեգրման կուրս և այդ նպատակով ստանձնել է մի շարք պարտավորություններ: Մասնավորապես, Եվրամիություն-Հայաստան գործողությունների ծրագրով ՀՀ-ն պարտավորվել է ընդունելու միջազգային պահանջներին բավարարող միասնական հարկային օրենսգիրք, զարգացնել հարկային համակարգը ԵՄ-ի և միջազգային ընդհանուր սկզբունքներին համահունչ: Հետևաբար, հանրապետությունում հարկային բարեփոխումների ռազմավարության մշակման և իրականացման ընթացքում հարկային հարաբերությունների ոլորտում ձևավորված միջազգային միտումների վերլուծությունը և գնահատումը պարտադիր պայման է հանդիսանում ցանկալի արդյունքների հանգման համար: Հարկային ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վերջին տարիներին մշակվող և իրականացվող քաղաքականությունը կողմնորոշված է եղել դեպի հարկային քաղաքականության կատարելագործումն ու հարկահավաքման գործընթացի արդյունավետության բարձրացումը: Այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունը նպատակաուղղված է եղել մի կողմից նպաստավոր ձեռնարկատիրական միջավայրի ձևավորմանը, մյուս կողմից՝ պետական եկամուտների հավաքագրման օպտիմալ մակարդակի ապահովմանը: Մասնավորապես, վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հարկային քաղաքականության շրջանակներում իրականացվել են հետևյալ քայլերը.

- 1) փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցության նպատակով բազմաթիվ փոփոխություններ են կատարվել գործող հարկային օրենսդրությունում

(ներդրվել է ավելացված արժեքի հարկով չհարկվող նվազագույն՝ 58.35 մլն. շեմ<sup>190</sup>, պարզեցվել են հարկային հաշվառման ու գրանցումների կատարման ընթացակարգերը<sup>191</sup>, կրճատվել և պարզեցվել են հարկային մարմինների և ներկայացվող հաշվետվությունները<sup>192</sup> և այլն),

- 2) մեր տնտեսության ճգնաժամային երևույթները մեղմացնելու նպատակով 2008 թվականի երկրորդ կիսամյակից որոշակի հարկային արտոնություններ են տրամադրվել գործունեության առանձին ոլորտների (գորգագործություն, թանկարժեք քարերի ու մետաղների արտադրություն և իրացում<sup>193</sup>),
- 3) տնտեսության ներդրումային գրավչությունն ապահովելու նպատակով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳԱԱ (արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ)<sup>194</sup> - 8422 (բացառությամբ 842211000 և 842290100 ծածկագրերի), 8441, 8452 (բացառությամբ 845210 և 845290000 ծածկագրերի), 8453, 8475, 250510, 250900, 251820, 2836, 39162010, 76041090, 8419, 8426, 8429, 8430, 8435, 8478, 8479, 85023100, 870410 ծածկագրերով ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների հաշվարկած ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է համապատասխանաբար մեկ, երկու և երեք տարով մինչև 70, 70-ից 300 և 300 մլն. դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում, բացի այդ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, 300 մլն. դրամը գերազանցող վերոնշյալ ապրանքախմբերի ծածկագրերում նշված ապրանքներից բացի այլ ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վաճարման ժամկետը կարող է հետաձգվել երեք տարի ժամկետով<sup>195</sup>,
- 4) ներդրվել է գերավճարների ետ վերադարձն ուշացնելու դեպքում պետության կողմից հարկ վճարողներին տույժերի վճարման համակարգ<sup>196</sup>: Միաժամանակ, հարկահավաքման գործընթացի ցանկալի արդյունավետության ապա-

<sup>190</sup> Տե՛ս «Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ընդունված 21.08.2008թ., մայր փաստաթուղթ ԱԺ 14.05.1997, ՀՕ-118, հոդված 3:

<sup>191</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 15.06.2009թ. 61-Ն որոշումը:

<sup>192</sup> Տե՛ս «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ընդ. 08.12.2010թ., մայր փաստաթուղթ ԱԺ 26.12.1997, ՀՕ-179, հոդված 6:

<sup>193</sup> Տե՛ս «Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ընդունված 03.09.2009թ., մայր փաստաթուղթ ԱԺ 14.05.1997, ՀՕ-118, հոդված 15.30:

<sup>194</sup> ՀՀ-ում կիրառվում է ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ դասակարգիչը, որը հաստատվել է 1995թ. նոյեմբերի 3-ին Մոսկվայում ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի մասին» համաձայնագրով՝ վավերացված ՀՀ նախագահի 2000 թ. հուլիսի 3-ի N ՆՀ-626 հրամանագրով:

<sup>195</sup> Տե՛ս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ընդունված 26.12.2008թ., մայր փաստաթուղթ ԱԺ 14.05.1997, ՀՕ-118, հոդված 6.1:

<sup>196</sup> Տե՛ս «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, հոդված 33:

հովման նպատակով (հատկապես խոշոր ձեռնարկատիրության ոլորտում) ներդրվել են հարկային ներկայացուցչի ու ակցիզային պահեստի ինստիտուտները<sup>197</sup>, կեղծ փաստաթղթաշրջանառության դեմ պայքարի գործուն միջոցներ կիրառելու նպատակով՝ էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրս գրման համակարգը<sup>198</sup>, իսկ տնտեսության մեջ ապրանքաշրջանառության իրական ծավալների հաշվառման նպատակով նախատեսվում է որոշ ապրանքների համար ներդնել դրոշմապիտակների կիրառման համակարգ: Հարկ վճարողների կողմից իրենց հարկային պարտավորությունների անսխալ հաշվարկելու ինքնուրույնության հնարավորության ընդլայնման, ինչպես նաև հարկային օրենսդրության դրույթների միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով վերանայվել են հարկային օրենսդրության դրույթների վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների տրամադրման ընթացակարգերը<sup>199</sup>:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հարկային քաղաքականության ոլորտում իրականացվող միջոցառումները չպետք է սահմանափակվեն միայն վերոնշյալով և կառավարությունը պետք է շարունակի ձեռնարկատիրական միջավայրի բարելավմանն ու հարկման արդյունավետությանն ուղղված միջոցառումների իրականացումը, քանի որ չնայած որոշակի ուղղություններով արձանագրված դրական առաջընթացին, այդուհանդերձ, հարկային համակարգն ամբողջությամբ դեռևս զերծ չէ մի շարք թերություններից, ինչն իր համապատասխան անդրադարձն է ունենում երկրում իրականացվող տնտեսական քաղաքականության վրա: Հարկային համակարգում առկա հիմնախնդիրներից մասնավորապես հատկանշական են հետևյալները.

1. Հարկեր - ՀՆԱ հարաբերակցության անբավարարությունը, որի ցուցանիշը վերջին տարիներին տատանվում է 14-16.7 տոկոսի սահմաններում,
2. հարկային օրենսդրության բարդությունը, առանձին օրենսդրական ակտերի միջև հակասությունների առկայությունը, հարկային մարմինների կողմից հարկատուներին իրազեկման և պարզաբանումների տրամադրման ընթացակարգերի ցածր արդյունավետությունը,
3. պետության կողմից հարկային գերավճարների վերադարձման մեխանիզմի անկատարությունը,
4. հարկերից խուսափելու երևույթի տարածվածությունը, ստվերային տնտեսության մեծ ծավալը, ինչը նաև խրթին հարկային քաղաքականության հետևանք է և հանգեցնում է բյուջետային եկամուտների կրճատմանն ու պետության գործառույթների ոչ պատշաճ իրականացմանը,
5. հարկման արդարացիության սկզբունքի սահմանափակ կիրառումը, ինչը չի ապահովում հարկային համակարգի կողմից եկամուտների վերաբաշխման գործառույթի լիարժեք իրականացումը,

<sup>197</sup> Տե՛ս «Ակցիզային հարկի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ընդունված 29.10.2009թ., մայր փաստաթուղթը ընդ.ԱԺ 07.07.2000թ. ՀՕ-118, հոդված 7.1:

<sup>198</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 11.11.2010թ. 1504-Ն որոշումը:

<sup>199</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 29.07.2010թ. 1007-Ն որոշումը:

6. հարկային վճարումների կուլտուրայի բացակայությունը և հարկային վարչարարության կազմակերպման ցածր արդյունավետությունը:

Մեր կարծիքով, հարկային համակարգի կատարելագործման համար նպատակահարմար է իրականացնել հետևյալ քայլերը՝

1. միավորել եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովության վճարը (ՀՀ-ում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում),
2. գործունեության առանձին տեսակների համար նախատեսված հաստատագրված վճարների համակարգը փոխարինել հարկման ընդհանուր համակարգով (հարկման առավել արդարացի սկզբունք ապահովելու համար),
3. բենզինը, դիզելային վառելիքը եւ ծխախոտի արտադրանքը հարկման հաստատագրված վճարների համակարգից տեղափոխել հարկման ընդհանուր համակարգ:

Վերոնշյալ միջոցառումները հնարավորություն կընձեռեն մի կողմից՝ բարելավել մեր երկրում ձեռնարկատիրական միջավայրը, մյուս կողմից՝ բարձրացնել հարկահավաքման գործընթացի արդյունավետությունը:

Սահմանադրությամբ իրեն ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն հռչակած մեր հանրապետության հարկային համակարգը պետք է համապատասխանի սոցիալական դառնալու միտում ունեցող տնտեսության պահանջներին, որի պայմաններում հարկային համակարգի միջոցով հավաքագրված ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման ճանապարհով տեղի կունենա հասարակական բարիքների արտադրության ֆինանսավորում՝ երաշխավորելով քաղաքացիների սահմանադրական իրավունքների պահպանումը և նվազագույն կենսամակարդակի ապահովումը: Այս առումով, հարկային բարեփոխումները պետք է հետապնդեն նշված հիմնարար նպատակի իրականացումը, որն անպայմանորեն պետք է ընթանա պետական ծախսերի օպտիմալացման խնդրի լուծման ճանապարհով:

**Армен Нерсисян, Ваян Казарян – *Существующие проблемы и основные направления реформирования налоговой системы РА за последние годы.*** – В данной статье представлены те изменения, которые произошли в налоговой системе РА за последние годы, рассмотрены существующие проблемы в данной области и соответственно предложены ряд направлений для их решений, которые, по-нашему мнению, могут привести к желаемым результатам. В частности, эти решения могут удовлетворять потребности социально ориентированной экономики, которая, в свою очередь, позволит реализовать конституционные права граждан нашей республики.

**ԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԵՂԸ ԿԻՒԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԻՆՏԵՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐՈՒՄ**

**ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Կիլիկիայի հայկական թագավորության (1198 - 1375) պատմությունը հայոց պատմության անբաժանելի մասն է: Իր պետական կառավարման համակարգի առավել կատարելագործված լինելու հանգամանքով, հատկապես Լևոն Բ-ի և Հեթումյանների արքայատոհմի շրջանում տնտեսական և սոցիալական ինքնօրինակ քաղաքականությամբ արտաքին քաղաքական խնդիրների լուծման առումով դրսևորած ճկուն դիվանագիտությամբ, այս պետությունը ուսանելի շատ կողմեր է թողել նաև այսօրվա համար: Այս պետության պատմությունը և նրա առանձին դրվագներին հայ պատմագրությունը բազմիցս անդրադարձներ է կատարել: Սակայն, ցայսօր այդ անդրադարձները չեն վերաբերվել նրա տնտեսական կառավարման համակարգի առանձնահատուկ գծերին, որոնք թեպետ աղերսներ ունեն հայկական, մասնավորապես Արշակունյաց և Բագրատունյաց թագավորություններում հաստատված տնտեսական կարգի հետ, այնուամենայնիվ իրենց ամբողջության մեջ առանձնահատուկ են: Այդ առանձնահատկությունը ավելի կատարելագործված և իրավականորեն հիմնավորված լինելն էր, որը միտված էր պետությունը տնտեսապես թուլացնող ապակենտրոն ձգտումների բացառմանը: Տնտեսական կառավարման ողջ համակարգը, հատկապես Մմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքի» նախատեսած իրավական նորմերով, կարգավորում և վերահսկում էր թագավորը և կենտրոնախույս ձգտումների առկայությունը հասցված էր նվազագույնի: Տնտեսական կառավարման առավել կատարելագործված մեխանիզմները նպաստում էին տնտեսական աճին, որն էլ նախապայմանն էր բանակի հզորության, քանզի կայուն տնտեսությունն է ուժեղ բանակի ստեղծման գրավականը:

Ենթադրելի է, որ Կիլիկիայի հայկական թագավորության՝ որպես միապետական կառավարման տիպի պետության, տնտեսության կառավարման կենսունակությունը պայմանավորված էր նաև այդ համակարգի ինստիտուցիոնալ հիմքերով, որոնք ընդգրկում էին ինչպես հասարակության տնտեսական հարաբերությունների բնագավառը կարգավորող և տնտեսական քաղաքականությունն իրականացնող հաստատությունների ամբողջությունը, այնպես էլ սովորույթներն ու կրոնական-բարոյական նորմերը, ավանդույթները:

Տնտեսական համակարգն առհասարակ ձևավորվում է այն տնտեսական քաղաքականությունն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, որն որպես նպատակ է որդեգրել տվյալ երկրի իշխանությունը: Տնտեսական համակարգի ինստիտուցիանալ հիմքերի կայունությունը տվյալ քաղաքական միավորի կամ պետության զարգացման և ուժեղացման գլխավոր նախապայմաններից է: Տնտեսական համակարգն սկսում է ձևավորվել և զարգանալ պետականությունների առաջացման ձևավորմանն ու զարգացմանը զուգընթաց: Բնականաբար, երբ խոսք է գնում հայկական միջնադարյան կամ հին պետականություն-



ների տնտեսական հիմքի մասին, պետք է պնդել, որ այդ հիմքը կազմել է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը: **Մասնավոր սեփականատիրական գործունեություն կարող էին ունենալ հասարակության գրեթե բոլոր խավերը: Այն հիմնականում ընդգրկում էր ցյուղատնտեսական և արհեստագործական ոլորտները:**

Բյուզանդական կայսրության ազդեցությունն ու խաչակրաց արշավանքների հետևանքով եղած շփումները եվրոպական տերությունների հետ մի կողմից, հայկական թագավորությունների տնտեսական քաղաքականության ավանդույթների որդեգրման անհրաժեշտությունը՝ մյուս կողմից, իրենց դրոշմն ունեցան այս պետության տնտեսական և քաղաքական համակարգերի վրա, որոնք ձևավորվեցին հայկականի և եվրոպականի յուրօրինակ սերտաճումով կամ միաձուլումով, ինչն էլ դրանց ինքնօրինակություն է: Այստեղից էլ՝ **Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգը ձևավորվել սկսեց արտաքին ներգործությամբ և տնտեսության կառավարման հայկական ավանդույթների ազդեցությամբ: Ուրեմն, համակարգի ձևավորումն ուներ քաղաքական և ավանդական նախադրյալներ:** Այդ նախադրյալները նաև վերաբերվում են ձևակարգված կամ ֆորմալ ինստիտուտներին:

Հայտնի է, որ Կիլիկիայի հայկական քաղաքական միավորումը սկզբնավորվել է Բյուզանդական կայսրության տիրույթներում: Իշխանությունների առաջացումից մինչև պետություն ճանաչվելը այն ապրել է տնտեսական աստիճանական վերելք՝ քաղաքական վերելքի զուգորդությամբ: 11-րդ դարում Անիի, Վասպուրականի և Կարսի թագավորությունների Բյուզանդիայի կողմից վերացումից հետո տեղի ունեցավ հայերի մասսայական հոսք դեպի Փոքր Ասիայի հարավարևմտյան շրջաններ և մասնավորապես Կիլիկիա, որն ավելի ուժեղացավ սելջուկ թուրքերի արշավանքների հետևանքով: Քաղաքական այս բուռն իրադարձությունները տարածաշրջանում փոխեցին ժողովրդագրական պատկերը հոգուտ հայոց: Դրա արդյունքում է, որ առաջ եկան հայկական իշխանություններ Կիլիկիայում, Փոքր Հայքում, Միջագետքում և Ասորիքում: Սրանց մեջ շուտով ամենաազդեցիկը դարձավ Ռուբինյան իշխանությունը, որը 1198թ. ճանաչվեց որպես թագավորություն: Մինչև այդ արդեն ձևավորման ընթացք էին ապրել նրա տնտեսական և քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ հիմքերը, որոնք գնալով ավելի կատարելագործվեցին: Արդ, որոնք էին Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսակարգի գլխավոր ինստիտուտները, ինչպիսի գործառույթներ էին դրանք իրականացնում, որոնց արդյունքում բավական երկարատևորեն նրա տնտեսությունը մնաց ճկուն և ուժեղ: Փորձենք ներկայացնել դրանք՝ գնահատելով միաժամանակ առանձին – առանձին և իրենց ամբողջության մեջ:

Դրանցից որպես առաջինը պետք է առանձնացնել արքունիքը՝ արքայի գլխավորությամբ: Անշուշտ, արքունիքը ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական համակարգի բուրգն էր: Բայց երկրորդ առումով դրան անդրադառնալը մեր նպատակի մեջ չի մտնում:

Արքունիքն էր հանդիսանում տնտեսական հարաբերությունները կարգավորող և տնտեսական քաղաքականությունն իրականացնող հիմնական կառույցը: Արքունիքը լայն հասկացողություն էր, որն իր հերթին ուներ բազում գործակալություններ՝ տնտեսական և քաղաքական գործառույթներ իրականացնող: Նրա կառուցվածքն ու էությունը որոշում էր արքան կամ թագավորը: Մա նշանակում է, որ թագավոր հասկացողությունն ինչ որ տեղ համահունչ էր արքունիք

հասկացողությանը: Արքունիքը որպես պետական հաստատություն իրականացնում էր երկու ուղղություններով կառավարում՝ քաղաքական և տնտեսական: Ինչ լիազորությունների առանձնացումով պետք է արքունիքը համարել տնտեսական հարաբերությունների կարգավորման հիմքը կամ տնտեսական համակարգի պահպանման գլխավոր երաշխավորը: Բնականաբար այն, որոնք նրան տրվել էին ավանդաբար և նոր օրենքներով:

Թագավորը համարվում էր պետության գլուխը, ուստի մեծ առանձնաշնորհներ ուներ և օգտվում էր ռեզալիաներից՝ այսինքն միայն իրեն վերագրված բացառիկ իրավունքներից: Դրանց մասին պատկերացում կազմելու համար բավական են Մմբատ Գունդատաբլի օրենսդրական ձևակերպումները:

Իր «Դատաստանագրքի» Ա. հոդվածում («Վասն թագաւորաց եւ որդոյ նոյին») մասնավորապես հետևյալն ենք կարդում. «Եւ թագաւորն մէն է՝ որ կարէ դէկան շինել՝ եւ քաղաք եւ բերդ՝ եւ մեծ գետոց կանդարայ՝ եւ հոգէտուն ի վերայ մեծ ճամփնի եւ ի կապնի երկրին: Եւ թէ իշխան կամենայ յահսոց շինել, նա թագաւորին հրամանով շինէ: Եւ զթագաւորի հալաւ չիշխէ ոք հագնել առանց իր հրամանին: Ի թագաւորի մատ մի ոք իշխեսցէ նստել՝ քաւել թէ ինք հրամմէ եւ յիր սեղանն քաւել հայրապետն: Եւ ոչ թագաւորն ի խեչ հայրապետի թող չնստի. զի չէ հրաման»<sup>200</sup>:

Այսպիսով, թագավորը լիազորված է բարձրագույն իշխանությամբ, նա է դրամ կտրողը, քաղաքներից սկսած մնացյալ շինությունների կառուցողը, իսկ այլ իշխանները կարող են կառուցել միայն նրա հրամանով, առանց նրա հրամանի ոչ ոք կարող է նստել, բացի հայրապետից: Նրա իրավական հիմնավորումներում թագավորի առաջնայնությունը երևում է նաև երկրի ընդերքի հարստությունների բաշխման տեսանկյունից: Այդ մասին կարդում ենք. «Ոսկէհանքն թագվորին է, եւ արծաթահանքն ի կէս է ընդ երկրին պարոնն եւ ընդ թագւորն եւ երկաթն ու պղինձն ու կլայէկն՝ յորում երկիր գտնվի այնոր է»<sup>201</sup>:

Այսպիսով, թագավորին են պատկանում ոսկու բոլոր հանքերը, արծաթի հանքերի կեսը, իսկ մյուս կեսն այն իշխաններին, որոնց կալվածքում գտնվել է այն, իսկ երկաթի, պղնձի և անագի հանքերը պատկանում են միայն այն իշխաններին, որոնց կալվածքում են:

Օրենսդրորեն այս ամենի թագավորին պատկանված լինելու հանգամանքը հիմք է տալիս պնդելու, որ տնտեսական կառավարումը գլխավորապես նրա ձեռքում էր և նա էր արքունիքով հանդերձ հանդիսանում երկրի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական կառավարման կենտրոնը: Իշխանական մարմինը, որի միջոցով թագավորը որոշում էր բոլոր կարևորագույն հարցերը, դարպասն էր կամ պալատը: Այն հաճախ կոչվել է նաև բարձրագույն վերին արքունի ատյան կամ դիվան՝ (*Curiae regis*<sup>202</sup>):

Բարձրագույն ատյանը կամ կուրիան պետական խորհուրդ հիշեցնող մարմին էր, որի մեջ մտնում էին հողատեր պարոնները: Այն հավաքվում էր ըստ անհրաժեշտության՝ արտաքին և ներքին հրատապ լուծում պահանջող հարցերով պայմանավորված: Խորհրդի նախագահը թագավորն էր կամ նրա կողմից նշա-

<sup>200</sup> *Մմբատ Սպարապետ*, Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ. Գալստյանի, Երևան, Հայպետհրատ, 1958, տեղում, էջ 9:

<sup>201</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>202</sup> Langlois V., *Le trésor des chartes d' Arménie, Venise, 1863, p. 106.*

նակված որևէ անձ, որը կրում էր «պարոնաց պարոն» կամ «իշխանաց իշխան» տիտղոսը: Խորհրդի բոլոր վճիռները հրապարակվում էին թագավորի անունից:

Տնտեսական կառավարման առումով որոշումները բնականաբար նույնպես հրապարակվում էին թագավորի անունից: Թագավորն իր արքունիքով իրականացնում էր հետևյալ գործառույթները՝ ա) հողային սեփականության ձևերի կարգավորում և նորերի ստեղծում, բ) արտաքին տնտեսական կապերի ստեղծում և վերահսկում, գ) հարկային և մաքսային քաղաքականության իրականացում:

Կլիկիկայի հայկական թագավորությունում, ինչպես ցանկացած այլ ավանդական հասարակության մեջ հիմնական ու արտադրողական ուժերը գյուղացիներն ու արհեստավորներն էին: Մակայն արտադրության գլխավոր միջոցը հողն էր, որը պատկանում էր թագավորին: Ինչպես վկայում են աղբյուրները, պետության ամբողջ տարածքը համարվում էր թագավորին պատկանող «հայրենի երկիր»<sup>203</sup>:

Թագավորը թագավորության տարածքը համարում է «per totam terram meam» (իր ամբողջ տարածքը)<sup>204</sup>:

Այսպիսով, թագավորն էր հողի գերագույն սեփականատերը: Սրանից եզրակացությունը մեկն է՝ նա էր տնօրինում հողային սեփականության այլ ձևերի ստեղծման և դրանց հարկման իրավունքը: Մա հաստատվում է նաև Գունդստաբլից վերը արված մեջբերումով: Մակայն, կարևոր է այն, որ թագավորը լինելով հողի գերագույն սեփականատերը, ուներ նաև իր արքունական սեփականությունը, իր կալվածքը՝ ժառանգական սեփականության իրավունքով: Ուրեմն ստացվում է, որ ի պաշտոնե էր նա համարվում հողի գերագույն սեփականատերը և ժառանգական էր միայն նրա տոհմական սեփականությունը կամ այն, որը որպես այդպիսի սեփականություն օրենքով հասնում էր թագավորական ընտանիքին: Այստեղից էլ՝ անհրաժեշտ է տարբերակում մտցնել թագավորի կամ արքունիքի՝ որպես տնտեսական համակարգի ինստիտուցիոնալ առաջին հիմքի օրենքով սահմանված գործառույթների, որոնց ոլորտում մտնում էր ողջ տնտեսական համակարգում գերիշխող դերը, և նրա՝ de facto սեփականատեր հանդիսանալու հանգամանքների միջև: Վերջին առումով նա այնպիսի սեփականատեր էր, ինչպիսիք էին բերդատեր իշխանները և եկեղեցին, այսինքն հայրենատեր սեփականատեր: Հակառակ դեպքում, այս իշխանները առանց թագավորի համաձայնության չէին կարողանա նոր հողեր գնել կամ հողեր նվիրել<sup>205</sup>:

**Թագավորի, որպես ամբողջ հողի տերը լինելու ծիսականության հանգամանքը զուգակցվում էր տում նրա տնտեսական կառավարման գերակայության հետ:** Մա հայեցակարգային մոտեցում է, որը մեր կողմից դրվում է վերլուծության հիմքում:

Այժմ առանձին – առանձին վերլուծենք արքունիքի՝ որպես ինստիտուցիոնալ կառույցի, տնտեսական քաղաքականության իրացման ուղիները, որոնք իրականացվում էին տարբեր գործակալությունների միջոցով:

<sup>203</sup> Ժամանակագրություն տեառն Միքայելի Ստրվոյ պատրիարքի, Յերուսաղեմ, 1871, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց **Լ.Ս. Խաչիկյան**, Երևան, 1956, էջ 504:

<sup>204</sup> **Վահրամ Ռաբունի**, Բան ի Յայտնութեան տեառն ու օծումն Լեւոն Գ արքայի, Երուսաղեմ, 1875, էջ 54:

<sup>205</sup> Տե՛ս **Ս.Վ. Բռնազյան**, Սոցիալ – տնտեսական հարաբերությունները Կլիկիյան հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 164 – 167:

Արքունիքը հանդիսանալով գլխավոր քաղաքական կառույցը տնտեսական կառավարման տեսանկյունից, ուներ իր ենթակառուցվածքային տարրերը, որոնք ընդունված է կոչել գործակալություններ: Գործակալի պաշտոնավարության հիմքում ընկած է եղել հողային սեփականության իրավունքի պաշտպանումը, ուստի և հիմնականում գործակալությունները ղեկավարում էին խոշոր հողատեր իշխանները: Դրանք հիմնականում ձևավորված էին Արշակունյաց և Բագրատունյաց գործակալությունների ազդեցությամբ, կամ ավանդական նախադրյալներով: Միաժամանակ կրել են արևմտաեվրոպական ազդեցությունը, մասնավորապես ֆրանսիական, բյուզանդական և այլն, թեպետ ավելի շատ կապված տերմինների, քան թե գործակալությունների բուն էության հետ: Թագավորի տնտեսական քաղաքականությունն իրականացնող գործակալություններն էին.

Առաջին. Շատերի համար կարող է ընդունելի չլինել, բայց կարծում ենք, որ տնտեսական քաղաքականության իրականացման առումով չէր կարող կարևոր դերակատարություն չունենալ պայլությունը կամ խնամակալությունը: Սրանում կարելի է համոզվել՝ ճշտելով պայլության գործառույթները: Իսկ դրանք կայանում էին հետևյալում՝ պետության ղեկավարում կամ թագավորի պարտականությունների ստանձնում քանի դեռ նա անչափահաս էր, այսինքն՝ ռեգենտի (ժամանակավոր իշխողի) դերակատարություն, իսկ նրա չափահաս լինելու դեպքում խնամակալություն: Կարևոր է մատնանշել նաև այն, որ գահի թափուր մնալու դեպքում, երբ երկրում ծայր էին առնում երկպառակչական կոիվներ, նա էր գլխավորում բանակը և հնազանդեցնում էր կենտրոնախույս ձգտումներ ունեցող իշխաններին<sup>206</sup>: Կենտրոնախույս ձգտումներ ունեցող իշխանների նկատմամբ պատժիչ գործողություններն ինքնաբերաբար կարող էին ենթադրել հողային ժառանգական սեփականությունից զրկում կամ այլ տնտեսական պատժամիջոցներ, որոնք նպաստում են այն հայեցակարգի հիմնավորմանը, որ պայլը անմասն չէր տնտեսական գործառույթներից և արքունիքի՝ կարևոր բաղադրանաան էր կազմում: Եվ վերջապես, այս տեսակետն հիմնավորվում է նրանով, որ պայլը կոչվել է նաև թագավորահայր<sup>207</sup>:

Երկրորդ. Սեղանապետություն: Այս գործակալությունն ավելի շատ հայտնի էր սինեջալ, սինեշալ և սենեսկալ կամ սենեսկալ հայոց անուններով: Սենեսկալը բավական ազդեցիկ պաշտոնյա էր, քանզի արքունիքի կամ արքայական պալատի կառավարիչն էր, արքունի եկամուտների և ծախսերի տնօրինողն ու հսկողը: Ղ. Ալիշանը վկայում է, որ այս գործակալությունը տրվում էր առավել խոշոր իշխաններից մեկին, որը համարվում էր թագավորական տան մերձավորը և «հավատարիմ տան արքունի»<sup>208</sup>: Ըստ Ա. Սուքիասյանի հետևյալ տողերը. «Սկզբնական շրջանում սենեսջալը ղեկավարում էր թագավորի եկամուտներն ու ծախսերը, այսինքն՝ թագավորի պալատի կառավարիչն էր: Հետագայում, սակայն, նա սկսեց միաժամանակ վարել երկրի եկնոմիկան՝ ամբոխջությամբ վերցրած, բարձրագույն վերահսկողություն իրականացնել պետական բյուջեի նկատմամբ»<sup>209</sup>:

<sup>206</sup> **Լ. Խաչիկյան**, Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 193 – 194:

<sup>207</sup> Տես **Ս. Վ. Բռնակյան**, Սոցիալ – տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 69:

<sup>208</sup> **Ղ. Ալիշան**, Միտան, Վենետիկ, 1885, էջ 470:

<sup>209</sup> **Ա. Գ. Սուքիասյան**, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (11 – 14 դդ.), Երևան, 1978, էջ 166:

Այս վկայությունը, որն հաստատվում է սկզբնաղբյուրներով, վկայում է, որ սենեսկալը կամ սեղանապետը եղել է կարևորագույն ենթակառուցվածքային տարր այն գլխավոր քաղաքական կառույցում, որն արքունիքն էր:

**Երրորդ. Մաքսապետություն:** Մա համարվում էր ամենախոշոր գործակալությունը, քանզի վերահսկում էր երկրի մաքսերն ու հարկերը կամ, այլ արտահայտությամբ՝ հարկային և մաքսային քաղաքականության պատասխանատուն էր: Մաքսապետը կոչվում էր պոռոքսինոս կամ պոռքսինոս: Այս բառը ծագում է հունարենից<sup>210</sup>:

Ներքին և արտաքին առևտրից գանձվող բոլոր մաքսերն ու տուրքերը գանձում էր այս պաշտոնյան, որն իր տրամադրության տակ ուներ մաքսատների պաշտոնյաներ, հարկահավաքներ, ներքին շուկաների վերակացուներ: Դրանք կոչվում էին կապիտաններ կամ մինեպաններ: Այս գործակալության կարևորությունը կայանում էր նրանում, որ մաքսերն էին գլխավոր միջոցները, որոնցով ապահվում էր պետության եկամուտը և որոնցով հոգացվում էին ռազմական ծախսերը:

Ահա այս երեք գործակալություններն էին, որ արքունական ինստիտուտում կամ արքունիքում իրականացնում էին տնտեսական քաղաքականության գործառնություններ, կյանքի էին կոչում երկրի տնտեսական քաղաքականությունը՝ արքայի գլխավորությամբ:

Ամփոփելով ասվածը, շեշտենք, որ այսպիսով՝

*Առաջին.* Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգի կարևորագույն ինստիտուցիոնալ հիմքը հանդիսանում էր արքունիքը՝ արքայի կամ թագավորի գլխավորությամբ:

*Երկրորդ.* Երկրի տնտեսական քաղաքականության գլխավոր դեմքը հանդիսանում էր թագավորը, որն արքունիքի միջոցով իրականացնում էր տնտեսական քաղաքականությունը:

*Երրորդ.* Արքունիքն ուներ գործակալություններ, որոնք կարելի է համարել ենթակառուցվածքային տարրեր տնտեսությունը կառավարող գլխավոր համակարգում:

*Չորրորդ.* Արքունիքը տնտեսական ինստիտուտների բուրգն էր, որից աստիճանաբար, վերևից ներքև ճյուղավորվում էին տեղական նշանակությամբ կառավարման ինստիտուտները:

**Григор Аракелян – Место царского двора в экономической системе и в институциональных основах армянского царства Киликия.** – В статье подлежат анализу функции короля и царского двора в экономической системе в связи с осуществлением экономической политики армянского царства Киликия. Показано, что король это главное лицо экономического правления. Это правление он осуществлял с помощью разных агенств.

<sup>210</sup> Բյուզանդիայում այս պաշտոնն ուներ բոլորովին այլ իմաստ և նշանակում էր բանակի հրամանատարի տեղակալ կամ կայսեր տեղակալ: Stu Langlois V., Le trésor des chartes d' Arménie, p. 154 – 157.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ  
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ**

**ՎԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ**

Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեն կազմելուց առաջ կարևոր քայլեր են հարկային եկամուտների հնարավորինս կանխատեսումները, որոնք էլ հիմք կհանդիսանան առավել իրատեսական բյուջեի նախագծի կազման համար: Վերոնշյալ քայլերն իրականացվել են 2012 թվականի համար: Այսպես, 2012 թվականի հարկային եկամուտների վրա ազդող հիմնական գործոնները կլինեն.

- համախառն ներքին արդյունքի դինամիկան, այդ թվում կառուցվածքային առումով,
- հարկման բազայի վրա ազդող օրենսդրական փոփոխությունները,
- հարկային և մաքսային վարչարարությունը

Ստորև փորձենք ներկայացնել հարկային և մաքսային այն գործոնները, որոնք ազդեցություն կունենան 2012թ. բյուջեի հարկային եկամուտների վրա և որոնք կարևոր է հաշվի առնել 2012թ բյուջետային եկամուտները կանխատեսելիս:

**Ավելացված արժեքի հարկի** մասով մուտքերի վրա ազդեցություն ունեցող գործոններն են.

1. **ՀՆԱ-ի կառուցվածքային փոփոխությունները** - 2012 - 2014թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2012 թվականին 2011 թվականի համեմատ նախատեսվել է իրական ՀՆԱ-ի 4.2 տոկոս աճ<sup>211</sup>: Սակայն, ԱԱՀ-ից հարկային մուտքերի էական աճ հնարավոր չի լինի պայահովել 2011-2012 թվականներին, կապված տնտեսության առանձին ոլորտներում և զարգացման տարբեր տեմպերի պատճառով տնտեսության կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Մասնավորապես, շինարարության ոլորտում տեղի է ունենում իրականացվող աշխատանքների ծավալների կրճատում: Ըստ Ազգային վիճակագրության ծառայության տվյալների 2011թ. հունվար-հունիս ամիսների իրականացրած շինարարության ծավալը կազմել է 2010թ. հունվար-հունիս ամիսներին իրականացրած շինարարության ծավալի 86.2%-ը<sup>212</sup>, իսկ իրականացրած շինմոնտաժային աշխատանքների ծավալը 93.4%-ը: Այս ոլորտը ԱԱՀ-ից հարկային մուտքեր ապահովող (բացառությամբ՝ անհատական բնակելի շինարարության ոլորտի) ճյուղերից է, որում իրացման ծավալների կրճատման միտումը կարող է բացասաբար անդրադառնալ հարկային մուտքերի վրա: ՀՀ կառավարության կողմից կիրառվում է գյուղատնտեսական արտադրանքի ոլորտը խթանելու քաղաքականություն: 2011թ. նկատվում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալների կտրուկ աճ 2010թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ: 2011թ. փետրվար-հունիս ամիսներին գյուղատնտեսության համախառն

<sup>211</sup> Տե՛ս ՀՀ կառավարության «2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը» աղույսակ 1, էջ 14:

<sup>212</sup> Տե՛ս [www.armstat.am](http://www.armstat.am).

արտադրանքի ծավալը 26.6%-ից աճել է մինչև 40.8%<sup>213</sup>: Աճի բարձր տեմպը մասնակիորեն պայմանավորված է 2010 թվականի ոլորտի համար ոչ բարենպաստ լինելու հանգամանքով: Այնուամենայնիվ, ոլորտի զարգացման բարձր տեմպը մեծացնելու է ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժինը և իջեցնելու է հարկեր - ՀՆԱ հարաբերակցությունը: Դրան նպաստելու են նաև ոլորտի խթանման համար հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները: Այս ոլորտից ԱԱՀ-ից մուտքեր կարող են ակնկալվել արդյունաբերական բնույթի ոչ մեծաթիվ կազմակերպություններից (հիմնականում՝ թռչնաֆաբրիկաներ, ձկնաբուծարաններ):

**2. Ազատ տնտեսական գոտիների ստեղծումը** - 2012թ. ԱԱՀ-ից հարկային մուտքերի վրա որոշակի ազդեցություն կունենա ազատ տնտեսական գոտիների հետ կապված օրենքով սահմանված արտոնության կիրառումը, եթե ազատ տնտեսական գոտիներ ստեղծվեն և շահագործվեն: Դրա մեծությունը, սակայն մեծ չի լինի՝ կապված այն հանգամանքի հետ, որ այդ գոտիների ստեղծման նպատակը արտահանման խթանումն է<sup>214</sup>:

**3. 2011թ. ԱԱՀ-ի մասով նոր հարկային արտոնությունների սահմանում** - 2011թ. սահմանվել են հարկային արտոնություններ, որոնք չեն ազդել 2011թ. 7 ամիսների ԱԱՀ-ից մուտքերի վրա, դրանք կանդրադառնան 2011թ. հետագա ամիսների և 2012թ. հարկային մուտքերի վրա: Դրանք են.

- գյուղատնտեսության ոլորտին առնչվող ապրանքների ազատում ավելացված արժեքի հարկից<sup>215</sup>:

2010թ. ընթացքում 84 ապրանքախմբին<sup>216</sup> դասվող վերը թվարկված ապրանքների ներմուծման ծավալները կազմել են 1014.4 մլն դրամ: Հաշվի առնելով, որ այս ապրանքները նախկինում հարկվել են ներմուծման պահին՝ 2011թ. այս ապրանքների իրացման մասով ԱԱՀ-ից հարկային մուտքերի կորուստը գնահատվում է մոտ 100 մլն դրամ,

- գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտում համատեղ գործունեության իրականացում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համատեղ գործունեության պայմանագրով գործող գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող սուբյեկտներից (մասնակիցներից) յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես առանձին հարկ վճարող<sup>217</sup>: Համատեղ գործունեության մասնակցներին որպես առանձին հարկ վճարող դիտարկելը կարող է մեկնաբանվել որպես շեմի բազմապատկում մասնակիցների թվով: Այս դեպքում գյուղատնտեսական արտադրանքի ոլորտից ԱԱՀ-ի հարկային մուտքերը կնվազեն:

<sup>213</sup> Տե՛ս [www.armstat.am/](http://www.armstat.am/):

<sup>214</sup> Տե՛ս «Ազատ տնտեսական գոտիների մասին» 18.06. 2011թ. ՇՕ-193-Ն ՀՀ օրենքը, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հրատարակման 15-րդ տարի, N 39 (842), 24 հունիս 2011թ, էջ 23:

<sup>215</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին», մայր փաստաթուղթ ԱԺ 14.05.1997, ՇՕ-118, հոդված 15.6:

<sup>216</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին», մայր փաստաթուղթ ԱԺ 14.05.1997, ՇՕ-118, հոդված 6.1:

<sup>217</sup> Տե՛ս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը ընդ. 15.04.2011թ. :

2011թ. ընթացքում օրենքով սահմանված կոնցեսիոն համաձայնագրերի մասով նախատեսված արտոնությունների մասով պետական բյուջեի ԱԱՀ-ից հարկային մուտքերի էական նվազեցում չի կանխատեսվում<sup>218</sup>:

Այսպիսով, 2012թ. ԱԱՀ-ից մուտքերի աճ կարելի է նախատեսել ՀՆԱ-ի հարկունակ մասի ավելացման պայմաններում: Նշենք, որ 2011թ. չեն կատարվել այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք կմեծացնեն հարկման բազան կամ կբարելավեն հարկային վարչարարության իրականացման հնարավորությունները: Այս պայմաններում ԱԱՀ-ից հարկային մուտքերի աճ կարող է տեղի ունենալ միայն տնտեսության աճի և գնաճի հետևանքով: Հարկման համակարգի այնպիսի փոփոխությունները (օրինակ, հաշվանցումների կատարման ժամանակ հաշվեգրման սկզբունքի կիրառումը) կարող են նշանակալի չափով նվազեցնել ԱԱՀ-ի գծով հարկային մուտքերը:

**Ակցիզային հարկի** մասով մուտքերի վրա ազդեցություն ունեցող գործոններն են.

1. ՀՀ-ում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների իրացման ծավալների կրճատումը:

ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության կողմից հրապարակված՝ 2448 կազմակերպություններից ստացված տվյալներով 2011թ. հունվար-հունիս ամիսներին արտադրված օդու և օդու-լիկյորի արտադրության ծավալը կազմել է 2010թ. նույն ամիսներին արտադրված օդու և օդու-լիկյորի արտադրության ծավալի 67.2<sup>219</sup> տոկոսը, իսկ զարեջրի մասով՝ 93.1%-ը<sup>220</sup>:

2. Ակցիզային հարկով հարկվող որոշ ապրանքների ներմուծման ծավալների նվազումը: 2011թ. 1-ին կիսամյակում ակցիզային հարկով հարկվող որոշ ապրանքների ներմուծման ծավալների նվազման միտումը պահպանվելու դեպքում, մասնավորապես՝ զարեջրի, սպիրտային խմիչքների, բենզինի, կհանգեցնի 2012 թվականի ակցիզային հարկի նվազմանը:

**Հաստատագրված վճարների** մասով պետական բյուջեի հարկային եկամուտներում հաստատագրված վճարներից մուտքերը ապահովվում են ծխախոտի արտադրանքի և գործունեության առանձին տեսակների համար սահմանված հաստատագրված վճարներից.

1. Ծխախոտի արտադրանքից հաստատագրված վճար - 2008-2010 թվականներին տեղի է ունեցել ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի արտադրության ծավալների աճ, ինչը մասամբ պայմանավորված է ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար սահմանված հաստատագրված վճարների մեծությունների տարբերությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ արտադրողները իրավունք ունեն վճարման ենթակա հաստատագրված վճարից նվազեցնելու ՀՀ տարածքում ձեռքբերումների մասով մատակարարներին վճարած ԱԱՀ-ի գումարները: Գործնականում արտադրողները հաշվանցումներ կատարում են ոչ միայն ՀՀ տարածքում ձեռքբերումների մասով, այլև՝ այլ (փոխկապակցված) անձանց կողմից ներմուծված ապրանքների մասով: Հաշվի առնելով, որ ծխախոտի արտադրանքն ունի սպառման սահմանափակ ծավալ՝ կարծում

<sup>218</sup> Տե՛ս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ընդ. 16.06.2011թ. ՇՕ-188-Ն ՀՀ օրենք:

<sup>219</sup> Տե՛ս [www.armstat.am/](http://www.armstat.am/):



ենք, որ 2011թ. և 2012թ. ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքից հարկային մուտքերի մեծությունը չի գերազանցի 2010թ. ցուցանիշը: 2011թ. 1-ին կիսամյակում ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքից մուտքերը 2010թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել են, չնայած, որ 2011 թ-ի հունվարի 1-ից բարձրացել է դրույքաչափը, իսկ ներմուծվող ծխախոտից մուտքերը՝ աճել: Հարկ է նշել, որ ներմուծվող ծխախոտի ծավալը 2011 թ. 1-ին կիսամյակում 2010թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է, իսկ մուտքերի աճը պայմանավորված է օրենսդրական փոփոխությամբ (դրույքաչափերի բարձրացմամբ):

ՀՀ ներմուծվող ծխախոտի և ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների միջև տարբերության կրճատման պայմաններում կարելի է եզրակացնել, որ 2011-2013թթ. կնվազի սպառման ընդհանուր ծավալում ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի բաժինը, և արդյունքում, կնվազեն այդ արտադրանքից հաստատագրված վճարի տեսքով գանձվող հարկային մուտքերը:

**2. գործունեության առանձին տեսակներից հաստատագրված վճարներ:** 2012թ. հաստատագրված վճարից մուտքերի վրա ազդող հիմնական գործոններն են.

- 1) հաստատագրված վճարների չափերը հիմնականում հաստատուն մեծություններ են և որոշվում են էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հիման վրա (մակերես, աշխատատեղ) ու կախված չեն տնտեսավարող սուբյեկտի գործունեության արդյունքներից: Արդյունքում գործունեության առանձին տեսակներից հաստատագրված վճարների մասով 2012թ. եկամուտների էական աճ կանխատեսելը իրատեսական չէ,
- 2) 2011թ. գործունեության որոշ տեսակների մասով (թվով 7) անհատ ձեռնարկատերերին հնարավորություն է տրվել ընտրելու արտոնագրային վճարով հարկման ռեժիմը<sup>221</sup>,
- 3) հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակները հարկման ընդհանուր կարգին անցնելու արդյունքում պետական բյուջեի եկամուտները հաստատագրված վճարների մասով կնվազեն, իսկ ԱԱՀ-ի գծով մուտքեր չեն ապահովվի, քանի որ հիմնականում այդ գործունեության տեսակներ իրականացնողները կօգտվեն ԱԱՀ-ի շեմից (58.35 մլն դրամից) և չեն համարվի ավելացված արժեքի հարկ վճարող: Միայն 2012թ. հունվարի 1-ից հարկման ընդհանուր կարգին անցնելու հետ կապված հաստատագրված վճարից մուտքերը կնվազեն շուրջ 1.0 մլրդ դրամի չափով: Դրա փոխարեն հնարավոր է բյուջեի եկամուտների որոշակի չափի ապահովում շահութահարկի (եկամտահարկի) տեսքով: Սակայն, հաշվի առնելով, որ տնտեսավարող սուբյեկտները նշված գործունեությունից բացի իրականացնում են նաև այլ գործունեության տեսակներ և հարկային մարմին ներկայացված տվյալներով հայտարարագրվում է ընդհանուր իրացման շրջանառությունը, ապա շահութահարկի (եկամտահարկի) մասով հնարավոր չէ կոնկրետ գնահատական տալ:

**Շահութահարկի մասով ՀՀ** պետական բյուջեի շահութահարկի ընդհանուր մուտքերը բաղկացած են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկի գումարներից: Համեմատելով

<sup>221</sup> Տե՛ս «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքը, ընդ. 22.12.2010թ., ՀՕ-209-Ն:

նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի շահութահարկի մուտքերի ցուցանիշները (ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ) ակնհայտ է, որ շահութահարկի տարեկան մուտքերի հիմնական մասը ապահովում են ռեզիդենտները, և հետևաբար 2012թ. կանխատեսումների հիմքում առավել էական է դառնում վերջիններիս կողմից վճարումների կատարման դինամիկան, մուտքերի վրա ազդող հնարավոր գործոնները և ռիսկայնության չափանիշները:

**1.ռեզիդենտների շահութահարկ** - 2012 թ. ռեզիդենտների շահութահարկի վրա ազդող հիմնական գործոններն են.

- 1) շահութահարկի կանխավճարների հաշվարկման և կատարման ընթացակարգերի մասով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում (ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ից) ռեզիդենտները կարող են նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսել առանց որևէ ժամկետային և գումարային սահմանափակման<sup>222</sup>, ինչի արդյունքում՝ ի տարբերություն նախորդ տարիների, շահութահարկի կանխավճարները տարվա ցանկացած եռամսյակում կարող են նվազել: Դա անմիջականորեն կարող է իր ազդեցությունը թողնել 2012թ. ընթացքում կատարվող շահութահարկի կանխավճարների մուտքերի վրա, սակայն թվային տեսանկյունից այն վերլուծելը կամ կանխատեսելը (հաշվի առնելով ցանկացած եռամսյակում կանխավճարների մեծությունների փոփոխության հնարավորությունը) իրատեսական չէ,
- 2) միաժամանակ, նույն օրենքում կատարված փոփոխության արդյունքում, 2011թ-ից սկսած ռեզիդենտ կազմակերպությունները շահութահարկի կանխավճարները կատարելու են նախկինում հարկվող շահույթի 1/16 չափի (ամսական) փոխարեն 1/6 չափով (եռամսյակային)<sup>223</sup>:

Վերը նշվածից հետևում է, որ նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը առանց որևէ ժամկետային և գումարային սահմանափակման պակաս նախատեսելու հնարավորությանը զուգահեռ ավելանում է ռեզիդենտների կողմից կատարվող շահութահարկի կանխավճարների մեծությունը, քանի որ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, ընդհանուր առմամբ, 2011 թ. շահութահարկ վճարող տնտեսվարող սուբյեկտների մոտ ձևավորված շահութահարկի գումարի 2/3 մասը ( $4 \times 1/6$ ), մինչդեռ եթե կանխավճարների մեծության մասով օրենսդրական փոփոխություններ կատարված չլինեին, ապա 2011 թվականին կակնկալվեր կանխավճարների տեսքով պետական բյուջե հավաքագրել 2010 թվականին շահութահարկ վճարող տնտեսվարող սուբյեկտների մոտ ձևավորված շահութահարկի գումարի 3/4 մասը ( $12 \times 1/16$ ): Վերջինս նշանակում է, որ, այլ հավասար պայմաններում, կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2012 թվականին ավելի շատ շահութահարկի գումար կմնա հավաքագրելու, քան եթե կանխավճարների մեծության մասով օրենսդրական փոփոխություններ կատարված չլինեին (տարբերությունը կկազմի 2010 թվականի ընդհանուր շահութահարկի գումարի 1/12 մասի չափով):

Անմիջական ազդեցություն մուտքերի վրա կարող է ունենալ որոշ գործունեության տեսակների համար նվազագույն շահութահարկի հաշվարկման բազայի լրացուցիչ նվազեցումների սահմանման կամ քննարկման փուլում գտնվող՝

<sup>222</sup> Տե՛ս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, հոդված 47, կետ 1,2, ընդ. 30.09.1997թ., ՀՕ-155-Ն:

նվազագույն շահութահարկի վերացման ընթացակարգերը: Հետևաբար, եթե նվազագույն շահութահարկի մասով կատարվի որևէ փոփոխություն, ապա որպեսզի դա բացասական ազդեցություն չունենա ՀՀ պետական բյուջեի մուտքերի վրա, պահանջ է առաջանալու ուժեղացնելու ռեզիդենտների կանխավճարների ինստիտուտը: Մասնավորապես՝ եռամսյակային կանխավճարների չափը մեծացնել, սահմանել կանխավճարների վճարման պարտավորություն բոլոր դեպքերում՝ բացառելով հարկ վճարողի կողմից կանխավճարների մեծությունը ինքնուրույն որոշելու հնարավորությունը,

- 3) շահութահարկի հաշվարկում արտացոլված եկամուտները (ապրանքների, արտադրանքի իրացումից հասույթը, ծառայությունների մատուցումից, միջնորդությունից հասույթը, տոկոսները, վարձավճարները) ըստ էության անմիջականորեն կապված են ՀՆԱ-ի հետ և ուղղակիորեն կարող են ազդել նվազագույն շահութահարկի մեծության վրա,
- 4) ինչպես հաստատագրվածի մասում նշվեց, որոշ գործունեության տեսակներ (թվով 7) 2012թ. հունվարի 1-ից հաստատագրված վճարով հարկման կարգից անցնելու են հարկման ընդհանուր կարգին (շահութահարկ - եկամտահարկ), ինչի արդյունքում ակնկալվում են շահութահարկի (եկամտահարկի) մուտքերի մասով ավելացում:

**2. Ոչ ռեզիդենտների շահութահարկ - 2012 թ. ոչ ռեզիդենտների շահութահարկի վրա ազդող հիմնական գործոններն են.**

- 1) ոչ ռեզիդենտների շահութահարկի մասով ՀՀ պետական բյուջեի մուտքերի էական ավելացում (էական աճ) տեղի է ունենում այն տարիների ընթացքում, որում կատարվում են խոշոր կազմակերպությունների արժեթղթերի օտարում, ինչի արդյունքում ոչ ռեզիդենտների մոտ՝ հայտարարագրերի հիման վրա առաջանում է շահութահարկի վճարման պարտավորություն,
- 2) տարեց տարի ավելանում են (ուժի մեջ են մտնում) ՀՀ և այլ երկրների կառավարությունների միջև կնքված «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրերի թվաքանակը, ինչի արդյունքում հայաստանյան արդյուններից ստացվող մի շարք եկամուտների հարկումը կատարվում է ոչ ռեզիդենտների ռեզիդենտության պետություններում,
- 3) էական ավելացումներ տեղի են ունենում այն տարիներում, երբ որոշ խոշոր կազմակերպություններում իրականացված ստուգումների ժամանակ արձանագրվում են ոչ ռեզիդենտների շահութահարկի մասով գումարային մեծ խախտումներ,
- 4) ՀՀ կառավարության և միջազգային կառույցների հետ կնքվող համաձայնագրերով, ոչ ռեզիդենտների շահութահարկի մասով սահմանվում են հարկային արտոնություններ, 5. ներկայումս ՀՀ-ում առանձնացված ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտների հարկային մարմին ներկայացվող հայտարարագրերի (հաշվարկների) հիման վրա շահութահարկը հաշվարկվում է 10%, նախկինում կիրառվող 20%-ի փոխարեն<sup>224</sup>:

**Եկամտահարկի մասով** մուտքերն ապահովվում են հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտներից եկամտի վճարման աղբյուրի մոտ վճարված եկամտահարկի և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ

<sup>224</sup> Տե՛ս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, հոդված 57, ընդ. 30.09.1997թ., ՀՕ-155-Ն:

ձեռնարկատերերի) տարեկան եկամուտների հաշվարկների հիման վրա վճարված եկամտահարկի գումարներից:

2012թ. եկամտահարկի նվազման հիմնական գործոններն են.

1. Անհատ ձեռնարկատերերի որոշ մասի անցումը արտոնագրային վճարներով հարկման ռեժիմին<sup>225</sup>:

2. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի իս կետով սահմանված արտոնությունը, համաձայն որի հարկվող եկամուտը որոշելիս հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են ֆիզիկական անձանց կողմից անհատական բնակարանային շինարարության նպատակով կառուցվող շինությունների գրավադրման դիմաց ստացված նպատակային վարկերի սպասարկման համար վճարվող տոկոսավճարները<sup>226</sup>: Այս արտոնությունն, ըստ էության, չի կարող նկատելիորեն կրճատել պետական բյուջե հավաքագրվող եկամտահարկի գումարը, քանի որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից (այդ թվում այն ֆիզիկական անձանց, ովքեր տարվա ընթացքում ստացել են բացառապես այնպիսի եկամուտներ, որոնցից եկամտահարկը հաշվարկելու և պահելու պարտավորությունը դրված է հարկային գրծակալի վրա) հաշվետու տարվա համար հարկային մարմին տարեկան եկամուտների մասին հաշվարկի ներկայացման պրակտիկան մեզ մոտ տարածված չէ: Հետևաբար ՀՀ-ում հիփոթեքային վարկավորման աճող ծավալները գուզահեռաբար բացասական ազդեցություն չեն ունենա եկամտահարկի մուտքերի վրա:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ 2012թ. հարկային եկամուտների էական աճ առավելապես հնարավոր է ակնկալել ՀՆԱ-ի հարկունակ մասի ավելացումից, ինչի լիարժեք ապահովման համար գործադրի ղեկավարը այս տարվա սեպտեմբերի 8-ի նիստում խնդիր է դրել բոլոր նախարարների ու գերատեսչությունների ղեկավարների առջև՝ կապված իրենց ենթակայության տակ գտնվող ու լորտներում հաջորդ տարվա հարկման բազաների վերաբերյալ հնարավորինս հստակ տեղեկատվության ներկայացման հետ: Նշվում է, որ հարկերի լիարժեք հավաքագրումը միայն Պետական եկամուտների կոմիտեի խնդիրը չէ: Բացի այդ, ըստ տարբեր գնահատականների՝ ստվերային տնտեսությունը մեզ մոտ հասնում է բավականին զգալի չափերի: Համաձայն որոշ եզրակացությունների, այն կազմում է նույնիսկ համախառն ներքին արդյունքի մինչև 40 տոկոսը, ինչը բավական լուրջ ռեզերվ է: Եթե կառավարությանը հաջողվի ստվերի կրճատման ուղղությամբ իրականացնել համապատասխան գործուն մեխանիզմներ, ապա դա կհանգեցնի հարկման բազաների ընդլայնմանը, ինչն էլ կապահովի հարկային եկամուտների զգալի լրացուցիչ մուտքեր պետական բյուջե, առանց հավելյալ հարկային բեռի առաջացման: Նման մոտեցման դեպքում իրատեսական է 2012 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հարկային եկամուտների հավելյալ 101 մլրդ դրամի հավաքագրումն առանց լրացուցիչ հարկային բեռի:

**Ваня Казарян – Прогнозы налоговых доходов государственного бюджета РА за 2012 год.** – В статье сделана попытка представить налоговые и таможенные факторы, которые имели бы влияние на бюджет 2012 года и на бюджет налоговых доходов.

Все это важно учесть при прогнозировании доходов бюджета за 2012 год.

<sup>225</sup> Տե՛ս «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքը, ընդ. 22.12.2010թ., ՀՕ-209-Ն:

<sup>226</sup> Տե՛ս «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը, հոդված 9, ընդ. 27.12.1997թ., ՀՕ-183-Ն:

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ (Քննական վերլուծություն)

### ՀԱԿՈԲ ԶՈՐՈՅԱՆ

«Կրոնների պատմություն» բուհական դասընթացի «Աստվածաշունչ մատյանը» թեմայի դասավանդման շրջանակներում անհրաժեշտաբար պետք է քննարկել նաև աստվածաշնչական ընտանեկան-կենցաղային պատվիրանների հիմնահարցը: Թեմայի շրջանակներում ամենից առաջ անհրաժեշտ է հիմնավորված կերպով ներկայացնել այն իրողությունը, որ Աստվածաշնչի բարոյականության համակարգի հիմքը կազմում են Տասը պատվիրանները, որոնք մասնագետների կողմից սովորաբար բաժանվում են կրոնահավատքային և հասարակական-ընտանեակենցաղային: Կրոնահավատքայինի և հասարակական-ընտանեակենցաղայինի բաժանումը ինչ-որ իմաստով պայմանական է, քանի որ այդ բոլոր պատվիրաններն էլ աչքի են ընկնում խիստ ընդգծված բովանդակային ընդհանրությամբ: Դա է պատճառը, որ գործնականում շատ դժվար է սահմանազատել, թե պատվիրանների համակարգում որտեղ է սկսվում կրոնահավատքայինը և որտեղ՝ հասարակականն ու կենցաղայինը:

Այդ ամենը թելադրում են դասավանդման ընթացքում շեշտադրել և այն պահը, որ աստվածաշնչյան պատվիրանները բարոյական հնչեղության հետ միասին, ունեն նաև հասարակական և կենցաղային հարաբերությունները կարգավորելու գործառույթներ, որոնք առաջին հերթին ուղղորդվում են անհատ-հասարակություն վերընթաց ճանապարհով: Եվ եթե ընդունելի է հանրահայտ այն պնդումը, թե իրականում չի կարող գոյություն ունենալ «հասարակություն ընդհանրապես», այլ գոյություն ունեն միայն որոշակի (կոնկրետ) հասարակական-տնտեսական հարաբերություններ, ապա ճիշտ նույն ձևով էլ կարելի է պնդել, որ չկա «անհատ ընդհանրապես», քանի որ անհատը կոնկրետ հասարակարգի կամ հասարակական-տնտեսական հարաբերությունների արդյունքն է: Այս իմաստով Աստվածաշունչն անհատի հանդեպ առաջադրում է բացառապես բարձր առաքինություններ, ամենից առաջ՝ սեր և հոգածություն: Եթե իրավական դաշտում օրենքը կարգավորում է հասարակության և անհատի իրավական փոխհարաբերությունները, ապա՝ բարոյական դաշտում այն հոչակում է համընդհանուր սիրո գաղափարը: Օրենքը խախտողը պատժվում է նրա ամբողջ խստությամբ: Ի տարբերություն սրա՝ պատվիրանների համակարգի գործառույթի հիմքում ընկած է ոչ թե հակադրանքն, այլ՝ համոզմունքը, ինչպես նաև՝ տվյալ ժողովրդի ավանդույթներն ու սովորույթները: Այդ օրինաչափությունների արդյունքում էլ՝ աստվածաշնչական պատվիրանները խախտելու դեպքում գործի են դրվում համընդհանուր պարսավանքն ու հասարակության բարոյական այլ արժեքները: Այլ կերպ ասած, հակադրանքը կապվում է իրավական արտաքին ճնշման, իսկ բարոյականը՝ բացառապես ներքին մղման հետ: Աստվածաշնչական ընտանեա-

կենցաղային պատվիրանների դասավանդումը ենթադրում է մեթոդական մի շարք առանձնահատկություններ: Դրանք, որպես կանոն, կապված են այն բանին, որ այդ համակարգում մենք առնչվում ենք ինչպես զուտ կրոնական (հավատքային), այնպես էլ՝ աշխարհիկ գործունեների: Կրթական գործունը թելադրում է առաջնային համարել արարչագործությունը, մասնավորապես այն, որ մարդը ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ, այսինքն, մարդու մեջ Արարիչը դրել է միայն գեղեցիկն ու կատարյալը, բարին ու վսեմը, ինչպես որ հմուտ մեխանիկն ու ոսկերիչն իրենց ստեղծագործություններն են հասցնում կատարողական կատարելության, և մարդուն հրահանգել ու պատվիրել է «Մի՛ սպանիր», մի՛ խոտորիր, մի՛ փչացրու այն ամենը, ինչ կատարյալ ձևով դրեցի քո մեջ. «Ով թափի մարդու արյունը, նրա արյան փոխարեն թող թափվի իր արյունը, որովհետև Աստծո պատկերով եմ ստեղծել ես մարդուն»<sup>227</sup>:

Դրան զուգընթաց պետք է կարևորել և այն, որ մարդն ապրում է հասարակության մեջ, առաջնորդվում հասարակության բանավոր և գրավոր օրենքներով այնքանով, որքանով որ պահպանում է իր նմանների իրավունքները: Եվ այնքանով որքանով որ նա պահպանում է պատվիրանները, ըստ կրոնական աշխարհայացքի, վայելում է ոչ միայն Աստծո օրհնությունն ու բարությունը, այլև՝ հասարակության սերն ու համակրանքը: Կրոնական աշխարհայացքը հակադրում է անվերապահ կերպով ընդունել և այն, որ անհատը, երբ կանգնում է հակառակ դիրքորոշման վրա, իր կեցվածքով փաստորեն մերժում և ոտնատակ է տալիս սրբությունն ու արդարությունը, որի արդյունքում էլ նրա մեջ կործանվում և վերանում է աստվածայինը, այսինքն՝ մարդն ինքն իրեն դատապարտում է անխուսափելի կորստի:

Այս ամենի վերջնակետն ու հանգուցալուծումն անդառնալիորեն դառնում է **պատիժն** իր ամբողջ խստությամբ: Մարդկային սերնդի ծագումնաբանության արշալույսին անհնազանդության այդպիսի օրինակ է եղեռնագործության հայրը՝ Կայենը, որը, նախանձով ու անհնազանդությամբ լցված լինելով, պատվիրազանցությամբ բռնեց անեծքի ճանապարհը՝ սպանելով իր եղբորը: Իր անհնազանդությամբ և անկանխատեսելի գործունեությամբ Կայենը խախտեց Օրենքն ու պատվիրանը, իր մեջ կորցրեց մարդուն ու մարդկայինը, հետևաբար՝ նաև աստվածայինը, և իր վարքով իրեն դատապարտեց մահվան: Մարդը բռնեց օրենքը չընդունելու, այն խախտելու, խոտորելու և տարբեր մեթոդներով ու միջոցներով զանց առնելու ճանապարհ: Այս ամենը հղի է այնպիսի գործունեությամբ, որի հանգուցալուծումն է սուտը, կեղծիքը, չարը և, բնականաբար, մեղսագործությունն՝ իր ողջ ծանրությամբ:

Աստվածաշնչական պատվիրանների դասավանդման ելակետերից հաջորդը Սուրբ Գրքում մարդու մասին վկայող ամենակարևոր ճշմարտություններից մարդու աստվածապատկեր լինելու ուսմունքն է. «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրանց»<sup>228</sup>: Դա անխուսափելիորեն հանգեցնում է այն հետևությանը, որ մարդու արարումն ընդհանրապես արարչագործության պսակն է և արաչագործված մյուս բոլոր արարածները պետք է ծառայեն մարդուն:

<sup>227</sup> Օննդ, 9:6:

<sup>228</sup> Օննդ, 1:12-24

Ինչպես անցալում, այնպես էլ մեր օրերում, մարդու աստվածապատկեր լինելու դրույթն անվերջանալի քննարկումների առարկա է և՛ աստվածաբանների և՛ փիլիսոփաների կողմից: Վիճաբանական այդ հիմնահարցի լուծման գործում աստվածաբանությունը ելակետային է համարում այն լուծումը, համաձայն որի Աստծո պատկերն, ակներևաբար, չպետք է փնտրել մարմնականում, քանզի Աստված հոգի է և կրկնօրինակման համար ֆիզիկական ձև չունի: «Հոգի է Աստված և Նրա երկրպագուները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն»<sup>229</sup>: Դրա հետ կապված անհրաժեշտ է դառնում կիրառել դասավանդման ևս մեկ մեթոդական առանձնահատկություն: Մասնավորապես, եթե աստվածակերպությունը պետք է ըմբռնել ոչ մարմնապես, ապա ինչպես և որտեղ որոնել այդ պատկերը: Ամեննին էլ քննարկման նյութ չդարձնելով աստվածային հատկանիշները՝ այնուհանդերձ, հարկ է անդրադառնալ երկու հիմնարար հատկանիշների քննությանը: Առաջինն աստվածային անսահմանության և անպարփակության հատկանիշն է, որը հայ աստվածաբան Գ. Նարեկացին ներկայացնում է հետևյալ կերպ.

«Քո չափք անչափելիք,  
Դու՛ սկիզբն եւ դու՛ կատարած:  
Քանզի ոչ երբէք ստուերացուցանէ  
Զլոյս ողորմութեան քոյ խաւար սրտմտութեան,  
Վասն զի ոչ եւ գրաւեալ ընդ մասամբք ախտից,  
Ի վերդ,քան զբան,պատկեր անպարագիր,  
Անդր,քան զորքանութիւն կշռութեան,  
Անչափ լայնութիւն փառաց,  
Անտարրափակ ընդարձակութիւն հատուզարութեան,  
Անամփոփելի առաւելութիւն բացարձակութեան,  
Անտկարանալի բարերարութիւն գթութեան»<sup>230</sup>:

Միջնադարյան մեծագույն խորհրդապաշտ աստվածաբանն աստվածային նշված մեծագույն հատկանիշներին որպես հակակշիռ ներկայացնում է նաև սահմանափակություններ, որոնցից ոչ միայն զերծ չեն մարդիկ, այլև շատ հաճախ, այդ սահմանափակություններով են առաջնորդվում և բնութագրվում

Հոգեկորույս եւ միշտ մտաբախ,  
Կամակոր իսկ եւ սրտաբեկ,  
Ուշամոռաց եւ հանճարագրաւ,  
Զգայագուրկ եւ իմաստասպառ,  
Յայրատատես եւ եղեռնալուր»<sup>231</sup>:

Ուշադիր հետևելով այս երկու բնութագրիչ հատվածներին՝ կարելի է հանգել այն գաղափարին, որ մարդ արարածը, քանի որ սահմանափակ է իր չափորոշիչների մեջ, անկարող է ընկալել և բնութագրել տարածաժամանակային անսահմանությամբ և հավերժությամբ բնութագրվող աստվածային էությունը: Եթե անգամ փորձ է արվում բնութագրել տարածաժամանակային անսահմանությամբ

<sup>229</sup> Հովհ, 4:24:

<sup>230</sup> **Գրիգոր Նարեկացի**, Մատյան Ողբերգության, Երևան, 1985, էջ 303-304:

<sup>231</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 329:

և հավերժությամբ բնութագրվող աստվածային էությունն, ապա այն խիստ պա-  
կասավոր է և թերի:

Մեր կարծիքով, նույնը պետք է ասել նաև աստվածային կարևորագույն  
հատկանիշներից մյուսի՝ տրանսցենդենտության (անդրացականության) մասին:

Հարց է առաջանում, թե արդյո՞ք անդրացականությունը կարելի է համարել  
մարդկային բնութագրիչ հատկանիշ:

Այս առնչությամբ ևս անվերապահորեն պետք է պնդել, որ ո՛չ, քանի որ  
անդրացականությունը բոլոր մտածելի կատեգորիաներից ու սեռերից վեր կանգ-  
նած հասկացություն է, գիտակցության ապօրինի ձև և փորձի սահմաններից  
դուրս է գտնվում: Այլ կերպ ասած, փորձնական ճանապարհով հնարավոր չէ ո՛չ  
հասկանալ ո՛չ էլ քննարկել անդրանցականության ճիշտ կամ սխալ լինելը: Այս ի-  
մաստով էլ մարդիկ չեն կարող համարվել անդրանցական էակներ: Այնուամե-  
նայնիվ, դատելով Աստվածաշնչից, մարդկանց արարման եղանակը և այլ ստեղ-  
ծագործությունների հետ նրանց հարաբերությունները ցույց են տալիս, որ նրանք  
տարբեր են, ավելին՝ մարդը զանազանվում և վեր է կանգնած արարված մյուս  
աշխարհից: Ս.Գրքի համաձայն՝ մարդն արարվել է երկրի հողից: Դրանով նա  
կենդանի արարածներից և բուսականությունից չի տարբերվում, որոնք նույնպես  
հողից են եղել: Դրանով արարման այդ երկու օբյեկտները (մարդ-կենդանի և բու-  
սականություն) նման են միմյանց: Նշանակում է մարդու և արարված մյուս էակ-  
ների տարբերությունները պետք է որոնել այլ հարթության մեջ: Աստվածաբան-  
ներն այդպիսի ելակետ են համարում այն, որ արարչագործությունից հետո մար-  
դու մեջ կենդանության շունչ փչվեց, որով էլ մարդը վերածվեց զգայուն ու պա-  
տասխանատու «կենդանի էակի»՝ **հոգևոր էակի**: Իսկ դա նշանակում է, որ մար-  
դու, իբրև հոգևոր էակի լինելության գործընթացի տրամաբանական ավարտը  
դարձավ այն, որ **մարդն անձնավորվեց**:

Ադամն առաջինն արարվեց, բայց նա մենակ էր, անտարակույս, մենակ: Ա-  
րարված բարի աշխարհում Աստված հայտարարեց, որ Ադամի վիճակը «լավ չէ»:  
«Տեր Աստուած ասաց. «Լաւ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի  
օգնական ստեղծենք նրա համար»<sup>232</sup>: Ադամն իր էությամբ և գործունեությամբ  
ձգտում, տենչում էր մեկ ուրիշի, առանց որի նա չէր կարող համայնք կազմել:  
Աստծո հետ համայնք կազմել հնարավոր չէր, քանի որ Աստված Ադամից բարձր  
էր և վեր: Ադամն ավելի պակաս չափով կարող էր բնության հետ «մեկ դառնալ»,  
բայց քանի որ բնական աշխարհն արարչագործությամբ նրան հավասար չէր, այլ  
ծառայում էր իբրև կյանքի հենարան, ապա այդպիսի համայնքը հիմնադրել  
նույնպես հնարավոր չէր: **Ուստի Աստված Ադամի մարմնից արարեց նրա իգա-  
կան կրկնօրինակը: Կամ որ նույնն է՝ մեկը տրոհեց երկուսի և ապա նրանց  
կրկին մեկ հայտարարեց**: Այժմ արարված Աստծու պատկերի մեջ գոյություն ու-  
նեին երկու փոխլրացնող կեսեր: Այստեղ արժանահիշատակ է և այն, որ Արա-  
րիչն Ադամի մարմնից ստեղծեց կնոջը, այլ ոչ թե երկրի հողից, ոսկոր՝ նրա ոսկո-  
րից, մարմին՝ նրա մարմնից: Կինը դարձավ տղամարդու նման էակ: Միայն մեղ-  
սագործությունից հետո Ադամը նրան իր ընտրությամբ անուն տվեց՝ կոչելով Ե-  
վա (Կյանք), քանի որ մահից նվաճված աշխարհում նա դարձավ բոլոր մարդ-

<sup>232</sup> Ծննդ, 2:18:



կանց նախամայրը. «Եւ Ադամն իր կնոջ անունը դրեց Կեանք, որովհետև նա է բոլոր մարդկանց նախամայրը»<sup>233</sup>:

Դա նշանակում է, որ, ըստ Աստվածաշնչի, Ադամն ու Եվան Աստծու «ձեռքերից» ելան իբրև հատուկ արարչագործություններ, մեկը՝ հողից, մյուսն՝ արդեն գոյություն ունեցող մարդուց: Բայց երկուսն էլ որպես Աստծու պատկերը կրողներ եզակիորեն տարանջատված մնացին մյուս բոլոր ստեղծագործություններից: Դժվար չէ նկատել, որ արարչագործության համակարգում կնոջ ստեղծման խնդիրը վերապահումով պետք է դիտարկել և հասկանալ «նրբորեն»: Եթե Ադամի արարման համար իբրև նյութ օգտագործվեց չմշակված հողը, ապա կնոջ պարագայում որպես նյութ ծառայում է արդեն արարված, ընդ որում արարման պսակ հանդիսացող մարդը: Եվան քնքուշ է ու նրբին, առանց այդ քնքշության, նրբության և գեղեցկության, սերը, որով պիտի լցվեր ողջ իրականությունը, միանգամից ավարտուն ձևով չէր ստացվի: Գորշ հողն անբավարար էր արտահայտելու այն ամենայն գեղեցկությունն ու նրբությունը, որը կոչվելու էր կին քնքշանքի, սիրո և ոգեշնչման աղբյուր: Ասել կուզի՝ բուն աստվածաշնչական վարդապետության համաձայն **կինն արարչագործության պսակի վերնապսակն է:**

Դասավանդման ընթացքում այս իրողությունն անհրաժեշտ է ներկայացնել նաև միաստվածային այլ կրոնների հետ ունեցած աղերսների տեսանկյունից: Մասնավորապես, հարկավոր է փաստարկված կերպով ցույց տալ, որ թյուր են մյուս կրոններում, օրինակ իսլամում, տիրող այն կարծիքները, որ կինը ստորադաս է տղամարդու համեմատությամբ: Այդ ստորադասությունից էլ ելնելով՝ կինն իսլամում զրկված է անգամ տարրական, կենցաղային իրավունքներից; Այսպես օրինակ, տղամարդը կարող է միաժամանակ ամուսնանալ չորս կանանց հետ: Տղամարդը կարող է ամուսնանալ և իսլամադավանի հետ, կինը՝ միայն իսլամադավան ամուսնու հետ<sup>234</sup>: Այստեղ կնոջը ստորադասություն է վերագրված այն պատճառով, որ հասարակությունը մայրիշխանությունից անցում էր կատարում հայրիշխանության, իսկ ընտանիքում դերերը փոխվել էին և ընտանիքի ղեկավար դարձել էր տղամարդը: Բնականաբար, այս լուրջ տնտեսական փոփոխությունն իր որոշակի կնիքը պետք է դներ կրոնական համակարգերի գաղափարական կառուցվածքի վրա: Ինչ վերաբերվում է բուն արարչագործության հիմնահարցին, ապա նրանում ոչ միայն անհավասարության չկա, այլև, ինչպես վերը նշվեց, այդ կոնտեքստում իր ձևով առավել կատարյալը կինն է քանի որ Ադամի արարման համար նյութը գորշ հողն էր, իսկ Եվայի արարման նյութը՝ տղամարդը, որով էլ արտահայտվում է այն գեղեցկությունն ու պերճանքը, քնքշանքն ու սերը, որն անմնացորդ արտահայտվում է կնոջ կերպարում:

Արարչագործության և մարդու աստվածապատկերության հետ կապված՝ աստվածաբանական և թեիստական միտքը համարում է նաև, որ հանձին աստվածային պատկերի՝ մարդուն ի վերուստ տրվում է նաև կարևորագույն մեկ այլ առանձնահատկություն՝ **իշխանություն արարչագործված բոլոր էակների վրա:** Ընդ որում, Աստված տղամարդուն և կնոջը պատվիրում է միասին իշխել բոլոր կենդանի էակների վրա և բուսականությունն օգտագործել իրենց կարիքներն բավարարելու համար: Իսկ դրանց հետևում է նաև, որ իշխանության լիազորությո-

<sup>233</sup> Օննդ, 3:20:

<sup>234</sup> St' u Религиозные традиции мира, М, 1996, Т. II, 4.87

յամբ օժտված լինելու տեսանկյունից՝ արարչագործված մարդը տարանջատվում է մնացած արարածներից: «Իշխանական լիագործությամբ օժտված լինելն էլ» մեզ հեռավոր կերպով ինչ-որ բան է հիշեցնում աստվածային անդրացականությունից, սակայն մնում է նաև հիմնականն՝ աստվածային անհատությունը:

Աստվածաշնչական պատվիրանների առնչությամբ պետք է նկատել նաև, որ մարդկային ցեղի, գենի շարունակությունը կամ ծնունդ տալն ամեննին էլ չպետք է դիտարկել իբրև կենդաբանական ֆունկցիա: Կրոնի դիրքերից դա ակնածալի պարտականություն է, որի համար մարդիկ պատասխանատու են իրենց երկնային Հոր՝ Աստծու առջև: Արարչի պատկերը հավերժացնելու մի անչափելի հրաշք և արժանապատվության զգացում է ապրում Եվան, երբ գրկում է իր առաջնեկին և բացականչում. «Մարդ ծնեցի Աստծո գործությամբ»<sup>235</sup>: Այս պարագայում առնչվում ենք նաև աստվածային հիմնարար մեկ այլ հատկանիշի՝ բարության հետ: Դրանք մենք հանդիպում ենք նաև արարչագործության ողջ ընթացքում: Արարչագործության յուրաքանչյուր օրվա ավարտին Արարիչը քննարկում էր իր ստեղծածը, տեսնում, թե ինչպես է ստեղծվածի ավարտը, և արարչագործության յուրաքանչյուր փուլ ընդհանրացվում, ասելով՝ «այն ամենը, ինչ ստեղծել էր շատ լավ է»<sup>236</sup> այսինքն գեղեցիկ է և կատարյալ: Մեթոդական առումով այստեղ պետք է ընդհանրացված ձևով ներկայացվի աստվածաշնչական այն պնդումը, որ ամեն մի կատարելություն մեծ բարություն է բովանդակում: **Արարիչն ինքը բացարձակ բարություն է:** Եվ, քանի որ մարդն ընդամենը պատկեր է, այդ պատճառով էլ մարդկային բարությունը սահմանափակ է և խոցելի, քանի որ մարդկային էությունը խոցելի է չարի համար և ենթակա ապականության:

Այս համատեքստում աստվածաշնչական պատվիրանների դասավանդման մեթոդիկական անխուսափելիորեն ենթադրում է նաև այն հիմնահարցի լուսաբանումը, թե ի՞նչ է չարը, նախագո է այն, թե ոչ<sup>237</sup>: Անտիկ փիլիսոփայական համակարգերից սկսած մինչև մեր օրերն այս հարցն անցել է անհաշիվ քննարկումների միջով: Նրա քննական վերլուծությանն անդրադարձել է նաև հայ աստվածաբանական միտքը (Եզնիկ Կողբացի, Գր. Տաթևացի, Հովհ. Երզնկացի և այլոք): 5-րդ դարասկզբին Եզնիկ Կողբացին չարի և բարու հակամարտության խնդիրը քննարկում է ժամանակի պահանջներին համահունչ և հիմնահարցը վերլուծության է ենթարկում՝ ելնելով դավանաբանական մյուս խնդիրներից: Քննարկվում է պարզագույն հարց. եթե ամեն ինչի պատճառը մի էություն է, որը բարի է և որին հակառակ որևէ բան չկա, ապա չարն ու չարիքը գոյություն չպետք է ունենան: Հասարակական հարաբերությունները վերլուծելիս տեսնում ենք, որ նրանում

<sup>235</sup> Ծննդ, 4: 1:

<sup>236</sup> Նույն տեղում, 1:3:

<sup>237</sup> Աստվածաբանության և փիլիսոփայության մեջ չարի նախագոյ կամ ոչ նախագոյ լինելու հարցը լուրջ քննարկումների խնդիր է: «Կրոնների պատմության» գործող ուսումնական ծրագիրը սեմինար պարապմունքներ չի նախատեսում: Եթե դրան ավելացնենք և այն, որ ծրագրային «Աստվածաշունչ մատյանը» թեմայի դասավանդման համար նախատեսված է ընդամենը 4 ժամ, որից 2 ժամը հատկացվում է Հին կտակարանին, ապա միանգամայն ակնհայտ է, որ միայն դասախոսությունների միջոցով ծրագրային նյութի մատուցումը անհրաժեշտ, բայց ամեննին էլ բավարար պայման չէ թեմայի յուրացման համար: Այդ ամենի հետ կապված պետք է խիստ կանոթել ուսանողների անհատական աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը, ինչպես նաև՝ ուսանողների կողմից թեմայի հետ կապված ռեֆերատ աշխատանքների գրելը:

անկա են բացասական բազմաթիվ երևույթներ և «չար» դրսևորումներ: Եվ թվում է, առաջանում է հակասություն՝ որտեղի՞ց են այդ երևույթները: Այդ առումով Եզնիկը գրում է. «Իսկապես չարիքները, որ լինում են, տարակուսանքի մեջ են գցում շատերին, ոմանք՝ կամեցան Աստծո հետ գոյակից մի բան ենթադրել, որը սկիզբ ունի, իսկ ոմանք՝ նրանցից գատ ինչ-որ նյութ, որը հյուլ է են անվանում»<sup>238</sup>:

Լսարանի ուշադրությունը պետք է հրավիրել այն իրողության վրա, որ հարցի նման քննարկումը տանում է դեպի երկվության (դուալիզմ) և հարցը մտնում է փակուղի: Երկվության այդ դրսևորումները քրիստոնեական միաստվածային ըմբռման համար անընդունելի են և խիստ վտանգավոր հետևյալ պատճառով՝ երկվությունը զրադաշտական կրոնի հիմքերից էր: Չարի խնդրի տեսանկյունից մերժելով երկվության դիքորոշումները՝ Եզնիկը հիմնավորում է Աստծո գոյության և էության քրիստոնեական ըմբռնումը: Աստծո գոյության հարցը քննարկելիս աստվածաբանը պնդում է, որ այն **անըմբռնելի մի բնագավառ է, որ մարդուն տրվում է ոչ թե քննելու կամ հետազոտելու, այլ դոգմատիկ հավատի համար**: Թեև նա չի փորցում ապացուցել Աստծո գոյությունը, այնուամենայնիվ, սահմանափակվում է միայն տրամաբանական փաստարկումներով և հռչակում է իր հավատն այնկողմնային աշխարհի և գերագույն էակի գոյության նկատմամբ. «Եվ արդ, որովհետև մի էությունն անքննելի է ու բնույթով անմատչելի, նրա անքննելիության նկատմամբ պետք է անկարողության ապացույց ներկայացնել, իսկ նրա գոյության նկատմամբ գիտակցական հավատ և ոչ քննական»<sup>239</sup>:

Եզնիկը Աստծուն ներկայացնում է իբրև մշտնջենական էակ, որը չունի ոչ սկիզբ, ոչ վերջ, ոչնչով չի որոշվում և չի պայմանավորվում: Հավատքային առումով չափազանց արժեքավոր է աստվածաբանի այն պնդումը, թե Աստված **ինքնագոյ է**, այսինքն՝ գոյության պատճառը կրում է իր մեջ և միաժամանակ հանդես է գալիս իբրև ողջ գոյի, փոփոխվողի ու շարժվողի պատճառ: Եթե ամեն ինչ նրանցից (Աստծուց) է և առանց նրա գիտության և կամքի որևէ բան չի եղել, ապա որտեղից աշխարհ եկավ չարը և աններդաշնակությունը: Կողբացին իր աշխատության մեջ հետևողականորեն հիմնավորում է, որ եղել է և կա միայն մեկ Աստված, և որ երկու արարիչներ և անստեղծ էակներ միաժամանակ գոյություն ունենալ չեն կարող: Ըստ Կողբացու, եթե ընդունենք երկուսի միաժամանակյա կամ միաստեղծ գոյությունը, ապա՝ ստիպողաբար պետք է ընդունենք նաև, որ բարու և չարի միջև առկա է ինչ-որ մի բան, որը պետք է սահմանազատի և բաժանի նրանց: Ընդունելով, որ Արարիչն ամեն բան ստեղծել է ոչնչից, որով անգոյից առաջ է եկել գոյավորը, ապա ինչ հարաբերություն կարող է լինել Աստծո և հյուլեի միջև: Կարո՞ղ ենք ասել, թե Աստված գոյություն ունի հյուլեի մեջ: Ոչ, պատասխանում է Եզնիկը, որովհետև դա կնշանակի ընդունել, որ հյուլեն (նյութը) Աստծուց մեծ է, այսինքն Աստված կախման մեջ է նյութից: Իսկ եթե Աստծուն անջատենք նյութից, այդ դեպքում կհանգենք եռաստվածության կամ էլ՝ իրարից անկախ երեք գոյերի գաղափարի և հակադրված կլինենք ընդունել, որ Աստծուց ու հյուլեից բացի գոյություն ունի նաև ինչ-որ երրորդ՝ առաջին երկուսին իրարից բաժանող մի անջրպետ<sup>240</sup>:

<sup>238</sup> *Եզնիկ Կողբացի*, Եղծ Աղանդոց, Երևան, 1994, էջ 18:

<sup>239</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>240</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 21:

Դասավանդվող նյութի արդյունավետության պահանջը ենթադրում է ցույց տալ, որ եզնիկյան գաղափարախոսությունն ու աշխարհայացքը կառուցվում է այն բանի վրա, որ աշխարհում ի ծնե ոչ մի չար բան չի եղել և չէր էլ կարող լինել, որով էլ վերանում է չարի անխուսափելիությունը: Քանի որ մարդու երջանկությունը կամ դժբախտությունը ճակատագրով նախասահմանված չէ, ապա, ըստ Եզնիկի, մարդն ի վիճակի է ներգործել իր կյանքի ընթացքի վրա և փոխել այն, վնասակարը դարձնել օգտակար, դժբախտությունը՝ երջանկություն: Այսինքն՝ ի հակադրություն կույր ճակատագրապաշտության՝ **Եզնիկը հետևողականորեն պաշտանում է կամքի ազատությունը**<sup>241</sup>: Բարի Արարիչից չար բան չի ստեղծվում: Նա մերժում է իրերին չար էություն վերագրելը, քանի որ կա ոչ թե չարի, այլ՝ բարիների արարիչ: Բայց չի ժխտում նաև, որ բարիքի կողքին առկա է չարիքը: Բնության մեջ «լավ իրերի», երևույթների կողքին հանդիպում են նաև վատերը, բայց ասելով, որ դրանք Աստված է արարել, անպատշաճ է, քանի որ մարդիկ անկարող են առանձնության մեջ արարվածների համարել բարի կամ չար, «որովհետև շատ անգամ ինչ-որ բարի են կարծում միայնակ առանց ուրիշի հետ խառնվելու, վնասակար է լինում»<sup>242</sup>:

Այստեղից օրինաչափորեն հետևում է եզնիկյան աշխարհընկալման հիմնարար սկզբունքը՝ չարն ու բարին չեն կարող էություն կամ գոյ լինել, այլ՝ միայն գործողություններ են, ավելի ճիշտ կլինի ասել՝ գործողությունների արդյունք: Բնության մեջ բացարձակ չար կամ բարի մարմիններ չկան, այլ առկա են դրանք բարի կամ չար նպատակների համար օգտագործելու ձգտումներ կամ գործողություններ:

Եզնիկյան այս գաղափարներին հանդիպում ենք նաև միջնադարյան խոշոր աստվածաբան Հովհան Դամասկոսցու մոտ, որն այդ կապակցությամբ գրում է. «Ինքն իրենից դուրս գալով, մարդկային միտքը հաճում է դեպի անգոն, մտահայում է այն և դառնում չարի գյուտարար, քանզի չարը անգո է, իսկ չարի նմանությունն Աստծո էությանը մարդկային մտքի արդյունքն է: Պատվիրանների խավարումը մարդուն զրկում է մտային լույսից, նրան «բնական վիճակի» մեջ է դնում, որի հետևանքով մարդը հայտնվում է ապականության քայքայման բնական օրենքի տակ: Մեղքին հետևում է քայքայումը և մահը»<sup>243</sup>:

Դժվար չէ նկատել նաև, որ համապատասխան հավատքային եզրահանգումն՝ աստվածային պատգամից շեղումը հանգեցրեց նրան, որ **Ադամն ու Եվան ամոթ զգացին**, ու թեև Աստվածաշունչն ասում է, որ ամոթ զգացին քանի որ մերկ էին, մեր կարծիքով, ամոթի հիմքում ընկած էր նաև սեփական վարքագծի գիտակցումը: Առաջին մարդիկ, որ ստեղծվել էին իրար հարազատ և ընկեր, նախամեղքից հետո մեկմեկու նայելով՝ տեսան անծանոթների: Մեղսագործությունից

<sup>241</sup> Թեմայի դասավանդման առանձնահատկությունների հետ կապված՝ նպատակահարմար է կամքի ազատության քրիստոնեական վարդապետության առանձնահատկությունները ներկայացնել բազմակարծության (տեղական և օտար հեղինակների, ինչպես նաև կրոնական և աշխարհիկ լուծումների) դիրքերից և քննարկվող հիմնահարցի վերաբերյալ անցկացնել սեմինար պարապմունք՝ վերջինիս հարցացանկում ներառելով քննարկվող հիմնահարցի առանցքային տեսանկյունները:

Կամքի ազատության քրիստոնեական վարդապետության տեսական-կոնցեպտուալ տեսանկյունների ընկալումն ապահովելու միտումով անհրաժեշտ է այն ներառել նաև անհատական աշխատանքի թեմատիկայի համակազմում:

<sup>242</sup> **Եզնիկ Կողբացի**, Եղծ Ադանդոց, էջ 11:

<sup>243</sup> **Зарин С.М.**, Аскетизм по православно-христианскому учению, М, 1996, с. 128

հետո տղամարդն ու կինը դեռևս կրում էին Աստծո պատկերը, բայց այդ պատկերն աստիճանաբար աղոտացավ ու խամրեց: Ընդամենն աղոտացավ, խամրեց, բայց ամենևին էլ չխզվեց ու չվերացավ աստվածային պատկերը: Ավելին, մարդակենտրոնությունն ու աստվածային սերը մարդուն հնարավորություն տվեցին վերականգնելու իրենց համար երբեմնի անապական աստվածային պատկերը: Մեղսագործության ավերվածները չափից դուրս կործանարար էին: Մարդիկ բաժանվելով Աստծուց՝ բաժանվեցին նաև միմյանցից, խաթարվեց նաև Եդեմի մտերմությունը:

Մեղքը մուտք գործեց մարդու աշխարհ և շատ կարճ ժամանակ պահանջվեց, որպեսզի մարդը գործադրի առաջին աղետալի ոճիքը եղբայրասպանությունը: Աբելի սպանությունից հետո բռնությունն աշխարհում դարձավ կենսաձև, ցավալի և անխուսափելի չարիք, որը հասարակական կյանքում ճանապարհի հարթեց սանձարձակության, օրինազանցության, անբարոյականության և այլ արատների դրսևորման համար:

Քաջ գիտակցելով, որ հնարավոր է մարդկային ապականությունը, Աստված մարդուն բացատրեց, նրա առջև դրեց բարու և չարի ընտրության հարցը՝ քաջ գիտակցելով, որ այն մարդուն կարող է փորձության տանել: Աստված այդ ճանապարհի ընտրությունը չէր ցանկանում, քանի որ գիտեր, որ չարի իմացությունն ու կիրառումը ճանապարհ է դեպի մահ: «Բայց բարու եւ չարի գիտութեան ծառից մի կերէք, որովհետեւ այն օրը, երբ ուտէք դրանից, մահկանացու կդառնաք»<sup>244</sup>:

Արդեն ավելի ուշ, երբ իր պատվիրանը խախտելու համար Ադամը պատասխանատվության կանչվեց, Աստված հարցրեց. «Արդեոք կերա՞ր այն ծառի պտղից, որից պատվիրել էի, որ չուտես»<sup>245</sup>:

Առաջին օրինազանցությամբ և պատվիրազանցությամբ մարդկային աշխարհ են ներմուծվում չարի և մահվան գաղափարները: «Ինչպես որ մեկ մարդով մեղքը աշխարհ մտաւ, եւ մեղքով էլ՝ մահը, այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածուեց մահը»<sup>246</sup>: Ընդ որում, այս պարագայում անհրաժեշտ է շեշտադրել այն իրողությունը, որ մարդկային կախվածությունը, մահկանացու և ապականացու լինելն ամենևին էլ չի նշանակում, թե Աստված անկատար աշխարհ է ստեղծել: Դա միայն նշանակում է, որ անսահման տարբերություն գոյություն ունի Արարչի և արարվածների միջև: Քանի դեռ պատկեր կրող մարդիկ հարգում էին այդ տարբերությունը, նրանք պաշտպանվում էին արարչագործական բարությանմբ: Երբ որ խախտվեց այդ տարբերության սահմանը, մարդը գրկվեց բարության պաշտպանվածությունից և մարդու անձնական ջանքերով էլ աշխարհ մուտք գործեց չարիքն ու մահը:

**Մեղսագործության գլխավոր դերակատարը կինն է և դա պատահական չէ,** քանի որ գայթակղիչն ակնհայտորեն գիտեր, որ Աստված Ադամին նախագրուշացրել էր, երբ Եվան դեռևս գոյություն չուներ: Կինը նորեկ էր պարտեզում և ավելի պակաս էր տեղեկացված և, հետևաբար, ավելի շատ էր խոցելի, որին ավելանում է նաև սուտն ու կեղծիքը: Սատանան Եվային հորդորում է գնալ օրինա-

<sup>244</sup> Ծննդ, 2:17:

<sup>245</sup> Նույն տեղում, 3: 11:

<sup>246</sup> Հռոմ, 5:12:

գանցության և երբ ստանում է բացասական պատասխան, գայթակղեցնում է և ավելացնում. «Չէք մահանայ, որովհետև Աստուած գիտեր, որ այն օր, երբ դրանից ուտեք, կը բացուէն ձեր աչքերը, եւ դուք կըլինէք աստուածների նման, կիմանաք բարին ու չարը»<sup>247</sup>:

Կասկած սերմանելով կնոջ մտքում՝ աստանան օգտվեց կնոջ նկատմամբ իր առավելությունից և Եվայի վարքով կասկածի տակ դրեց Աստծո և մարդկանց ուխտը: «Կլինէք Աստծու նման» գաղափարը խիստ գայթակղեցուցիչ էր: Ադամն ու Եվան արդեն իսկ աստվածային պատկերով էին և կարելի է ենթադրել, որ «կրկին նման լինել», ուղղակի նշանակում էր ձգտել և հասնել աստվածային հավերժության և անդրացականության: Չէր առաջարկվում նմանվել արարչագործության մյուս օբյեկտներին, այդ առաջարկն անիմաստ կլիներ, քանի որ մարդիկ մի տեսակ տիրապետող էին կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ: Կնոջը չառաջարկվեց հավասարվել Ադամին, քանի որ նա արդեն մի էր Ադամի հետ և լիարժեք հավասարություն էր վայելում: Ադամի և Եվայի համար հասանելի միակ իշխանական կառուցվածքն Աստծո գերիշխանությունն էր: Մեղքի ճանապարհն մարդիկ մերժում էին աստվածային գերիշխանությունը և իրենք իրենց հայտարարում էին գերիշխան: Այդ ամենից դժվար չէ եզրակացնել, որ հոգևոր դաշտում **մեղք գործել, ըստ էության, նշանակում է մի կողմ թողնել օրենքն ու պատվիրանը և օրինազանցությամբ հասնել գերիշխանության:** Այդ տեսանկյունից պետք է դիտարկել նաև Եվայի հաջորդ քայլը, որով նա փորձում է դառնալ իրարարության լիակատար տերը; Նա անտեսում է պատվիրանը, որոշում է, որ ծառը լավն է, աչքի համար հաճելի ու ցանկալի և ոչ միայն ինքն է ճաշակում պտղից, այլև՝ մի մասն էլ ճաշակելու համար տալիս է Ադամին: Այս պարագայում առնչվում ենք մարդկային էության և բնավորության ևս մեկ հետաքրքիր գծի՝ հակառակվելու և հակադրվելու գծին: Ըստ էության այդ ճանապարհով անհատը փորձում է հաստատելով հայտարարել իր «ես»-ը, անգամ՝ պարտականություն կատարելիս: Այդ առումով խիստ տեղին է մեջբերել Ա. Բերգսոնի բնութագրական հետևյալ տողերը. «Մարդ որքան էլ բնականոն կատարի իր պարտքը, իր մեջ հանդիպում է դիմադրության»<sup>248</sup>: Ավելին, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ներքին այդ դիմադրությունն աստիճանաբար վեր է ածվում արտաքին դիմադրության ու հակադրության և, ի վերջո, մարդուն տանում է դեպի փորձություն: Այստեղ իր գործունեությունն է ծավալում դիալեկտիկայի հիմնական օրենքի՝ հակադրությունների պայքարի և միասնության, ազդեցության և հակազդեցության դրսևորումը: Ըստ այդ օրենքի՝ ինչքան շատ է ազդեցությունը, փոխադարձաբար այնքան էլ մեծանում է հակազդեցությունը: Մրա հետ էլ ինչքան մեծ է արգելքը, մեծ և հնչեղ է նրա կատեգորիկ իմպերատիվը, դրան գուզնթաց հասարակության մեջ առանձին անհատների մոտ հանդես է գալիս ակնհայտ ցանկություն՝ գտնել ճանապարհներ, ելքեր՝ հաղթահարելու այդ արգելք - պատվիրանը: Ինչո՞ւ է դա այդպես, ի՞նչ շարժառիթներ են այստեղ ի հայտ գալիս: Մեր կարծիքով, սա առաջին հերթին բխում է անհատի ներանձնային կամ հոգեբանական հատկանիշներից: Եթե անհատի առջև դրվում է մի՛ կատեգորիկ հրամայականը,

<sup>247</sup> Օննդ 3:5:

<sup>248</sup> **Անրի Բերգսոն**, Բարոյականություն և կրոնի երկու աղբյուրները, Երևան 2001, էջ16:

առաջին հերթին նրա մոտ առաջանում է այն մտայնությունը, պատկերացումը, թե դա իր կամքի սահմանափակման կամ էլ ոտնահարման խնդիրն է: Նյութը ներկայացնելիս հանգամանորեն պետք է բացատրել, որ պատվիրանները ոչ թե սահմանափակում են «ես»-ի, անհատի իրավունքների ճանաչմանը, գրավմանը: Դա ավելի ցայտուն երևում է այն բանի բաղադրությամբ, որ, տղամարդ և կին արարելով, արարիչը նրանց տվեց ապրելու հիմնարար իրավունք: Առաջին մարդկանց անունները պարզապես հավաստում են, որ նրանցում շեշտվում է մարդու և կյանքի անքակտելի միությունը, քանի որ հին եբրայերենում «Ադամ» նշանակում է մարդ, իսկ «Եվա»՝ կյանք: Եվ ահա այս գեղեցիկ գաղափար- պարզևին անմիջապես հետևում է սպանությունն ու մահը, և, հետևաբար, **մարդու մահկանացու դառնալը** (հող էիր և հող կդառնաս):

Հին կտակարանից կարելի է վկայակոչել բազմաթիվ արտահայտություններ, որոնք հավաստում են, թե «մահ» բառն արտասանելիս ամենևին էլ ոչ բոլոր դեպքերում է նկատի առնվում ֆիզիկական մահը: Մասնավորապես, Եզեկիել մարգարեին բացատրվում է «մահով մեռնել» բառակապակցության իմաստը. «Եթե դու անօրէնին զգուշացնես, որ նա յետ չդառնայ իր անօրէնությունից և իր ճանապարհից, այդ անօրէնն իր անօրէնության մեջ է մեռնելու»<sup>249</sup>: Ակնհայտ է, որ այստեղ խոսքը մի անձի մասին է, որն արդեն օրինախախտ է և անօրէնության մեջ: Այդ օրինազանցին ուղղված ահեղ խոսքից հետո դեռ ինչ-որ մեկը պետք է զգուշացնի, ուրեմն որ «մահով պետք է մեռնես»-ից ամենևին էլ չի հետևում ֆիզիկական մահը: Անգամ այդ պարագայում էլ տեղ և հնարավորություն է մնում վերագտնելու ապրելու հիմնարար իրավունքը:

Հիմնահարցն առավել արդիական է դառնում, երբ անդրադառնում ենք «Մի՛ սպանիր» պատվիրանի բուն գործառույթներին: Հազարամյակներ շարունակ մարդիկ փորձել են պահպանել այդ պատվիրանը, բայց միայն XX դարի վերջերին կարողացան հավասարակշիռ, բայց ամենևին էլ ոչ բոլորի կողմից ընդունված որոշման հանգել: Այդ եզրահանգման փաստն այն է, որ այսօր էլ միջազգային հանրությունը դժվարությամբ է հասնում մահապատժի վերացման գաղափարին և մինչև օրս շարունակում է բանավիճել այս հարցի շուրջ: Ավելին, դարեր շարունակ մարդկությունը չի ըմբռնել, որ «Մի՛ սպանիր» պատվիրանն ուղղակի առնչվում է մահապատժի հետ, և որ այդ պատժատեսակի անթույլատրելիությունն ի սկզբանե ընկած է եղել մարդկային կյանքի կարգավորման հիմքում: 1983թ. «Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով» հատկապես եվրոպական պետություններին պարտավորեցվեց մահապատիժը վերացնել: Սա թույլ է տալիս հուսալ, որ քրիստոնյա աշխարհն, ի դեմս Եվրոպայի ժողովուրդների, գիտակցեց, որ «մի՛ սպանիր» պատվիրանը համընդհանուր է, և որ մարդուն ի սկզբանե տրված է ապրելու իրավունքն ու սպանության արգելքը, որոնք ամենևին էլ կախված չեն եղել հանցագործության «ծանրությունից»: Այսօր մահապատժի վերացման հակառակորդների հիմնական «փաստարկներից» մեկն այն է, թե ինչպե՞ս է հնարավոր սպանության (այդ թվում և՛ դաժան) պես ծանրագույն հանցագործության պարագայում չկիրառել այդ պատժատեսակը: Հարցադրումը մարդկային է, հոգեբանական, բայց կրոնի դիրքերից

<sup>249</sup> Եզեկիել, 3:18:

ամեննին էլ ոչ աստվածային: Սա ականա վրիժառության հարցադրում է, այնինչ Աստվածաշունչը սովորեցնում է, որ այս պարագայում, ամեննին էլ չպետք է դնել վրիժառության խնդիրը, այլ՝ պետք է հոգալ հասարակության անդամների պաշտպանվածության և ապահովվության մասին:

Մարդկության պատմության մեջ իր իսկ եղբոր սպանած առաջին մարդասպանին՝ Կայենին Աստված միայն արտաքսեց: Այսինքն, Աստծո «խնդիրն էր» այս պարագայում վնասագերծել մարդասպանին, երաշխավորել այլոց ապրելու իրավունքը և ոչ թե վրեժ լուծել: Երկրից վտարված Կայենը դիմում է Աստծուն հետևյալ աղերսով. «Եթե այսօր ինձ հանես երկրից, ես կը թաքնույեմ քեզնից, ահ ու դողի և երերման մեջ կը լինեմ երկրի վրայ, եւ ով հանդիպի, կը սպանի ինձ»<sup>250</sup>: Հետաքրքիր է, որ պատասխանը և՛ Կայենի և՛ շատ-շատերի համար խիստ անսպասելի է: Թվում է, թե Կայենին պիտի մատնացույց արվեր այն, որ ինքն է սպանել, և այդ փաստարկով արդարացվեց ցանկացած մարդ, որը Կայենին սպանությամբ վրիժառու կլիներ: Սակայն, ի պատասխան Կայենի մտավախության, Տերն ասաց նրան. «Այդպես չէ: Նա, ով կը սպանի Կայենին, եօթնապատիկ վրեժի կ'արժանանայ»: Եվ Տեր Աստուած նշան դրեց Կայենի վրայ, որպեսզի ոչ ոք, ով հանդիպի նրան, չսպանի»<sup>251</sup>: Այստեղից կարելի է ենթադրել, որ սպանության և մահապատժի արգելքը եղել է աստվածաշնչական հնագույն պատվիրաններից մեկը:

Այդ կապակցությամբ ուսանողների ուշադրությունը պետք է հրավիրել անառարկելի այն իրողության վրա, որ «մի՛ սպանիր» պատվիրանը գործնականում հանդես է գալիս իբրև արարչագործության առաջին իսկ օրից գոյություն ունեցող արգելքի օրենսդրական հետագա ուշ սահմանում: Պետք է կարևորել և այն, որ քրիստոնեական բարոյականության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ Արարիչն ինքն է վարվելակերպի անձնական օրինակ ցույց տալիս մարդկանց: Բնականաբար, նա էլ հետևում է սահմանված կանոնների, այդ թվում՝ «մի՛ սպանիր» պատվիրանի կենցաղում արմատավորմանը: Այդ համատեքստում բնական հարց է առաջանում՝ իսկ Աստված կապված կամ սահմանափակվա՞ծ է բարոյականության նորմերով: Այս հիմնահարցն առաջինը նկատել է և համակողմանի վերլուծության է ենթարկել Օգոստինոս Երանելին: Նա պնդում է, որ **եթե Աստված բարության աղբյուրն ու նպատակն է, ապա նա վեր է կանգնած և ազատ է իր կողմից հաստատած բարության նորմերից**: Եվ եթե նա մարդկանց դատեր, ելնելով որոշակի չափանիշներից, ապա կստացվեր, որ այդ չափանիշներն իրենից ավելի բարձր էին: Այդ դրույթների հիմա վրա էլ աստվածաբանը պնդում է, որ ինչպես հոգևոր, այնպես էլ հասարակական կյանքում Աստծո կամքը անկախ բովանդակությունից, բարի է, բարիք, ճշմարիտ ու ընդգծված մարդասիրություն: Այդ իսկ պատճառով էլ Աստված կարող է չսպանելու սկզբունքը մարդկանց ներկայացնել շեշտադրելով «Ես եմ, Ես եմ այն նոյնը, որ ջնջում եմ իմ հանդէպ կատարած անօրէնութիւնները եւ քո մեղքերն այլևս չեն յիշելու»<sup>252</sup>: Այսպիսի ներում տիպական և վայել է միայն Գերագույնին: Այդ հիմա վրա էլ, ներման երանությամբ ոգեշնչված, Նարեկացին իր դեմքով մարդկության համար հայցում է. «Պարզևի՛ր իմ վերքերին բուժում, եղծմանս՝ նորոգում, կորստիս՝ մի՛ ճար, այս

<sup>250</sup> Ծննդ, 4:14:

<sup>251</sup> Եսայի, 43:25:

<sup>252</sup> Ծննդ, 4:15:



բազմակործան մահվանից՝ զերծում, ապականվածիս՝ կյանքի ճանապարհի և հույսի մի դուռ՝ անբարիշտյալիս»<sup>253</sup>:

Հարց է ծագում, եթե «մահով մեռնելը» չպետք է հասկանալ իբրև ֆիզիկական մահ, ապա այլ կերպ այն ինչպե՞ս ընկալել: Կարելի՞ է արոյոք այն հասկանալ իբրև նախազգուշացում մարդու հոգևոր մահվան մասին, որը պետք է հասկանալ այն իմաստով, թե Աստծու համար տվյալ անձի գոյությունը դադարում է, իսկ մարդու և Արարչի միջև կապը՝ խզվում: Ադամն ու Եվան վտարվեցին դրախտից և գրկվեցին Աստծո հետ ուղղակի (անմիջական) շփման հնարավորությունից: Բայց նման մահը մարդն ինքն է ընտրել իր համար, քանի որ խախտել է պատվիրանը՝ նախապես իմանալով դրա հետևանքները: Աստվածաշնչական ավանդազրույցի համաձայն մարդն ինքն իրեն բառացիորեն հեռացրեց Աստծուց՝ հենց մեղսագործության պահին: Ինչ վերաբերում է մարդու ֆիզիկական, այսինքն՝ մարմնական մահին, սուրբգրական տեքստերում փաստագրված է այդ իրողությունը ևս, քանի որ հիշատակվում է, թե կյանքի աղբյուր հանդիսացող, կյանք ու անմահություն պարգևող Աստծու «Օրենսդրությունը» խախտած մարդը դառնալու է մահկանացու: **Արարման պահին մարդու մահվան և անմահության խնդիրը թողնվեց առկախ:** Դեռ ավելին, այդ խնդրի լուծումը վերապահվեց հենց իրեն՝ մարդուն: Հավանաբար, կարելի է համարել, որ արարման ժամանակ մարդը ո՛չ մահկանացու էր, ո՛չ էլ անմահ: Իսկ մեղքի և բարեպաշտության միջև ընտրություն կատարելու համար նրան ընձեռնված հնարավորությունը նշանակում էր, որ նրան դրանով իրավունք էր տրվում ընտրություն կատարելու և որոշելու, թե իր ազատ կամքով ինչպիսի ճանապարհ է նա ընտրում:

Մարդուն օժտելով բանականությամբ, ազատ կամքով և ընտրության հնարավորությամբ՝ Աստված միաժամանակ նրան հնարավորություն տվեց ազատ կերպով որոշելու իր «լավ» կամ «վատ» լինելու, ուրեմն նաև՝ անմահ և մահկանացու լինելու հարցը: **Աստված մարդուն տվեց ոչ թե գոյատևելու հնարավորություն, այլ՝ ապրելու իրավունք:**

Այս ամենից բխում է հավատքային նշանակության մեկ այլ հիմնարար եզրահանգում ևս: Ուսանողներին այն մատուցելիս հարկ է մատնանշել, որ ազատ կամքի և ընտրության պայմաններում, ինչպես նաև սխալների և անկումների հնարավորության առկայության դեպքում է իմաստավորվում ազատությունը, կարևորվում մարդու ազատ կամքով կատարված վճիռը՝ որպես բարոյական երկընտրանքի լուծում: Այդ երկընտրանքներում կողմնորոշվելուց էր կախված նաև մարդու անմահ կամ մահկանացու լինելու հարցը: Այդ համատեքստում պետք է շեշտադրել նաև, որ գործնականում մահը հանդես է գալիս իբրև մարդու ազատ ընտրության և գործողությունների դրսևորման արդյունք: Իսկ «մահով մեռնել» բանաձևը նշանակում է ոչ այլ բան, քան մեռնել մեղքի մեջ, որն էլ հանդիսանում է մահվան աղբյուր: Անհրաժեշտ է ուսանողներին բացատրել նաև, որ իր նշանակությամբ «մահով մեռնել» աստվածաշնչական բանաձևը հակադրվում է «մեղքի համար մեռնել» բանաձևին: Հետագայում, այս վերջին բանաձևը դառնում է Աստվածաշնչի կարևորագույն հասկացություններից մեկը: Մեղքի մեջ մեռնելն է մահ, մեղքից ազատվելու համար մեռնելը, մեղքը հաղթահարելը՝ անմահության ձեռքբերումն է:

<sup>253</sup> **Գրիգոր Նարեկացի**, Մատյան Ողբերգության, Տաղեր, Երևան 1979, էջ 340:

Օրագրային թեմայի դասավանդման շրջանակներում անհրաժեշտաբար պետք է քննության առնել և այն հիմնահարցը, թե «Մի՛ սպանիր» պատվիրանը որքանով է առնչվում ինքնասպանության և ինքնազոհաբերության խնդրին: Պետք է ցուց տալ, որ Աստվածաշունչը և, ընդհանրապես, ավանդական կրոններն ինքնասպանությունը կամ մահվան ինքնակամ ընտրությունը համարում են ամենասարսափելի մեղքերից մեկը և պատահական չէ, որ աստվածաշնչական գրքերում ներելի են համարվում բոլոր մեղքերը, բացի ինքնասպանությունից: **Այլ կերպ ասած՝ ինքնասպանությունը համարվում է ամենածանր, անչափելի և աններելի մեղք:** Ըստ ուղղափառ եկեղեցու կանոնների՝ «ինքնասպանները զրկվում են հոգեհանգստի, հուղարկավորության ուղղափառ կարգի իրավունքից և եկեղեցական աղոթքից»: Առանձնահատուկ ուշադրություն պետք է նվիրել և այն իրողությանը, որ մահվան և կյանքի երկընտրանքի լուծումն ունի բավականին բազմիմաստ և խորքային շերտեր:

**Ինքնասպանությունը երբևիցե չպետք է շփոթել ինքնազոհության գաղափարի հետ:** Այլոց փրկության համար սեփական անձի վերանայն (սեփական կյանքն ինքնակամ զոհաբերելու իմաստով) անգամ միանգամայն հակադիր է ինքնասպանության վերոնշյալ որակմանը: Ինքնազոհաբերության վառ օրինակ է Նոր Կտակարանային տեքստերում արտահայտված Քրիստոսի քավչարար փրկագործության փաստը: Քարոզելով որ «Ես եմ լաւ հովիւր, լաւ հովիւր իր կէանքն է տալիս ոչխարների համար», Հիսուսը նաև շեշտում է, որ այլոց փրկության համար ինքնազոհաբերությունը կենաց կյանքի հաստատում է և անմահության ձեռքբերում. «իմ կէանքն եմ տալիս որպէսզի վերստին այն առնեմ: Այն ինձանից ոչ ոք չի վերցնի, այլ ես ինքս եմ այն տալիս»:

Մարդու ապրելու իրավունքը հաստատող «Մի՛ սպանիր» պատվիրանը լայն գործառություններ ունի: Վերջիններիս հանգամանալի լուսաբանումից հետո, դասավանդման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն փաստին, որ նշված պատվիրանն երբեմն աղերսվում է սպանելու անհրաժեշտության հետ: Փաստարկված կերպով պետք է ցույց տալ, որ նման կացություն կարող է ձևավորվել միայն այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է հակադրական ինքնապաշտպանությանը կամ պատերազմի ընթացքում ծավալվող ռազմական գործողություններին մասնակցելու հետ, որոնք անխուսափելիորեն ենթադրում են սպանելու անհրաժեշտություն: Երկիրը, պետությունը ապրում է իր օրենքներով, հետևաբար՝ օրենքների պաշտպանությունը չի կարելի դիտել ապրելու իրավունքի ենթատեքստից դուրս: Երկրի ներքին կյանքն ու անդորրը, նրա օրենքների գոյատևմամբ և գործերով պայմանավորված լինելով հանդերձ, չի կարելի դիտարկել պետության յուրաքանչյուր հպատակի կյանքը պաշտպանելու առաջնահերթ հանգամանքներից կտրված: Ապրելու իրավունքը տարածվում է ինչպես անհատ մարդու, այնպես էլ՝ ազգի ու ժողովրդի վրա: Այդ իսկ պատճառով էլ, ով փորձի մարդուն զրկել այդ իրավունքից, ինքը պետք է զրկվի ապրելու իրավունքից, քանի որ «սուր բարձրացնողը, սրով կընկնի»:

Բազմաթիվ պատերազմների ընթացքում պատերազմող կողմերից որևէ մեկի կողմից մարդ սպանելը պետք է դիտարկել իբրև աստվածաշնչական պատվիրանի խախտում, թե՛ ոչ: Առաջին հայացքից թվում է, թե պատասխանը շատ պարզ է և միաբժեք: Այո, դրանով խախտվում է բուն պատվիրանի էությունը, բայց դա միայն առաջին հայացքից: Այստեղ պետք է մանրակրկիտ ներկայացվեն

և քննարկվեն այն բոլոր պայմանները, որոնց հետևանքով էլ առաջացել են այդ պատերազմները: Խոսքն այստեղ նրա մասին չէ, որ պատերազմները բաժանվեն արդարացի և ոչ արդարացի տեսակների, այլ՝ պետք է առաջնորդվել «բոլոր պատերազմներն էլ մարդկության համար մեծագույն չարիք են» սկզբունքով:

Առաջնորդվելով դրանով՝ նոր միայն պետք է քննարկենք, թե ինչից և ինչպես են ծագել դրանք: Արդյո՞ք այդ պատերազմներն անխուսափելի են, թե ոչ, այդ պատերազմով դրվո՞ւմ է քո իրավունքի, քո գեների պահպանման խնդիրը, թե՛ ոչ: Յուրաքանչյուր հասարակություն, առավելապես, պետություն, ունի իր օրենքների համակարգը և որքան էլ այն խիստ լինի տվյալ հասարակությունն ու անհատները պետք է առաջնորդվեն այդ օրենքներով, այլապես՝ օրենքի խախտումը հանգեցնելու է քառսի: Այդպես է եղել և՛ անցյալում, այդպես է՝ և՛ այսօր: Այդ կապակցությամբ պետք է հիշեցնել, որ Պողոս առաքյալը հռոմյացիներին ուղղված թղթի «Հավատ և Օրենքի հակադրություն», «Հնազանդություն իշխանություններին» բաժիններում քարոզում է այն մասին, որ պետք է ենթարկվել օրենքներին և իշխանություններին, քանի որ դրանք տրված են ի վերուստ: Առաքյալը հաստատում է նաև, որ անհնազանդությունն անհատին և հասարակությանը կտանի դեպի անկառավարելիության և քառսային իրավիճակի: «.....Իշխանաւորները վախ չեն ազդում բարի գործերի համար, այլ՝ չար գործերի: Ուզում ես չվախենալ իշխանութիւնից, բարին գործիր եւ նրանից գովասանք կը ստանաս, - գրում է առաքյալը, - որովհետեւ նա Աստու պաշտօնեայ է քեզ՝ բարի գործերի համար. իսկ եթէ չար գործես, վախեցի՛ր, քանի որ սուրը մեջքին ի գուր չէ կապուած»<sup>254</sup>: Այս համատեքստում դասավանդման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել և այն հանգամանքի վրա, որ այսօր Հայաստանում գործունեություն են ծավալել 50-ից ավելի կրոնական կազմակերպություններ (աղանդներ, ներփակ և խարիզմատիկ խմբեր և այլն), որոնք պետք է առաջնորդվեն «Խրդճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության լրամշակված օրենքով: Այդ օրենքը հստակեցնում է կրոնական կազմակերպությունների իրավունքների և պարտականությունների սահմանները:

Այսպես, օրենքի 23-րդ հոդվածով ամրագրվում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատություն»: Կրոնի և համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ Մահմանադրության 45-րդ հոդվածում նախատեսված հիմքերով: Շահարկման նյութ դարձնելով «մի՛ սպանիր» պատվիրանը՝ որոշ կրոնական կազմակերպություններ, մասնավորապես Եհովայի վկաները, իրենց գործելակերպով նպաստում են հանրապետության երիտասարդության մեջ զինատյացության արմատավորմանը և դասալքության տարածմանը: Ըստ նրանց՝ գենքի հետ շփումը տանում է «մի՛ սպանիր» պատվիրանի խախտմանը: «Մոռացության» է մատնվում, որ ընտանիքի, ազգի, ժողովրդի, հայրենիքի պաշտպանությունը ոչ թե պատվիրանի խախտում է, այլ՝ յուրաքանչյուրի սուրբ պարտականությունը: Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել նրա պաշտպանությանը: Իսկ դրանից հետևում է, որ սրանով Եհովայի վկաների գործունեությունն այդ բնագավա-

<sup>254</sup> Հռմւ.,13:3-4

ռում ուղղակի հակասում է ՀՀ օրենսդրությանը: Եվ մերժելով օրենսդրությունը՝ նրանք մերժում են նաև հայրենասիրությունը, այնինչ՝ յուրաքանչյուրի առաջնահերթ խնդիրը զենքը ձեռքին հայրենիքի պատիվը պաշտպանելն է: **Չենք ձեռքին հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուրիս պատվի և արժանապատվության գերխնդիրն է և ոչ թե «մի՛ սպանիր» պատվիրանի խախտում:**

**Акоб Зорян – *Несколько вопросов оценки нравственных норм христианства.*** – В идеологической системе каждой религии особое место занимает исследование и оценка нравственных норм и принципов. Из этого общего правила не составляет исключение одна из мировых религий – христианство. Родившись и формируясь в первом веке, христианство включило в свою систему ценностей такие нравственные нормы, принципы, законы, заветы, которые до сих пор не утратили свою актуальность. Сегодня, когда происходит переход к новой экономической системе, становится нормой действовать в рамках христианских нравственных норм.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### *ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

Ռամկավար-ազատական կուսակցության 90-ամյա հոբելյանը ..... 3

#### *ВАЛЕРИ ТУНЯН*

Судебные постановления по делу партии “Дашнакцутюн” 1908-1909гг. .... 12

#### *ՆԱԹԵԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Հայաստանը հեղկոմի գործունեության առաջին ամիսներին  
(1920թ. դեկտեմբեր – 1921թ. փետրվար)..... 28

### ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

#### *ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*

Ազգատոհմի տարածքային միասնության մնացուկների դրսևորումները  
հայոց մեջ (ըստ XIX–XX դդ. ազգագրական նյութերի)..... 38

### ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### *ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

Հայ բանաստեղծության տուրքը 1941-1945թթ. Հայրենական պատերազմին..... 48

#### *ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ*

Սիմվոլիզմի տեսությունը և Եղիշե Չարենցի «Օրհան» ժողովածուն ..... 53

#### *ՍՈՒՇԵՂ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ*

Որքան է տևում պատերազմը ..... 61

### ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### *ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ*

Լեզվական արտահայտչամիջոցները Գեղամ Սարյանի՝ Մեծ  
հայրենականին նվիրված քնարերգության մեջ..... 69

### ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

#### *ԱՆՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆ*

Ղարաբաղյան շարժման ծնունդը և մամուլը..... 77

### ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### *ԱՆՈՒՇ ՈՍԿԱՆՅԱՆ*

Պայմանականորեն ձևավորված խմբերի ազդեցությունը  
աշխատանքային խմբի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա..... 88

#### *ՎԱՉԱԳԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

Կոպիճ-վարքագիծը խրոնիկ հիվանդի աղապտացիայի պրոցեսում ..... 93

*ԱՐՄԵՆ ՆԵՐՄԻՍՅԱՆ, ՎԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ*

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի  
վերջին տարիների բարեփոխումների հիմնական  
ուղղությունները և առկա հիմնախնդիրները ..... 99

*ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ*

Արքունիքի տեղը Կիլիկիայի հայկական թագավորության  
տնտեսական համակարգի ինստիտուցիոնալ հիմքերում ..... 103

*ՎԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ*

Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական  
բյուջեի հարկային եկամուտների կանխատեսումները..... 109

**ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ**

*ՀԱԿՈՒԲ ԶՈՐՈՅԱՆ*

Քրիստոնեական բարոյականության արժեքավորման մի քանի հարցեր  
(Քննական վերլուծություն)..... 116

# Ա Կ Ո Ւ Ն Ք

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 3

Համարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Ն.Ն. ԴՎԱԹՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 23.12.2011 թ.:  
Չափսը՝  $70 \times 100^{1/16}$ : Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 7.6 մամուլ,  
տպագր. 8.4 մամուլ = 10.9 պայմ. մամուլի:  
Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 223:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

---

Երևանի պետական համալսարանի  
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում  
Երևան, Ալ. Մանուկյան 1: